90(47.925)(092 Երեմիա Ջէլէպի Քէօմիւրճեան) V

ԳՈՒՐՔԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ, ԹԻՒ 13

—9(47.925)17
Հ-79

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՄԻԱ ՋԷԼԷՊԻ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆԻ

2316(00)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա. ԹՈՒՂԹԵՐ, Բ. ՈՒՂԵՐՁՆԵՐ, Գ. ԳԱՆՁԵՐ ԵՒ ՈՂԲԵՐ

Հ 33/47

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ՆՇԱՆԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐՐՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1939

ԱՔՈՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՐՈՑՑ ԱՃԱՌՈՎՍԵՑՒՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի Տէրունական Մեծի Պատարագի Ս. Մեսրոպ Ս. Արեգս. Նշանեան,
Լուսարարապետ Մեր Ս. Աթոռոյս,
ԱՍՏ

Կարդացի, ըստ կարելւոյն, Երեմիա Չէլեպի Քեօմիւրճեանի *Օրացոյցնաց* Նորատիպ պրակները, եւ, յատկապես, ամոր իբրեւ Նեռածութիւն գրած Ձեր ուսումնասիրութիւնը:

Ուրախ եմ որ մեր *Դարեհան Մատենադարանի* տարբը կը նաւասանայ կարեւոր հրատարակութեամբ մը, որ կոչուած է զգալի չափով լոյս սփռելու իր ժամանակի մեր ազգային եւ եկեղեցական պատմութեան վրայ:

Հայ Տրակաճութեան Պատմութեան մէջ ԺԷ. դարը ուշագրաւ է՝ զանազան ուղղութիւններու վրայ իր յառաջ բերած տարժումներու կարգին՝ ժամանակակից անցքերը տարեգրելու ձիգով մը մասնաւորապէս:

Այս տրջանին կը պատկանին Երիզոր Դարանաղեցիի *Ժամանակագրութիւնը*, որ Ձեր աշխատասիրութեամբ հասնելոց տարիներ առաջ հրատարակուեցաւ Ս. Աթոռոյս տպարանին, Զաքարիա Վաղարշապատեցիի պատմական *Ճիշտահարացը*՝ Մովսես, Փիլիպպոս եւ Ցակոբ կաթողիկոսներու ժամանակին վրայ, Առաքել Դաւրիժեցիի Պատմագրութիւնը, Զաքարիա տարկաւագի երկմասնեայ Պատմութիւնը՝ այլեւայլ օտար իշխանութեանց եւ իր ժամանակի ազգային դիպուածներու մասին, Զաքարիա երեցի մը գործը, որ, ըստ Հ. Ալիշանի, ժամանակագրական *Դաւազանագիրք* մը պիտի եղած ըլլայ՝

ժողովոց թուականներու, կաթողիկոսաց եւ չորս գլխաւոր պատրիարքական Աթոռոց, Հռովմայ կայսերաց, Օսմանեան թագաւորաց վրայ, 1696ին գրուած, Գրիգոր Կամախեցիի Պատմական չիշատակները, որոնք մինչեւ 1640 կը հասնին, Ծովհաննես Կամենիցացւոյ Ճիշտատեսութիւնը, որ մինչեւ 1610 կը հասնի, եւ զոր յետոյ իր բոլոր Օսմանեան իրերու Տարեգրութիւն, դարձեալ բուռ Հ. Ալիշանի, շարունակած է մինչեւ 1621, ինչպես նաեւ Գրիգոր Կեսարացւոյ Թուականը եւ Պատմութիւնը, մինչեւ 1636 հասցուած:

Ասոնց կարգին, եթէ ոչ Դարանաղեցիի եւ Դուրիժեցիի գիծին վրայ անուշ, բայց ապահովաբար բոլոր միւսներէն բարձր կը կանգնի Բհօսիւրենան, Carbonari-ն բուռ Իտալացւոց, որ, լեզուագէտ, տաղանդաւոր նմուշ գրիչ, բանաստեղծ եւ կրօնագէտ, իբրեւ նոտար մանուանդ Կ. Պոլսոյ Մարտիրոս Պատրիարքին, իր ժամանակի անձանց ծանօթութիւնը եւ անցից հասկըցողութիւնը ուներ եւ կարողութիւն գրչի եւ արտայայտութեան, ինչպես կը տեսնուի իր Ստանկոչոյ Պատմութիւն գործին ետք: Իսկ եթէ դեռ յայտնուին եւ հրատարակուին իր Հայոց Պատմութիւնը (հայերէն եւ բրերէն գրուած) եւ Հայաստանի Աշխարհագրութիւնը, որ կը պարունակեր Հայոց բոլոր վանքերուն տեղագրութիւնը կամ տեղագրութիւնը», ինչպես կ'ակնարկուի Հայոցպատմի մէջ, եւ որոնց վերջինը գրած պիտի լիներ Ասատիոյ դեսպանին խնդրանքով, տարակոյս չկայ թէ իր տիպը օտա ատելի ճեռնակելի պիտի դառնայ Հայ Պատմագրութեան մէջ:

Այսպիսի գիմի մը եւ իր գործերը արժանի էր որ ծանօթացուէին ուսումնասիրութեամբ եւ հրատարակութեամբ, աշխատութիւն՝ զոր կատարած էին բանասէր Հ. Ն. Ակինեան եւ բանասիրուս Տոքթ. Վ. Թորգոմեան, եւ զոր Ձեր Սրբազնութիւնը ահա կը կատարելագործէ

իր այս վաստակալից հոտառակութեամբ, մասնաւորապէս Հարանի սուրբերուն ի լոյս տպագրութեան կոչելով Օրագրութիւնը, իր կեանքին եւ իր ժամանակի ազգային եւ յարակից իրականութեան այդ սոսկալի ահաւոր արձանագրութիւնը:

Հիմակինս կը գնահատեմ այս մասին Ձեր ունեցած փոյթն ու ջանքը, զոր ի յայտ բերած եք խնդով եւ յանախ խրթնացած ձեռագրի մը առեղծուածովը, բայց մանաւանդ Նահատակութեան մասին մէջ Ձեր կատարած կենսագրական համադրոյթին ընկերացուցած ծանօթութիւններովն ու տեսութիւններովը եւ Ցաւելուածական մասերու յարադրութեամբը, որոնք կը լուսաբանեն Մասնիագրին դէմքը, գիրը եւ օրչագաթը:

Խարանաղնցիի ժամանակագրութենէն վերջ զա՛յս եւս հոտառակելով, Ձեր Սրբազնութիւնը կը ճոխացնէ իր ծառայութիւնը Հայ Գաւմագրութեան բանասիրական գիտութեան, որուն համար ամենայն ակնածանքով կը շնորհաւորեմ զՁեզ:

Ո՛ տայր որ ժամանակն ու պարագայք ներէին Ձեզ, եւ կարող լինէիք տակաւին մեր Գրչագրաց Մատենադարանի հարուստ գանձերէն ի կեանս կոչելու բազմաթիւ ուրիշ նմանօրինակ յիշատակարաններ:

Մաղթելով Աջոյն Աստուծոյ հովանի լինել Ձեզ, եւ ցանկալով Ձեզ առողջութիւն եւ անդորրութիւն մաց, կ'աղօթենք զՁեզ սիրով եղբայրութեան ի Տէր.

Աղօթակից

Գ. Ե. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

25 Հոկտեմբեր 1938

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մեր կանուխ փափաքին համաձայն՝ ահաւասիկ տպագրութեամբ լոյս կ'ընծայենք Երեմիա Չէլէպիի Քէօմիւրճեանի ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ։

Գործիս ձեռագիրը, նոյնինքն Երեմիա Չէլէպիի գրչէն ելած, առաջին անգամ մեր ուշագրութիւնը գրաւեց 1907 տարուան ամառը, երբ Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ վարդապետ Մագիստրոս (ապա արքեպիսկոպոս) եկած էր Երուսաղէմ՝ իր Հայ Ձեռագրերու Ընդհանուր Ցուցակը կազմելու առթիւ մեր մատենադարանի գրչագիր հատորները աչքէ անցընելու։ Մենք ևս աչխատակցեցանք իրեն ու ամիսներ պատահութիւն մը եղաւ մեզ քառահամարի տակ առնել մինչեւ այն ատեն գեռ չցուցակագրուած ձեռագիր հատորները։

Այնուհետեւ 1908ի Օգոստոսէն սկսեալ՝ մօտ երեք տարուան բացակայութիւն մը ունեցանք Երուսաղէմէն։ Մեր վերադարձին, 1911ին, խնամքով օրինակեցինք ամբողջ հատորը, որպէսզի երբ ատիք ներկայանայ՝ վայն պատրաստ ունենանք հրատարակութեան համար։

Երեմիա Չէլէպիի այս ինքնագիր հատորը, տակաւին անծանօթ հայ բանասէրներուս, օրագրութեան ձեւին տակ կը պարունակէր կարի հետաքրքրական տեղեկութիւններ 1648–1662 տարիներուն պատահած ազգային, եկեղեցական, քաղաքական եւայլն դէպքերուս մասին եւ որ կարեւորն է՝ կը լուսաբաներ Չէլէպիի կեանքի սկզբնական չրջանին գեռեւս մութ ծածկած այլեւայլ գրուագներ, ու թէ ոչ լրիւ՝ գէթ մասամբ ծանօթութիւններ կը պարունակէր Քէօմիւրճեան գերդաստանի անդամներուս մասին։

Մեր մեծայարգ բարեկամը Տօքթ. Վահրամ Քոր-գոմեան արդէն սկսած էր Հանդէս Ամսօրեայի մէջ մաս առ մաս հրատարակել Ջէլէպիի Սեամպօլոյ Պատմութիւնը՝ յարակից ընդարձակ ծանօթութիւններով(1), զոր եաքէն առանձին հատորներով լոյս ընծայեց(2). Այն ժամանակ պատեհ առիթ համարեցանք գոհացնել մեծ. Տօքթորին հարցասիրութիւնը՝ տալով Օրագրութեանս քանի մը քազուածներ և ընել ինչ ինչ ճշդումներ Ջէլէպիի կենսագրութեան վերաբերեալ ու տալ համառօտ մէկ քուցակը վերջնոյս այն գրական վաստակներուն, որոնք, մեծագոյն մասամբ ինքնագիր, կը պահուին Մուրր Ալթոռիս Մատենադարանին մէջ։ Մեր այս հազորդագրութիւնները երեք մեծ. Տօքթորի աշխատութեան երկրորդ հատորին մէջ։

Ապա փափաքելով Օրագրութիւնս ծանօթացնել մերազնեայ բանասէրներուս՝ 1913ին տուինք անոր նկարագրութիւնը Մ. Էմինեանի Եաղմակաբ հայագիտական ժողովածոյին մէջ, նոյն առեն ներկայացնելով անկէ քանի մը համառօտ ու ընդարձակ քազուածները, ու քանացինք ցոյց տալ անոր ունեցած առընչութիւնը Ջէլէպիի միւս ընդարձակ պատմական գործին՝ Տարեգրութեան հետ, որ կը գտնուի Վիեննոյի Մխիթարեանց Մատենադարանը(3)։

---

(1) Հանդէս ամսօրեայ, 1909՝ քիւ. 4, 6, 7, 10. 1910՝ քիւ. 1, 3, 4, 6, 9, 10, 12. 1911՝ քիւ. 3, 5, 6, 7, եւայլն։

(2) Երեմիա Ջէլէպիի Փէհմիւրճեան, Սեամպօլոյ Պատմութիւն, էջ լդ + 412, Վիեննա, 1913։ Նոյնը Հատոր Բ. էջ ԺԸ + 413-852, Վիեննա, 1932։ Վերջին անգամ լոյս ընծայեց նոյնին Դ. Հատորը, էջ ՃԸ + 294, Վիեննա, 1938։

(3) Եաղմակաբ՝ Ս. Էմինեանի հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 47-65։

* * *

Ինչպէս յիշեցինք՝ Օտպրուքեանս մեր քով գըտնուած միակ օրինակը նոյնինքն հեղինակին՝ Երեմիա Չէլէպիի գրչէն ելած է, զոր Սուրբ Աթոռս նուիրած է յայտնի գրավաճառ Յարութիւն Մարգարեան, ի յիշատակ 1847 Սեպտեմբեր 2ին կ. Պոլսոյ մէջ վախճանած իր հօր՝ գրավաճառ Մարգարի։ Թէ ի՛նչ պարագաներու տակ, ե՛րբ և որա՛ս մինչեւ հոն հասած է այդ նուէրը՝ անծանօթ կը մնայ մեզ։ Յամենայն դէպս ա նիկա նուիրուած է 1872էն վերջ, վասնզի Ղեւոնդ վրդ. Փիլոզալէմեան կ. Պոլսոյ մէջ յիշատակագրութիւն մը ձգած է ձեռագրին մէջ 1872 Ապրիլ 2 թուականով։

Տօքթոր Թորգոմեանի Սամպօլոյ Պատմութեան Մատենագրութեանց մէջ (էջ 372–75) կայ հետաքրքրական տեղեկութիւնը։ 1855ին կ. Պոլիս հրատարակուած Առաղիկ Արեւելեան օրագրին մէջ (Ա. Տարի, 1 Մայիս, էջ 75–78) Ազգային Ճիւտեակարան վերնագրին տակ կ'երեւի բնագրական հատուած մը՝ նկարագրող Սիսի Թորոս կաթողիկոսի մահը եւ յուղարկաւորութիւնը, որ տեղի ունեցած է կ. Պոլսոյ մէջ ՌՃՉ (= 1657) տարուան Ապրիլ 29ին։ Նոյն քերթի կողմէ գրուած Ծառաջաբանին մէջ ըսուած է. «Ելանկայս Ս. Մարգիս եկեղեցւոյն մէջ (որ այժմ անծանօթ եղած տուն մըն է) գտրուքիւն ընող տաճկերկու տարեկան հացագործ տղայ մը Սուլքան Իպրահիմայ վերջին տարիներէն սկսելով մինչեւ Դ. Սուլքան Մէհէմմէտի չորեքտասաներորդ տարին, իւր կենդանութեան տանէնը կ. Պոլսոյ մէջ պատահած դէպքերը ի գիր արձանագրուցած էլլալով՝ երկարօրէն կը յիշատակէ, որուն բուն ձեռագիրը Տաճարիոյ Ս. Աստուածածնի գանձարանին մէջ անհրաժեշտի կերպով եղած է, ուրկէ քանդակարանին վե-

բառեսուչներէն ծագկաքաղ հաւաքելով՝ բանասիրաց ծանօթութիւն մը տալու համար համառօտակի կը հրատարակեն ևայլն։ Սուրբ Մաթիա եկեղեցիին մէջ գտնուիլն ըսող տառերկու տարեկան տղան ոչ այլ ոք է՝ եթէ ոչ նոյն ինքն երեմիա Չէլէպին, որ իր Օրագրութիւնը կը սկսի 1648 տարուան Յունիս 11էն, երբ ինք տասներկու տարին նոր քանակոխած էր։ Գալով Թորոս կաթողիկոսի մահը և յաջորդականութիւնը նկարագրող հատուածին՝ անիկա բառ առ բառ նման է մեր Օրագրութեան մէջ եղածին (էջ 240–242)։ Ասկէ յայտնի կ'երևի թէ մեր ձեռագիրը Սամաթիոյ Ս. Սահակեան քանգարանին մէջ գտնուածէն կեցած ձեռագիրն է առանց որևէ տարբակոյսի։

Այդ քաղուածին մէջ Թորոս կաթողիկոսի յաջորդութեան նկարագրութենէն առաջ կան իրարմէ անջատ հինգ հատուածներ, որոնց չարադրութիւնն ու ամսաթիւերը տեղ տեղ կը տարբերին մեր բնագիրէն։

Դժբախտաբար կը պակսին Սամաթիոյ Ս. Սահակեան քանգարանի վերոյիշեալ ձեռագրի վրայօք աւելի տեղեկութիւններ, բացի Աստղիկ Աբեւեղեան օրագիրի աւանգածէն, որպէսզի կարենայինք ճշդրիտ գաղափար մը կազմել անոր մասին։ Մենք կը խորհինք թէ այդ ձեռագիրը եթէ իր տեղը Ջուղայի բլուր՝ կրնայ էր որ հնագոյնին չգրաւէր ազգային բանասէրներու ուշադրութիւնը եւ չծառայէր իրրեւ արժանահաւատ ազբիւր մը այդ ժամանակի պատմական դէպքերու, այդ պատճառաւ չենք տարակուսիր՝ թէ Ս. Սահակեան քանգարանի այդ ձեռագիրը այժմ մեր քով գտնուած Օրագրութիւնն է։ Իսկ առաջ քերուած հատուածներու չարադրութեան ու ամսաթիւերու իրենց իրենց տարբերութիւնները վերագրելի են ընդօրինակողներու կամայականութեան կամ անուշադրութեան։ Ձեռա-

գրիս վերջին սաացողը կամ տէրը եղած է գրավաճառ Յարութիւն Մարգարեան, որ իր կարգին գայն նուիրած է Երուսաղէմի «Գրքատան»։

* * *

Ձեռագրիս նկարագրութիւնը քէն տուած ենք Մ. Էջմիածնի Եղիսկար հայագիտական ժողովածուին մէջ (էջ 48), բայց աւելորդ չենք համարիր նոյնը կրկնել այստեղ աւելի մանրամասնութեամբ։

Քուղթ՝ 373։ Մեծութիւն՝ 14×10, 1×5,5 սմ։ Դրութիւն՝ միասիւն. թազմաթիւ յաւելուածներ վերեն, քովի և ներքեն լուսանցքներուն վրայ։ Գիր՝ նասք, չատ տեղեր չգագրի մօտեցած։ Նիւթ՝ քուղթ։ Կազմ՝ խաւաքարտ կաշեպատ։ Համգամանք՝ կազմը խանգարուած ու կազմուած ատեն եղերքները կըտրուելուն պատճառաւ լուսանցագրութիւններէն տողեր և մասեր գանակի տակ ինկած։ Քղ. 328էն ցվերջ քերքերը նոր սաոյէ գրուած են ու քերքեր ինկած են մէջտեղերէն ու վերջէն։ Քերքերը պէտք է գաաւորել այսպէս. Քղ. 328ին չարունակութիւնն է Քղ. 331–342, Քղ. 342ին՝ Քղ. 329, Քղ. 329ին՝ Քղ. 343–352, Քղ. 352ին՝ Քղ. 330, Քղ. 330ին՝ Քղ. 353, Քղ. 353ին՝ Քղ. 355, Քղ. 355ին՝ Քղ. 354, Քղ. 354ին՝ Քղ. 361–370, Քղ. 370ին՝ Քղ. 356, Քղ. 356ին՝ Քղ. 371–372, Քղ. 372ին՝ Քղ. 357–360։ Դրիչ՝ Երեմիա Ջէլէպի Փէամիւրճեան։ Ժամանակ՝ ՌՂԸ–ՌՃԺԱ (= 1648–1662)։ Տեղի՝ մեծագոյն մասամբ Կ. Պոլիս, նաև Երուսաղէմ, Պրուսա, Ադրիանուպոլիս, Ռոտոսթոյ։ Վերջին ստացող՝ Գրավաճառ Յարութիւն Մարգարեան, որ նուիրած է Երուսաղէմի Մատենադարանին իր չքաւոակ իր հանգուցեալ հօր՝ գրավաճառ Մարգարի։

Ծիշատակարութիւնի՝ Քղ. 2ա. թոլորգրով. «Այս ձեռագիրս յարութիւն Մարգարեան ձեռամբ կանգնի իրը

մահարձան ի գրքատուն սբ Ծափորայ վանուց յերու-
սաղէմ ի յիշատակ գրավաճառ մարգարէի, որ հանգեաւ
ի Տէր 1847 սեպ. 2 Գալիսիա։ Ընդագրով՝ «Այս մատե-
նիս հեղինակն է երեմիայ չէլէպին, որդի սէր Մար-
միրոս քահանային. տես յերես 542. պատմող բանիս
Ղեւոնդ վրդպ յուխտէն Վարագայ. 1872 տպր. 2, ի
կ. Գալիսիա։ Քղ. 2բ. Երեմիա Զէլէպի իր ձեռքով գրած
է գիրքին անունը «Ժամանակագիր եւ Պատմութիւն»։
Քղ. 2բ. ատար գրչէ. «յամի տէն ՌՃԼ տեղից ՝.օ՛ին
մայրաքաղաքիս Քգին էր տուլքան խպրահիմն»։ Քղ.
281ա. ձեռագիր Ղեւոնդ վրդ. Փիրզալէմեանի. «ՌՃԼ.
1658 Նոյեմբեր 3 մինի Ամպակում քարեպաշտ հոգե-
ւոր գաւառիարակն երեմիա Զէլէպեանն վախճանի»։
Քղ. 353բ. Նոյն ձեռ. «Հեղինակ օրագրութեանս է Ե-
րեմիա Զէլէպի որդի սէր Մարտիրոս քահանայի, տես
յերես 542 եւ 544»։ Դատարկ՝ Քղ. 1, 7բ, 8ա, 9բ,
19ա, 22բ, 23բ, 29ա–30բ, 62բ, 104, 128, 141բ, 152բ,
154ա, 194բ, 206բ, 239, 240, 281բ, 342բ, 348բ,
371բ, 372ա։

Օրագրութիւնս կը սկսի ՌՂԼ = 1648 տարուան Ծու-
նիս 11ին ու կ'աւարտի ՌՃԺԱ = 1662 Նոյեմբերին։
Այս տարիներու կարգէն գուրս կը մնայ ՌՃ = 1651
տարին, որմէ ոչինչ չէ արձանագրած։

* * *

Ուրիշ կրկնութիւնէ խուսափելու համար գանց
կ'ընենք տալ Օրագրութեանս ամփոփումը։ Ուշագիր
ընթերցողը պիտի գտնէ հոն չատ մը հետաքրքրական
տեղեկութիւններ 1648–1662 տարիներուն տեղի ու-
նեցած ազգային–եկեղեցական անցուդարձներու մա-
սին։ Առանց մէջ ուշագրաւ ու կարեւոր են Ս. Էջ-
միածնի Փիլիպպոս և Սիսի Թորոս կաթողիկոսներու
կ. Գալիս այցելութիւնը, վերջինիս մահը և յուղարկա-

ւորութիւնը, Դաւիթ Արծիւցի, Եղիազար Այնթապցի, Յովհաննէս Մուշնեցի, Թովմաս Բերբիացի, Մարտիրոս Ղրիմեցի եւ Ղազար Տիվրիկցի կամ Սեբաստացի կ. Պոլսոյ պատրիարքներու եւ ազխարհական տեզա-կալներու պաշտօնավարութեանց շրջաններըը. Այնթապցիի եւ Մուշնեցիի ու անոնց կուսակիցներուն իրարու դէմ ունեցած վէճերն ու հակամարտութիւնները, Թովմաս Բերբիացիի եղերական վախճանը, Բուսաղէմի Սուրբ Յակոբ վէճերը եւ Սուրբ Յակոբեանց վանքի պրաւումը Յոյներէն, Եղիազարի բանտարկութիւնն ու ազատութիւնը, Սուրբ Սարգիս եւ Սուրբ Նիկողայոս եկեղեցիներու հրկիզումը, վերջինիս վերաշինութիւնն ու քանդումը, քանի մը նոր նահատակներու վկայաբանութիւնը, նաեւ ձեռնագրութիւններ, տըւչութիւններ եւայլն։ Օրագրութեան մէջ ոչ նուազ կարեւոր տեղ տրուած է կարգ մը ընտանեկան դէպքերու, որոնց գլխաւորներն են՝ 1649 Օգոստոս 5ին Մահտեսի Ամբակումի հետ երեմիայի Երուսաղէմ ուխտի երթալն ու կ. Պոլիս վերադարձը՝ 1650 Մայիս 27ին, իր ամուսնութիւնը՝ 1654 Մայիս 22ին, իր կրտսեր եղբօր Կոմիտասի ծնունդը՝ 1656 Ապրիլ 22ին, մկրտութիւնը՝ 27ին, Մահտեսի Ամբակումի մահը՝ 1658 Նոյեմբեր 3ին, իր Մագաքիա զաւակին մկրտութիւնը՝ 1662 Մարտ 9ին ու չատ մը մկրտութեանց, հարսանեաց, յուղարկաւորութեանց, այցելութեանց եւայլն յիշատակութիւնները։

Երեմիա իր Օրագրութեան մէջ մեծ տեղ տուած է 1648–1662 տարիներու քաղաքական անցքերուն, մերթ համառօտ եւ մերթ ընդարձակ, նկարագրելով Օսմանեան տէրութեան արտաքին պատերազմները, ներքին խռովութիւնները եւ ապստամբութիւնները, պալատական գաւեր, սպանութիւններ, նախարարաց եւ պաշտօնէից փոփոխութիւններ, մայրաքաղա-

քին մէջ պատահած մեծ ու փոքր հրդեհներ ևայլն։

Նկատելի է որ Քեռապիրս որքան որ գրի առնուած է իբրև օրագրութիւն, բայց չատ տեղեր այդ ձեւէն դուրս կ'ելլէ ու պատմագրութեան ձև կ'առնէ, այդ պատճառաւ Զէլէպի անուանած է զայն ժամանակագիր եւ Պատմութիւն։

Ժամանակին կարծիք յայտնած էինք թէ «Զէլէպի իր այս հատորը գրած է օրը օրին, իբրև յուշատետր, միշտ ձեռքին տակ ունենալով զայն։ Աւոր ապացոյց են գրչութեան տարբեր ձեւերը՝ երբեմն մաքուր նոտրգիր, տեղ տեղ՝ չատ արագ գրուելուն պատճառաւ՝ անընթեռնելի ըլլալու աստիճան իրար խառնուած, ինչպէս նաև քուղթերու տարբեր տեսակները և քանաքի ոչ միօրինակ գոյները» (Եոզգաթ, էջ 52)։ Տարակոյս չկայ թէ Զէլէպի նպատակ ունեցած է իր ժամանակի պատմութիւնը աւանդել աւելի ընդարձակ ծրագրի մը վրայ ու աւելի կանոնաւոր գաղափարութեամբ, զոր իրագործած է նաքէն յօրինելով իր Տարեգրութիւնը։ Վերջինիս հիմն ու ոգին ապահովաբար եղած է մեր այս Օրագրութիւնը, այդ պատճառաւ կը տեսնենք որ չատ մը եղելութեանց նկարագրութիւնը սկսած է ու չէ աւարտած, իր գրելիք Տարեգրութեան մէջ քերթելերը ամբողջացնելու դիտումով անշուշտ։ Կան տեղեր ալ ուր միայն պարզ յուշագրութիւն մը ձգած է, զոր օրինակ՝ «ՋՄայլճանն գրեա՛ ասաց (էջ 284). «Ասա գրեա՛ Զէլի պահոցն գալուստս Մարմիրա վարդապետին և Դէլի Ասուածածնին գնալն ի գեմ վէգլերին ու ի Գէլըչատ գանկատ Ծունաց՝ վասն երուսաղէմին (էջ 292). «Ասա գրէ՛ գելուն հարեզին յերբորդ աւուր գալոյ Իսմայիլլին» (էջ 295). «Ասա գրեա՛ զգնալն Ասուածածասուր վարդապետին ի գիւղս ու յիզմիր» (էջ 339). «Ասա պատմէ՛ գիտող և գնիրիա սրքայլին որ անգա (էջ 350–351) ևայլն։

* * *

Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, ինչպէս Գերյարդոյ Հ. Ներսէս վրդ. Ակինեան կը գրէ անոր կեանքին ու գրական գործունէութեան նուիրուած իր շահեկան հատորին սկիզբը(1), ինքն իսկ եղած է ազբիւրը իր կենսագրութեան իր ինքնագիր աշխատութեանց մէջ։ Հայր Ակինեան որքան որ վաղաժամ կը համարի սփոթձը ձեռնարկել գրել ամբողջական կենսագրութիւն մը ո, նկատելով որ Երեմիայի աշխատութիւնները քաո մասին պահուած են Մ. Ծաղոթեանց և Վիեննոյկի Մխիթարեանց մատենադարաններուն մէջ և գոռ անմատչելի կը ձեան գիտութեան, բայց և այնպէս վերև յիշուած իր հատորին մէջ գերազանցապէս յաջողած է ամփոփել Երեմիայի կենսագրութիւնը ու ներկայացընել անոր գրական վաստակները՝ օգտուելով տպագիր ու ձեռագիր ազբիւրներէ։ Անիկա տուած է տպագիր ազբիւրներու ցանկը (Անդ, էջ 12–13), յիշած է նաև ձեռագիր ազբիւրները, որոնց հայթայթման մէջ հաճիաո բաժին մը ունեցած է նաև տոզերուս գրողը։

Սկիզբէն մեր նպատակն էր Երեմիայի Օրագրութիւնը միայն լոյս ընծայել։ Գոքծիս տպագրութեան սկսելէն վերջ գտպափոր յղացանք իրեն ցաւելուած անոր կցել Չէլէպիի մեր Մատենադարանին մէջ պահուած Թուղթերն և ոտանաւոր գրութիւնները (Ուղերձներ, Գանձեր և Ողբեր), մեծագոյն մասամբ ինքնագիր, նկատի ունենալով որ ինչպէս Օրագրութիւնը՝ նոյնպէս և ցաւելուածը կոռ գան նոր լոյսեր սփռել Երեմիայի ապրած ժամանակին և իր ու Քէօմիւրճեան գերդաստանի անդամոց կեանքին վրայ։ Ո՞ւր էր

---

(1) Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան, կեանքն եւ գրական գործունէութիւնը, Վիեննա, 1933, էջ 11։



քէ Երեմիայի Ճառերու ամբիոն հնչինակութիւններու հրատարակութիւնն ալ չյաջողէր, որպէսզի ժէ. դարուն փայլուն այդ ականաւոր Հայուն կեանքը լրիւ յուսաբանուէր՝ առանց մէքին կամ անծանօթ անկիւն մը Ճացած ըլլալու։ Տոքթոր Քորգոմեան և Հ. Ա. կիլնեան արդէն այդ ուղղութեամբ բաւական արդիւնաւոր աշխատանք կատարած են իրենց մեծարժէք հրատարակութիւններով։ Մենք ևս յարմար առիթ կը համարինք այդ ներածական ուսումնասիրութեանս մէջ Զէյէպիի ու իր գերդաստանի անդամոց կեանքի անյայտ կողմերը երեան բերել։ Մեր ապրիւրներն են հնչինակի ներկայ Օրագրութիւնն ու Ծանօթագրութիւնները, ինչպէս նաև այլոց կողմէ գրուած քանի մը նամակներ, և մանաւանդ Երուսազէմի պատրիարքական Մինաս Ամգեցիի Օրագրութիւնը, որ յոյժ արժանահաւատ ու վաւերական ապրիւր մըն է այս մասին։ Անհրաժեշտ կրկնութիւններէ զգուշանալու համար պիտի չներկայացնենք Երեմիայի ու իրեններուն կեանքի այն մասերը, որոնք երեցած են արդէն Տոքթոր Քորգոմեանի և Հ. Ակինեանի յիշեալ աշխատութիւններուն մէջ։

* * *

Օրագրութեան հէգումած է Երեմիայի ծննդեան քառասնեակը, որ է 1637 Մայիս 13։ Անիկա գիտ. 12 տարին յաջորդուցած(1), 1649 Փետրուար 14ին, Տեառնընդառաջի տօնին, Կ. Պոլսոյ վեց եկեղեցիներէն հաւաքուած արտգուժ ընկերներու հետ Գումգափուի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ դպրութեան չորս աստիճան կ'ընդունի Երուսազէմի նուիրակ եպիսկոպոսէն (Օրագր. էջ 6)։

---

(1) Հ. Ակինեան 12-13 տարեկան էր այն տարին կը գրէ (Զէյէպի, էջ 34)։

Երեմիայի ուսուցիչն ու պատմիչը, կամ իր բառով ծննդյն ի հոգեկանին, ի մանկութենէ եղած է Մ. Մաշտոց նկեղեցւոյ Տէր Յովհաննէս քահանան՝ կարգակիցն ու մտերիմը իր հոր Տէր Մարտիրոս Քէօմիւրճեանին։ Երեմիա չի գրեր քէ ինչ ուսած է Յովհաննէս քահանայէն։ Սակայն նկատի առնենալով Սուրբ Գրոց, պատմութեան, տոմարագիտութեան և հայերէնի ու օտար լեզուներու իր համառօտիւնը և ունեցած բազմակողմանի գործացումը, համեմատելով անյուշ իր ապրած ժամանակին հետ, կարելի չէ ընդել քէ այդ ամէնը ուսած է միայն վարժապետէ մը, այն է՝ Տէր Յովհաննէս քահանայէն։ Հետաւ չէ հաւատանալու եր անկիա ազ-հայ ուսուցիչներ ազ ուենցած ըլլայ՝ գէթ օտար լեզուներու համար։ Խակ ակնարկ է որ սուրբգրական ուսմանց մէջ Երեմիա մեծապէս օգտուած է եզիպտոսի Այնթապցի և Մարտիրոս Ղրիմեցի վարդապետներէն, որոնց հետ շատ սերտ ու ընտանի յարաբերութիւն ունեցած է իր պատանեկութենէն սկսեալ, և որոնք կրօնական ուսմամբ ու բնական արժանիքով հռչակած յայտնի դէմքեր էին այդ ժամանակաշրջանին։ Եզիպտոսի կարդուքիւնը այդ մասին կը վկայեն ժամանակակիցներըը։ Իր հարատարած լեզուն և Մ. Գրոց խոր համառօտիւնը կը ցուցանեն իր քուզքերուն մէջ, որոնց կարեւոր մէկ հատուածն ամփոփուած է մեր Մատենադարանի քիւ 186 ձեռագիր հատորին մէջ։ Գալով Մարտիրոս Ղրիմեցիի՝ ան ալ Եզիպտոսի հաւատարիմ, եթէ ոչ անկէ աւելի, կարդուքեամբ ժողուած հոգեւորական մըն էր, որ ունէր նաև քերթողական ձիրք, ու Երեմիա անկասկած այդ մարդին մէջ ալ ազդեցութիւն կրած էր անկէ։ Երեմիա տարիներ վերջ առ Եզիպտոս ուղղած իր նամակներուն մէջ երախտագիտութեամբ կը յիշէ իր ընդհանրապէս ուսուցիչներէն (Եզիպտոսէն ու Մար-

սիրոսէն) ամանրամասնաբար ուսածներըը՝ գրելով. ամանուկ մտավարժ էի և քեզ նման հոգւոյ բարւոյ գիպեցայ. համարեա՛ գիս յիտին քո յիտնեալ իրրու զաշակերտս (Ճաւելուած, էջ 436). գարձեալ՝ էի բազում սրտից խորհուրդ ակն յանդիման ներքանկատ յուսացչացդ մանրամասնաբար ուսայ, վասնզի ի գրունս սիրոյ ձեր տարաքերեալ գեզերէի գերևեալս իմասէից և քէչէքչէտ [վատաբախտ] քչուառացեալս (Անդ, էջ 444)։ Նոյնը կը վկայէր նաև Երեմիայի հայրը Ծէր Մարտիրոս Քէօմիւրճեան՝ երբ իր որդւոյն Բերիա երկիսգաբի մօտ երթալուն առիթ իր 1664 Սեպտ. 14 ի. նամակով կը գրէր. «Փոխանակ իմ առաքեցի սէր սրբութիւնդ զորդեակն իմ եւ գծառայ քո . . . գանձնանձինն իմ եւ գհոգեծինն քո . . . զորդիդ ըստ հոգւոյ, զոր անուցեր հաւատով . . .», և էի քէն պատուասեցաւ իմասեռն»(1)։

Երեմիա ուսած է նաև եկեղեցական երաժշտութիւն ու եղած է երգիչ գպիր Ս. Մարգիս եկեղեցւոյ։ Իր Օրագրութեան մէջ 1656 Մարտ 20ին կը յիշէ երաժշտութեան գաս առնելը՝ գրելով. «Եւ օրս գաս առաք զՈրք զքրովբէիցն» (էջ 136)։ Նոյն տարուան Ծաղիկս 1ին, կիրակի, Զիմառցի Գեորգոս նորընծայ քահանան քառասունքէն կ'ելլէ ու առաջին պատարագը կը մատուցանէ։ Ծէր Ծակոր գիս կանչեց, կը գրէ Երեմիա, «եւ բանուքեամբ հազոյց չապիկա՝ սակս գպրութեան. նոյեմբերբէն ի վեր չի արարի գպրութիւն եւ այսօր հագայ չապիկ եւ արարի գպրութիւնս» (էջ 181)։ 1657 Մարտ 30ի Զատկի երեկոյին (էջ 236) և ուրիշ օրեր Ծայտաւուրքը ինք կը կարդայ։ Նոյն տարուան Ապրիլ 30ին Սիսի Քորոս կաթողիկոսի օծման և յուզարկաւորութեան կարգը կը կատարուի Ս. Նիկողայոս եկե-

(1) Պէռռ, 1932, էջ 279։

ընդին. այնտեղէն հանգուցեալին դագաղը մեծաշուք թափօրով նախապէս կը տարուի Սամաքիա, ուր մնք, կը գրէ Երեմիա, յաջմէ եւ չահեկէ ասէաք զերգս շարականաց մինչեւ ի կամարն Սրբոյն Գէորգայ (էջ 241)։

Երեմիայի ակնկռցասէր ու բարեպաշտ հոգին փոխանցուած կը տեսնենք իր գերդաստանի անդամներուն, առաւելապէս իր եղբայրներուն ու զաւակներուն վրայ։ Տարակոյս չկայ՝ քէ իրմէ եւ իր քահանայ հօրմէն կրած ազդեցութեամբ է որ իր երկու կրտսեր եղբայրները, Գէորգ ու Կոմիտաս՝ աչխարհիկ ու իր անզրանիկ որդին Ամբակում՝ կուսակրօն քահանայութեան կարգ ընդունած էին. Գէորգ վերակոչուած էր Տէր Մարտիրոս ու Ամբակում՝ Երիզորիս վարդապետ. Կոմիտասի անունը Ջաջած էր անփոփոխ։ Այսպէս Քէամիւրճեան գերդաստանը եղած էր զեւտական տուն մը, ուր ատեպ կը յաճախէին Եղիազար եւ Մարտիրոս վարդապետներ եւ այդ ժամանակի յայտնի բարերարեան ակնկռցականներ։ Մինեռոյն հոգեւոր կեանքով ապած էին նաեւ գերդաստանի իգական անդամները։ Անոնց երգեցողութիւնները տան մէջ չարականներ ու հոգեւոր տաղեր էին։ Եարքէն պիտի տեսնենք որ Տէր Կոմիտասի գուստրը եղած է չարականագէտ։ Իր 14 տարուս Յովսէփ զաւկին մահը գուժող նամակին մէջ Երեմիա կը գրէ Էջմիածին իր Երիզորիս վարդապետ որդիին. «Լուար զորս ի քերցն ուսեալ էր (Յովսէփն) զսաղաչափութիւն զերգոց հիւսմանց՝ ընդ եղանակին եւ ինքն սեալ՝ եւ տուեալ զեզգեզեալ քաղցր երգէրս (Յաւելուած, էջ 449)։

Այս տեսիլ կանխենք ըսել քէ Երեմիա իր հեզիւնակած գանձերէն ու ոգեներէն զատ ուրիշ հոգեւոր երգեր ալ չարադրած ու անոնց եղանակները ինք յօրինած է, որոնք կ'երգուին եղեր եկեղեցիին մէջ։ Այս մասին ան Իրանոսի ըրած մեզագրանքներուն կը

պատմական երեմիա. եւս պի խնդալ հարկիս պի ե-կեղեցի նոր երգոք պայծառանայ, որպէս Շնորհալին նուագէ. նոր երգս առնալ նորոգողին։ Եւ պի քէ յերգս իմ գտանիցի սխալ ինչ՝ պարտ էր քեզ ուղղել, եւ քէ յեղանակս իցէ քերուքիւն՝ հարկ էր քեզ կարգա-ւորել» (Ցաւել. էջ 501)։ Երեմիա Ազուլեաց Գեորգ արքեպիսկոպոսի գրած քուղքին (Ցաւել. էջ 432–3)՝ նաև իր Գրիգորիս վարդապետ որդիին գրածին մէջ (Ցաւել. էջ 461) կը գանգատի քէ ոգէտ նախանձոտ-ներ քոյլ չեն տուած որ ի պատիւ Յակոբ կաթողիկոսի իր յօրինած գանձերը երգէ անոր քաղման օրը գե-րեզմանին վրայ։

Ինչպէս վերն ակնարկեցինք՝ նպատակ չունինք ներածականիս մէջ լիակատար կենսագրութիւնը ընել Երեմիա Զէլէպիի, այլ միայն տալ անոր կեանքի այն գիծերը որոնք քաքուն ձեացած էին ցարդ։ Ուստի կը չարունակենք՝ չէզնելով մեր ծրագրած ուղղու-քենէն։

* * *

Իր Օրագրութեան մէջ Երեմիա կը պատմէ իր մօր քեռիին՝ Մահտեսի Ամբակումի ու անոր կնոջ հետ ուխտի երթալը Երուսաղէմ, երբ ինք գեռ նոր քա-հոխած էր 13 տարին։ Մահտեսի Ամբակում իր այս եր-կրորդ ուխտագնացութիւնը(1) կը կատարէր Փիլիպպոս կաթողիկոսի փափաքին համաձայն, որ Էջմիածինէն մասնաւոր գիրով մը հրաւիրած էր զինք Երուսաղէմ, որպէսզի այնտեղ գիրար տեսնեն ու միասին կատա-րեն ուխտերնին։ Իննաուն հոգիէ բաղկացած ուխտա-ւորներու խումբը, որուն կ'առաջնորդէր Դարանաղցի

(1) Առաջին անգամ ուխտի գացած էր Գրիգոր Գարեհակէր պատրիարքի օրով 1629 (=1634) Յառաջաւոր տարին (Օրագր. էջ 308)։

Իրիգոր վարդապետի եղբայր եւ Մ. Գնունիի լուսատրաց Մահտեսի Մարկոս, Կ. Պոլսէն առագաստանաւով ճամբայ կ'ելլէ 1649 տարուան Օգոստոս 5ին եւ նոյն ամսուան 28ին կը հասնի Երուսաղէմ։ Փիլիպպոս կաթողիկոս, իր ճամբուն վրայ հանդիպած քարոզչներէն յամենայնէ պատճառաւ, չի կրնար իր ժամանակագրութեան համաձայն նոյն տարին հասնիլ Երուսաղէմ, ու Մահտեսի Ամբակում իր տարած ընծաներէն կը բաշխէ միաբանութեան կարգաւորներուն եւ ժամարար ընդհանրոյն (Օրագր. էջ 309–10)։ Անիկա յաջորդ 1650 տարուան Ապրիլ 18ին, Զատկի հինգերորդ օրը, առաւտին, քառաքայլին ճամբով, կ'ուղեւորի Տարօն յուխտ Սուրբ Կարապետի գնդեզմանին, իսկ Երեմիա եւ իր ամահտեսի մայրըդ (Ամբակումի կինը) նոյն օրը կ'իջնեն Թապպէ, ուսկից Ապրիլ 22ին նաւ կը նստին վերադառնալու համար Կ. Պոլիս։ Իրենք ու իրենց ընկերացող ուխտաւորները ծանր ալէկոծութիւն մը կը րնդէ ետք՝ երեք նաւերով Մայիս 6ին կը մտնեն Աստալոյ նաւահանգիստը, ու ամէնքը Մայիս 13ին քաղաքէն կը չարունակեն ճամբանին եւ նոյն ամսուան 27ին կը հասնին Կ. Պոլիս։ Իրենց Պոլիսէն բացակայութիւնը կը տեւէ տասը ամիսէն հինգ օր պակաս. 7 ամիս ու 21 օր կ'անցընեն Երուսաղէմ եւ 64 օր ճամբորդութեան մէջ։ Իսկ Մահտեսի Ամբակում 3 ամիս 15 օր վերջ, այն է՝ 1650 Սեպտ. 14ին, Սուրբ Խաչի նաւակատեաց օրը, Սուրբ Կարապետի ուխտաւորութիւնն կը գառնայ Կ. Պոլիս, ճամբուն վրայ հանդիպելով Եկեղեաց ու Խրատնոցից բոլոր վանքերն ու առանկիւղձ զանազան իր բարեպաշտական նուէրներով։

Երեմիա իր Օտագրութեան մէջ քանի մը հակիրճ էջեր միայն նուիրած է Երուսաղէմի։ Շատ հաւանական կերպով կը յիշէ իրենց ուխտաւորական այցելութիւնները Սուրբ Ծարուքիւն, Բեթղեհէմ, Սուրբ Սա-

բայի վանքը, Լեռնակոզման Անապատը, Փիլիպպոսի տպբիւրը և Ծորգանան. կը նկարագրէ Ջաւախի ճրագալոյցի Լուսաւորեայի արարողութիւնը, ինչպէս նաև քանի մը մասնաւոր դէպքեր։ Իսկ կատարեալ լուսաբանութիւն կը պահէ Երուսաղէմի Աքոռի այն ատենուան կացութեան վրայ. չի տար միաբանութեան անդամոց կամ գէթ անոր յայտնի դէմքերու անուններըը, չի ներկայացներ Սուրբ Ցեղեաց մէջ Հայոց ունեցած իրաւական դիրքը, միաբանութեան հոգեւորական և մատուռական ու անտեսական կացութիւնը, անոր յարաբերութիւնները օտարներու հետ, վէճերը, եւայլն։ Այդ տեղեկութիւնները չափազանց չահեկան պիտի ըլլային ու քանկագին տպբիւր մը այդ շրջանին Հայերուսաղէմի պատմութեան համար(1)։ Եւ սակայն իրաւունք չունինք այս մասին անփոյթ կամ զանցառու համարելու Չէլէպիին, նկատի առնելով՝ որ անիկա ըլլալով պատանի մը, գեռևս հազիւ քսակոխած 12 տարիքը, չէր կարող անձերն ու իրերը գիտել և գտնել այնպէս՝ ինչպէս պիտի ընէր իր հասուն տարիքին։

Հետևինք քայլ առ քայլ Երեմիայի կեանքին՝ զանց ընելով, ինչպէս ըսինք, այն պարագաները որոնք հրատարակութեամբ ծանօթ են արդէն։

Փիլիպպոս կաթողիկոս 1652ին, Երուսաղէմի ժողովէն ետք, որուն անդամը մասնակցած էր նաև Սիսի կաթողիկոս Ներսէս Մեքասատցին, կը մեկնի անկէ և նոյն տարուան Յունիս 19ին կը հասնի Կ. Պոլիս։ Օրուան պատրիարքը՝ Եղիազար Այնթապցի՝ մեծահանդէս քափօրով կ'առաջնորդէ զայն Սամաքիոյ Ս. Գէ-

(1) Այդ տեսակէտէն շատ կարգի առաւելութիւն ունին Գրիգոր Դարանաղցիի (1606-1607, 1616-1617 և 1626-1628), Լեհացի Սիմէոն Դպրի (1616) և Ջուար Մկրտիչեանցի քահանայի (1712) նկարագրութիւնները։

որդի Հիւպատիոսին։ Երեմիա, որ այն ատեն նոր լրացուցած էր 15 տարին, հանդիսին ականատես ըլլալու համար առիթ ունեցաւ Մահանայիմի Ամբակումին հետ նշանակելու Յ'երքամայ ու հոն կը գիշերէ և հետևեալ առաւօտեան ինք ալ կը մասնակցի քաֆօրին, և, կ'ըսէ, կաքաղիկոսը ամուծաք յիւպատիոսին, ուր տեղի կ'ունենայ ժամերգութիւն և պատարագ։

Երեմիա, քէն ուշիմ ու հետաքրքիր պատանի, իր փոքր տարիքին պատճառաւ տակաւին չէր կրնար անշուշտ գործնական մասնակցութիւն ունենալ ազգային խնդիրներու մէջ, բայց արդէն կը սկսէր ուշի ուշով հետևիլ ամէն անցուդարձերուն, զորս կ'արձանագրէր իր Օրագրութեան մէջ։

Այդ օրերուն կը վախճանի Անտոն Չէլէպիի հայրը, որուն յուզարկաւորութիւնեան կը նախագահէ Փիլիպպոս կաքաղիկոս, ու հանգուցեալը կը թաղուի որ դիրս գերեզմանաց Ղալաթիոյ, որ է Բերայի գերեզմանատունը։ Թաղումէն վերջ Անտոն Չէլէպի հոգեւոր հաշիւ կը պատուէ յուզարկաւորներէն, որոնց մէջ էր նաև Երեմիա (Օրագր. էջ 32)։

Եասս չ'անցնիր՝ Եզիպտոս տեղեկութիւն կը հասնի կաքաղիկոսի հետևորդներէն մինչ ամուսնացեալ կ'ըլլան այսու ևս ի տուբս քաղաքին, կը հրաժարի պատրիարքութենէ ու Սեպտեմբեր 23ին, Վարագայ խաչի պահոց Հինգշաբթի օրը, կը մեկնի Գալլիպոլի՝ երթալու համար Տիգրանակերտի Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքը, որուն առաջնորդն էր արդէն։ Եզիպտոսի բարեկամները՝ հետերնին առնելով Երեմիա պատանին՝ զայն համրոյ դնելու կ'երթան Սկիւտար, մինչև Գալիպոլի գէմի մարգագետինը, ու հոն կը ճաշեն և կ'ընդունին անոր օրհնութիւնը (Օրագր. էջ 32–3)։

Եզիպտոսի հրաժարելէն ետք պատրիարքական

աքսորը իրարու հետէ կը գրաւեն Փիլիպպոս կաթողիկոսի հետեւորդներէն Մեծ Ոհան վարդապետ (Յովհաննէս Արշընցի), Յաքէպ առաջնորդ Ներսէս վարդապետ և Մուշեղեցի Յովհաննէս վարդապետ։ Առաջին երկուքին պաշտօնավարութիւնը չատ կարճատեւ կ'ըլլայ, վասնզի կը ստիպուին տեղի տալ Յովհաննէս Մուշեղեցիին, որ գանազան հնարքներով ինք կը գրաւէ պատրիարքական աքսորը։

Փիլիպպոս կաթողիկոս 10 ամիս և 7 օր կը մնայ Կ. Պոլիս (1652 Յունիս 19 — 1653 Ապրիլ 27)։ Եղեւ-ըար ի պատիւ Հոգեւորականի չինել տուած էր սգեղեցիկ և մեծամեծ խուցեր և տեղի նստելոյն Սամաքիոյ Ս. Գէորգ, Ղալաքիոյ Ս. Լուսաւորիչ և Գումգափուի Ս. Աստուածածնին եկեղեցիներուն առընթեր, որոնց մէջ կարգաւ կը քնանայ Հայրապետը իր Կ. Պոլիս անցուցած տասնամեայ ժամանակաշրջանին։ Այդ միջոցին իր ջանքերով ու յորդորներով կը յաջողի վճարել տալ ազգին վրայ ծանրացած 40,000 ղրուշի պարտքը։ Կ'աշխատի մայրաքաղաքի քնիկ ու գագաթնական ազգայնոց մէջէն ներսեցիի ու դրսեցիի խտիրը վերցընել։ Ս. Նիկողայոս եկեղեցիին մէջ իր հետեւորդ յիշեալ վարդապետաններուն (Ոհան, Ներսէս, Յովհաննէս Մուշեղեցի) վարդապետական իշխանութեան գաւազան կու տայ։ Ս. Հրեշտակապետի մէջ Գուզոտանցի եպիսկոպոս մը կը ձեռնադրէ։ Մեծ Ոհան վարդապետը օրհնութեան կոնդակով Լեհաստան կ'ուղարկէ։ Նաև 1653 Փետրուար 6ին կը պատարագէ Ս. Նիկողայոսի մէջ և Ոգլոյնի ատեն մխիթարեանց կը կատարէ, այսինքն միւռոն կը բաշխէ Ս. Աստուածածնի, Ս. Նիկողայոսի և Ս. Սարգսի եկեղեցիներուն արծաթէ ամաններով, զորս բռնած ունէին նոյն եկեղեցւոց ւսւագերէցները, որոնցմէ Ս. Սարգսի սւսագերէցն էր Եփեմիայի Հայրը Տէր Մարտիրոս։ Զատկի օրը (1653 Ապրիլ 10) Ներկայ

կը գտնուի Մ. Նիկոզոսյան եկեղեցին՝ հետը ունենալով Լինահայոց Նիկոլ Եպիսկոպոսը, որ կաթողիկոսին ոտքը եկած էր հնազանդութիւն յայտնելու ու արձակում խնդրելու. Մովսէս կաթողիկոսի իր վրայ գրած բանագրանքէն։

Հայրապետը իր Կ. Պոլիս գտնուած միջոցին յաուսկ սէր և ընտանութիւն ցոյց կու տայ Մահտեսի Ամրակումին ու անկէ կը խնդրէ Աստուածաչունչ մը գրել տալ իրեն համար (Օրագր. էջ 310)։ Իր հայրական սիրոյն կ'արժանացնէ մասնաւորապէս ուշիմ և ուսումնասէր Երեմիա պատանին։ Փիլիպպոս կաթողիկոսի Ջէմիւրճեան գերգաստանի հանդէպ ունեցած այդ հայրական վերաբերումին մէկ ապացոյցն է այն՝ որ Երեմիայի փոքր եղբայրը Գէորգ կը հիւանդանայ ու 1653 Յունուար 14ին, կը գրէ Երեմիա, անոր ջերմեռանդ փափաքին համաձայն, ստորագ իր յառաջ Հոգևորտիրին, եւ Հոգևորտէրն մի խաչ տուեալ նորա մատով և աւրհնեաց զնաւ (Օրագր. էջ 35)։

Հայրապետը իր Կ. Պոլսէն մեկնելէն օր մը առաջ, այսինքն 1653 Ապրիլ 26ին, հրաժեշտի քարոզը կը խօսի Մ. Նիկոզոսյան եկեղեցին, կը խրատէ ու կ'օրհնէ ժողովուրդը, կը ծանուցանէ Քէ Ծովհաննէս Մուշնեցին մէկ տարուան համար առաջնորդ կարգած է մայրաքաղաքին, իսկ այնուհետև զով որ խնդրեն՝ գայն պիտի ուղարկէ. նաև կը ծանուցանէ՝ Քէ Երեմիայի հայրը Տէր Մարտիրոս կարգած է ովէքիլ եւ աւագերէց Մ. Էջմիածնայ, որպէսզի հակէ Մայր Աթոռի գանձանակին վրայ ու արդիւնքը իրեն հասցնէ։ Գալստեամանքի աւարտէն վերջ Մ. Աստուածածնէն, Մ. Նիկոզոյսյան և Մ. Մարգսի աւագերէցներըէ՝ Տէր Յհան, Տէր Աւետիս և Տէր Մարտիրոս (Ջէմիւրճեան), նաև Տէր Յոհան ու Երեմիայի վարժապետը Տէր Ծովհաննէս և ինք Երեմիա կը ներկայանան Հայրապետին, որ քա-

հանանները կը պարգևատրէ ծազկեայ փիլոններով և գլխու գօտիներով ու Երեմիայի կ'ընծայէ ամի փէշիկը մահրամա չինածը։

Հետևեալ օրը, Ապրիլ 27 Յորիքչարքի, կաթողիկոսը կը մեկնի Կ. Պոլսէն ու կ'երթայ Ներսէս հայրապետի կզզին (Սիվըի ատա)։ Իրեն յուզարկ գացողներուն մէջ է նաև Երեմիա։ Գիշերը այդ կզզին կ'անցընէ ու օրհնելով գինք ուղևորելու եկողները՝ կը մեկնի Գրուսա, ու Երեմիա իր ընկերներով յաջորդ օրը կը գառնայ Կ. Պոլիս։

Կաթողիկոսը մինչև Մայիս 25 կը մնայ Գրուսա՝ հիւր տեղւոյն անուանի ազգային Անտոն Զէյէպիի։ Տէր Մարտիրոս լսելով հայրապետին հոն յամենալը՝ իր գաւկին Երեմիայի, նաև Ոսկան երէցի ու Ներսէս վարդապետի Ներսէսին հետ Մայիս 16ին կ'երթայ Կ. Պոլսէն ու հետևեալ օրը երեկոյին կը հասնի Գրուսա. տեղացիք կը տանին գիրենք Անտոն Զէյէպիի տունը։ Կաթողիկոսը յաջորդ օրը գառնալով Անտոն Զէյէպիի մեծ տունէն՝ պատուով կ'ընդունի գիրենք ու քովէն չի հեռացներ Տէր Մարտիրոսը. իսկ Երեմիա կը հիւրընկալուի քաղաքի Գետրոս երէցէն, որուն ծանօթացած էր Երուսաղէմի մէջ իր ուխտի գացած տարին։ Մայիս 21ի Երեքշաբթի երեկոյին ուշ ատեն չուր կը բերուի քէ Գրուսա եկած է Դաւիթ Արևելցի, այն՝ որ յառաջագոյն չորս անգամ պատրիարք եղած էր Կ. Պոլսոյ։ Այս անգամ, կը գրէ Երեմիա, անիկա գացած էր Իզնիմիտ՝ անկէ կրկին մայրաքաղաք երթալու և նորանոր յուզումներ պատճառելու դիտումով։ Երբ Կ. Պոլսեցիք կը լսեն Արևելցիի մէջտեղ ելլելը՝ վեց եկեղեցիներու աքոռակալները Իզնիմիտ կը ղրկեն, որպէսզի քանագատեն զայն ետ կեներու Կ. Պոլիս երթալու նպատակէն ու խորհուրդ տան որ երթայ մնա-

Նայ կաթողիկոսի հետեւորդներուն։ Նորընծիր պատրիարքը՝ Ծովհաննէս Մուղնեցի, որ նոյնպէս գացած էր Իզնիմիա, կը յաջողի Դաւիթ Արեւելցին բերել Պրուսա։ Երեմիա երբ անոնց գալը կը լսէ՝ գուրս կ'ելլէ Ցէր Պետրոսի տունէն, նախ համբուրն վրայ կը համբուրէ եկողներուն աչքը, ապա առանց ոչ ոքի բան մը ըսելու՝ վազելով կը հասնի կաթողիկոսին մօտ, ուր կայնի վարդապետներ և քաղաքին իշխաններըը, կը համբուրէ անոր աչքը ու կ'ըսէ. «Հոգեւորե՛ր, ասեմս քեզ, զի Ծովհաննէս վարդապետն առեալ զԴաւիթ եպիսկոպոսն եւ գայր»։ Կաթողիկոսը չատ կ'ուրախանայ ու երեսին երեսն ու ճակատը կը համբուրէ և տասը գրուշ նոց չուխայ մը կը նուիրէ անոր իբրև ասեղնայ (իր բառով մուօրուլուխ)։ Հետեւեալ առաւօտ (Մայիս 22 կիրակի) Հայրապետին առջեւ կը հանեն Արեւելցին, զոր խստիւ կը յանդիմանէ ու կ'ահաբեկէ։ Անոնք Զէքէպի իբ միւս մեծ տունը բերել տալով կաթողիկոսը, որուն ընկերացողներուն մէջ էր Երեմիա, երաշխաւոր կ'ելլայ Արեւելցիին՝ որ այլեւս այդ կոչմիրը չգնգերի ու կը խոստանայ Հոգեւորտէրէն հետը տանիլ գայն Էջմիածին. 200 գրուշ կու տայ Արեւելցիին՝ պարտքերը հատուցանելու և հանապարհի պէտքեր հայթայթելու համար և 2000 գրուշ ալ կը նուիրէ կաթողիկոսին՝ իրը պատառ Ս. Էջմիածնի գանձատան չինուքեան։

Երկու օր վերջ (24 Մայիս Գէ.) Անոնք Զէքէպիի ապարանքը կը հաւաքուին կաթողիկոսին հետեւորդ վարդապետներն ու քաղաքին մեծամեծները, անոնց հետ նաև Երեմիա, ու ամբողջ օրը հոն կ'անցընեն ուրախութեամբ։ Հետեւեալ օրը, Ջուխքշաբթի, Հայրապետը արեւելով ամէնքը ու հեծնելով իր ձորին կը մեկնի, ու իրեն յուզարկ գացողներըը կը գառնան քաղաք։ Երեմիա և իր հայրը Ցէր Մարտիրոս և Ծովհաննէս Մուղնեցի տակաւին երեք օր կը մնան Պրուսա ու բարեկամ-

Ներքը կը պատուեն զանոնք պարտէզ տանելով ու հրջեցնելով քաղաքին գլխաւոր վայրերը՝ Գաբլըճա, ըքագաւորաց տեղիքն ու Ջամլըճա։ Մայիս 30ին, երկուշաբթի, կը մեկնին Գրուսայէն ու Ճունիս 2ին կը վերադառնան Կ. Պոլիս։

1654 Մայիս 22 երկուշաբթի, տան Սրբոց Կուսաց Նացն Հոխիսիմեանց, յիշատակելի օր մը կ'ըլլայ ե-բեմիայի կեանքին մէջ։ Այդ օրը, մինչ նոր յրացուցած էր տասնեւօքն տարին ու ինը օրէ ի վեր քահանայած էր տասնեւութին մէջ, Սուրբ Նիկողայոսի եկեղեցին տեղի կ'ունենայ իր պսակադրութիւնը մեծ հանդէսով։ Օրեր առաջ հարսանիքի նախապատրաստութիւնները կը տեսնուին։ Մայիս 11ին Կ. Պոլսոյ ե. չրջակայից փուռերը կ'երթան ու հարսանիքի կը հրամիրուին Մահտեսի Ամբակումի արհեստակիցները. նոյնպէս Մայիս 13ին ուրիշ խանութներ կ'այցելեն նոյն նպատակով։ Եւ որովհետեւ այդ օրերուն նորոգութիւնները կը կատարուէին իրենց տան մէջ, այդ պատճառաւ հարկ կ'ըլլայ հարսանիքի համար Յոճա Պալի տունը ապգայինին տունը վարձել ու բոլոր հրաւիրեալները նախօրօք, այսինքն Մայիս 21, եղիսկան կիրակին, հոն համախմբել։ Այն տեղէն կէսօրին նշանաւորնէքի կ'երթան Ս. Նիկողայոս եկեղեցին, ուր ներկայ էին երկու կոզմի տաներէցները ու վարդապետները։ Վերջիններէս մին խրատական կը խօսի ու կը յորդորէ սիրով տանիլ ամուսնական լուծը և խազաղութեամբ կենակցիլ միմեանց հետ։ Նոյն երեկոյին տեղացող յորդահոս անձրեւը արգելք կ'ըլլայ հարսանեկան ընթրիքը ընել Յոճա Պալիի տան պարտէզին մէջ ու հարսնեւորները կը ստիպուին ներս քաշուիլ ու նստիլ բազմոցներու վրայ ամի ի վերայ միոյն։

Հետեւեալ օրը, երկուշաբթի (22 Մայիս), Սուրբ

Ընկոչումի մէջ վարդապետներն ու քահանաները նախ առաւօտեան պաշտամունքը կը կատարեն ու ապա գացած կու տան։ Երբ փեսան ու հարսն ու հարսնեւորները կը մտնեն եկեղեցի՝ կը սկսի պատարագը. կը հրաւիրեն պատրիարքը՝ Յովհաննէս Մուշեղեան, Ս. Էջմիածնի նուիրակ Գաբրիէլ վարդապետը ու ամեն ժամկից ու աշակերտակից Տէր Յովհաննէսը, վիճակիներգը Ս. Հռիփսիմէի և Ս. Գայիանէի վկայարանները, ու պատարագի միջոցին կը կատարուի պսակի խորհուրդը։ Եւ օրվհետև այդ օրը, ինչպէս ըսինք, Երջոց Հռիփսիմեանց տօնն էր, այդ առիթիւ Երեմիա կը գրէ իր Օրագրութեան մէջ. «Սոցին բարեխաւսութեամբ բարերարն Քրիստոս հնազանդ ծառայմամբ ըզչնորհս ազգմուքեան իւրոյ յիւր հաւատացեալն եւ մանաւանդ նըւաստիցս, որ կամք հանգէպ ահով սուրբ պատարագիս։ Պատարագին ներկայ կը գտնուին, յիշեալներէն զատ, նաև վանքերու միաբաններք, քահանաներ և ժողովրդեան բազմութիւն մը։ Պատարագէն ետք, Շարականի երգեցողութեամբ, նորապսակները կը տարուին եկեղեցիին դուռը. հոն վարդապետները կ'արտասանեն Հայր մերը ու նո կը գտնան։ Ապա հարսանեկան քափօրը, քահանայից ու գըպիրներու երգեցողութեամբ, կը շարունակէ իր ընթացքը մինչև դուրսի դուռը. երբ կը մտանեն հարսանեաց տան՝ կը վերսկսին երգեցողութիւնները ու ամէնքը կը մտնեն ներս։ Նոյն երեկոյին պալաքցիք ալ կը հասնին ու բոլոր հրաւիրեալները կու տան իրենց ընծաները նորապսակներուն ու հարսանիքը կը շարունակուի մինչև յաջորդ երեքշաբթի գիշեր (Օրագրութիւն, էջ 52–54)։

Ընծաները կը ճոխանան երեմիայի գնոջ ու անոր ծնողաց համ գերդաստանի անուններուն, վասնզի ինք անոնց մասին անէ չիշատակութիւն չ'ըներ իր Օրագրու-

թեան մէջ։ Մէկ անգամ միայն, իր ամուսնութենէն երկու տարի վերջ, 1656 Յունիս 28ին, իր քահանայ հօր հետ միասին աներջիջը այցելութեան երթայը կը յիշէ. «Ես եւ Տէրտէրն իմ գնացաք յաներանցս (էջ 192)։

Երեմիա Մահտեսի Ամթակումի նման բարեպաշտօն ու առաքինի հայրապետի մը ու պաշտպանի մը խնամքին ու հովանաւորութեան ներքեւ երջանիկ ու խաղաղիկ ընտանեկան քոյն մը կազմեց, որուն անդորրութիւնը չվրդովեցաւ երբեք, ու Աստուած օրհնեց իրենց միութիւնը պարգեւելով երեք արու ու մէկէ աւելի աղջիկ զաւակներ։ Ասոնց անգրագառնալու ա-նիք պիտի ունենանք ետքէն։

Յայտնի չէ ապա՛ն քէ երեմիայի կեանքի ընկերը քանի՛ տարի ապրեցաւ. անոր մահը երեմիայէ առա՞ջ պատահեցաւ քէ ետքը. միայն գիտենք քէ 1690 Դեկտ. 27ին, այսինքն իրենց ամուսնութենէն 34 տարի, 7 ամիս ու 5 օր ետք տակաւին կ'ապրէր ան։ Իրենց մանկամարդ աղջիկը Սոզոմէ, որուն մասին պիտի գրենք յետոյ, նոյն օրը կը վախճանի։ Այդ տարի երեմիա իր յօրինած Դանդին (Յաւ. էջ 627–32) կը կցէ Քուրքերէն Ոգը մը՝ ննջեցեալին ընթերցումը դիւրաւնարար իր ի կեանս եղող մօրը ուղղուած. «Ընչեր պէնի սիզ ազլաման սըզլամանս (էջ 632–4)։

Երեմիա գանուելով անչափահաս տարիքի մէջ՝ տակաւին չէր կրնար գործնական մասնակցութիւն ունենալ այդ ժամանակին Կ. Պոլսոյ մէջ յուզուող ազգային–եկեղեցական խնդիրներուն, քէեւ իրրեւ ուշիմ ու հետաքրքիր պատանի՝ հետեւէն կամ մօտէն կը հետեւէր օրուան անցուդարձերուն, ներկայ կը գտնուէր ժողովներու եւ յարաբերութիւններ կը հաստատէր հոգեւորական ու աշխարհական յայտնի անձնաւորու-

քեանց հետ, և գովելի փոյթով տեսածներն ու լսածները օրը օրին գիրի կ'անցընէր իր Օրագրութեան մէջ։

Իր ամուսնութեամբ այլևս չափահասութեան տարիքին կը քաւակսէ Երեմիա ու այնուհետև, համաձայն իր Օրագրութեան, մինչև 1660 տարին, կը սկսի գործնականապէս մասնակցիլ պատրիարքական ու քաղաքին վէճերուն, մինչ ան նեղաժան ու համախորհուրդ և գազափարակից Մահտեսի Ամրակումի ու իր հօր Յէր Մարտիրոս Քէօմիւրճեանին։ Կը մասնակցի նաև ժողովներուն իրեն քաջատուպար ու ինք կը խմբագրէ նամակաները։ Դարձեալ Մարտիրոս վրդ. Ղրիմեցիի և Յովհաննէս Հուհիճանի հետ գործօն գեր կը կատարէ Եղիազարի բռնութեան ազատութեան աշխատութեանց մէջ։

Շաբունակենք հետևիլ Զէլէպիի Օրագրութեան, անկէ քաղելու համար իր կենսագրութեան վերաբերեալ մասերը։

Եղիազար Այնթապցի 1652 Սեպտ. 23ին մեկնած էր Կ. Պոլսէն գէպի Տիգրանակերտի Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքը։ Երկու տարուան ու մօտ երեք ամսուան բացակայութենէ ետք, 1654 Դեկտ. 15ին, Ուրբաթ, կը վերադառնայ Կ. Պոլիս և նախ կ'իջևանի Սկիւտար։ Երեմիա իմանալով Եղիազարի գալը՝ գայն ողջունելու համար նոյն օրը քոլոր բարեկամներով կ'անցնի Սկիւտար, այնտեղ կը գիշերէ և հետևեալ առաւօտուն ամէնքը կ'երթան եկեղեցի ու վարդապետը պաշտան կատարել ու մատոյց օրհնել կու տայ։ Նոյն Շաբաթ երեկոյին Երեմիա և ընկերները կը գառնան Կ. Պոլիս։ Հետևեալ օրը, կիրակի, նորէն կ'անցնին Սկիւտար ու հոն կը մնան մինչև երեքշաբթի։ Նոյն օրը վարդապետը պատուով կը տանին Կ. Պոլիս՝ նախ Ս. Աստուածածնի ու յաջորդ օրը, Չորեքշաբթի, Ս. Նիկողայոսի եկեղեցին (Օրագր. 59–60)։ Այնուհետև Եղիազար կը հրաւիրուի Կ. Պոլսոյ

մինա եկեղեցիները՝ Ս. Գէորգ, Ս. Սարգիս, Ս. Հրեշտակապետ և Ս. Լուսաւորիչ, կը պատարագէ, կը քարոզէ և ձեռնադրութիւններ կը կատարէ։

Մահտեսի Ամրակում և Քէամիւրճեանց տունը Ս. Էջմիածնի Կ. Պոլսոյ պատրիարքութեան ժամանակէն համակիր ու բարեկամ եղած էին իրեն։ Մահտեսի Ամրակում ի նշան իր բարեկամութեան 1651ին Ծայամաւուրք մը օրինակել տուած էր Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքին համար, որուն ստացողը եղած էր Եզիազար։ Աւոր Ծիչատակարանին մէջ Տէր Մարտիրոս Քէամիւրճեան կը գրէ. «Ես մեք Ս. Սարգիս եկեղեցւոյ Տէր Մարտիրոս եւ Տէր Ովանէս (երկմիայի վարժապետը) քահանայքս . . . հարեալ էաք ի սէր վարդապետիս և միշտ ընդ նմա չրջէաք գցայդ եւ գցերեկ՝ անանձնատ կալով յեկեղեցական եւ յայլ ծառայական գործս»(1)։ Եզիազարի այս անգամ Կ. Պոլիս գառնալուն իր բարեկամներուն վրայ կ'ունենայ նաև Տէր Մարտիրոսի անգրանիկ գաւակը և Մահտեսի Ամրակումի որդեգիրը՝ Երեմիա, որ իբրև ուսման ծարաւի երիտասարդ՝ օրդիական սիրով կը փարի անոր՝ գրաւուելով անոր քաղցրաբան վարդապետութիւններն ու անձանձիր քարոզութիւններէն և գեղեցիկ ըսա Աստուծոյ քաղաքավարութիւններէն։ Այնուհետև գրեթէ անբաժան կը գտնենք զինքը Եզիազարէն, այնպէս որ երբեմն գիշերներն անգամ անոր մօտ կ'անցընէ, ու այդ սերտ յարաբերութիւններէն, անտարակոյս, մեծապէս կ'օգտուի Երեմիա ու անոր առաջնորդութեամբ կը զարգանայ կրօնական և ուրբգրական ուսմանց մէջ, ինչպէս յիշեցինք վերև։ Երեմիա հաքէն, 1682ին, իր էջմիածին առ Եզիազար կաթողիկոս ուղղած քուղքին մէջ (Ծաւէլ. էջ 435) սրտագին տողերով կը յիշէ

(1) Թարսա Ակրաար առ Ակինեանի, էջ 25։

իրենց այս փոխադարձ սէրը և ընտանի մտերմութիւնը։ Աւսոր մէկ ապացոյցն ալ է այն՝ որ իր Օրագրութեան մէջ երբ Եզիազարի մասին կը գրէ՝ ընդհանրապէս ամեր վարդապետաց կ՚անուանէ զայն։ Նոյն մտերմութեամբ երեմիա կը կապուի նաքէն Մարտիրոս վարդապետ Ղրիմեցիին հետ ալ։

Ամէհանէս Մուշեղեցի քէն սկիզբէն առեքսա սիրայիր ընդունելութիւն կ՚ընէ Եզիազարին, մինչև իսկ կոչունքի կը հրաւիրէ զայն (8 Օգոստ. 1655), և սակայն չի հանդուրժեր անոր ներկայութիւնը Կ. Պոլսոյ մէջ, կասկածելով թէ մի գուցէ անիկա իր ճարտար լեզուով ու հնարամտութեամբ ու քաղմապիսի կարողութիւններով ուժով մրցակից մը հանդիսանայ իր դէմ։ Արդարև չատ չանցած երկուքին միջև յարաբերութեանց ցրտանալուն առիթներ նլատն կու գան։

Երուսաղէմի մէջ Յոյները, որոնք Մոսպատիկի ատրիէն ի վեր (1631) սաստիկ հակառակութիւն ցոյց կու տային Հայոց դէմ, կը յաջողին մերայնոց ձեռքէն յափշտակել Հապէշներուս վանքերն ու կալուածները, զոր իրենց երկերը երբեմն ունէին Հայոց պատրիարքութեան, որուն հնուանկներն էին արդէն։ Ամէն գաս Յոյները նորանոր ոտնձգութիւններ կ՚ընեն սրբավայրերուն մէջ Հայոց իրաւունքներուն դէմ ու մինչև իսկ կը փորձեն յափշտակել մեր Ս. Յակոբեանց վանքը։ Այս խնդիրներուն արմատանդը հասած էր ինչպէս կ. Պոլիս՝ նոյնպէս Թուրքիոյ նահանգներն ալ։ Հայոց և յունադաւան ազգերուս միջև։ Ամէն տուր մը առնելք մէկ, կը գրէ երեմիա (Օրագր. էջ 87), Պուզտանի մէջ, ուր տակաւին Հայեր կան, յունադաւան տեղացիներ փակեր են Հայոց եկեղեցիները, պատճառելով՝ մէկ Հոր ազգը

Երուսաղէմի մէջ հանգիստ չի տար մերիններուն։ Ե-
զիպտոսը գայթ իմանալուն պէս՝ 1658 Օգոստոս 27ին
կ'երթայ Երուսաղէմի Ռուներց պատրիարքին, որ այս
վէճերուն առիթ կ. Պոլիս գացած էր, բայց չի գըտ-
ներ գային իր տեղը, վասնզի մէկ ժամ առաջ նաւ մը-
տած էր Երուսաղէմ գառնալու համար։ Եզիպտոս
խոկոյն կը գառնայ Ղալաթիոյ Մ. Լուսաւորիչ եկեղե-
ցին, ու միջոցներ ձեռք կ'առնէ ու կը յաջողի հետև-
եալ օրը (28 Օգոստ.) Մարմարայի բացերէն ետ գար-
ձընել սալ Ռուներց պատրիարքը տանող նաւը, որ
խայխոս կը ձգէ Տումգափուի առջև։ Նոյն օրը Ե-
զիպտոս Մ. Նիկողայոսի եկեղեցին ժողովի կը կոչէ
վեց եկեղեցիներուս ասպիրէցներն ու իշխաններըը։
Վերջիններս մարդ կը ղրկեն Մուշնեցիին, որ ինք ալ
գայ ժողովին ու միասին խորհրդակցին։ Ան ի՞նչ
պարագ ունի՞մ, կը պատասխանէ Մուշնեցին, հո-
գալու Ռուզտանի Հայերըը։ Ժողովէն ետք Եզիպտոս,
հետը առնելով քանի մը քահանաներ ու իշխաններ,
կ'երթայ նաև Ռուներց պատրիարքէն բացատրութիւն
կը պահանջէ Ռուզտանի դէպքերուն մասին։ Պատրի-
արքը անգէտ կը ձևանայ, ու անմիջապէս իր խոհ ձեռ-
քով նաւին վրայ նամակ մը կը խմբագրէ Ռուզտանի
իշխանին ուղղեալ, յայտնելով թէ Հայոց և Ռուներց
միջև ուխտի գաչինք մը կնքուած է, որուն համա-
ձայն անոնք խաղաղութեամբ և սիրով կ'ապրին Երու-
սաղէմի մէջ։ Գիրը կը յանձնէ Եզիպտոսին ու նաւը
կը շարունակէ ճամբան։ Եզիպտոս կը վերադառնայ
Մ. Նիկողայոս. կարգալ կու տայ Ռուներց պատրիար-
քին գիրը ու կը ղրկէ Ռուզտանի պարոնին։ Այս խըն-
գիրին մէջ Մուշնեցիին ցոյց տուած անտարբերութիւնը,
անկասկած, ապէկ ալքով չի գիտուիր ամանց կոչմէ
ու կը նպաստէ համակրութեանց Եզիպտոսի կողմը
գառնալուն։

Հետեւեալ դէպքը ապացոյց կը սաստկացնէ երկու կոչմերու հակառակութիւնը։

Նոյն տարեւան (1655) Մայիս 30ին Քոճա Ալէմ անուն ազգայինն փեռան կ. Պոլիս հասնելուն՝ կը բերէ գոյժը Փիլիպպոս կաթողիկոսի մահուան, որ տեղի ունեցած էր Էջմիածնի մէջ Մարտ 24ին, Քառասուն մանկանց տաճին օրը, ու տեղը ընտրուած էր Յակոբ Դ. Ջուղայեցի։

Փիլիպպոս կաթողիկոս իր կ. Պոլիս գտնուած տարին Յովհաննէս Մուղնեցին պատրիարք կարգած էր (1653 Ապրիլ) մէկ տարուան պայմանաժամով։ Սակայն երբորդ տարին էր որ ան կը վարէր պաշտօնը՝ կաթողիկոսի հովանաւորութեամբ ու իր կուսակիցներուն պաշտպանութեամբ զօրացած։ Փիլիպպոսի վախճանէն ետք վեց ամիս անցած էր ու տակաւին Մուղնեցին կ. Պոլսոյ եկեղեցիներուն մէջ յիշատակել չէր տուած նոր կաթողիկոսի անունը։ Անիկա կը սպասէր որ գոյ օրհնութիւնն անդրանիկ կոնդակը, որու մէջ կը յուսար հաստատուած տեսնել գինքը պատրիարքական աթոռին վրայ, ինչ որ պիտի նպաստէր առաջն առնելու Եզիազարի ու իր կուսակիցներուն յաւակնութեանց։

Եզիազար Գուգունի փակուած եկեղեցիներու քշնամ խնդիրը կարգադրելէն ետք՝ կ. Պոլսէն մեկնելու նպատակով անցած էր Սկիւտար, պատրաստած էր ձիերն ու ջորիները, բայց կը ձգձգէր իր մեկնումը՝ պատճառելով քէ ուղեկիցներուն կը սպասէ։ Իր բարեկամներն ու սիրելիները, որոնց մէջ էր Երեմիա, ամէն օր գովը կ'երթային ու երեկոյին կը գտնային կ. Պոլիս։ Ըսանք ալ անոր մօտ կը գնէրէին Սկիւտար։ Ս. Սարգիս եկեղեցւոյ նախակոններէն քանի մը քառասունք կը տարաձայնեն՝ քէ Սկիւտար երթեւեկող-

Ներու Նպատակն է իրենցնել Մուշնեցին պատրիարքութիւնէ ու տեղը Եղիազարը նատեցնել։ Մուշնեցիին կուսակիցները ժողով կը գումարեն Ս. Նիկողայոս Եկեղեցին, ուր Ներկայ կը գտնուի Նաև Մուշնեցին։ Այնուհետև չարաթ մը ամբողջ բուռն հակամարտութիւններ տեղի կ'ունենան Եղիազարեաններու և Ծովհաննէսեաններու միջև։ Առաջիններըը կը բոլորուին Եղիազարի չուրջը՝ Սկիւտար, ու միւսները՝ Մուշնեցիին չուրջը. ու երկու վարպապետները ծանր պիրեր կը փոխանակեն իրարու միջև։ Մուշնեցին կը գրէ. «Ես կաթողիկոսի հրամանով ու բոլոր քաղաքիս հաւանութեամբ նատած եմ ու ոչ մէկը հակառակ չէ ինձ. գուն ի՞նչ ունիս հետս. եկար հոս՝ գրամ հաւաքելու, պատիւ վայելելու, ե՛լ գնա այլևս. ձեզ չենք պատ՝ ես ակամայ կը գրկեմ քեզ, ասյլներ։ Եղիազար կը պատասխանէր. «Ես քաղաքդ հինա ըրած եմ. ես կը նըստիմ, գուն ու՞ղ կը վարես. երբ գուն այդպէս պիս կ'ուզարկես՝ ես չեմ երթար, այլ քեզ կը հանեմ»։ Այսպէս Եղիազար տեղէն չէր շարժիր եւ Մուշնեցի չ'ուզեր բաժնուիլ աթոռէն։ Երկու կողմի կիրքերը կը բորբոքին ու Ծովհաննէսեաններէն մաս մը խանձրն ու չատերը եկեղեցիները կը խմբուին ու կը սկսին գաւեր Նիւթել Եղիազարի ու անոր համակիրներուն դէմ։ Հուսկ ապա, Սեպտ. 14ին, վեց եկեղեցեաց մեծամեծներէն երկերկու խոհեմ մարդիկ կ'երթան Եղիազարի սաքը կ'իյնան ու Մեղա՛յ կ'ըսեն։ Եղիազար կը պատասխանէ. «Քանի որ եկաք, ես ալ ձեզմէ կը խնդրեմ որ չսոխպէք գիս այլազգիներու գուռը իյնալ, այլ գուք ձեզնէն մեր գաղը տեսէք։ Իմ յանցանքս այ՛ս է, որ Փիլիպպոս կաթողիկոս մեծ պահոց մէջ վախճաներ է ու տեղը Ծակոր կաթողիկոսն է նըստեր, ու մինչև այսօր, որ Ս. Յակոբ տօնն է, Մուշնեցին տակաւին անոր անունը չիշատակել չէ տուած

պատարագի մէջ։ Եկեղեցին կը պատասխանէ. «Քո՛ղ այդպէս ըլլայ», ու ետ դառնալով՝ եպիսկոպոսի խոսքերը կը հաղորդեն Մուշեղեցիին, որ չըլլաթրականով մը կը հրամայէ Ս. Աստի նահատակաց Եպրաքի օրէն սկսեալ յիշել Յակոբ կաթողիկոսի անունը պատարագին մէջ։

Սեպտեմբեր 20ին եպիսկոպոս Սկիւտարէն Ղալաթիա կը դառնայ ու այնտեղէն ընդունելութեան թուղթ մը կը գրէ Յակոբ կաթողիկոսին ու կը գրկէ Մուշեղեցիին որ ան ալ կ'երթէ։ Ասիկա հնարք մըն էր եպիսկոպոսի կողմէ, որպէսզի ինք կ. Պոլիս սպասէ՝ մինչև թուղթին պատասխան ընդունիլը կաթողիկոսէն։ Անդին Մուշեղեցիի հուսափիցներէն ծածկապէս Յակոբ կաթողիկոսի ուղղակի բազմաթիւ հանրագրութիւն մը կը պատրաստուի, ուր նկարագրելով վերջին անցուդարձերը՝ կը խնդրուի որ բանադրէ եպիսկոպոսի երկու երես մարգիկը, որպէսզի քանքաթափ ըլլան, որովհետև, կ'ըսուի, բոլոր քաղաքը մեր կողմն է ու միայն երկու երես հոգի միւս կողմին յարած են։

Այդ օրերուն Յովհաննէս Մուշեղեցի մայրաքաղաքին երեսփոխանները կը համախմբէ Ս. Նիկողայոսի եկեղեցին ու կարդալ կու տայ իրը թէ Յակոբ կաթողիկոսէ այնինչ հասած թուղթ մը, որուն մէջ գրուած էր. «Ախանճանեցւոյ Հոգևորականները ու մենք նատանք անոր տեղ, ու հանգուցեալի կարգադրութեան համաձայն Յովհաննէս վարդապետն է մեր առաջնորդը, ու ով որ չհամեհնայ ու հակառակի անոր՝ այդպիսին Աստուծոյ սուրին կը մատնեմ»։ Ընկերդրները հայրապետական այդ անգրանիկ գիրին պարունակութիւնը անպատչեճ կը գտնեն ու կը կասկածին անոր վաւերականութեան վրայ։ Մանքն ամէն Հայէպցի Դաւիթ վարդապետ Ս. Գէորգի խուցերէն մէկուն մէջ կը գտնէ

ու Եզիազարին կը զրկէ այդ գիրքին սեպագրութիւնը, զոր կը կարգայ նաև Երեմիա, ու երեքն կ'երթան այդ կոնդակին կեղծ ըլլալը, պատրաստուած Կ. Պոլսոյ մէջ՝ Մուշեղեանի ու իր արքեպիսկոպոսութեան կողմէ։ Վէրջիններուս մէջ գլխաւոր դերակատարներն էին համաձեռն երեք Աստուածատուր քահանաները (Քէլքէլ, Քնար և Պարմախսուզ)։ Զաքարիա գալֆա և Մասգիւզի Յակոբ ապգեցիկ ապգայիններէն և ուրիշ երեցներ ու աշխարհականներ. հաքէն ասոնց վրայ կ'աւելնայ ՃԸՀԷՆԷՄ Նէրսիվէնի կոչուած Անգրէաս երէց։ Այնուհետև երկու հակամարտ կողմերը բացորոշ գիրք կը բռնեն իրարու դէմ և բուռն քափով կը ճգնին գիրքը յաղթահարել, քէև Եզիազար և Մուշեղեան Սեպտ. 26ին առերես հաչտուած էին միմեանց հետ։

Յակոբ կաթողիկոսի իսկական առաջին կոնդակը կը հասնի Հոկտ. 26ին։ Անոր մէջ գրուած էր. «Եթէ Փիլիպպոս կաթողիկոսի կարգած առաջնորդը չէք ուզեր, գով որ ուզէք՝ պայն զրկեմ ձեզ»։ Յակոբ կաթողիկոսի այս գիրին հասնելէն հինգ օր վերջ, Նոյ. 5ին, Եզիազար վարդապետ կ'երթայ Պրուսա(1)։

Այդ օրերուն Կ. Պոլիս հասած էր Երուսաղէմի Աստուածատուր պատրիարքի աշակերտ Մարտիրոս վրդ. Ղրիմեցի, որ գործուղ ներկայ մը պիտի հանդիսանար Եզիազարի ու իր կուսակիցներուն։ Արդարև չատ չանցած Ղրիմեցի եկեղեցիներուն մէջ իր ճարտարբանան քարոզներով կը գրգռէ ժողովուրդը Մուշեղեանին դէմ։ Անկէ վերջ կապ ու կռիւներն ու վէճերը այնքան կը սաստկանան, որ Մուշեղեանի կողմակից-

---

(1) 1853 Դեկտ. 29-30 լուսնակալու գիշերը կը վախճանի Տէր Մարտիրոս Քհնայիւթեանի մայրը և յուղարկաւորութիւնը կը կատարուի Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցին (Օրագր. էջ 102)։

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ՂՐԻՄՅԱՆ



Նեղլն քանի մը ապստնցիկ մարդիկ խորհուրդ կու տան անոր հրաժարիլ պատրիարքութենէ ու հետառնալ Կ. Պոլսէն։

Մինչդեռ Կ. Պոլսոյ մէջ կիրքերը իրենց գագաթնակէտին հասած էին, լուր կը հասնի Երուսազէմէն թէ Յոյները կը յաջողին վերջնականապէս տիրառնալ Հապէշներուն տեղերուն և Նկրտիլ ձեռք գարնելու Ս. Յակոբեանց վանքին՝ առարկելով թէ կանուխէն իրենցը եղած է ան։ Աստուածատուր պատրիարք հետացած էր Երուսազէմէն և Գրուսա կը սպասէր ու իր աշակերտ Մարտիրոս վրդ. Ղրիմեցին քիչ առաջ ղբրկած էր Կ. Պոլիս, որպէսզի քաղաքին Թուրքերուն հետ խորհրդակցարար ճար մը գտնէ վտանգին առաջքն առնելու։ Ղրիմեցիին նախաձեռնութեամբ ժողով մը կը գումարուի Ս. Նիկողայոսի եկեղեցին (22 Դեկտ. 1655)։

Այնտեղ կ'որոշուի Սղիտպար վարդապետի գործակցութեան դիմել և մարդ ղրկելով բերել առ գայն Գրուսայէն, ուր այդ օրերը գացած էր։ Սղիտպար կը գտնայ Կ. Պոլիս 1656 Յունուար 25ին ու նախապէս կ'երթայ Ս. Աստուածածնին։ Անկէ առընչ գինքը Ս. Նիկողայոսս, կը գրէ Երեմիա։

Որպէսզի միանգամընդմիշտ վախճան տրուի պատրիարքական վէճերուն և Մուղնեցի նորէն աչք չունենայ Կ. Պոլսոյ աթոռին՝ Սղիտպար 1656 Փետրուար 12ին ժողով մը կը գումարէ և քուղք մը կը պատրաստէ տէրութեան ուղղելու, յայտնելով թէ պոլսահայ ժողովուրդը համաձայն է որ՝ քանի նախապէս սըրբուած քաղաքական հրովարտակին՝ այսուհետև ալ պատրիարք կամ առաջնորդ անունով ոևէ անպզուխ ոտք չկոխէ մայրաքաղաք ու դարձեալ վճիռներով կառավարուի պատրիարքական աթոռը։ Սղիտպար ըսպառնալիքով այս քուղքը կնքել կու տայ բոլոր ժո-

զովականներուն։ Ասոր վրայ Մուշեղեանի կուսակիցները անոր խորհուրդ կու տան անցնիլ Սկիւտար՝ ըսելով. «Գնա՛ ժամանակ մը չրջէ, մինչեւ տեսնենք ի՛նչ կը լինի»։ Բայց եւ այնպէս անոնք քնաւ չեն յուսահատիր ու հակառակորդ կողմը յաղթահարելու համար դիւքուքներուն ու կախարդութիւններուն կը դիմեն ու մինչեւ իսկ կը յանդգնին տարաձայնել՝ թէ Եղիազար մանկութեան ժամանակ տանկըցած է, որպէսզի այս կերպով կարենան ջնասել անոր անձին եւ տոպրէգին քաշուելու տիպել գայն։

Իսկ Եղիազար ու Մարտիրոս վարդապետներ չքնաղ ժողովուրդի ուշադրութիւնը Երուսազէմի վրայ կը հրաւիրեն եւ կը պարտաւորեն ու կը նզովեն գանոնք՝ որ բարձի քովէն ըրած Երուսազէմի Ս. Տեղացը խնդիրները եւ նոյն իսկ Ս. Յակորի գոյութեան սպառնացող վտանգը, իրենց հակառակութիւնը կիրքերուն գրգռում տալու նպատակ ունէր։

Եղիազար նոյնպով ձեռք կ'առնէ Երուսազէմի խնդիրը, ատեպ կ'երթեւեկէ մեծ վէգիրի եւ գազատկերներու դիւանները ու պետութեան գլխաւոր աւագանիին մօտ ու պատ կը վարէ Կ. Պոլսոյ Ցունաց պատրիարքին դէմ։ Այս երթեւեկութեանց առեն ուրիշ ազգայիններու հետ ամէն անգամ իրեն կ'ընկերակցէին նաեւ Երեմիան, որ անբաժան էր իրմէ ու Մարտիրոս վարդապետէն ու անձնուէր աչակից մը եղած էր իրենց ու ինք կը խմբագրէր պէտք եղած քուղթերը։ Ցիշենք նաեւ՝ թէ Երեմիա կիրակի եւ տօն օրերը կը քոնէր Ս. Էջմիածնի պնակը ու նոյն առեն վիրակացութիւն կ'ընէր Մահտեսի Ամրակումի անպահական փուռին։

Մինչ Եղիազար ու Մարտիրոս վարդապետներ Երուսազէմի համար ոգի ի քոին կ'աշխատէին, անդին Մուշեղեանի արբանեակները կը շարունակէին ամէն

ջանք գործ դնել գործնելու համար գայն իր սիրուը, ու իրենց կամքը առաջ տանելու համար ձեռք կը գար-նէին էջմիածնի հաստիքներուն։ Շաբաթ օր մը (3 Մա-յիս 1635) էջմիածնի պնակը բռնելու համար երեմիա կ'ուրիայ նկնգնցի ու կը տեսնէ որ հոն կը կարգացուի Ընդհատ վրդ.-ի կ. Գալաթ վնց նկնգնցիներուն ուղ-ղած մէկ գիրը, որով խստիւ կը պատուիրէր գագրե-ցընել այնուհետև էջմիածնի գանձանակը, քանի որ, կ'ըսէր, ժողովուրդն ուրքն ու ոգորմութիւնը փո-խանակ իր տեղը հասցնելու՝ կախարդներու և վհուկնե-րու կը կերցընեն ու գինք սպաննել տալու նպատա-կով գաւեր կը լարեն իր գէմ։ ԵՒյդ օրէն, կը գրէ ե-րեմիա, «նա ոչ բռնեցի գիմադրեր եւ այլեն նոյն-պէս»։

Ընդհատումնանք Մուշեղեցիի և համախոհներուն չար արարքները տեղեկագրած էին Նորընտիր կաթողիկո-սին ու հոգևոր բարձրագոյն իշխանութիւններէն ապրու անօրինութիւնան մը կը սպասէին՝ որպէսզի վերջ մը արուէր այդ անհաճոյ կացութիւնան։ Մայիս 13ին էջ-միածնի տեղապահը կը թերթէ սպասուած պատաս-խանը, որուն պարունակութիւնը կը հիասթափեցնէ գերեզմ։ Կաթողիկոսը կը գրէր. «Քաղաքիդ բանը միշտ այդպէս է. ես ի՞նչ կարող եմ ընել։ Դուք հրամանն ունիք որ այսուհետև անապրուստ չնատեցնէք. մի՛ նըս-տեցնէք ու առաջուան պէս քո՛ղ ձեր իշխաններուն ձեռքը ըլլան նկնգնցիները, ու ինքէ հաւանիք, ատ-կից կամ անկից՝ ո՛ր մէկը որ ուզէք՝ գայն քարոզիչ կարգեմ ձեզ։ Ես չեմ գիտեր ի՛նչ ըսեմ. ահա՛ երեք տարին է վեր ձեր մէջն էր (Մուշեղեցին) ու ոնչ խըն-դիր չունէիք հետը. այս երեք ամսուան մէջ ի՞նչ պա-տահեցաւ որ այսպէս եղաւ։ Շնորհգէն ի վեր չորս քուշիք եկաւ ու ես չեմ գիտեր ինչ ի՛նչ պատասխա-նեմ, վասնզի այդ քուշիքները համառձակ չեն իրարուս։

Սոյն պատասխանագրին հասնելուն յաջորդ Հինգշաբթի օրը (17 Յուլիս) Մ. Ատաւուածածնի եկեղեցիին մէջ ընդհանուր ժողով (սինհոդոս) կը գումարուի, ուր ներկայ կը գտնուին Քաչատուր Սեբաստացի, Մարտիրոս Ղրիմեցի, Ղազար Ստամպոլցի և Եղիազարի ա. չակերտ Իգնատիոս ու հիւրակոս վարդապետներ, Սիսի միաբան Քաչատուր եպիսկոպոս և Կ. Պոլսոյ իչխաններն ու աքոռականները։ Ժողովին մէջ կը կարդան Ծակոր կաթողիկոսի քուղքը ու կ'ըսեն. «Մենք բոլոր վարդապետներս քննութիւն կատարելով վերահասու եղանք Մուղնեցիի չարութիւնան ու արժան գատեցինք նզովել զայն և լուծել իր վարդապետական կարգէն ու քրիստոնէութիւնէ նոյն իսկ, բայց չերթինք այդ բանը, ու անոր արարքները տեղեկագրեցինք կաթողիկոսին, որ ինք բանադրէ ու կարգալոյծ ընէ զայն։ Կաթողիկոսը, սակայն, առ ոչինչ համարած է այդ ժողովը ու մեր քուղքը, որուն ներքև կնքած էինք բոլոր վարդապետներս ու վեց աքոռականներըս։ Ու գաւառաւոնով սա վճիռը կու տան. «Որովհետև կաթողիկոսը մեզ կարեւորութիւն չտալով այսպիսի գիր մը ղրկեր է, ուրեմն անիկա այլեւս պէտք չէ մեզի, ու այսուհետև անոր անունը չյիշուի պատարագի մէջ»։ Այս վճիռին համաձայն՝ յաջորդ Շաբաթ օրէն (19 Յուլիս) սկսեալ կը գադրեցնեն Ծակոր կաթողիկոսի յիշատակութիւնը ու տեղը Մ. Լուսաւորչի անունը կը յիշեն։

Այս կարգադրութիւնը դիւր չի գար Եղիազարի հակառակորդներուն, որոնք կարեւորութիւն չտալով ժողովի որոշման՝ կը ստիպեն իրենց կողմի քահանաներուն յիշատակել կաթողիկոսի անունը։ Եղիազար քէնէ անձամբ չի մասնակցիր յիշեալ ժողովին, բայց կասկած չկայ որ իր քէկտրութեամբ չարժած էին ժողովականները, վասնզի հազէն երբ անասասով քա-

հանանքը իրեն կը տանին՝ խօսիս կը յանգիմանէ ու կը պատժէ պահանք(1)։

Քիչատակութեան այս արգելքը միայն մէկ ամիս կը տեւէ։ Օգոստոս 11ին Յուհաննէս, Յուհաննէս Աստմ և Պաբգէն Զէյէնի Սղիտպարի կը գիմեն ու կ'աղերսեն որ յիշատակել տայ կաթողիկոսը։ Սղիտպար քնդատաքնելով անոնց խնդրանքին, մանաւանդ Յուհաննէսի, որ Օսմանեան ատեաններուն քով հանդուրժած մէկն էր և որուն ժամանակութեան պէտք ունէր սահմանման խնդրոց կարգադրութեան համար, միւս կողմէ նորանոր վրդովմունքներու տեղի չտալու դգուշաւորութեամբ՝ կը վերցնէ արգելքը և Օգոստոս 17ին, վերափոխման տօնին օրը, կը վերսկսին կաթողիկոսի անուան յիշատակութիւնը։

Ու խոհապէս այդ օրերուն Սղիտպար և Յուհաննէս Պոյնուէյրի մեծ վէգիրին ատեանը Ցունաց Ներկայութեան կը յաջողին հաստատել Հապէշներու վրայ Հայոց ունեցած իրաւունքը ու ըստ այնմ քաղաւորական հրովարտակ մը հանել կու տան։ Ապա պէտք կը տեսնեն Պրուսայէն Կ. Պոլիս կոչել Աստուածատուր պատրիարքը՝ հրաւիրակ գրկելով իր աշակերտ Մարտիրոս վրդ. Ղրիմեանցին։

Սեպտեմբեր 14ին, Վերացման Ս. Խաչի տօնին օրը, Սղիտպար վրդ. Սուրբ Աստուածածնի եկեղեցին հրաժեշտի քարոզը կը խօսի ու կը յայտնէ՝ թէ Պրուսայի ազգրմութեամբ Երուսաղէմի խնդիրը յաջող վախ-

---

(1) Սղիտպարի այս ընթացքէն կը տարուինք ենթադրել թէ անիկա, վերջ տալու համար Ընկերութիւններու տիրապետութեան, արգելն այդ տարիէն կը ծրագրէ բաժնել Օսմանեան բաժինի կամ՝ ինչպես ասվորութիւն էր ըսել՝ Հռոմոց Ցան Հայերը Պայրաէն ու անոնց համար անջատ կաթողիկոսութիւն մը տանգծել Երուսաղէմի մէջ. ծրագիրը՝ զոր իրագործենց ուր տարի ետք։

ճանի մը յանգած ըլլալով, ինք այլևս իր տեղը՝ այս-
ինքն Տիգրանակերտի Բարձրահայեաց Ս. Աստուածածն-
նի վանքը կը գտնայ։ Կ. Պոլսէն չմեկնած, իր մին-
նորգութեամբ, Աստուածատուր պատրիարք վարդա-
պետական գաւազանի իշխանութիւն կու տայ Մարտի-
րոս Ղրիմեցիին (28 Մարտ.), ու ինք կ'անցնի Սկիւ-
տար՝ չարունակելու համար իր ճամբան։ Բայց ազգին
իշխանաւորները խորհելով թէ եղիազարի նման խոս-
քով ու գործքով յաջողակ ու հնարամիտ մէկու մը
ներկայութիւնը կարևոր է երուսազէմի մէջ, որպէսզի
քաղաւորական հրովարտակը արձանագրել տայ անգլին
գառաբանին մէջ ու հետագային անոր գործադրու-
թիւնը, Հոկտեմբեր 5ին՝ հետերնին ուննենալով երե-
միան, անոր ետևէն կը հասնին Սկիւտար ու կը հա-
մոզեն՝ ետ կենալ Տիգրանակերտ երթալու պիտաւորու-
թենէն, ու հետևեալ օրը գայն կը գարձնեն Գում-
գափու։ Աստուածատուր խոկոյն իրեն փոխանորդ կը
կարգէ եղիազարը, որ երեք օրէն, Հոկտ. 9ին, ճամ-
բայ կ'ելլէ գէպի երուսազէմ։

Եղիազարի մեկնելէն վեց օր ետք (15 Հոկտ. Դշ.)
Սիսի Քորոս կաթողիկոսը Սկիւտարի վրայով կը հասնի
Կ. Պոլիս ու կ'իջևանի Ս. Աստուածածնի եկեղեցին։
Ճաչօրդ Շաբաթ ու կիրակի օրերը կը քարոզէ հոն,
Հոկտ. 26ին կը պատարագէ ու 30ին կը մեկնի Ա-
րիանուպոլիս և մէկ ամիս ու հինգ օր ետք (1 Դեկտ.)
կը վերադառնայ Կ. Պոլիս։

Թէև եղիազար և Մուշեղեցի հեռացած էին մայ-
րաքաղաքէն՝ բայց իրենց կողմնակիցներուն կիրքերը
չէին հանգարտած տակաւին ու հակամարտութիւնները
կը շարունակուէին երկուառեք։ Մուշեղեցիի համա-
կիրները միշտ կը գրէին Ճակոբ կաթողիկոսի, իր նպաստ
իրենց պաշտպանելուին, ու կ'աշխատէին վերադարձնել

պայն իր աթոռը. ասով մեծ յոգեմանակ մը տանիլ կը կարծէին իրենց հակառակորդներուն վրայ։ Կ'երևի թէ Յակոբ կաթողիկոսի համակրութիւնը Մուշեղեցիի կողմն էր երկու պատճառաւ. նախ՝ որ ան նշանակուած էր իր նախորդին՝ Փիլիպպոս կաթողիկոսի կողմէ, և երբ կրօրդ՝ Մուշեղեցի Արևելցի եպիսկոպոս մը ըլլալուն՝ բնականաբար պիտի աշխատէր Օսմանեան բաժնի Հայոց մէջ Մայր Աթոռն համայքը բարձր պահել և Ամենայն Հայոց հայրապետի ազդեցութիւնը չնուազեցնել։ Այդ պատճառաւ կաթողիկոսը այնքան կարևորութիւն չէր ընծայեր Մուշեղեցիի գէմ եղած ամբաստանութիւններուն. ընդհակառակը՝ սիրայիր քուղքեր կը ղրկեր անոր։ Մուշեղեցիի մարդիկը պարծանքով կը տարածէին հայրապետի այս ջերմ վերաբերմունքը ու յոխորտ կեցուածք մը ունէին Սղխազարեանց գէմ։ Վիրջիններս սակայն կը յաջողին իրենց կողմը շահիլ Թարս կաթողիկոսը, որմէ կ'ակնածէր ժողովուրդը իր բարձրագոյն ատիճանին համար։

Թարս կաթողիկոս այս խնդիրներուն պատճառաւ 1656 Դեկտ. 19ին ընդհանուր ժողով կը գումարէ Ս. Աստուածածնի եկեղեցին։ Ժողովին ներկայ կը գտնուին Եպիսկոպոսք Սեբաստացի և Մարտիրոս Ղրիմեցի վարդապետները և Թադէոս ու Եպիսկոպոսանները, Յոհաննէս Ռուհիճան, Կ. Պոլսոյ վեց եկեղեցիներու և Սկիւտարի քահանաներն ու իշխանները և խուռն բազմութիւն մը ժողովուրդի ամէն գասակարգէն։ Մուշեղեցիի ազգանեակները, գլխաւորութեամբ Գարամխատուզ Աստուածատուր և Տարաքխանեանի վարգան երէցներուն, առանձին ով ժողովը իր կաթողիկոս նախագահով նպատակաւ տրամագրուած է գէպի Սղխազարն ու Սղխազարեանները՝ գայն խանգարել կը փորձեն։ Եպիսկոպոսներն (21 Դեկտ.) Թարս կաթողիկոս Ս. Աստուածածնի եկեղեցիի բեմէն

կը նկարագրէ Մուղնեցիի արարքները, կը մեղադրէ Ճակոբ կաթողիկոսը, որ սայս հերձուածող Մուղնեցւոյն ձեռաց լոյս է պրծեր, ու ծանր նզովքի տակ կը ձգէ Պարմախուզ ու Տարաբխանաճի երէցները, ո՛րոնք, կ՚ըսէ, ապուհնոհոգոսն իմ կամէին խափանել. Աստուած խափանեսցէ զնոսա հոգով և մարմնով և որչափ ի մարմնի են՝ ի մէջ ալեաց փորձանաց կայցեն. կը բանագրէ նաև անոնց համախոհ չարերը։ Ապա կը յայտարարէ՝ թէ ինք ու բոլոր վարդապետները նորէն պիտի գրեն Ճակոբ կաթողիկոսին. Եթէ այս անգամ, կ՚ըսէ, ոչարհասցն ետ զպատիժն ու բանքեանն աւրհնութիւն և նա քազաքիս մխիթարական քուղք և աւրհնէք՝ նա՛ բարի, իմ մեծ եղբայրն է և աչաց լոյս. և եթէ կրկին յամառի և գչարան զովչէ՝ նա՛ յայտնի ամենեցուն զի լինի որ այսուհետև զքեզմէն զամենայն ի վերայ երուսազէմի աքսորն կու հապհմք, որ անոի առնեն զսուրբ մեռոնն(1)։

---

(1) Որով Թորոս կաթողիկոսի այս յայտարարութիւնը ամենազօրաւոր ու անժխտելի հերքում մըն է այն վարկածին, որով հանգուցեալ Տ. Բարգէն աքսուածիք կաթողիկոս իր Պատմութիւն Կաթողիկոսաց Նախիկիոյ աշխատութեան մէջ (որ մամուլի տակ է տակաւին և որուն տպագրուած պրակները ամբիծ ուսնգրանք տեսանելու), յիշելով քանի մը չիշատակարաններ վրայ, տակ տակ հիպ կ՚ընէ հաստատելու թէ Կիլիկիոյ կաթողիկոսները էին միանգամայն Պատրիարք երուսաղէմի: Եթէ այդպէս եղած ըլլար՝ չատ բնական պիտի չինէր որ Թորոս կաթողիկոս յայտարարէր թէ այսուհետև Ճակատաման քեմերը ալ թէ երուսաղէմի՝ այլ Կիլիկիոյ աքսորին կը կապնէք ու անկէ կ՚առնեն միւռոնը։ Դիտենք պատմութենէն որ Ըմենան Հայոց հայրապետութեան աքսորը Կիլիկիայէն Իլմախարուսլէն առջին (1441) երուսաղէմ քիու ձեռնարկուած չէ Ծիծին ա՛լ հոգևորական և ալ վարչական տեսակէտով։ երուսաղէմի ու Կիլիկիոյ աքսորներուն մէջև փոխանակուած մեկ առնչի նամակները, պօտ ունինք մեր ձեռքին տակ, երբեք այդպիսի կացութիւն մը չեն մատնանշեր։ Ընդհակառակը այդ

Թոքատ կաթողիկոսի կեանքը կարճատև կ'ըլլայ կ. Պոլսոյ մէջ։ Երեմիա կը գրէ իր Օրագրութեան մէջ (22 Ապրիլ 1657). «Օրս հոգեւորականքն ի Սուրբ Նիկողոս եկեն նաւով ի Գալատէ եւ հիւանդ էրս։ Սոքն օր ետք (29 Ապրիլ) կը վախճանի ու մարմինը կը փոխագրեն Ս. Նիկողայոսի եկեղեցին ու հետեւեալ օրը ոնուամբ եւ յուզարկաւորութիւնը մեծ շուքով կը կատարեն ու կը տանին Գալըքլըյի գերեզմանատունը ու կը քաշեն Ամիրեցի երեմիա սմնի իշխանին ու Ազնաւցի Յհան վարդապետի գամբարաններուն մէջտեղ։ Գե-

---

վանիրացիները ցոյց կու տան թէ երուսազէմ եղած է միշտ ննիմակայ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան, անկէ առած է սուրբ միւռոնը ու հոն պիտի է իր միաբաններըը եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու։ Եթէ Սիոն աթոռակալ-ներըը եղած ըլլային միւնոյն ժամանակ աթոռակալներ երուսազէմի՝ այդ պարագային ո՞ւր կը մնային երուսազէմի պատրիարքներու իշխանութիւնն ու իրաւական դիրքը։ Կիւրիղոս կաթողիկոսներէն առանք, զոր ոչ. Ազարիա Զուղայեցի, Յովհաննէս Աղիմապցի, Գեորգ Տարփատեցի (Հակոբոս), ժամանակակից ու քաղաքակից են երուսազէմի պատրիարքը վճարելու համար տանջի ունեցած համազգային հանգանակութեան, ու ասկէ քեզնա կարծած են իրաւունք ունենալ իրենք գիրենք յորջորջել նաեւ Պատրիարք երուսազէմի. յորջորջուի՛ զոր չոկ իրրեւ չուք կամ պերճանք կցած են իրենց անուններն, առանց երբեք ունենալ իրաւական հանգամանք կամ իշխանութիւն ու-նենալու երուսազէմի ԱԹոռոյն վրայ։ Մեր այս ըսածը կը հաստատուի հետեւեալ պատմական իրողութեամբ։

Կիւրիղոս Յովհաննէս Աղիմապցի կաթողիկոսի (1602-1622) օրով ազգովին արժան կը համարեն Գրիգոր Գաբռիսէրը, որ երեք տարիէ իվեր կը վարէր երուսազէմի ԱԹոռոյ, եպիսկոպոսական առաքելութեան թարմացնել։ Կը գրէ Գաբռիսէրի ժամանակակից ու ականատես կենսագիրը (Մեր Ձեռ. Քիւ. 322, Քղ. 36ա-36բ). «Եւ յորժամ առնէին ազգս Հայոց զհաստատութիւն ծառայութիւնն որոյ ար վասն Ս. երուսազէմայ, ազգս ի Թուի (= 1613) Քվին հարեալ ի վերայ եղեն և. գէշերցին գաղափրին Աւետիս կաթուղիկոսն Ս. էջմիածնայ, և քաղաւմ վար-

բնչմանատուներն գործին Մուլուամանասարի Ս. Գէորգ հինգերդին կից նզիպատրի չինել տուած մեծ գրաստին մէջ հոգւոյ հաշ կը տրուի, որուն կը մասնակցի նաև Երեմիա։

Գրութեանս մէջ քիչ մը ընդարձակ տեղ տուինք այս խնդիրներուն այն պատճառաւ՝ որ նզիպատրի յաջողներուն մէջ էին գլխաւորաբար Երեմիայի հայրը Տէր Մարտիրոս, վարժապետը՝ Տէր Յովհաննէս, հայրապետը՝ Մահտեսի Ամրահամ և նոյն ինքն Երեմիա, որ այս առթիւ պոլսահայ ազգային–հոգեւոր կեանքին վերաբերմամբ կարի չահեկան ու ցարդ անծանօթ էջեր քաշած է իր Օրագրութեան մէջ։

Նախընթաց 1656 տարուան Հոկտ. 9ին նզիպատր վարդապետ մեկնած էր Կ. Պոլսէն Երուսաղէմ՝ քաղաքական հրովարտակին համաձայն կարգադրելու

գործեր ընդ նմա, և. հատն զնա ձեռնադրել և. օրհնել արքեպիսկոպոս Ս. Երուսաղէմայ։ Ձեռնագրութիւնը տեղի կ'ունենայ 1613 տարուան Ապրիլ 5ին, Ս. Յարութեան տաճարին մէջ, ըստ Ուսեր կաթողիկոսի կոնդակին (Հ. Ն. Ակինեան, Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 63–67)։ Այդ կոնդակին մէջ Ուսեր կաթողիկոս մանրամասնաբար կը քննէ Գարեհեաէրի իրաւասութիւնները և մինչև անգամ իրաւունք կը շնորհէ անոր՝ եպիսկոպոսներ ձեռնադրելու և միւռոն օրհնելու՝ եթէ ինք ուզէ, բայց քանի չի յիշեր Սիսի և Երուսաղէմի աթոռներուն միմեանց հետ ունեցած իրաւական յարաբերութիւնները։ Եթէ Կիլիկիոյ Յովհաննէս Աղթամարցի կաթողիկոսը միևնոյն ատեն պատրիարք ըլլար Երուսաղէմի և կամ ան էլ իրաւասութիւն ունեցած ըլլար նոյն ընթացքին վրայ՝ պէտք չէ՞ր որ ապրիլեան մեծամասնութիւնը գար հրաւիրելին Սիսէն, որ այնքան մաս էր Երուսաղէմի, փոխանակ հետաւոր Էջմիածինէն Ուսեր կաթողիկոսը կոչելու։ Հանգուցեալ Տ. Բարգէն կաթողիկոս ընդունելով հանգերձ այս իրողութիւնը՝ գործեալ իր վարկածին վրայ կը պնդէ (Անդ, էջ 210) և տեսէք իր բացատրութիւնները հետաւ են համոզիչ ըլլալու։

համար Հապէշներու խնդիրը և վերահաստատելու Ս. Տեղեաց մէջ Հայերէ յափշտակուած իրաւունքները։ Եգիպտոս հասնելով Երուսազէմ՝ յաջողապէս գլուխ հանած էր ինչ որ կ՚ակնկալուէր իրմէ ու իր գործերուն տեղեկագիրը համբոյ հանած էր Հոռոմը Մոնթեանոս միաբանին, որ կ. Պոլիս կը հանի 1657 Փետր. 23ին։ Այդ տեղեկագրով եգիպտոս կ՚ուսումնասիրէր Քէ Պոնուէյրի վէզիրին հետքով առնուած հրովարտակին համաձայն՝ յաջողած էր վերոյին սիրանալ Ս. Յիսնդեան մէկ գըրան, վերահաստատել Ս. Այրին վրայ պատարագելու Հայոց իրաւունքը ու 21 կանթեղ վառել հոն. սիրացած էր նոյնպէս Հապէշներու բոլոր տեղերուն ու կանթեղներուն։ Ասոնց համար հարկ եղած էր մեծամեծ գաւառ վարել Ղազէի և Երուսազէմի փաշաներուն և Հիւսէմզատէ միւֆթիին ու ատուարախուռմը ամբոխի մը առնել։

Այս յաջողութիւնը, սակայն, երկարատև պիտի չըլլար։ Յոյներուն չատ ծանր եկած էր իրենց այս պարտութիւնը, ուստի նոր քափով սկսան գործի լծուիլ՝ նկուն ընկնու համար Հայերը։ Այս անգամ կ՚աշխատէին ոչ միայն վերստանալ իրենց կորանցուցածները, այլ և սիրանալ մեր Ս. Յակոբեանց վանքին, զորուստ պաշտպանութեամբը Քէօփրիւլի Մեհմէտ փաշա մեծ հպարտութեան, որ յաջողած էր Պոնուէյրի վէզիրին, և որ հարուստ նուէրներով Յոյներէն չահուած ըլլալով՝ յոյնի համարձակ անանց կողմը կը բռնէր ու հպարտութեամբ առեանին առնէ, գաւազարութեանց առեն, կ՚արհամարհէր Հայերը։

Մեր ծրագիրէն դուրս է մանրամասնաբար նկարագրել Քէ ի՛նչպէս Յոյները կը յաջողին իրենց ձեռնարկներուն մէջ՝ սիրանալով մինչև իսկ Ս. Յակոբեանց վանքին, պատմել նաև այս առքիւ եգիպտոսի Բնբրիա երքալը ու հոն Քէյսարոզլու կուսակալէն վար

գրուիլն ու տարուիլը մինչև Գրուսա, ու անկէ գիշերանց փախուստ տալով Գոլիս հասնիլը և իր քաջբարեկամն ապրիլը ու քաջասոցէն բռնուելով իրեն մահապարտ չգիւղակոպ բանտարկուիլը, Քէօփրիւլի վէզիրին առջև տարուիլն ու հարցաքննուիլը, և մարմիրա Ղրիմեցիի և Յոհաննէս Իուհիճանի և նոյն ինքն Երեմիայի ջանքերով արձակուիլը բանտէն. ապա Ս. Ճակոբի Ծոյներէն ետ առնուիլը, տարիուկէս պայն իրենց սիրապետութեան ներքև պահելէն ետք։ Այս դէպքերուն կը գուգադիպին Մահտեսի Ամբակումի մահը (23 Նոյ. 1658), մինչ տակաւին կալանքի տակ էր Եղիազար, ապա՝ հակառակ ապգի իշխանաւորներու կամքին՝ Քուամա Բնբիացիի կ. Գոլսոյ պատրիարքութիւնը ձեռք բերելը ու եղերամահ սպանութիւնը բանտին մէջ (1 Ապր. 1658). Նաև Եղիազարի խորհրդով Մարտիրոս Ղրիմեցիի Գոլսոյ պատրիարքական աթոռը բարձրանալը ու Ղազար Սեբաստացիի՝ գոնազան տգրանքներով իրեն յաջորդելը, եւայլն։ Այս գէպքերը իրենց բոլոր պարագաներով կը պատմէ Ջամչեանն(1), մինակ ազբիւր ունենալով Երեմիայի Տարեգրութիւնը, ինչպէս ինք կը վկայէ. «Գրեցաց (Զէլէպի) զպատմութիւն անցից իւրոյ ժամանակի՝ առուգութեամբ և հաւատարմութեամբ, յորմէ առեալ և մեք՝ աւանգեցաք ինչ ինչ ի կ.Պ. գլխոյ մինչև ցայսր» (էջ 723)։

Այս անցուդարձերը նոյն մանրամասնութեամբ կ'աւանգէ նաև մեր Օրագրութիւնը, որուն Տարեգրութեան հետ ունեցած տարբերութիւնն ու անոր իրեն հիմ ու ազբիւր ծառայած ըլլալը աչխատած ենք ցոյց տալ՝ Ջամչեանի պատմութենէն ու Օրագրութենեն յառաջ բերելով համեմատական հատուածները(2)։

---

(1) Պատմութիւն Հայոց, հատոր Գ. Գլ. ԼՈ–ԼՔ։
(2) Եռակոթ, 1913, էջ 49–52։

Ինչպէս գրուքնաս ընքաղքին քանիցս յիշեցինք՝ անգամ մըն ալ կը կրկնենք քէ Երեմիա այս ժամանակաշրջանին, քէև տակաւին նորահաս երիտասարդ, իր լրջութեամբ ու խոհականութեամբ գործեն մասնակցութիւն կ'ունենայ ամէն այս խնդիրներուն մէջ՝ միշտ ներկայ գանուելով ժողովներուն և նեցուկն ու խորհրդականը ըլլալով Եզեքիայի ու ապա Մանասէի Հրեմեցիի ու վայելելով անոնց յիսկատար սէրն ու վստահութիւնը։ Երեմիա նշած է նաև պաշտօնական քարտուղարը այդ շրջանի ազգային իշխանութեան մասն ու ինք խմբագրած է կարևոր քուղքերը, որոնցմէ ամանց յիշատակութիւնը կ'ընէ իր Օրագրութեան մէջ, զոր ոչինչակ.

1656 Ապրիլ 26ին(1) Մանասէ վրդ. Հրեմեցի կը գտանայ Պրուսայէն ու հրաւիրագիրներ կ'ուղարկէ վեց եկեղեցիներուն, որպէսզի Մ. Նիկողայոսի եկեղեցին ժողմուին. կը գրէ նաև վանեցի Յոհաննէս Առաքին՝ որ վանահայրութեան հետը առած ինք ալ ներկայ գըտնուի հոն՝ լսելու համար Աստուածատուր պատրիարքի պատուէրը։ Այդ քուղքերէն հինգ հատը Երեմիա կը գրէ, ինչպէս կ'ըսէ. սեւ գիր քուղքն չնչինս գրեցաք։ Դարձեալ նոյն տարուան Մայիս 14ին Մանասէ վրդ. Երեմիայի ձեռքով քուղք մը կը գրէ Թէքիրտաղցիներուն, յանդիմանելով զանոնք որ հակառակ իր կանխագոյն պատուէրին՝ ընդուներ են Մուղնեցին ու պատիւ ընծայեր են անոր։ 1657 Փետր. 18ին և 19ին Եզեքիայի քուղքերուն կը պատասխանէ Յերուսաղէմ։ Փետր. 23ին Պրուսացւոց քուղքերուն կը պա-

---

(1) Այս և ուրիշ անգիր երբեմն ուշադրուԹ համաբերանք Օրագրութեան էջերը նշանակել՝ նկատելով քէ կարելի է գիւրաւ գտնել զանոնք՝ հետեւելով տարեթիւներուն ու ամսաթիւներուն։

ասոխանէ Մուղնեցիի մասին։ Փետր. 26ին Մինաս վրդ.ի հաստատուքեան քուղքը կը գրէ, որով իրաւունք կը տրուի անոր վիրտին տիրանալու առաջին քահանան։ Մայիս 31ին Ագրիանուպոլսոյ երկու քուղքերը կը գրէ։ Յունիս 11ին դարձեալ Մինաս վրդ.ի քուղքը կը գրէ ու 25ին՝ Երուսազէմի քուղքերը, զորս կը յանձնէ ուխտաւորներու։ 1658 Մարտին Կ. Պոլսոյ իշխանաւորները կը խորհրդակցին ու Երեմիայի ձեռքով կը գրեն Երուսազէմ Առուտածատուր պատրիարքին, որ կարևոր քուղքերը հետը առած՝ միաբաններով և ուխտաւորներով միասին գայ Կ. Պոլիս։ Նոյն տարուան Մարտ 17ին Երեմիա իշխանաւորներուն մօտ կ'երթայ՝ գրելու համար էսիրնէցիներու քուղքը, որով պատուէր կը տրուի անոնց՝ յարաբերութիւն չունենալ Քուամա Բնչիացիի հետ, որ իր պատրիարքութիւնը յաջողցնելու համար գացած է Ագրիանուպոլիս։

Ճիչեցիներ վերն քէ Եղիազար ու Մարտիրոս վարդապետներ երբեմն հետերնին առած են Երեմիան իրենց համբորդութեանց ատեն։ Ջոր օր. Ջէլէպի կ'ուզեկցի Եղիազարի՝ երբ սա 1659 Յունիս 12ին կ'երթայ Պրուսա մեծ վէզիր Քէօփրիւլի Մէհէմմէտ փաշային՝ մատուցանելու համար ասհմանեակ նուէրը, որպէսզի չնորհուի Ս. Յակոբեանց վանքին վերագարձուիլը հրամայով կայսերական հրովարտակը, նաև ձեռք բերելու համար Ս. Սարգիս եկեղեցիի նորոգութեան արտօնութիւնը։ Այս առթիւ Երեմիա 15 օր կը մնայ Պրուսա։

Մարտիրոս Ղրիմեցի չէզոքացնելու համար իր հակառակորդին՝ Ղազար Սեբաստացիի արարքները ու աշխատելու համար որ իրմէ չպահանջուի անոր աւելցընել խոստացած հարկը (միրի), կ'երթայ 1660 Մարտ 17ին Երեմիայի ընկերակցութեամբ երբայ Ագրիանուպոլիս, ուր կը գտնուէին մեծ վէզիրն ու տէր-

ատրատրը. Մարտ 22ին կը հասնին Ադրիանուպոլիս՝ իրենց համբուն վրայ հանգիպելով Մեծ և Փոքր Չէքմէճէնեըը, Սիլիվրի, Զօռլու, Պուրկազ, Պապա և Հավսա։ Քառանըհինգ օր կը Ճառ Ադրիանուպոլիս, ուր ապարդիւն կ'անցնին Մարտիրոս վրդ.ի դիմումներըը, և Ապրիլ 16ին դուրս կ'ելլեն քաղաքէն ու հանգիպելով Հավսա և Պապա՝ նոյն ամսոյ 18ին կը հասնին Քէքիրտազ։ Հոն կ'անցընեն Զատիկը, որ նոյն տարուան Ապրիլ 22ին կը հանդիպի, ու Զատիկի չորրորդ օրը (25 Ապրիլ) Թովմային համբով կը հասնին Կ. Պոլիս ու ակառատես կ'ըլլան հրդեհին պատճառած ավէրին Ղալաթիոյ մէջ, որուն 75 քազամասերէն 70ը հրոյ ճարակ եղած էին ու ապառուած էին միայն 5 քազամասեր, որոնց մէջ էր մեր Ս. Լուսաւորիչ եկեղեցին։

Դարձեալ նոյն տարուան Օգոստոս 1ին Երեմիա կ'ընկերանայ Մարտիրոս Ղրիմեցիին, որ կ'երթար Քէքիրտազ՝ եզիպտոս վրդ.ի հետ երուսաղէմ մեկնելու Աստուածատուր պատրիարքը ոգեշնչելու և անոր օրհնութիւնը ընդունելու։ Թովմային տաժանելի ուղեւորութիւններ մը վերջ հասել երրորդ օրը կը հասնին Քէքիրտազ, բայց պատրիարքը հոն չգտնելով՝ Ս. Աստուածածնի պահոց Դշ. օրը (7 Օգոստ.) կը մեկնին անկէ, գարձեալ անընդատ քամիով, և Շբ. օրը (11 Օգոստ.) կը գառնան Կ. Պոլիս, հանգիպելով Արտկիա, Պլատոս ու Սիլիվրի։

Երեմիա ազգային իշխանութեան մօտ նոտարի և խորհրդականի իր պաշտօնը կը չարունակէ յոլորդ տարիներուն ալ։ Իրը այդ 1664 Մեպտ. 14ին կը ղրկուի Երեմիա եզիպտոսի մօտ՝ խափանելու համար անոր կաթոլիկոսանալու ծրագիրը։ Իր Կ. Պոլսէն դուրս ելլելէն ետքն օր վերջ, օրուան պատրիարքը՝ Մարգիս Քէքիրտազցի՝ կը գրէ եզիպտոսի. «Դարձեալ առաւելա-

պէս խնդրեմ ի հրամանատէդ, զի զԵրեմիա որդեակդ, որ է եղբայր մեր հարազատ, լաւ պահեսցես և ըզգարձն նորին չուտով արասցես առ մեզ, զի բնաւ առմնեալն հաւատարիմ մարդ չունիմ ի մօտս եւ ոչ օգնական եւ ոչ ձեռնտու, բայց ի ծերունի հօրէս՝ Ցէբ Մարտիրոս քահանայէ(1)։

Գաղմուքենէն յայտնի է Երեմիայի Բերբիա ղբրկուիլը (1664 Սեպտ. 14), որպէսզի համոզէ Եզիպտարը հրաժարիլ կաթոլիկոսանալու իր տարագէպ ու ջնասակար նպատակէն։ Երեմիա արդէն ինք ալ անձնապէս հակառակ էր Եզիպտարի այդ ծրագրին, որուն իրագործումը կը նախատեսէր քէ ս՛ըքան պատակաուաճներու և խռովութեանց դուռ պիտի բանար ազգին մէջ։ Դժբախտաբար անյաջողութեան կը հանդիպի Երեմիայի առաքելութիւնը ու այդ պատճառաւ իր համակրութիւնը այնուհետև Ցակոբ կաթոլիկոսի՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաւոր հայրապետին կողմը կը գտնայ, և ուծացուած առաջ կու գայ իր ու Եզիպտարի յարաբերութեանց մէջև։ Ասիկա ազդապակի կը դգացուի՝ տարիներ վերջ առ Եզիպտար ուղղած իր թուղթերուն մէջ։

Երեմիա Բերբիային կ՛անցնի Երուսաղէմ և 1665 տարուան Զատիկը հոն կ՛անցընէ։ Այնուհետև «ի մուտ աւուրցս բարեկենդանին Կ. Պոլսոյ իր բարեկամներուն ոտանաւոր ուղերձ մը կամ ողջունագիր մը կը գրկէ (Ճաւել. էջ 551), որուն թուականն է ի ԿԱՓՈ-ԳԻՆ և ամիով մասամբ աւելիս, այսինքն 1113+1 = 1114 (= 1665)։

Զէլէպի իր Երուսաղէմ բնակութեան միջոցին կը հիւրընկալուի աւագ-լուսարար Եզիա վարդապետի բը-

(1) Սիոն, 1933, էջ 24։

Նախարանը ու աշխատիլ կը յորդոր Գովհաննուիսիս Տճօրխնակաճ Տհոխաց յԻրուսաղէմ 40 տպերէ բազկացեալ գիրքոյկը, զոր 1677ին ի Կ. Պոլիս իր սեպհական տպարանէն առանձին տետրակով (35 էջ) լոյս ընծայից, պարզարուած 15 պատկերներով(1)։

Յառաջով այդ տպարանի մասին՝ Տօքթ. Քորգոմանան կը գրէ. «Ճաւալի է ըսել որ չատ կարճատեւ եղած է. անոր այս խիստ գնահատելի ձեռնարկը, չի գիտցուիր ի՞նչ պատճառաւ, վաղորդայնի մը կեանք ունեցած է»(2)։ Հ. Ն. Ակինեան ալ կը գրէ. «Ինչո՞ւ այնպէս չուտ ան կնքաւ ձեռնարկութիւնէն։ Այս մասին կը պակսի ամէն տեղեկութիւն»(3)։

Այդ տպարանը, ինչպէս կ'երեւի, Ապրոյ Զէլէպիի հովանաւորութեամբ ու նպաստով հիմնուած էր, բայց անիկա փոխանակ չահաբեր ձեռնարկ մը ըլլալու, ընդհակառակը՝ նիւթական ըլաններ պատճառած էր երեւոյթի։ Այդ պատճառաւ երեմիա ան Ապրոյ Զէլէպի իր ուղերձին մէջ կը խնդրէ անկէ՝ հետամուտ չըլլալ գիրքերու տպագրութեան, վասնզի, կ'ըսէ, «չէ պանո՝ այլ գործ պիտակ և չէ պատուղ այդ բերուածոյ։ Թարմնալ՝ ամէր իմ որոխ ա՛վ Զէլէպի ... մի՛ հետեւիլ գայն որ ասաքի, տպագրութեանն անպատեհիս (Ծաւալ. էջ 562 և 563)։

Մեր ծրագրին համաձայն չարունակենք յայտնաբերել երեմիայի կեանքի այն մասերը որոնք մութի մէջ ձեացած են քարդ և չեն չուտաբանուած տակաւին։

Ծակոբ Դ. կաթողիկոս Ջուղայեցի կ. Պոլսոյ մէջ կը վախճանի 1680 Օգոստ. 1ին Կիրակի։ Ղայսէրցի

---

(1) Հ. Ն. Ակինեան, Զէլէպի, էջ 182։
(2) Սամպօղլոյ Պատմութիւն, էջ 179։
(3) Զէլէպի, էջ 50։

Գրիգոր և Ասուածատուր վարդապետներ տասն օր վերջ (10 Օգոստ.) գիր մը կ'ուզէին երուսաղէմ եզիա-պար կաթ.ին, որուն մէջ Յակոբ կաթ.ի մահուան նախ-ընթաց պարագաներըը նկարագրելէ ետք կը չարունա-կեն. «Բայց յայսմ հետէ հարկ եղեցի մեզ պատմել որ ինչ անցք անցին գկնի վախճանի սրբոյ հօրն հոստրա-կաց։ Զի յետ աւանդման հոգւոյն հասին առ մեզ վարդապետքն Գրիգոր կեսարացի և Ասուածատուրն Քմբուկ առաքեալք՝ եկեալք ի կեսարիոյ, զոր կոչեալ զնոսա մեօք հանգերձ Սուքչիոզլի Ասուածատուրն՝ ընդէ գրերեալ գրամդ քէ ինձ տայք իմ պարտուց տեղ, զինչ խարճ որ գնայ մինչեւ ի գուռուշն՝ եւս տաց քաղել զհայրն սուրբ մերմէ ի Սուրբ Ասուածածնէնն, զոր եւ մեր հաւանեալ՝ տացաք նմա առնել քէ հնար էցէ, եւ մեք տամք ի նա զեկեալ նուէրքն։ Զորոց մինչ պատահեալք Ղայսէրցիք՝ գնացեալ պուլրուլքու բերին ի վէզիրէն եւ տարեալ առ ի Ստամպօլ էֆէն-մին՝ սիրել արարեալ, եւ նայիպ բերեալ քէւշ արա-րին՝ ծրագրելով նայիպին զտեղի քաղմանն յալ կոչել եկեղեցոյն ի գլուխ այգումէին, զի քաղեսցի յերեք-չարաքոյէ։ Զոր անիծեալքն ի քէն եւ յամենայն սըր-բոց՝ Թամուրճին եւ իւր նեռան զաւակ չերեմիայն ան-կեալ առ գրացովք եւ գումարեալ զամենայն մերձա-կայ բնակիչք առճիկն, գլուխ առնելով յինքեանց զՂորղուտ ումն յոյն, որ է ի գրան վէզիր քէհիային, եւ նոքօք գրգեալ զքէհիայն՝ զչպատրիկ երէց Թորոսն ի գլուխ առնելով, արարին խափանումն եւ բռնու-թիամբ եռուն հանել ի քաղաքէն, եւ տարեալ ի Բէկ-ոզլին քաղեցաք։ Այսքան չարիք ի պատրիկ Թորոս չերիցէն եւ ի Թամուրճէն եւ իւր չար զաւակէն եւ։ Պատճառն այս էր, որ նզովեալ Քոռն ունի աթեղայ եղեալ յայսմ ամի, բերին առ հոգեւորսէրն յառաջ քան զՀամբարձումն եւ բազումս քահանայից տալ

Նմա իշխանութիւն վարդապետութեան, զոր ոչ հաւանեալ զվինն՝ ասէլով քէ Ծղայ է եւ նոր աքեզայ. երթեալ էջմիածինն ուսցի զկատարելութիւնն ուսման, եւ ի գէպ ժամանակի կատարեսցի խնդիր ձեր։ Բայց իբրեւ նկն համբաւ նզովից նոցին որ ի քէն՝ վարեաց եւ աքսորեաց յինքնէն, եւ այժմ բնակի մերձ ի Նիկոմիդիայ Արմաչոս վանք կոչեցեալ՝ առ Մարկոս եպիսկոպոսն։ Ցայսմ պատճառէ այսքան չարիք գործեցին՝ հրապարակաւ գոչելով զարտաս իւրեանց մեծաւ անզգամութեամբ(1)։

Ցակոբ կաթողիկոսի վրայ յորինած ոտրին մէջ եբեմիա ինք ալ կը պատմէ այս դէպքը, բայց ո՛չ իբեն և ո՛չ իր քահանայ հօր որևէ գեր չի վերագրեր այս մասին։ Հայրապետի վախճանէն ետք, կը գրէ, ի պատիւ անոր հանգստեան՝ երեք տեղ գերեզման կը փորեն։ Քէեա չատ վէճեր տեղի կ'ունենան քէ ասանցմէ որո՛ւն մէջ իջեցնեն, բայց երբ վերահասու կ'ըլլան քէ հոգևորտէրը փոփոքած է որ Գէկոզլի քաղաքի՝ այն տանն առաջ փառաջ հոն կը տանին զայն(2)։

Մենք ասկի հակամէտ ենք երեմիայի գրածին հաւատալ քանի չիչեալ երկու վարդապետներու՝ հայր և որդի Գէորգիւրճեաններու մասին գրածներուն, զորս կը համարենք արդիւնք անսիրելութեան ու հակակիր գաղտուծներու(3)։

Այսուհանդ երեմիայի կեանքին վերաբերեալ կարգ մը մանրամասնութիւններ պիտի քաղենք ՄինասԱմ-

---

(1) Օրիմակի կոնդակաց եւ Համակաց Ղրիազար կաթողիկոսի, Ձեռ. Քիւ. 186, Թղ. 59բ։ Նամակիս վերնագիրն է. «Այս գիրս յորում Ցակոբ կաթողիկոսի առ Ոսուսան փախչելն առաքեալ եղեւ առ Սղիտալոր կաթողիկոս»։

(2) Հ. Ն. Ակինեան, Ջէլէպի, էջ 210, տողք 11-14։

(3) Ան. Սղիտալոր կաթողիկոս ուղղեալ այս նամակի մասին տե՛ս մեր յօդուածը, Ցառեար, 1912, էջ 369-371։

գեղցիի Օրագրութենէն (1680 Հոկտ. 8 — 1704 Յունիս 3), որ քանկագին ու վաւերական ազբիւր մըն է այդ ժամանակաշրջանի ազգային–եկեղեցական իրադարձութեանց։

Յակոբ կաթողիկոսի վախճանէն ետք երբ Եզիազարը կը հրաւիրուի էջմիածին Ամենայն Հայոց հայրապետութեան աթոռը ժառանգելու՝ 1681 Ապրիլ 17ին կը մեկնի Երուսաղէմէն, իր հետևորդներուն մէջ ունենալով նաև Ամգիցին։ Եզիազար ուղղակի չ'երթար Կ. Պոլիս, այլ կը յամենայ Զմիւռնիա (1681 Յունիս 7 — Սեպտ. 22) և Պրուսա (1681 Հոկտ. 8 — 1682 Մարտ 1)։ Կաթողիկոսի Պրուսա գտնուած օրերուն, փետր. սմուռան կէսին, Երեմիա անոր կ'ուղղէ քսան հատուածներէ բաղկացեալ ընդարձակ նամակը (Յուէլէ էջ 412–429)(1)։

Եզիազար կաթողիկոս Կ. Պոլիս կը հասնի 1682 Մարտ 4ին ու հոն կը սպասէ մինչև էջմիածին մեկնումը՝ Յունիս 15։

Ամգիցի կը գրէ իր Օրագրութեան մէջ. 26 Մարտ 1682. «Երեմիան չապիք, վարժիք եւ փէշքէշ երեք մեզ և ազային (Եզիազար կաթողիկոսի) (Քղ. 11ա)։— Ապրիլ 24. «Քօմուրճի Երեմիան ի գուրս ել (Եզիազարի քնակարանէն), ասացին՝ Մարդ կայ (կաթողիկոսի մօտ) խոստովանանք եկող. բարկացաւ, գի չատ նստաւ՝ վասն այնորիկ գայս ասացին» (Քղ. 12բ)։— Ապրիլ 25. «Երեմիան մեզ քինացի քէ Զմիզ վարժցին ի գրնէնս (Քղ. 13ա)։

Երեմիայի իր Մատաքիա արդիին հետ էջմիածին

---

(1) Տաճուին հիշած յիշատակով Եզիազարի Երուսաղէմէն դէպի էջմիածին ուղեւորութեան հանգրուանները իրենց քանականներով՝ կը կարծէինք քէ այս նամակը գրուած է էջմիածին ու քոռ այնմ տեղեկացուցած էինք Հ. Ն. Ակինեանի (Ձեղեպի, էջ 147)։ Այժմ կ'ուղղենք սխալը։

ՆՂԻԱՁԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՑՆԹԱԳԻ

ուշադրութեան մասին (1685 Մայիս) գրած են Տ-քը Քորգոմեան(1) և Հ. Ակինեան(2)։ Մենք՝ իրրև լրացուցիչ տեղեկութիւն՝ այստեղ առաջ կը բերենք երեմիայի վերաբերեալ հատուածները Օտագրութեանց Ամպոցին, որ էջմիածին կը փոխուէր 1685 Յունիս 2— Նոյ. 3։ Սպրմատավանք, 1685 Օգոս. 2. «Երեմիաց եկն էջմիածնայս (Քզ. 68բ)։— Անդ, Օգոս. 5. «ԶԱստուածաշունչն առին Երեմիայեն եւ չՔոզին քանիլ» (Քզ. 69ա)։— Անդ, Օգոս. 6. «Երեմիաց մեզ բարկացաւ Քէ Աւետարանն ցոյց կու տա՞ս մի եւ նեզացուց զմեզ» (Քզ. 69ա)։— Օգոս. 8. «Երեմիա պալիճ Մհանա[վա]նք (եկն) վասն Աստուածաշնչին (անդ)(3)։— Երեւան, Սեպտ. 24. «Ապաուչան եւ Երեմիաց ուխտ գնացին ի Մուշին» (Քզ. 70բ)։

Շատ հաւանական է որ Երեմիա իր էջմիածին գրաւած այս միջոցին ինքն իսկ եղած է խմբագրողը Եզիպտոս կաթողիկոսի առ Պարսից Խանն ուղղած քուրքերէն նամակին (Ծաւալ. էջ 524–25), զոր իր ձեռքով ընդօրինակած է մեր Քին. 1058 Ձեռագրին մէջ (Քզ. 79ա–բ)։ Էջմիածնի մէջ գրած է Համառօտ Ծայեմաւուրէ մը քուրքերէն լեզուաւ, ուղղակի իր որդւոյն Գրիգորիս վարդապետի։ Երեմիայի ինքնաձեռագիր այս հատորը այժմ կը պահուի մեր Մատենադարանին մէջ ու կը կրէ 1076 քուահամարը(4)։ Այնտեղ յօրինած է

---

(1) Ստամպօլոյ Պատմութիւն, էջ 173–174։

(2) Ձէյէպի, էջ 53–56։

(3) Երեմիա Կարբիի Յովհաննավանքէն կամ Ս. Յովհաննու Կարապետի վանքէն (Ռըստըմօս) 1686 Քուահունվ 9. Գալիս իր յոյն մէկ բարեկամին կը գրէ հայատառ քուրքերէն նամակ մը, ուր ի միջի այլոց ըսուած է. «Այիս Ռըստըմօս Քուրպէտի հուզուրընաէ հոզըլուդ պու վոխէքի հագիըս (Ծաւալ. էջ 523)։

(4) Ձեռագրիս մեր գոչմէ նկարագրութիւնը տե՛ս Հ. Ն. Ակինեան, Ձէյէպի, էջ 129–31։



ուշնորհքեան մասին (1685 Մայիս) գրած են Տ. Քր. Քոչունեան(1) և Հ. Ակինեան(2)։ Մենք՝ իրրև լրացուցիչ տեղեկութիւն՝ այստեղ առաջ կը բերենք նրանց վերաբերեալ հատուածները Օտագրուբեճեն Ամգիցին, որ էջմիածին կը գտնուէր 1685 Յունիս 2— Նոյ. 3։ Սպասուավանք, 1685 Օգոս. 2. «Երեմեան եկն էջմիածնայս (Քղ. 68բ)։— Անդ, Օգոս. 5. «Ջնաուսուածաչունչն առին Երեմիայեն եւ չՔոզին բանիլ» (Քղ. 69ա)։— Անդ, Օգոս. 6. «Երեմեան մեզ բարեացաւ Քէ Աւետարանն ցոյց կու տա՞ս մի եւ նեզացուց զմեզ» (Քղ. 69ա)։— Օգոս. 8. «Երեմիա պալիճ Ո՛հանո[զա]նք (եկն) վասն Աստուածաչնչին (անգ)(3)։— Երեւան, Սեպտ. 24. «Ապասուլան եւ Երեմեան ուխտ գնացին ի Մուզնիս (Քղ. 70բ)։

Շատ հաւանական է որ Երեմիա իր էջմիածին գըտնուած այս միջոցին ինքն իսկ եզած է խմբագրողը Եզիպտար կաթողիկոսի առ Պարսից Խանն ուղղած քուրքերէն նամակին (Ցուսիկ. էջ 524–25), զոր իր ձեռքով ընդօրինակած է մեր Քիւ. 1058 Ձեռագրին մէջ (Քղ. 79ա–բ)։ Էջմիածնի մէջ գրած է Համառօտ Ցայսմաւուրք մը քուրքերէն լեզուաւ, ուղղեալ իր որդւոյն Գրիգորիս վարդապետի։ Երեմիայի ինքնաձեռագիր այս հատորը այժմ կը պահուի մեր Մատենադարանին մէջ ու կը կրէ 1076 քուահամարը(4)։ Այնտեղ յօրինած է

(1) Սամպօղոյ Պատմութիւն, էջ 173–174։

(2) Ձէլէպի, էջ 53–56։

(3) Երեմիա Կարբիի Յովհաննավանքին համ Ս. Յովհաննու Կարապետի վանքին (Բրուսիա) 1686 քուականով Կ. Պոլիս իր յոյն մեկ բարեկամին կը գրէ հայատառ քուրքերէն նամակ մը, ուր ի միջի այլոց ըսուած է. «Այիա Բրուսիա քուրդեան հաւատրընաէ նազըլուպ պու վասիկիր հպիր» (Ցուսիկ. էջ 523)։

(4) Ձեռագրիս մեր կողմէ նկարագրութիւնը տե՛ս Հ. Ն. Ակինեան, Ձէլէպի, էջ 129–31։

Նաև ընթաժչոի Յեսան Պետրոսի սկզբնաւորութեամբ ուղերձը (Յաւել. էջ 573), որու տոզերուն սկզբնատառերը կը յօդեն ԵՐԻՄԻԱՑԻ ԴԸՐՆԱՎ ու վերջատառերը՝ Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ. նաև՝ ընդհ. գրուածս յէջմիածնեայ վիճաբանական ատեանսերը (անդ, էջ 574)։

Երեմիա իր էջմիածին երթալուն համբերած է Երիմ և Պոնտոս։ Երիմի մէջ հրատարակած է Այս Դըրնատայի (Ս. Երրորդութեան) տօնին տաքիս հոն տեղի ունեցած խրախճանութեան, որուն մէկ ներարտրական հատուածը (անուտրա) հրատարակած ենք հատորիս Յաւելուածին մէջ (էջ 512–15)։ Իսկ Պոնտոսի մէջ գիրք առած է ան բանաւոր քառասնօր սկզբնաւորութեամբ իրարմէ անջատ երեք կարճ ատանաւորներ (Յաւել. էջ 571–72), որոնց տոզերուն սկզբնատառերը կը յօդեն ԷՐԵՄԻԱ և վերջատառերը՝ ՅՈՎՆԱՓԱՆ, Ի ՊՈՆՏՈՍ և ԻՄԱՆԻԷ՝ կրկնութեամբ։

Մինչ Երեմիա կ'երթար էջմիածին ի տես իր Գրիգորիս վարդապետ որդւոյն՝ վերջինս ալ հոգը կարօտէն մղուած կը գառնար Կ. Պոլիս(1)։ Երեմիա հասնելով էջմիածին՝ երբ կը լսէ Գրիգորիս վարդապետի ցամաքային հասնելով իր ծննդավայրը ուղևորելը՝ 1685 տարուան էր յիշս Յունվարին նամակ մը կը գրէ Գաշտոյ առաջնորդին՝ խնդրելով որ երբ վարդապետը հոն հանդիպի՝ իր բարի ակնարկը (նպաստի չէրիֆ) պակաս չընէ անոր վրայէն (Յաւել. էջ 470–71)(2)։

Ըիչնէք՝ քէ Ամգնցի երբ 1690 Դեկտ. 15ին եւ պոկիայէն կու գայ Կ. Պոլիս, Երեմիա Սուլտանանատրի բոլոր քահանաներուն հետ գայն դիմաւորելու

(1) Ագինեան, Զէյթէպի, էջ 57։

(2) Նահապետ կաթողիկոս իր գահակալութեան առաջին տարին (1691) Կ. Պոլիս գրկած իր մեկ կանգակին մէջ (մեր Ձեռ. թիւ 186, քղ. 69ա–70ա) ան ալ մը կը յիշէ Սուլթանեան վարդապետ էնկիւրեայ։ Թերեւս անոր գրած չինի Երեմիա իր նամակը։

կ'երթայ Սկիւտար. «Մուլհանաստրոյ ամենայն քահանայքն եւ իմ երեսիս եկաւ (Օրագր. Քղ. 40բ)։ — 1691 Նոյ. 5ին կը յուշագրէ. «Երեմիա Քօմուրճիզատեն առ մեզ (Քղ. 152ա)։ — Նոյն տարուան Նոյ. 30ին. «Մեր Երեմիային մին Ճիսուս Որդի, մին Ժամագիրք պաշխեցին (Քղ. 153ա)։

Ա. Էջմիածինէ վերադարձին (1688) Երեմիա տեսնելով ազգային–եկեղեցական գործերը խանգարուած՝ մեկուսացնել կեանք մը կ'ապրի այնուհետեւ։ Իր յառաջացնալ տարիքը ու երկու զաւակներուն՝ Սոզոմէ ազջկան ու Գրիգորիս վարդապետ որդւոյն մէկը միւսին հետէն վաղաժամ մահերը, որոնց պիտի անգրադառնանք հետքէն, բոլորովին կ'ընկճեն զինք, ու ան գրեթէ այլեւս հետաւ կը մնայ հասարակական կեանքէ։

«Իրօք ալ լուռ Երեմիա, կը գրէ Հ. Ակինեան։ Այս քառասնէն (1686) յետոյ չենք տեսներ գինքը հրապարակի վրայ. ապրեցաւ իր գիրքերուն մէջ»(1)։

Ու չիրաւի Երեմիա իբրեւ մատենագիր եւ մատենասէրը ու զարգացումով գերազանցապէս բարձր իր ժամանակակիցներէն՝ չէր կրնար հետաւ ապրիլ իր գիրքերէն, նոյն իսկ այն ատեն՝ երբ գժբախտ բախտը կը խլէր իրմէն իր երկու զաւակները իրենց ծագիկ հասակին մէջ ու անհնարին սուգի եւ արտաքնկուքեան կը մատնէր զինք։

Երեմիայի մատենասիրութեան իբրեւ ապացոյց առաջ բերենք հետեւեալ երկու գրուագները։

ա. Իր քահանայ հօրմէն Յեսայի ձեռագիր հնամակ Եաբակնոց մը նորագիւտ տալով կը նուիրէ Գրիգոր Զէլէպիի՝ Քուրքերէն Ուղերձով մը (Յաւել. էջ 578–579), որու մէջ քանի մը չափածոյ տողերով նկարագրելէ հետք Ձեռագիրը, կ'աւելցնէ՝ Քէ որքան որ ա–

(1) Հ. Ն. Ակինեան, Զէլէպի, էջ 57։

Նիկա չունի որևէ արժէք, բայց և այնպէս գիրք է և կտակ է հոգւոյ. և ես արդէն գիրբոռւ զոհաբերած եմ իմ անձս.

«Ի՛մ գիրք տուր վարձքդ հանէ,
Գիրք եղուկնա ֆիտա ալմուչէմ պէրէս։

Բ. Պատասխանելով Գրիգորիս վարդապետի մահուան առքիւ իր մէկ բարեկամ վարդապետին (անունը չի տար) մխիթարական գիրին (Ծաւէլ. էջ 487–488), սրատեսութ տողերու մէջ անոր յուզարկաւորութիւնը նկարագրելէ ու իր կորուստը ողբալէ ետք՝ կ'աւելցնէ. «Ինձ քու մեծութիւնդ կ'ուզէ մխիթարել իր սիրելին՝ իբրև միակ սփոփանք քո՛ղ ինձ գրկէ իր անուան յիշատակ եղած Աչգան Տիւանէյին Պատմագիրքը, որպէսզի կարևոր կտորները ծպտիքաղ ընեմ անկէ»։

Ասոնք յատկանշական գիծեր են, որ կ'ապացուցանեն թէ Զէլէպի իմնչ աստիճան հետաքրքրուած էր ուսման և սիրահար գիրքերու։

Մրքան նշանակալից է իր ատ Ապրոյ Ուզերճին սա խոսքը՝ թէ Ս. Գրոց ուսման մէջ յառաջանալու և խմաստասէրներու աշակերտելու ու անոնց հասնելու անհլը, քան Մագմաներգուին՝ վճիտ ապրիւրներու ջուրին ծարաւի եղող մինգլներուին նման կը տուչորէ գինք, վասնզի, կը յաւելու, ամէն ինչ կ'անցնի, աշխարհի մեծութիւնները կը խափանուին. միայն ուսումը՝ պանծալի, աննման ու կենդանի՝ կը ձեայ վեր ամէն բանէ (Ծաւէլ. էջ 559–60)։

Վերեւ յիշուած մեր Մատենագարանի թիւ 186 Ձեռագիրը կը պարունակէ նգիտզար կաթոզիկոսի նամակներու եւ կանգակներու եւ իրեն գրկուած գիրքերու ու կարգ մը ուրիշ քուղքերու ընդօրինակութիւնը։

Առանց մէջ երեմիայի ձեռամբ ընդօրինակուած են հետեւեալ եօթը նամակները.

1. *Ի Սուամպօլցոց (Տէր Սիմոն, Տէր Յակոբ, Մկր. Մինաս, Հաճի Կոստիկ, Յովճա Վարդան, Սահակ Զէլէպի, Հաճի Գասպար, Մկր. Շէհրի, Մկր. Աստուածատուր, Քէրպի Վարդան, Մկր. Ալեքսան, Մկր. Մկըրտիչ, Մկր. Մուրատ, Մկր. Գրիգոր եւ այլք) առ Եզիազար կաթողիկոս ի Սախըզ, (1669) Յունիս 23, Դ. (Քղ. 39ա).*

2. *Ի Մարտիրոս վարդապետէ (Ղրիմեցի) առ Եզիազար կաթողիկոս ի Սախըզ, ՌՃԺԸ (= 1669) Յունիս 22 (Քղ. 39բ).*

3. *Ի Սուրբ Երուսաղէմայ (Տէր Յակոբատուր եւ այլ եղբարք եկեղեցականք, Մկր. Վարդան եւ Քէրճէման Յովնան) առ Եզիազար կաթողիկոս ի Սախըզ 22 Ապրիլ (Քղ. 40ա).*

4. *ԵՀսատամպօլոյ եկած Մարտիրոս վարդապետէ (Ղրիմեցի) գիր, (անքուանէն) առ Եզիազար կաթողիկոս (Քղ. 41ա).*

5. *Յակոբ կաթողիկոս (Ջուղայեցի) Կ. Պոլսոյ Ս. Աստուածածնին եկեղեցիէն առ Աստուածատուր վրդ. (պատրիարք) եւ առ Մարտիրոս վրդ. (Ղրիմեցի) եւ Մանփաճոս վրդ. յԵրուսաղէմ ՌՃԺԸ (= 1669) Յունվար 23 (Քղ. 41բ).*

6. *Ընդ նմին եւ Յովճա Յոսէփին յղեալ յԵրուսաղէմ (յիշեալներուն), ՌՃԺԸ (= 1669) Յունվար 25 (Քղ. 41բ–42ա).*

7. *Յակոբ կաթողիկոս (Ջուղայեցի) Կ. Պոլսոյ Ս. Գէորգ եկեղեցիէն առ Եզիազար կաթողիկոս, ՌՃԺԸ (= 1668) Օգոստոս 22 (Քղ. 45բ).*

* * *

Երեմիա Չէլէպիի կենսագիրները կը յիշատակեն անոր ընտանեկան պարագաները ու ասիկի կամ նուազ տեղեկութիւններ կու տան անոնց մասին։ Մենք կարեւոր կը գտնենք նորագոյն յաւելումներ ընել այդ տեղեկութեանց վրայ՝ որքան որ կ'ընձեռնեն մեր ալբի առաջ ունեցած ազբիւրները, որոնց մէջ առաջինը տեղը կը գրաւէ Մինաս Ամգեցիի Օրագրութիւնը։

Երեմիայի ընտանիքին մէջ կը յիշուին Ա. Իր հայրը Մարտիրոս Խանամայ Գեօվիւրճեան, Բ. Իր մօր քոյրն ու իր հայրագիրը Մանուսի Ամբակում, եղբայրները՝ Գ. Գեորգ (ապա Մարտիրոս Խանամայ), Դ. Կոմիտաս (ապա քահանայ), Ե. քոյրը՝ Երիճնկ, որդիները՝ Զ. Ամբակում (ապա Գրիգորիս վարդապետ), Է. Մաղաքիա և Ը. գուստրը՝ Սօղոմկ։

Խօսինք սոնց վրայ առանձին առանձին։

Ա. ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱՉԱՆԱՑ ԳԷՕՎԻՒՐՃԵԱՆ. — Հ. Ն. Ակինեան սոսկ մահուան մասին կը գրէ. «Գնէտք է պատահած ըլլայ 1664էն ետքը և 1666էն յառաջ. վերջին Քուսականիս գրած Ձիշատակարանի մը մէջ, զոր Ապրօ Չէլէպիի խնդրանքով կցած է Աւետարանի մը վերջը, իւր ծնողքը արդէն մեռած գիտէր[1]։ Մինաս Ամգեցի, սակայն, իր Օրագրութեան մէջ քանդրուշ կերպով կ'արձանագրէ Տէր Մարտիրոսի մահը այսպէս. Երուսազէմ, Ռձէ = 1681. ԷՓեպրվար ԺԸ. Գշի, . . . Բնդգի ապան Ըստամպօլու եկն (Քուզքին ծայրը խզտուած) [եւ երեր գիր] ի Մարտիրոս վարդապետէն (Ղրիմեցի) Գօմուրճին մեռաւ տէյտ (Քզ. Շա)։ Ամգեցիի այս յիշատակութեան ճշգութիւնը քնաւ կաս-*

(1) Տե՛ս էջ 27, 28։

կած էի վերցնեմ։ Վերև յիշուած Ծիլատակարանին «Զնեղս իմ տեսի մեռաւ» տողը ապահովաբար ակնարկութիւն է Երեմիայի մօր՝ Ծուղիտայի, որ կը վախճանի 1663 տարուան մէջ, ինչպէս կ'երևի այդ առիթ. անոր վրայ իր յօրինած Գանձի վերջաբերէն(1)։ Երեմիայի Վիպասանութիւն յԱպրօ Զէլէպի աշխատութեան մէջ՝

«Եւ քոց մահու կսկծարեր մեզ հանդիպեալ,

Մնոզիս dbroյ յանկարծ ուրեմըն վախճանեալ»,

տողերուն մասին Տօքթ. Թորգոմեան չատ իրաւացիօրէն կը գրէ. «Մնոզիս dbroյ բառերէն առաջին ակնարկով կարելի է Տէր Հայրը հասկնալ, բայց Մայրն է վախճանողը»(2)։

Այսպէս՝ Հէգուեչով Տէր Մարտիրոսի մահուան տարին (1681 Յունուար՝ հաւանաբար), անիկա քահանայագործած կը լինի 43 տարի ու քանի մը ամիս։ Ձեռնադրուած էր 1637 տարուան աշունին Երուսաղէմի մէջ, Գրիգոր Պարոնտէր պատրիարքէն։

Տէր Մարտիրոս ունեցած է նաև ամուսնացեալ քոյր մը, զոր երեմիա երկու անգամ կը յիշէ իր Օրագրութեան մէջ, առանց անունը տալու։ 1656 Ապրիլ 26. «Օրս երթորգում՝ փեսայ հարեւրիս ի տուն քերին փեսացարէս։ — 1656 Մայիս 15. Հինգ ընդ Պետուն և ընդ Մալզոյին՝ փեսային հարեւրիս իմոյ՝ ի Սուրբ Նիկողոս, ևայլնս։

Բ. ՄԱՀՏԵՍԻ ԱՊԱԿՈՒՄ.— Ասոր հետաքրքրական ու արժէքաւոր մէկ յիշատակը ցարդ կը պահուի մեր Սրբոց Յակոբեանց տաճարին մէջ։ Այս մասին կու տանք հետևեալ լուսաբանութիւնը։

---

(1) Ծաւելուած, էջ 611։ Հմմտ. Թորգոմեան էջ 721, Ալիշեան էջ 28, Սիսուան, էջ 278-80։

(2) Սամվելոյ Պատմութիւն, էջ 721-22։

Սիսի Թորոս կաթողիկոս, ինչպէս տեսանք, Կ. Պոլսոյ մէջ կը վախճանի 1657 Ապրիլ 29ին։ Անիս մը ետք Եգեսացի Ոհան վարդապետի աշակերտ ու Եզիազարի քարեկամ Յակոբոս վրդ. Սերաստացի, հաւատակ Մուղնեցիի արբանեակներու յարուցած դըժուարութիւնեանց, գալոնապէս կ'երթայ Ագրիանուպոլիս եւ Սիսի կաթողիկոսութեան քաղաւորական հրովարտակը իր անուան հանելով՝ իսկոյն կ'ուղեւորի Կիլիկիա (Օրագր. 245), եւ Յուլիս 17ին կաթողիկոսական ժողով կ'ընդունի, ինչպէս կը յիշէ Երեմիա իր Օրագրութեան մէջ. «Կիրակի ԻԸ (1657 Հոկտ. 18). Քուէք եկն մեզ ի կաթողիկոսէն Յակոբոյ զոր ձեռնադրեալ են Յուլիսի ԺԷն։ Նոյն տարուան Հոկտեմբեր 30ին Յակոբոս կաթողիկոսի կոչմէ Կ. Պոլիս կը հասնի Տէր Տրդատ՝ հետը բերելով Տէր Մարտիրոս Քէօմիւրճեանի ու Մահտեսի Ամրակումի ուղղեալ կաթողիկոսի նամակը։ Վերջիններուս Յակոբոս կաթողիկոսի ուղղած պատասխանագրէն (Ճառել. էջ 515), որուն խմբագրողը առանց սեւէ տարակոյսի եզած է Երեմիա, կը տեղեկանանք թէ Թորոս կաթողիկոսի Կ. Պոլիս գտնուած ատեն Մահտեսի Ամրակում անոր համար արծիւ մը պատրաստել տուած էր, բայց չէր կրցած ընծայել՝ տակաւին գործը չաւարտած կաթողիկոսի վախճանը վրայ հասնելուն համար։ Այս անգամ Տէր Տրդատի ձեռամբ Յակոբոս կաթողիկոսի կը գրկեն այդ արծիւը՝ գրելով. «Եւ զարծիւն զոր պատրաստեցաք չուառաւ հոգի Տեառն Թորոսի, ահա՛ քեզ վիճակեցաւ՝ ընծայելով հայրապետարանիդ առ յիշատակ մեզ եւ քո։ Բարով վայելեսցես՝ վկայելով անկեզն եւ աւրթ սէր մեր որ ի վազուց նախագուշակաւ իրիս պատահմանե։

Այդ մինակոյն արծիւն է որ այժմ Ս. Աթոռոս մէջ կը պահուի եւ Ս. Յարութեան եւ Ս. Յակոբի մէջ

ՄԱՀՏՍԻ ԱՄԲԱԿՈՒՄԻ ԱՐՄԻՒՐ



հանգիստաւոր քափօրներու ժամանակ ձոգի մը վրայ բարձրացուցած՝ իբրև արծուենգրօշ կը տարուի հանդիսապետ պատրիարքներու կամ եպիսկոպոսներու առեւէն։ Արծիւին նկարագրութիւնն է հետեւեալը. 1,10 × 0,80 մէգր մեծութեամբ սպիտակ անգուսի վրայ ասկեթել բանուած է քառապատակ արծիւ մը, քեւատարած, որուն երկայնութիւնն է, վերէն վար, 0,87 սմ. ու լայնքը, քեւերու մէկ ծայրէն միւսը, 0,80 սմ.։ Վարի եզերքէն վեր, երկու կողմերը, բանուած են համաչափ ու համանման գմբէթաւոր երկու տաճարներ՝ երեքական սիւներով ու մէյմէկ գոյգ դուռներով և լուսամուտներով։ Այդ տաճարներու մեծութիւնն է 0,38 × 0,26 սմ։ Սպիտակ անգուսին վերեւի երկու անկիւններէն կան եռանկիւնաձեւ պարտեր՝ ծաղիկներով ու տերեւներով։ Ունի 0,10 սմ. լայնքով չրջանակ մը, կարմիր անգուսէ, վրան ոսկեթել բանուած ծաղիկներ ու տերեւներ ու չորս անկիւններէն չորս աւետարանիչներ. վերէն՝ Մատթէոս և Յովհաննէս ու վարէն՝ Մարկոս և Ղուկաս։ Թիչատառագրաններն է, երեք տողերու վրայ.

«ՅԵՏԿ Է ԱՐԵՒՍ ՄԱՀՏՍՒ ԱՄՐԿՄՆ ԵՒ ԿՂԿՑՆ ԵՒ ՅՆՕՂՑՆ ՄԱՐՏՍՆ ԵՒ ԽՒՊՔ / ԵՒ ԵՂՒՐՑՆ ՊԿԼՐՆ ԵՒ ԱՅՏՐՆ ԵՒ ԱՄ ԱՐԵՆ ՄԵՐՋԻՐՑՆ Ի ՔՂՔՆ ՍԻՍ ՍՒ ԼԻՍՐՋԻ / ԱՋՑՆ ԵՒ ԱՑԼ ՍՐՒՑՆ ՍՂՒՍՏՍՒՍ ՆԿՂՑՍՒ ՊՐ_ ՍԱՄԱՑ Ի ՎՑԼՄՆ ՏՆ ՔՐՍ ԿՔՂԿՍՒ ՀՑՑ»(1)։

(1) Փակագրութիւններէը քանալով՝ կը կարդացուի. «Ճիւսակ է առծիւս Մահեխի Ամթակումին եւ կողակցոյն եւ ծնօղացն Մարիամայ եւ եղբարցն Պետրոսի եւ Անտոնեսանի եւ ամենայն առեան մերձաւորացն ի հոգւոյն Սիսս Սուրբ Լուսաւորչի աջոյն եւ այլ արքեպ Անգրնեսրաի, Նիկոդոյեսի, Պարսամայ, ի վայելումն Տեառն Թարեա կաթողիկոսի Հայոց» (Հմմտ. Հ. Ն. Ակինեան, Զէյթոպի, էջ 21)։

Քուականը ասեղնագործուած է արծիւին վարի երկու կողմերը. մէկ կողմը՝ Թվն. և միւսը՝ ՌՃՋ (= 1657)։

Մեզ անյայտ կը մնայ քէ ի՛նչ պարագաներու տակ Մահտեսի Ամրակումի այս քանկագին ընծան փոխադրուած է Երուսաղէմ։ Հաւանական է ենթադրել քէ հայկաւոր Սեբաստացի եղիազարը կաթողիկոս օծուելէն ետք իր կարգին ներս ընծայած ըլլայ զայն։ Մեր հինաւուրց միաբաններէն լսածնուս համաձայն՝ Ս. Աքառոյս մէջ աւանդաբար կը պատմուի եղեր քէ եղիազար կաթողիկոս Երուսաղէմի մէջ եպիսկոպոսական ձեռնադրութիւն կատարած ժամանակ իբրև արծուափորգ կը գործածէ եղեր այդ արծիւը։

Գ. ԳԷՈՐԳ՝ ԱՊԱ ՄԱՐՏԻՐՈՍ ՓԱՒԱՆԱՑ ՓԷՕՄԻՒՐՃԵԱՆ.— Երեմիա, ինչպէս տեսանք, իր Օրագրութեան մէջ յիշած է իր Գէորգ եղբայրը, երբ ան հիւանդացած ըլլալով՝ իր փափաքին համաձայն կը տանին Փիլիպպոս կաթողիկոսի քով (էջ 35)։ Գէորգ իր անհանգարտ բնաւորութիւնամբ հակապատկերը եղած է իր երէց ու կրտսեր եղբայրներուն՝ Երեմիայի և Յովհաննէսի։ Երեմիա կը գրէ իր Օրագրութեան մէջ (1656 Մայիս 1). «Օրս Գէորգն փախեր էր և ի վարպետ ոչ գնացել. բազումս որոնեալ գտան զնա ի Լալէլու ազգիւրն» (էջ 169)։ Հայրը Տէր Մարտիրոս 1664 Սեպտ. 16 քուականով առ եղիազար գրած քուղքին մէջ կ'ըսէ անոր մասին. «Եւ զանառակ Գեորգն որո՞յ յանձն առնեմ(1)։

Մինաս Ամգենցի Օրագրութեան կ. Պոլսոյ մէջ գրուած հետևեալ կտորներէն կ'իմացուի քէ Գէորգ ամուսնացած է քահանայի մը ազջկան հետ (երէցկնոջ ու աներոջ անուններըը անծանօթ)։ 1699 Դեկտ. 18.

---

(1) Սիոն, 1932, էջ 278։

«Տէր Մարտիրոսի աձիւր երեցն վախճանեալ թերին յեկեղեցին (Ս. Գէորգ), եւ ինքն ի վերայ»։ — Դնկա. 26. «Ընդեղս գնացի Տէր Մարտիրոսենց սրտհարցուածն վասն աձիւրոցն մահուան. Մխիթարն (վրդ.)(1) եւս եւ Կոմիտասն, եւ յաւ պատիւն (Քղ. 240ա–բ)։

Ամգենցի գաբռնալ իր Ուսգրուբեան մէջ, 1682 Ապրիլ 20ին, կը գրէ անոր մասին. «Օրս Քամուրճի Տէր Մարտիրոսի որդին Գէորգն որ ի չիլանկն եկաւ, մեզ չապիք, վարտիք եւ մահրամայ ոզարկեցաւ» (Քղ. 12բ)։ Այս հաշուով՝ Գէորգ քահանայ կը ձեռնադրուի քառասնեակ մը օրեր առաջ, որ կը հանդիպի նոյն տարուան Մարտ 12ին, մեծ պահոց Անառակի Կիրակի օրը, իր հայր մահէն գրեթէ տարի մը վերջ, ու կը վերադարձուի անոր անունով Մատիրոս։ Ան գեռ ևս իր ձեռնադրութեան տարեդիցը չբոլորած՝ կը հետամտի ամուսնութեան ու կը բռնադատէ իր եբէց եղբայրը՝ Երեմիան որ գրէ էջմիածին իր Գրիգորիս վրդ. զուգին ու անոր մինոնորդութեամբ ամուսնութիւն բերել տայ Եզիազար կաթողիկոսէն։ Ուշագրաւ է Երեմիայի այդ մասին առ Գրիգորիս վրդ. գրած նամակը, ուր գառնապէս կը գանգատի իր Գէորգ (Տէր Մարտիրոս) եղբօրմէն՝ ըսելով. «Ես իմ խուզովս ի տապակի տագնապիմ, սա քէ Գրեացես խնդիր՝ քէ ամուսնութիւնս ի վնհէն գայցէ։ Թո՛զ քէ Գէորգն արաւ գիւր գամենայն, քամամ գիս ի նարզն իջեցոյց (նկուն ըրաւ), հիմա քէ Այլ գո՞վ ունիմ քան զքեզ, ասէ. որպէս Մագաքիային քէ Իմ միրսան քեզ կու հասնի, եւ գտուն ի կնկանն վերայ արաւ, որպէս քէ ցաւլաքան (խաբեբայ) եւ այնանի (խարդախ)՝ տուրլի մի խնդիր. ապա գիշերսն (իր գործը) յաւ գիտէ։ Հէյէ գիհոյն մի Աստուած գիս

(1) Մխիթար Գիւրմիճանցի, ապա պատրիարք Կ. Գալաթայ, 1700։

ազատեց յիւրմէն, քանի մի գիւղ այլ ձեաց։ Փա՛ռք Աստուծոյ, ուրախ եմ ի փոքունքիւնս իմ. որ եհարն՝ նոյն լիցի քաւիչն (Ծաւիչ. էջ 454)։

Վերևի տոզերէն երևան կ'ելլէ նաև թէ Տէր Մարտիրոս եղած է անզաւակ, քանի որ իրեն ժառանգորդ ընել խոստացած է իր կրտսեր եղբայրը Մազաքիան։

Սոյն նամակի գրուքենէն ետք 15 տարիներ կը բոլորին ու Տէր Մարտիրոս չի հասներ իր աւագութեան փափաքին, ու. ճարահատ՝ կը գիմէ այլազգիներու միջնորդութեան, ինչպէս կը տեղեկանանք Ամգեցիի Օրագրութեան հետևեալ հատուածէն. 1697 Նոյ, 21. «Օսման ազան վէզիրի քեահեայէն իրիճա՝ վասն Մարտիրոս իրիցին աւաք լինել ի Գալաթա (Քղ. 239բ)։

Սոյն Տէր Մարտիրոսի վրայ տեղեկութիւնները ամբողջացնելու համար՝ Ամգեցիի Օրագրութենեն կը քաղենք անոր վերաբերեալ մասերը, գրուած Կ. Պոլսոյ մէջ։

1690 Դեկտ. 30. «Քոմուրճի Տkr Մարտիրոսն մեր բայնօքն ընդ մեզ (Քղ. 141ա)։ — 1691 Յունուար 1. «Քոմուրճին մարգարտէ քէմէր ընծայ»։ — Յունուար 8. «Երեկոյս չատ կէվէզութիւն արար Քոմուրճիզատեն» (141բ)։ — Յունուար 9. «Երեկոյս Քոմուրճին կէվէզութիւն չատ արար» (անդ)։ — Յունուար 11. «Քոմուրճին (ի Ս. Աստուածածին) ծանուցում նուիրակութեան» (անդ)։ — Յունուար 13. «Քոմուրճին մազուլ արին՝ Ղավուխճին վէքիլ գրին . . . Քոմուրճին մեծ ախտի մի գինի երևար» (անդ)։ — Յունուար 15. «Պատարագիչ Քոմուրճին (ի Ս. Աստուածածին)» (Քղ 142ա)։ — Յունուար 17. «Տkr Մարտիրոսն եկեղեցոյն մէջ աներեսութիւն՝ նաև չեա սեղանոյնը (անդ)։ — Յունուար 19. «Քոմուրճին կէվէզութիւն արար» (անդ)։ — Յունուար 20. «Քոմուրճին Միքայէլի գիւղն անարգեալ էր. չաւուշ բերեց՝ նա փա-

խաւս (անգ)։ — Յունուար 29. «Քօմուրճու տղաճ (Տէր Մարտիրոսն) գարձեալ գայրացոյց գմեզ, վասն իմ մեզացն էս (Քզ. 142բ)։ — Փետրուար 5. «Ցնծա ժամուն Քօմուրճին աւելի եւ պակաս՝ ընդ ձանուցինս (անգ)։ — Փետր. 16. «Քօմուրճուն տղաճ եկաւ գինով, բայց ճանապարհին չատ ծեծ էին տուած քուրքերն նորան (Քզ. 143ա)։ — Մարտ 7. «Ի մէջ երեկոյի ժամին Քօմուրճու տղաճ եկաւ՝ խնդրուքիւն արաւ (Քզ. 143բ)։ — Մայիս 10. «Գրիգոր սարկաւագն և բազումք ի ճաշ, և Քօմուրճին և Իսրայէլ էրէցն գինով օրուանէն եկինն (Քզ. 146ա)։ — Յունիս 13. «Քօմուրճի Գևորգն (Տէր Մարտիրոս) առ մեզ աճամ իրիցոնէ, և նւնալ գնացինն (Քզ. 147ա)։ — Դեկտ. 18. «Սկզան ի Տեր Մարտիրոսենցն (Քզ. 153բ)։ — Դեկտ. 19 և 20. «Հաց ի Տեր Մարտիրոսենցն (անգ)։ — Դեկտ 24. «Քօմուրճոյ Տեր Մարտիրոսի կինն խաչտահաքին քէսէ ոզարկեցն (Քզ. 154ա)։ — 1699 Փետր. 16. «Տէր Մարտիրոսն փախչավաս (Քզ. 232ա)։ — 1700 Յունիս 4. «Մարտիրոս երեցն եկաւ ի Սուչիմանաստիր. մուզուր գրին ի վերայ նորա. փախեր էր ի կորուստն՝ չէին գտած գնաս (Քզ. 245ա)։ — Նոյ. 11. «Հարցանիք Տեր Մարտիրոսի աներթագ Աստուածատուրեն (Քզ. 249ա)։ — 1701 Յունուար 8. «Տեր Մարտիրոսն փախչավաս էր ոզարկեր մեզս (Քզ. 251ա)։ — Փետր. 12. «Տեր Մարտիրոսն եկաւ. խնչօքացել չաւս (Քզ. 252ա)։

Այսքան են Տէր Մարտիրոսի մասին Ամգնցլի յուշագրութիւնները։ Ամենէն վերջինով, գրուած Երուսազէմի մէջ 1703 Հոկտ. 7ին, կ'արձանագրէ անոր մահը, որ տեղի ունեցած է Գ. Պոլսոյ մէջ նոյն տարուան Օգոստոս 16ին, վերափոխման տօնի մեռելոցի օրը. «Հաւաք զՔօմուրճի Տեր Գևորգին (Տէր Մարտիրոսին) գմահն՝ Աստուածածնի երկուշաբաթին (Քզ. 284բ)։

ընքագրելով քէ կրտսերն Տէր Մարտիրոս իր երեք միա երէց եղբօրմէն գէթ երկու տարի վերջ (1639) ծնած ըլլայ, այդ պարագային անոր կեանքի տեւողութիւնը կը լինի 64 տարի։ Քահանայագործած է 21 տարի; 5 ամիս և 4 օր, չեռնագրուած ըլլալով 1682 Մարտ 12ին։

Դ. ԿՈՄԻՏԱՍ ԲԱՀԱՆԱՑ ՀԻՕՄԻՐՃԵԱՆ. — Երեմիայի կրտսեր եղբօր Կոմիտաս քահանայի մասին հրատարակութիւններ չատ կան։ Մենք, չկրկնելու համար մեր ուղեգիծէն, պիտի չանդրադառնանք այդ հրատարակութիւններուն ու պիտի բաւականանանք ներկայացնելով անոր կեանքի այն կողմերը որոնք անծանօթ մնացած են ցարդ։ Այս մասին մեր գլխաւոր ապրիւրն է գրքնակ երուսաղէմի պատրիարք Մինաս Ամգենցիի Օրագրութիւնը։

Ամգենցի մանաւանդ սէր և յարգանք ունեցած է գէպի Քէօմիւրճեան ընտանիքի անդամները, այն աստիճան որ մինչև իսկ երեմիայի ազնուական եղբօր՝ Տէր Մարտիրոսի անկարգ արարքներուն կը հանգուրժէ ներողաբար, ինչպէս կը նկատուի վերևի քաղուածքներէն։ Իսկ Տէր Կոմիտասի նկատմամբ Ամգենցիի սէրը աւելի չափազանց կը տեսնենք։ Կ. Պոլսոյ մէջ իր անցուցած տարիներուն անգա ու մտերիմ յարաբերութիւն կը մշակէ անոր հետ, հոգածութիւն ցոյց կու տայ անոր զաւակներուն, գայն իրեն խորհրդակից կ'ընէ, ու իր ուղեւորութեանց ատեն իրեն կ'ընկերացընէ՝ Ադրիանուպոլիս, Թոռոսքոյ և երուսաղէմ։

Մինչև հոս ըսենք քէ Տէր Կոմիտաս, որ ծնած է 1656 տարուան Ապրիլ 22ի լուսանալու գիշերը, մկրտուած է իր ծնելէն վեց օր ետք, ըստ Զէլէպիի Օրագրութեան (էջ 167). «Առաւօտուս կիրակի (27 Ապրիլ) ի մեր ժամն (Ս. Սարգիս) գնացաք և կնքեցին զտղան մեր՝ Կոմիտաս անուանեալ»։

Ամգնցի կը յիշէ Տէր Կոմիտասի մէկ արուս եւ երկու ազջիկ զաւակները։ Արուս զաւակը կը կոչուէր Նահապետ, իր պապին՝ Տէր Մարտիրոս Գէօմիւրճեանի հոր անունով։ Անիկա 1699 Մայիս 18ին, Հինգշաբթի, Համբարձման առնի օրը, կը գտնայ Լեհաստանէն Կ. Պոլիս, քսան Օրագրութեան Ամգնցիի. «Տէր Կոմիտասի տղան եկաւ ի Լեհաց» (Քզ. 234բ)։ Նահապետ գըժբախտաբար հինգ ամիս վերջ մոտային ծանր խանգարումի մը կ'ենթարկուի(1), այնպէս որ հարկ կ'ըլլայ զայն պրկել երկաթի կապանքներով, ինչպէս արձանագրած է Ամգնցի 1699 Նոյ. 25ին. «Տէր Կոմիտասի որդի Նահապետն չատ խեւութիւն արեր է մէկէն եւ իւրեանց տունն. երկաթի կապանօք պնդեցին զինքն յեկեղեցւոյ (Ս. Գէորգայ) պախչայի մազապային» (Քզ. 239բ)։ Երկու օր ետք՝ Նոյ. 27ին. «Կոմիտասի տղան զըչնեիրն կորեր փախեր էր Ետայի իրիցանց» (անդ)։ Տէր Կոմիտաս տեսնելով որ գժուար պիտի ըլլայ քովը պահել իր խօթացեալ որդին՝ կ'որոշէ զայն գրկել Հռոմ, ուր այդ օրերուն կը գտնուէր իր եղբօրորդին՝ Մաղաքիա, ու հոն արգելափակել։ Այս առթիւ Ամգնցի նոյն տարուան Դեկտ. 1ին գիր մը կ'ուղղէ Ջմիւռնիա Ապրօ Չէլէպիի որդւոյն Մատթէոսի ու գիր մըն ալ Հռոմ եղբայր վարդապետին(2). «Երկու գիր գրեցաք,

---

(1) Այս առթիւ Տէր Կոմիտաս տառասուղ Ազնուս մը գրած է առ Ս. Կոյան, զոր պիտի տեսնենք յետոյ։

(2) Ան 1686ին եպիսկոպոս ձեռնադրուած է եղիազար կաթողիկոսէն Ս. Յակոբեանց տաճարին մէջ՝ Մինաս (Ամգնցի) եւ Պօղոս վարդապետներուն հետ։ Եղած է նախ լուսարարապետ, ապա՝ նուիրակ Հռոմի եւ Սպանիոյ 1690-99ին. տեսուչ բնիկ Հայերուն՝ 1702ին։ Եղած է նաեւ նուիրակ Լիվոռնոյի. այդ առթիւ 1690ին Ս. Յակոբեանց Միաբանութիւնը տեղւոյն իշխանութեան կը գրէ որպէսզի լաւ ընդունելութիւն ընեն անոր (Լմմա. Մ. Խոր. Ազաւնունի, Միխթարեան, էջ 118)։ Մինաս Ամգնցի 1700 Օգոստ. 5ին Կ. Պոլսէն գիր մը ուղղած է կղեմէս ԺԱ. պա-

մէկ՝ Մաքոս ազային Իւմիր եւ մին՝ Սղխա վարդապետին ի Հռոմ վասն Տէր Կոմիտասի ազային՝ քէ գնա անդ, վասն արգիլելոյ զնաւ (Օրագր. անդ)։

Տէր Կոմիտասի երկու ազջիկներուս անուններըը կը ճանն անծանօք։ Անոնցմէ երէցը եղած է չարաչարանգէտ. այս մասին Ամգեցի կը գրէ. 1691 ԷՀոկտ. Ի-ն, որն կիրակէ Յայգիւտին. երեկոյս Կոմիտասի ազջիկն չատ չարաչան ասաց. մէկ ոսկի տուի իւրնա (Քզ. 151բ)։ Կրտսերը կը վախճանի 1699 Փետր. 21ին. ԷԿոմիտասի փոքր ազջիկն մեռաւ (Քզ. 231ա)։

Ամգեցիի Օրագրութենէն կը քաղենք Կ. Պոլսոյ մէջ գրուած հետեւեալ հատուածները, որոնց մէջ Տէր Կոմիտասի անունը յիշուած է։

1691 Փետր. 19 (Յօն վարդանանց). ԷԿոմիտասն (քերաւ) չապիկ և մահրամա ազջկունէն և փախլավայ, Երեմիան (Զէլէպի)՝ բախի եւ մէզէ» (Քզ. 143բ)։ — Մեպտ. 3. «Տէր Կոմիտասն մին Տօնացոյց ընծայ» (Քզ. 150ա)։ — Հոկտ. 1. «Հաց վազվնէս ընդ Կոմիտասին» (Քզ. 151ա)։ — Դեկտ. 27. «Տէր Կոմիտասն գինի եւ սուճուխ (երեր)» (Քզ. 154ա)։ — 1698 Նոյ. 4. «Գիրքեր պատրիարգին (Մելքիսեդեկ Սուպհի) և Սրապիոնին և Տէր Կոմիտասին հետ Գ սահաթ նստաք վասն մեր բանին և եզաւ» (Քզ. 229ա)։ — Նոյ. 11. «Մենք ընդ մերոցն՝ Կոմիտասին և Եղիային և Տէր Յակոբոս-

---

պին, որով անոր աթոռ բարձրանալը կը շնորհաւորէ ու մաղթաւորապէս կը յանձնարարէ ասոր եղիա վարդապետը և երէմիայի կրտսեր որդի Մազաքիան, որոնք կ'ուզեն որբին Յակոբ և Յովսէփ, ու այդ գիրը պապին գրած է Փետրոս ամսուն չորին կրճատութեամբ միջոցաւ (Ծատուրեան, էջ 662)։ Ամգեցի ի Կ. Պոլիս իր Օրագրութեան մէջ նոյն քառասնամեայ կ'արձանագրէ այսպէս. «Պատրի Փետրոսն եկաւ ընդ Յակոբոսուր վարդապետին, զի գնալոց է ի Հռոմ. զրուց չատ եւ գիր ետաւ փափին համարս (Քզ. 240բ)։

բին Գ. սահաք Նստաք. Իշվիդայից մնծաւորն եկն առ մեզ» (ՔՂ. 229բ)։ — Նոյ. 12. «Մեք զՕուռնաց պատրիարգի գիրն յղեցաք կարդալ ընդ Կոմիտասին, եւ քիչ մի գրեր էր ի նորա քինքէն հայերէնս (անդ)։ — Դեկտ. 1. «Զբուռց չատ էանց վասն Երուսաղէմի ընդ Սրապիոնին եւ Կոմիտասին եւ Երեմիայիին (Սահապատյար)» (ՔՂ. 230ա)։ — Դեկտ. 7. «Եղիայի փեսա էրէցն եւ Կոմիտաս Հրեցն ազմուկ վասն պատկին» (անդ)։ — 1699 Փետր. 22. «Տհր Կոմիտասն տկարացեալ ի տիւսլիքունս (ՔՂ. 232ա)։

Մինաս Ամգեցի, որ 1695 Ապրիլ 4ին մեկնած էր Երուսաղէմէն ու ցամաքային ուղեւորութեամբ գացած էր Էջմիածին, 1698 Հոկտ. 24ին կը գտնուայ Կ. Պոլիս։ Երուսաղէմէն իր բացակայութեան առեն կայծակ մականունեալ Գալուստ վրդ. ձեռք կ'անցընէ Ս. Քառն առաջնորդութիւնը ու իր տեղ Գալաթցի Յակոբ վարդապետը փոխանորդ կը ղրկէ Երուսաղէմ։ Մինաս Ամգեցի Գալուստ վարդապետը ձգելու եւ իր իշխանութիւնը վերահաստատել տալու համար երկու անգամ (1698 Դեկտ. 23 եւ 1699 Յունիս 12) կ'երթայ Ապրիանուպոլիս ու կը ներկայանայ մեծ եպարքոսի առանը։ Անգամ մըն ալ՝ 1699 Մարտ 4ին՝ Ապրիանուպոլիս երթալու համար համբայ կ'ելլէ Կ. Պոլսէն՝ իրեն ուղեկից առնելով նաեւ Տէր Կոմիտասը, ինչպէս կը գրէ. «Էլի Մատաթօլու՝ Կոմիտասն եւ տքեզան եւ երկու փոքրաւոր եւ Թուխաճան՝ եւ եկաք ի Փոքր Զէքմէճէնս (ՔՂ. 232բ)։ Ճամբան կը չարունակէ ու հանգիպելով մեծ Զէքմէճէ եւ Սիլիվրի՝ Մարտ 6ին կը հասնի Զօրլու։ Ամգեցի հոն իմանալով թէ Գալուստ վրդ. չի գտնուիր Ապրիանուպոլիս՝ չորրորդ օրը այն տեղէն եւս կը գտնայ Կ. Պոլիս։ Զօրլուէն Տէր Կոմիտասի ձեռամբ նամակ մը կը գրէ Յունաց պատրիարքին. «Զգիր պատրիարգին Յունաց հայերէն գրեց

Կոմիտասն (անդ)։ — Եարուն ակնիք մեր քաղուածնեըը։

*Մարտ 27. «Կոմիտասին չալ մի նոռ մարայ» (Ք. 233ա)։ — 1699 Ապրիլ 27. «Աջալատուր վարդապետն գիտցիր գրեալ գիրն որ առ նահապետ կաթողիկոսն՝ հայերէն թարգմանեալ մեզ. Հանի Մկրտիչն և Տէր Կոմիտասն առ մեզ» (Ք. 234ա)։ — Յունիս 24. «Կոմիտասն առ մեզ, քանզի գիր էին գրել նորա Լեհոց վարդապետն Վարդան (և) Մխոն ի Հռոմ» (Ք. 235բ)։ — 1700 Ապրիլ 28 Կիրակի. «Կոմիտասն ծանուցում (ի Ս. Գէորգ), նա չխօսեցաւ ի գառնութենէ սրտիս» (Ք. 214ա)։ — Մայիս 7. «Հաց կերաք, եկաք գայիխով Կոմիտասն, Գաւազարն, Գախչին և մեր տղայքն՝ գնացաք ի Առնաւուտքոյն, ի պախչան խմեցաք և գարեաք ի Ս. Գէորգս (անդ)։ — Մայիս 14. «Առաւօտս կանուխ եկաք Մուլիմանատրոյ, գնացաք գայիխով ի Վէզիրի հայլին. քազաւորական գայիխներն ընդ մեզ գնացին ի Գէկտէրէն (Գէօյլիւքտէրէ), գվալիտէն բերին անոլի նավովք, ի գարնին ընդ մեզ. գինի եւ ուֆքա։ Երկու անգամ նստաք ի պախչան. պատուն Գալի գայֆային էր, Նվիրակ Աջալատուր վարդապետն, Գապա Գիրօն, Կոմիտասն, Գախչին և մեր տղայքն. և օրս ամպ մինչև երեկոյն. և գղայիցէ և գայլ ամենայն խարճն Գալի գայֆան իւր քսակէն ետես. եւ եկաք ի Ս. Գէորգ երեկոյնս (անդ)։ — Մայիս 16. «Մէկ տղա մի եկաւ քէ Ուխտաւորքն ի Քէքիրտագի եկին՝ նա ընդ նոսա էր ... եւ նա եկեալ գնացի մինչ ի Մախրգեղ, Աջալատուր վարդապետն ընդ յիս. Նստաք ծովեզրն, եւ ի գարձին Մ. Եզիան, Մ. Գաւազարն եւ Տէր Կոմիտասն հանդիպեցան, գնացին ընդ յառաջ ուխտաւորաց, եւ մեք եկաք ի Ս. Գէորգս (Ք. 244բ)։ — Յունիս 16 Կիր. «Զխօսեցա յեկեղեցին ո՛չ ծանուցում եւ ոչ քարոզ. Կոմիտասն խօսեր էր եւ օգուտ չունէր» (Ք.

245ա)։ — Օգոստ. 11, կիր. «Կոմիտասի ծանուցումի պատկերին, ԺԶ զրէ. նկատ (Քզ. 246բ)։ — Օգոստ. 22. «Ծնունդն Եւսեբ. ի Նաքի և Նաքի՝ ի Ծոքի. Կոմիտասիս գնաց ի Նաքի մարդ գրել (Երուսաղէմ մեկնող ուխտաւորները արձանագրել)» (Քզ. 247ա)։

Ամգեցի նոյն օրը ուխտաւորներուն կը միանայ ու անոնց հետ Սամաքիայէն կը նաւէ դէպի Քէքէրատ՝ հետը առնելով Տէր Կոմիտասը։ Նաւը կը հանգիպի Աւակլու պուռունքը (հրուանդան), ապա Արակլիա և Օգոստ. 23ի գիշերը կը հասնի Քէքէրատ։ Այնտեղ Երուսաղէմի 121 ուխտաւորներուն համար ուրիշ նաւ մը կը վարձէ և Օգոստ. 27ին կը գանձէ անոնց գործառական նուէրը. ապա ուխտաւորներու նաւը ճամբայ կ'ելլէ։ Ամգեցի Տէր Կոմիտասի հետ 15 օր կը մնայ Քէքէրատ, ու Սեպտ. 9ին անկէ կը մեկնի և Էրէկլի, Մեծ Ջէքմէճէ ու Այտաճիանոս հանգիպելով՝ Սեպ. 11ին կը գառնայ Կ. Պոլիս և քառասունքանի կ'իջեւանի Մուլուամանաստրըի Ս. Գէորգ եկեղեցին։ Քէքէրատի մէջ Սեպտ. 6ին կ'արձանագրէ. «Կէլիպոլցի էրէցն ալ առաւ միջնորդութեամբ Կոմիտասին եւ գնաց ի տեղի իւրոց (Քզ. 247բ)։ — Սեպտ. 30. «Ելաք ի քաղաքէն, ընդ մեզ Գէորգն (Տէր Մարտիրոս) և Կոմիտասն, արտաքոյ պարսպէն մինչ Թօփջափուն, և գնացեալ նստաք Ղարաքիհեայի չիֆթլիկն առջեւն ի վերայ ճանապարհին. ի սահաքին եկեալ նէմցէուս էլլին գնաց իւր աշխարհն. Քագաւորն ի Տաւուք փոշման էր . . . եւ գարձաք երեկոյեն (Քզ. 248ա)։ — Հոկտ. 9. «Գինչերս Գէորգն (Տէր Մարտիրոս) և Կոմիտասն ընդ մեզ. երկու սահաք նստաքն (անդ)։ — 1701 Յունուար 19. «Ժամն չատ ուշ. ժամարար Տէր Կոմիտասն» (Քզ. 251բ)։ — Փետր. 6. «Գնացաք ի Գալլիլին, գէհվէ խմեցաք եւ գարձաք (ի Սամաքիա). գԿոմիտասին գգուռն ծեծեցաք՝ էրացինս (Քզ. 252ա)։ —

փետր. 8. «Վազքէտ պատիւ ի Կոմիտասենց. Դմպուկն (Աստուածատուր վրդ.) Մխիթարին (վրդ.) էր գաց՝ բայց Մարտիրոս եպիսկոպոսն, Գախչին, Գէորգն (Տէր Մարտիրոս), Ծարուքիւնն եւ մեք ի սահաթ նստաք» (անդ)։ — Փետր. 10. «Ի չ. գաս Առաջաւորաց։ Գիշերս լաւ ուրախութիւն վարդապետաց՝ ես, Դմպուկն, Նվիրակն, Մարտիրոս եպիսկոպոսն, Իգմիրցին, Քաչատուր սրճեղան, Կոմիտասն, ի սահաթ նստաք և մեծ մեծ ասլիք քշեցաք» (անդ)։ — Փետր. 20. «Գնացաք ի Մախրգնէն ի Ծովկղն մինչեւ երեկոյ եւ ընդ մէզ Դմպուկն, Հարոնն, Գախչին, Գէորգն (Տէր Մարտիրոս), Նշատաճէն Ծարուքիւնն, Կոմիտասն, եւ մերանք քիվք ժԳ. գնալ եւ գալն Ծովովն (քղ. 252բ)։ — Փետր. 25, նչ. Ղեւոնգեանց. «Գնացաք Ծովով ի Մախրգնէզ, Դմպուկն կայր ոչ, Մարտիրոս եպիսկոպոսն, Կոմիտասն, Գախչին, Գէորգն (Տէր Մարտիրոս), Հարոնն, էրէցն, Զօլոխն, Զարգանն, Դաւիթ էրէցն, Ծարուքիւնն։ Ճուճաց աթէզա մի եւ տղա մի գիտուն՝ նկին բան ասացին. եւ ի սահաթին նչաք ... եւ նկաք յեկեղեցին (Ս. Գէորգ), ի գուրան ի հավուզին վերայ նստաք ամենքուրմբ եւ տղայքն խաղացին. գառ հաչակեցաք. լաւ ջիր էր» (անդ)։

Ամգնցի նորոգած ըլլալով իր պատրիարքական հրովարտակը՝ 1701 Մեպտ. 1ին, իրեն ուղեկից ունենալով Տէր Կոմիտասը(1), նաւով ճամբայ կ'ելլէ Կ. Պոլսէն, 13ին կը հասնի Ծապպէ, մինչեւ ամսուն 23ը հոն կը սպասէ եւ 27ին կը մտնէ Երուսաղէմ։

---

(1) Հայր Ծովհ. վրդ. Մըսըրեան իր Ծրագնելի Տէր Կոմիտաս Պէօմիւրճեան գրքոյկին մէջ (Գնդրուք, 1929) կը գրէ թէ Կոմիտաս քահանայ յարուցուած հալածանքներու երեսէն փախուստ տալու համար Ծովը մտնելով կը քալէ Երուսաղէմ ու կ'ապաստանի Հայոց Ս. Յակոբ վանքը» (էջ 9)։ Ասկէ ետք Ամգնցին Ծրագրութենէն ոչ ոչ կ'երեւի թէ ան Երուսա-

Դարձեալ Ամգնցին Օրագրութենեն (երուսապէմի մէջ գրուած) կը քաղենք Տէր Կոմիտասի վերաբերեալ կտորները։ 1701 Հոկտ. 5 կիր. «Պատարագին Կոմիտասն ծանուցումն (Քղ. 259ա)։ — Դեկտ. 25. «Ծնեա անչափին արեզակը կոչեւ. վասնցին եւ Կոմիտաս զմիմեանս ծնծ, եւ ես չվասնցին եւ զԹօղոս արեզան ծնծնցին» (Քղ. 261բ)։ — 1702 փետր. 1, կիր. «ժամարար Տէր Կոմիտասն» (Քղ. 262բ)։ — Մարտի սկիզբները Ամգնցի կը հիւանդանայ եւ նոյն ամսուան 12ին կը գրէ. «Ի օր ևզեւ Կոմիտասն նարեկ կու կարդայ ի վերայ իմ» (Քղ. 263բ)։

Այսանդ կ'ուսումնասիրէին Ամգնցիի Օրագրութեան Տէր Կոմիտասի վերաբերեալ յուշագրութիւնները։ Անիկա

զեմ գաւառաբար ատիթով իրեն կ'ընկերացնէ Տէր Կոմիտասը՝ իր սիրելին ու մտերիմը, որ անշուշտ իրեն բարեպաշտ քահանայ մը կը ցանկար ճենդանի ալքով տեսնել երուսապէմը ու երկրպագել ջնորհնական Սրբավայրերուն։ Հալածանքի օրեւէ պարագայ գոյութիւն չունի այստեղ. երբէ ասնենաբ՝ Ամգնցի անպատճառ այդ մասին յիշատակութիւն մը կը ձգէր իր Օրագրութեան մէջ, մանաւանդ ինք ևս, որ կաթոլիկ միտ կը կարծուէր, առարկայ ըլլար էր հալածանքի, մինչ ընդհակառակը՝ Պոլսեցիք, որոնք այնքատած էին իր պատրիարքական հրամարատակը նորոգել, պատիւով ու մեծարանքով յուշի կը գնեն զինք։

Ի գէպ յիշենք՝ երբ Ամգնցի ևս ժամանակակից եկեղեցականներէ ոմանց նման (Մելքիսեդեկ, եզիազար, Նահապետ կաթողիկոսներ և այլք) սիրալիր յարաբերութիւններ կը մշակէր կաթոլիկ կղերին և նոյնիսկ պապական աթոռին հետ, սակայն ասկայն Հայ առաքելական Ս. եկեղեցւոյ գաւանութենէն ու ձեռքերէն չեզչուս, ու ատոր համար նաքին իրեն կաթոլիկամիտ ամբաստանուած էր Ն. Պոլսոյ պատրիարք Ասեմիք եւսեբիացիէն ու վար առնուած էր աթոռէն։ Ան գրե Ամգնցի յերուսապէմ իր Օրագրութեան մէջ. 1703 փետր. 23. «Ասեմիք վարդապետն մեզ գիր խրատական եւ ապաշնական եւ ազգքահանի՝ քէ մեք գոռանկ եմք գարժեր, զոր անիծեալ լիցի ամենայն հայ որ քոզու գկռուսաւորչի օրէնքն եւ գոռանկ գառ-

1702ի Ջաւրիկը կ'անցընէ Երուսաղէմ, բայց Ամգնցի չի յիշեր քէ ո՛րքան ժամց վանքին մէջ ու ե՛րբ գտաւ Կ. Պոլիս։

Տէր Կոմիտաս գացած է նաև Քէօթահիա, ինչպէս պիտի տեսնենք քիչ վերջ։

Մ. Աթոռոյս Ջեռագրաց Մատենադարանին մէջ կը պահուի Տէր Կոմիտասի մէկ աշխատասիրութիւնը (Թիւ 1234), մանր նոտրգիր, ընդօրինակուած Երուսաղէմի մէջ ՌՃՈՀ (= 1699) թուին, Հեռամբ Սիլիստրացի Մանգիանեան Հայաստուրի, ի վայելուչ Դրիգոր վարդապետի Ծամչեցւոյ։ Ջեռագրին մեծութիւնն է 18 × 12,5 սմ. ու կը բազկանայ 48 թաց գեղնագոյն ոզորկ քուղթերէ։ Խատրկ են՝ Քղ. 1, 2ա, 45բ, 47, 48։ Բովանդակութիւնն է, երեք սիւնակներու վրայ, Ծուներց և Հայոց և Հռոմայեցւոց տարեկան տօներու բազդատական ծուցակը կամ, հնգինակի բառով, «Հաւա-

---

նայ. եղիցի՛ եղիցին (Քղ. 275բ)։ Ուրիշ առիթով մը Յովհաննէս Ա. Դէորգ եկեղեցւոյն բեմէն հրապարակաւ կ'այպանէ հրատարակութիւն ընդունողները. 1691 փետր. 14, Տեառնընդառաջ. «Երեկոյս քարոզ (խոտեցաք) ու ի գոռ քաչեցաք զՓառանգ լինողքն» (Քղ. 143ա)։ Դարձեալ՝ 1700 Մարտ 16. «Գնացի ի պատարագն (ի Ա. Դէորգ). ամն Փառանգի պէս չոքեր էք պատարագին. գաւազանաւ խիթեցի զնա ու բարկացայ խրճն» (Քղ. 243ա)։

Այս մատենագրութիւնը ունեցած են այն ատենի կաթոլիկոսներէն ու պատրիարքներէն ամանք, այն է՝ քրիստոնէական լայնախոհութեամբ և առաւելապէս քաղաքական նպատակներով քաղցր ու սիրալիր յարաբերութիւններ մշակել Հռոմէական եկեղեցւոյն հետ, նոյն ատեն չզոհելով Հայ եկեղեցւոյ անկախութիւնը ու հաստատութիւն ստալով անոր ազգապահպանութեան։ Այս մասին շատ ուշագրաւ է Մելքիսեդեկ Գառնեցւոյ՝ Քառնց կաթոլիկամիտ կարծուած այդ կաթողիկոսի պատասխանագիրն առ Գաւզաս Ե. պապն Հռոմայ (տե՛ս Հ. Ն. Ակինեան, Մայսէս Գ. Տարեւացի, էջ 317-320)։

քառանուքիւնդը, որ կը սկսի Նոյեմբեր 14ն (Քչ. 3ա) ու կը վերջանայ Հոկտ. 31ին (Քչ. 45բ). Սկիզբը (Քչ. 2բ) կայ Տէր Կոմիտասի հետեւեալ Ծիշտատկարանը.

«Շնորհօք Ամենատուրդ Հոգւոյն՝ Հաւաքարանուքիւնք կարգագրուքեանց ըստ աւուրց ամաց, որք են յայտնուքիւնք տանից Տէրունականաց. եւ քառասրուքիւնք Տնենխմբուքեանց Սրբոց հայրապետաց. եւ ցուցմունք վկայարանուքեանց Սրբոց մարտիրոսաց. եւ համառօտուքիւնք տեղացուցիչն Լատինաց եւ Յունաց՝ ըստ միաբանուքեանն Հայոց Այսմաւուրց, ժողովեալ ի միում տիպ՝ այսինքն ի մի վայր, ի փառս ամենամեծին Աստուծոյ եւ ի պարծանս աբանց ճշմարտասիրաց եւ յեղբարց ուսումնասիրաց.

Ծնեցման ասէ ուսմանն չարեալ,
Պիտակ էրէց Կոմիտաս լեալ,
Քամուրճենց տանն տոթոպատեալ,
Ծալս ամենից սըտրուկ 'ւ յետնեալ.
Ծամի փրկչին ներմարձացեալ,
ՌԼՈ եւ ՂԱՏ (1690) տարին լըցեալ,
Այլ եւ վիպէ ՃԱՌԵԼԴ (1140) պատուեալ,
Զքիւ Հայոց ատտ է պատմեալ.
Ես՝ատտ արա գրանս գըծագըրեալ,
Եղի եզբարցդ իմ պերճացեալ,
Զբաանուք տոմաւ որք հանգիպեալ,
Մազքեմ յիշել զիս տատապեալս.

Ձեռագրին վերջը (Քչ. 46ա) կայ ընդօրինակողին Ծիշատակարանը. «Արդ գրեալ եւ յատարեալ եզեւ Ծանկգիրքս ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ, ընդ հովանեաւ Սրբոյ Աքոռոյն Ծակոբա Առաքելոյն եղբօր Տեառն, ի քուանուքեանն հայոց ՌՃՆԸ (= 1699), եւ ի Սեպտեմբեր ամսոյ Ա. Իսկ ի հայրապետուքեան Սրբոյ Գահոյս Տեառն Մինասի քաջ Հռեսորի, եւ ի քաղաւորուքեանն տաճկաց՝ սուլտան Մուստաֆային՝

որգւոյ սուլտան Մէհէմէտին հանգուցեալոյ։ Առ վայելումն հոգեհոգի եւ բանի սպասաւոր Տէր Գրիգոր Վարդապետին Ծամքեցւոյ, զոր մեծաւ ըղձիւ եւ զօա գրել յիշատակ յանձին իւրում, ձեռամբ ումեմն Սահփանեան Աշլատուրի Սիւխտրացւոյ անչնորքի. որ եւ հայցեմ ազերսանօք ի տեսանողացդ եւ ի գաղափարողացդ՝ ներումն շնորհել անարհեստութեանս եւ սխալանաց գրչիս, զի առաւել քան զկարն ոչ ձգտեցաք։ Վասն որոյ յիշողիք միով հայր մեզ։ Հանգուցեալ ծնօղան իմ զԸսահփանեանսն եւ զՍուլքանն, ընդ նոսին եւ զիս անպիտան Աշէօս, որ եւ յիշողք լիցիք յիշեցեալք առաջի տեառնին Քրիստոսի ամէնս։

Մեր Մատենադարանի Թիւ. 1059 Ձեռագրին մէջ (Նկարագրութիւնը յետոյ), Թղ. 93ա—101ա, կան Տէր Կոմիտասի չարագրած հետեւեալ բնը ոտանաւորները, հաւանաբար իր ձեռքով գրուած։

1. Թղ. 93ա. բ. տասնըչորս տուներով Ուղերձ մը Նիկոդոս Ճօռոքեցւոյ եղբօր ուղղեալ։ Տուներու սկզբնատառերը կը յօդեն՝ Ի ԿՈՄԻՏԱՍ ԸՆԿԱԼ։

Սկիզբը՝ Ի՛սկական Բանին նոր պատուիրանին,
Զոր մեզ աւանգեաց յԱւետարանին։
12րդ տողը՝ Ակայ քէպէտ առ յիս եղբայրդ նազելի,
Պարոն Նիկոդոսըն Ճօռոքեցի,
Որ նա ծանոյց զքեզ ինձ անպիտանի,
Որով սիրեցի զՄէրդ իմ սխրալիւր։
Վերջը՝ ԱԲարեպաշտութեամբ կեցցիք յաւիտեան,
Եւ ժառանգիսջիք զկեանն անվախճան։
ԿԱՊՈՒՏՆԵԱՒ էի (1156 + 551 = 1707)
յայսմ քվականիս։

2. Թղ. 94ա. հինգ տուներէ եւ մէկ տողէ բաղ-

կացնակ ոտանաւոր Ուղերձ մը առ անձանօթ ամե-
նուն. սկզբնատառերը կը յօգեն՝ ԿՈՄԻՏԱՍ (վեր-
ջին 7 տողերը կը պակսին)։

Սկիզբը՝ «Կարօտութեամբ գրեց նազելի ոգիս,
Զբաղուած գնացող ի կենցաղումս հարցանեմ»։
Վերջը՝ «Ինձ նարգինիս լուր ինձ տ՛ուր պարոն ոգիս.
Զի խնդալոյս խանգաղատանակ հարկիցայ,
Ծորժամ ըզձեր գրասնութիւնն որ լուայ,
Զլուէն ձեր ի ֆէմէրնէրն քերկրիցայ։
Տեղեակ յոյժ ի տեսանել միշտ գնա,
Բանգի գովեն տեսողք գրագրութիւնս նորա,
Ես առաւել էրէց եղբայրն իմ Բեմեա,
Ի գասւուրթիւնս Խաղալոլու գովէ գնա։
Արդ ատտանաւոր ես ոչ եղէ արժանի (անաւարտ)[1]։

3. *Թղ. 94բ—95ա. Ոգեր մը վախճանեալ տասն-*
ամեայ մանուկի մը վրայ, բազկացեալ ինը տուներէ,
որոնց սկզբնատառերը կը յօգեն՝ ԿՈՄԻՏԱՍ ԵՐ (երկու
տուները կը պակսին)։

Սկիզբը՝ «Կամիմ ոգեալ գոգբս լալական,
Լացէ՛ք ընդ իս ամենեքեան»։
Վերջը՝ «Զի ի հասակըն մանկութեան,
Մեռաւ խզճիս կարօտական (անաւարտ)։

4. *Թղ. 95բ—96ա. Ուղերձ մը, անքուսկան,*
Քէօքահիայէ գրուած իր մէկ բարեկամին, հասանօքէն
ի Կ. Պոլիս։ Կը պարունակէ տասնըմէկ տուներ, որոնց
սկզբնատառերը կը յօգեն՝ ԿՈՄԻՏԱՍ ԷՐԵՑ։

Սկիզբը՝ «Կարօտութեամբ առ քեզ գայցէ,
*Սիրով տրակս ժամանեսցէ»։

---

(1) Հմմտ. Բազմավէպ, 1926, էջ 198, ն. 4-ի յօդուածը։

Վերջը՝ «Ամէնալ սիրով կամ Քեօքահեայ,
Ընթերնկամս ես սատ տեսայ,
Բներկրեալ սըրտիս գուարճացայ,
Եւ ի Տեառնէ յոյժ գոհացայ։
Եթէ լինի ոք զարմացի,
Վասն գալոյն մեր սատ տնգի,
Այժմ ոչ կամիմ գրել տրակի,
Յորժամ գայցեմ՝ անդ պատմեացի։
Ցնորեալ մտաք զայս գրեցի,
Ձեր մնծուքեանցըդ յայտնեցի,
Եթէ գո ձեզ սէրն յառաջի,
Գրեցէք առ մեզ նուաստագունիս։

5. Ք. 96բ. Ազբս առ Ս. Աստուածածնին՝ քազ-կացեալ ինը տուներէ, որոնց սկզբնատառերը կը յա-գեն՝ ԿՈՄԻՏԱԱՍ է։

Սկիզբը՝ «[Կ]ոյս անարատ հարսն երկնային,
Մաքուր անբիծ մայր անկինս.
Վերջը՝ «ներանելեաց տուրք երամին,
Արժանացո՛ զծառայս քոյին,
Լսել զձայնն աստուածային,
Ընկալցք սրհնեալքն յաւիտենից։

6. Ք. 97ա.բ. Ազբս առ Ս. Աստուածածնին, քազկացեալ ինը տուներէ, որոնց սկզբնատառերն ու վերջատառերը կը յօգեն՝ ի ԿՈՄԻՏԱԱՍ, ամէն մէկ տող չորիքկնուած(1)։

Յատնատուրիս տողին չուանցքին վրայ մանր տա-ռերով գրուած է. «Ինճն ապրիլի ԻԲ. Գչի գիշերի՝ չոյան կարիճ, ծնանի կումիտաս»(2)։

---

(1) Հրատարակուած՝ Սիոն, 1932, էջ 392։
(2) Համմ. Պագմավէպ, 1926, էջ 198, Ո. Կ.ի յօդուածը։

7. Թղ. 98ա. Աղերս առ Ս. Աստուածածին, քաղկացեալ տասնեքկու տուներէ, որոնց սկզբնատառերը կը յօգեն՝ ԿՈՄԻՏԱՍ ԻՐԻՑՈՒ։ Սոյն տասնեւերով Տէր Կոմիտաս ազերսագին կը պաղատի Տիրամօր՝ ամբաստաց յուչիմուքիւնս ձայլն չնորհել իր խոքացեալ նահապետ գաւակին։ Գրուած է անչուշտ անոր հիւանդացած օրերուն՝ 1699 Նոյ. 25էն վերջ։

Կը գնենք Աղերսը ամբողջութեամբ.

Ցոյս կուսանաց մայր ստեղծողին,
Ցիչեա զաղէտ քո Ուրքաքին,
Ցորժամ զորդեակդ չարչարէին,
Էանց սիրտ քո սուր երկաւղին։
Ընդէս եղեր մայր ցաւագին,
Եւ ոչքացեր ըզքո զորդին,
Ի չարչարանն և ի խաչին,
Ազիք ծնողիդ գալարէին։
Պաղքեմ ի քէն մայր գթութեան,
Էա՛ս ինձ նպաստ ի փորձութեան,
Զանգի մեզացս անչափութեան,
Բազում վտանգք ինձ գիպեցան։
Ի ծնողական գութըդ նայեա,
Զսէր Միածնիդ վերապիտեա,
Մայրականաւ գթով օգնեա,
Զխոց ծառայիդ ապաքինեա։
Ցո՛ւր որդեկիս բժկութիւն,
Ցախտից իւոց ազատութիւն,
Մեաց իւոց յուսիմութիւն,
Հոգւոյ ցոյս զգօնութիւն։
Ընծիկն ցոյս հաճոյառութիւն,
Խելաց ցոյս խոհեմութիւն,
Ցաւոց իւոց սեգռոռութիւն,
Համակցամայն առողջութիւն։

Ովքուհի կո՛յս, զայն կատարեա,
Զսէր մայրութեանդ ի նա հնչեա,
կաքամբ գքոյդ զնա կերակրեա,
Հնդ հովանեաւդ ամփոփեա։

Ի յարկածից գիւաց պահեա,
Ի պատահմանց պատապարեա,
Ի չար ախտից ըզնա բուժեա,
Զի Սրբուհւոյդ ծառայ է նա։

Քաւարար յորդեացդ զնա գտանեա,
Զչնորհս Հոգւոյն առ նա հնչեա,
Եօթնեակ հոգւով զնա զարդարեա,
Ի ծոց գքոյդ զնա ամփոփեա։

Ի սէր քո միշտ ըզնա կանխեա,
Հնդ ձեռամբ քով կառավարեա,
Հնդ հովանեաւդ ապահովեա,
Հնդ քո ծառայ ըզնա քեւեա։

Ջօգնա՛ գգուքդ և գա[ր]մանեա՛,
Փորձըս բարիս յառաջադրեա,
Գէս պէս չնորհօք կարգադրեա,
Իբրև զմայր ի նա գքեա։

Զրդոյ քոյին ըզնա յանձնեա,
Շնորհիւ նորին պարտւանդեա,
Ի գործս նորին յաժանդ[ակ]նա,
Սիրով քոյին ի նա հայեա։

8. Ք. 98բ–99ա. «Միշտ առաքեան Աստուածա-
շունչ գրոց՝ արարեալ ի Կոմիտաս իրիցուէս։ Գրուած
1688 թուին, ոտանաւոր, բազկացեալ ինը տուներէ,
որոնց սկզբնատառերը կը յօգեն՝ ԿՈՄԻՏԱՍ ե։

Սկիզբը՝ «Կենդանագործօդն էիցըս Աստուածն ամենի,
Ասաց գրել մեծ մարգարէին Մովսէսին։
Վերջը՝ «Ընդս կատակ իմ այս հատուտս և անխափան,
Ի քուանկանի մերոյ Փրկչին ներմաքդուքեան,

Հազար և վեց հարիւր ուքսունեւուքեան,
Վկայ բանիս Աստուած՝ պի է անվախեանց։

Աստուածաշունչին տէրը եղած է Ալէքսիոս կամ Ալէքսան ակապակար կամ դերձակ, մականուանեալ Նիչաստանի, որ գայն կը նուիրէ իր Հուրմուզ Դպիր անուն որդւոյն, ինչպէս կ'իմանանք ոտանաւորիս 5րդ և 6րդ տուներէն։

ԱՅսուիս շնչոյ յաստուածաշնոյ յոյժ ցանկացեալ,
Որոյ անունն Ալէքսիանոս անուանեալ,
Է արուեստին կապակար կամ դերձակ լեալ,
Եւ մականուամբ Նիչաստանի վերաձայնեալ։

Արդ գգիրքս գայս Աստուածաշունչ որ կոչեցեալ,
Որդոյ իւրում Հուրմուզ Դպրին է շնորհեալ,
Որպէս հիւպէ հայրենասուր սմա բաշխեալ,
Եւ չիշատակ անջինջելի առ սա Ձեացեալ։

9. Թղ. 100բ–101բ. *Ուղերձ Կիւլխազ Եօւօթեցիի առ Աստուածատուր Ալլահվէրդի եւ առ Ապէի, բազկացեալ բնը տուներէ, որոնց սկզբնատառերը կը յօգեն՝ ի ԿԻՒԼԽԱԶԷ։*

Սկիզբը՝ ոի ժամանել տրակին ոզջունի,
Ձեր սէրբուքեանց գերարգելիս։
Շրջ տուներ՝ աԱստուածատուր Ալլահվէրդի,
Ջքնազապանծ և փառազարդի,
Միւսըդ Ապէի տիպըդ տեղեալի,
Անուանակից սուրբ մարգարէիս։
Վերջը՝ աէ իմ ազերս առ Մինըն բարի,
Ջի շնորհք նորին ձեզ պարգեւեսցիս։

Ուղերձիս կցուած է տասը տոզերով ոտանաւոր մը, «Շարաբանեալ գիրս չարագրական» սկզբնաւորութեամբ։ Տոզերուն սկզբնատառերը կը յօգեն՝ ՇՕՒՕՔՆՇՒՈՑ։ Ամենէն վերջը Ծէր Կամիւտասի առարգրութիւնը, «Նէստ կամիս երիցէ չինեալ եզև, 1700»։

Ե. ԵՐԻՆԷ՝ ՓՈՓՐ ԵՐԵՄԻԱ ՋԷԼԷՊԻ.— *Մեր ազգիս ներքինները երեմիայի ոյն միակ քրոջ մասին չեն տար որևէ տեղեկութիւն։ Միայն կը գտնենք որ ան կ'ապրէր տակաւին իր երէց եղբօր՝ երեմիայի մահէն հինգ տարի ետք, այսինքն մինչև 1700 Մեպտ. 26 (1)։ Այդ օրը երինէ գաւտ մը կ'ունենայ մի ամի Ջուղայեցիի հետ և մուրհակ (ձեռագիր) մը կը յանձնէ անոր։ Կը գրէ Ամգեցի նոյն քուականով. «Ծմբեռս ազիկ երինէն տալվի ընդ Ջուղայեցոյն եւ ձեռագիր տվեց նոցա» (Օրագր. Քղ. 248ա)։*

Զ. ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԻՕՄԻՐՃԵԱՆ.— *Կարգը եկաւ գրելու երեմիայի որդիներուն վրայ և տալու անոնց մասին լրացուցիչ տեղեկութիւններ։*

Անոնց երէցն է Գրիգորիս վրդ. որ ծնած է Մկի. Ամրակումի վախճանէն (1658 Նոյ. 23) վեց ամիս ետք, այսինքն 1659 Մայիսի առաջին օրերուն։ Աւազանի անունը՝ Մկի. Ամրակումի կտակին համաձայն (Ծանէլ. էջ 589)՝ եղած է Ամրակում (2)։

Մեր Մատենադարանի Ք.ա. 1042 ձեռագրի (նկարագրութիւնը յետոյ) սկիզբը, Քղ. 10ա–69բ, կան հետաքրքրական տեղեկութիւններ ու Գանձերը, ընդօրինակուած ոյն այս Ամրակում Քէօմիւրճեան պատանիի ձեռքով։

1. *Քղ. 10ա–27բ. «Ներքոյեան սասցնալ եզբնկացի կաթողիկոս վարդապետ Փոքր կոչեցեալ, առ ի քաղումն վարդապետին իւրոյ Յհաւն Գետառն կաթուղիկոսի կառկարեցւոյ, եւ Յհաւն Գրիգորի Ուր-*

---

(1) Տաքիր Քօրքմեան կ'ենթադրէ Քէ սա հօրմէն առաջ վախճանած ըլլայ (Ազատ. Պատմ. էջ 755)։

(2) Տե՛ս նաև Ս. Էջմիածնի Քիւ. 348 Աստուածաբանչի ձեռագրատետրը, առ Հ. Ն. Ակինեանի, Ձէյթպի, էջ 222։

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԼԻՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴԸ

հայեցուոյ, որ առաջինն Սրապիոն էր անուն նորա, կաթուղիկոս Էջմիածնին(1)։

2. Թղ. 29ա–47բ. «Ներբողեան ի վերայ մահուան Տեառն Սրապիոնի որ եւ Գրիգոր կաթուղիկոսի Էջմիածնի Ուրհայեցւոյ։ Այբուբենիւ հառիւք եւ կրկին գանձիւք եւ տաղիւք, առացեալ յաշակերտէ նորուն Գրիգորի վարդապետի կնասրացւոյ, որ երիք անգամ պատրիարք նստաւ ի Կոստանդինուպոլիս եւ անդ քարոզեաց ի Ղալաթիայ»(2)։

3. Թղ. 48ա–52բ. «Մովսէս միոյ ասղեաւ Տաքեւացի ասկաւ բան. համեմատութիւն աշակերտի առ վարժապետ որպէս բազմաց մի եւ ասկաւ»(3)։

4. Թղ. 66ա–69բ. «Գրանձ ի վերայ Տեառն Մովսէս կաթուղիկոսի եւ Գրիգոր մեծ վարժապետի։ Առաջեալ Յակոբ վարդապետի Ջուղայեցւոյ (Զիւնդ եւս էր ձեռամբ ասելոցոյ է) զոր կաթողիկոս եղեւս։

Թղ. 33բ. Մատեանը կայ ընդօրինակողին յիշատակարանը. «Եւ զեզկելի գրոցս ևմբակում գպրիկս (յիշեցէք). եւ որք յիշեալ լինիջիք եւ վաթս ի Քրիստոսէ առնուցուք։ ամէն։ ամէն։ Ամէնս(4)։ Միևնոյն յիշատակարանը կրկնուած է էջմըծգ Գանձի վերջը (Թղ. 69բ), բայց հոգին քերուած ըլլալով անընթեռնելի եղած է։

---

(1) Ներբողեանս քաղուածաբար տպուած է հանգուցեալ Տ. Բարգէն կաթողիկոսի Պատմութիւն Կիլիկիոյ կաթողիկոսաց աչխատութեան մէջ (էջ 267-277), որ մատչելի է այժմ։

(2) Հմմտ. Ա. Ալպոյաճեան, Թէիզար Կեսարացի Պատրիարք, տպ. Երուսաղէմ, 1936, էջ 183-4։

(3) Ոչքս ամբողջութեամբ հրատարակած է Հ. Ակինեան, համեմատելով մեր տոյն արձնագիրն և Շուարթ վրդ. Սահակեանի արձնագիրն հետ։ Տե՛ս Մովսէս Գ. Տաթեւացի, Վիեննա, 1936, էջ 409–424։

(4) Հմմտ. Հ. Ն. Ակինեան, Ձեղեպի, էջ 37 և 38։

Տեսանք վերև (էջ ՄԸ–ՄՔ), Գրիգոր և Աստուածատուր վարդապետներու յՄրուսպէմ առ Եզիազար ուղղած 10 Օգոստ. 1680 քուակիր նամակին մէջ՝ թէ Ամթակում Քէօմիւրճեան նոյն տարուան առաջին ամիսներուն (Համբարձման տանէն առաջ) աթեղայ կը ձեռնադրուի ու կը վերակոչուի Գրիգորիս։ Այնատեն անիկա կը գտնուէր իր կեանքի քսանեմիսամեակին մէջ։ Իր հայրը Երեմիա Զէլէպի ու պապը Տէր Մարտիրոս կը դիմեն Յուլայեցի Յակոբ կաթողիկոսի ու կը խնդրեն որ վարդապետական իշխանութիւն տայ Գրիգորիս աթեղային։ Հայրապետը կը մերժէ անոնց խնդիրը՝ ըսելով թէ տակաւին շատ է և նոր աթեղայ, ու խորհուրդ կու տայ որ նորընծան երթայ էջմիածին ու հոն կատարելագործէ իր ուսումը կամ տարվի ուղկատարելութիւնն ուսանելու։ Բայց Գրիգորիս աթեղայ կը դրկուի ոչ թէ էջմիածին, այլ Արմաշ՝ նոյն վանքին վանահայր Մարկոս եպիսկոպոսի մօտ։

Ան երկար չի մնար Արմաշի վանքը։ Յաջորդ տարին (1681) գինքը կը գտնենք Զմիւռնիոյ մէջ։ Երեմիա մասնաւոր գիրով մը գայն կը յանձնարարէ Ագուլեաց Պետրոս արքեպս.ին, որ Եզիազարի հանդիպելու համար գացած էր Զմիւռնիա։ Երեմիա գրած է վերջինիս էջմիածին՝ Եզիազարի հոն հասնելէն քիչ առաք. ամիսներ գմեծութիւնդ չեւ եւս տեսեալ՝ զորգեակն իմ քրիստոսի ի քեզ յանձնեցի ի գալն յԶմիւռնիս (Ծաւէլ. էջ 433)։ Երեմիա Գրիգորիս աթեղայի Զմիւռնիա գտնուածատեն անոր գրած է նամակ մը, զոր միշտ ընթեռնուլ կը պատուիրէ՝ եաքէն իր էջմիածին զրկած նամակին մէջ. ակարգա՛ զոր գրեցի քեզ ի սառնալն քո գկուսակրօն կարգն որ ի Քրիստոսէ, ընթերցի՛ր միտս եւ ոչ յիզմիւռիճ գրեցի հեզ, ասյլնս (Ծաւէլ. էջ 464)։ Գրիգորիս աթեղայ Զմիւռնիոյ մէջ կը վայելէ նաև Մատթէոս Զէլէպիի օրհնութիւն ու Ապրոյի Քոռան՝ Պետրոս

Չէլէպիի սէրը, ինչպէս կը վկայէ Երեմիա 1684ին անոր ձեռագիր Ուղերձին մէջ (Ծաւալ. էջ, 537).

«Ոչ գոյ պատճառ իմ քէ սիրտ իմ միշտ քեզ բազձայր,
Որգուցայ առքիւ որ ցուցիր սէր՝ զայս գրի պատճառս»։

Եղիազար կաթողիկոս 1681 Յունիս 7ին երուսաղէմէն կը հասնի Զմիւռնիա ու հոն կը սպասէ մինչև Սեպտ. 22։ Գրիգորիս արեզակ անոր կը ներկայանայ Յուլիս 1ին, ինչպէս կը գրէ Ամգեցի իր Օրագրութեան մէջ. «Յուլիսի մէկ . . . Քօմուրճու քոռճ եկաւ մօտ վեհինս (քզ. 4ա)։ Եղիազար Սեպտ. 22ին կը մեկնի Զմիւռնիայէն և ցամաքայինն ճամբով Հոկտ. 8ին կը հասնի Պրուսա. ու հոն կը ձեայ 4 ամիս ու 23 օր։ 1682 Մարտ 1ին գուբա կ'երթայ Պրուսայէն ու 4ին կը մտնէ Կ. Պոլիս ու կ'իջևանի Սամաքիոյ Ս. Գէորգ եկեղեցին։ Այդ օրերուն Գրիգորիս արեզակ ևս գարձած էր իր ծննդավայրը։ Ապրիլ 23ին ան կը պատարագէ Ս. Գէորգ եկեղեցին ու կաթողիկոսը կը քարոզէ, ըստ Ամգեցիի Օրագրութեան. «Ապրիլ ԻԳ. Խորէլէզ և նոր կիւրակէ, ժամարար Քօմուրճի աբեղան. ան-գամանն չարաց, քարոզ՝ վեհնս (քզ. 12բ)։

Եղիազար կաթողիկոս 1682 Յունիս 15 կ'ուղևորի Կ. Պոլսոյ նեղուցէն դէպի Էջմիածին՝ իրեն հետևորդ ուննալով Մինաս Ամգեցի, Նահապետ Եգեսացի (ապա կաթողիկոս), Սուքիաս և Նիկողայոս վարդապետները։ Ամգեցի քէնև որևէ յիշատակութիւն չ'ընէր իր Օրագրութեան մէջ, բայց հաւանական է որ կաթողիկոսը, Երեմիայի փափաքին համաձայն, հետը տարած ըլլայ նաև Գրիգորիս արեզան, որպէսզի ան Էջմիածնի մէջ ձեռք բերէ ազգաստաբելութիւն ուսմանս, ինչպէս երկու տարի առաջ խորհուրդ տուած էր Յակոբ կաթողիկոս։ Եղիազարի Կ. Պոլսէն հեռանալէն վերջ Երեմիա իր օրագիրն կ'ուղղէ չորս նամակներ (Ծաւալ. էջ 446–470)։ Այդ նամակներէն երրորդը միայն ունի

ՌՃՀԱ (= 1682) քուսկանը, «յօր Վարդավառի (Ծաւնէլ. էջ 467), որ կը հանդիպի նոյն տարուան Յուլիս 23ին։ Անոնցմէ առաջինով կը գուժէ՝ իր 14 ամսուան Յովսէփ որդեկին այնինչ վախճանիլը։ Երկրորդը կը վերադնէր իր միջնակ եղբօր Տէր Մարտիրոսի ուսումնական խնդրին։ Երրորդը և չորրորդը կը պարունակեն հայրական խրատները։ Այդ նամականիները երեան կը բերեն երեմիայի գործակին սէրը դէպի իր զաւակները, իր բարձր ու ազնուական հոգին և խոր համակրութիւնը Ս. Գրոց մէջ։ Անոնք համեմուած են հայրական արտայուխ յորդորներով, աստրգրական ճոխ վկայութիւններով և առածներով ու օրինակներով։ Ունին գուարթ ու սահուն ընթացք մը, մինչ որ ընդհանրապէս յատկանիշն է երեմիայի ոճին, ու անմիջապէս կը մատնէ գինք իր արձակ ու ոսանաւոր բոլոր գրուածոնց մէջ, ըլլան անոնք գրաբար թէ աշխարհաբար և կամ թուրքերէն։

Երեմիա 1685ին կ'ուզէ որ էջմիածին ի տես իր որդւոյն՝ Գրիգորիս վրդ.-ի, բայց գայն չի գտներ հոն, վասնզի նա ևս հօրը կարօտէն ձգուած ցամաքէն մեկնած էր Կ. Պոլիս(1), հանդիպելով Կարին, Ակն, Երզնկա և Գազատիա։ Ծիշտցինք վերև (էջ կԴ) թէ Երեմիա խմանալով Գրիգորիս վարդապետի Կ. Պոլիս երթալը՝ յանձնարարական գիր մը կ'ուղղէ Գազատիոյ առաջնորդին՝ խնդրելով որ երբ անիկա հոն հանդիպի՝ իր քարի ակնարկը վրայէն պակաս չընէ ու հարազատի պէս վարուի անոր հետ, որպէս արարիին նման զբաղնելութիւն Ակնայ և Եզնկու մանաւանդ քէ կարնոյ երեւելիքն ընդ առաջագործօք իւրեանց, յորոց գոհացան եղէ յերկինս և յերկրի» (Ծաւնէլ. էջ 471)։

Գրիգորիս վարդապետ վերատին կը գտնայ էջ-

(1) Հ. Ն. Ակինեան, Զէյթուն, էջ 53։

միածին։ Անոր հոն անցուցած կեանքի մասին կը պակսին տեղեկութիւններ։ Մինաս Ամգենցի, որ Եզիազարի օրով ապրած է էջմիածին նախ՝ 1682 Օգոստ. 27 – Նոյ. 7, երկրորդ՝ 1685 Յունիս 2 – Նոյ. 3 և երրորդ՝ 1688 Մարտ 10 – 1690 Յունիս 2, իր Օրագրութեան մէջ չի յիշեր Գրիգորիս վարդապետի անունը։ Անգամ մը միայն, 1690 Փետր. 6ին, կ'արձանագրէ. «Ծեռամ եկաւ վիհն (Եզիազար) և Գ աթեղայի իշխանութիւն ետ՝ Ոզաստափին, Գետրոսին եւ Գրիգորիսն (Քգ. 130ա)։ Այստեղ յիշուած Գրիգոր աթեղան անկասկած է նոյն ինքն Գրիգորիս Գէամիւրճեան։ Ամգենցի ամէն անգամ Գրիգոր վարդապետ կ'անուանէ զայն։

Հաւորիս Յաւելուածին մէջ (էջ 574) գետեղած ենք երեմիայի երկու փոքրիկ ուղերձները, քաղքացած՝ մէկը սասը և միւսը վեց տողերէ։ Առանցմէ կը յայտնուի Քէ ան Ջուղայեցի խոճայի մը միջոցաւ կ. Գոլսէն աւանգ (ամանաք) մը զրկած է էջմիածին իր կրօնաւոր զաւկին.

> «Երեմիայի որդի կոչեալ Տէր Գրիգորիս,
> Որ կայ ի սպաս հայրապետին հանուրց ազգիս։
> Ո՛վ դու խոճայ զայս ամանաք պահել պարտիս,
> Ամբողջ առ այն հասուցանել ըզհոգ տանիս։

Եզիազար կաթողիկոսի կեանքի վերջին օրերուն Գրիգորիս վրդ. վերջնականապէս կը հեռանայ էջմիածինէն։ Իր մեկնելու օրը Հայրապետը կու տայ անոր իր հուսկ օրհնութիւնը ու կը յանձնէ նամակ մը իր Զէյէպի հօր ուղղուած, ու ան Ս. Ծննդեան պահոց առաջին օրը կը հասնի Կ. Գոլիս (Յաւել. էջ 479)։ Եզիազար մասնաւոր կոնդակով մը անոր տուած էր իրաւունք վարդապետական գաւազանին հետ կրելու նաև քագ և ծմիփորոն։ Գրիգորիս վրդ. Ս. Ծննդեան պահոց երկրորդ օրը (31 Դեկտ.) իր հօրը հետ միասին

կ'այցելէ Մինաս Ամդեցիին, վերջինս նոյն օրուան քուականով կը գրէ իր Օրագրութեան մէջ. «Գրիգորը[ին] վարդապետան հարցն հանդերձ եկն. ընծայ՝ մին վեղար միափերքի. զկնճռակն ցոյց եա՝ եմիպորոն եւ քամի հրամանն հագնելոյ» (Քգ. 154ա). Գրիգորիս վրդ. էի Ճար կ. Պոլիս. յաջորդ օրն խոկ, 1692ի Նոր Տարիին, իր հայրը կը տանի զինք Քէքիրատ. «Ճուն. վարի մէկ, քվին ՌՃՆԱ ... Գրիգոր[ին] վարդապետան գնաց ի Քէքիրատ» (Ամգ. Օրագր. անդ).

Գրիգորիս վարդապետ 1691ի Օգոստոսի սկիզբը քոզած էր էջմիածինը. ուղեւորած էր ցամաքէն ու ճամբան գանգատելով՝ հապա. Դեկտեմբերի վերջերը հասած էր կ. Պոլիս. Ան իր ուղեւորութեան առեն առած էր Եզիազար կաթողիկոսի մահուան գոյժը, ինչպէս ըսած է ինք. «ի ճանապարհին լուայ զվախճան Հոգեւորտիրին» (Ճաւել. էջ 479–80). Եզիազարի մահը տեղի ունեցած էր 1691 Օգոստ. 9ին(1).

Երեմիայի արդէն ծանօթ էին Քէքիրատն ու Քէքիրատցիները. Ան շուրջ 32 տարի առաջ, 1660 Ապրիլ 18ին, կ. Պոլսոյ պատրիարք Մարտիրոս Ղրիմեցիի հետ Ադրիանուպոլսէ դարձին հանգիպած էր Քէքիրատ, ուրկէ օր ճեացած ու Զատիկն հոն էր անցուցած և նոյն օրը ներկայ եղած էր վախճանեալ Քարոս քահանայի յուղարկաւորութեան (Օրագր. էջ 351). Հե-

(1) Օրմանեան, Ազգապատում, էջ 2660. Ամիջի Օգոստ. 16ին կը գնէ եզիազարի մահը, որուն տարեդարձին (1692) ինք կը գտնուի Երուսաղէմ ու կը նշանակէ իր Օրագրութեան մէջ այսպէս. «Օգոստ. ԺԸ օրն էչի. Տարեգլուխ Հոգեւորտիրին. կրեկոյն ամբիծք. այսօր գնեմուանք եւ հերիւն. քաղաքն ամենայն ի տեղան. ժամարար մեզաւորս. մեռելոց (վերափոխման) այսօր արաք բազմութեամբ. ամբոխ բազում յեկեղեցին (Մ. Ճաղոբ)» (Քգ. 162ա).

ուս չէ հաւանականութենէ որ անկէ վերջն ալ նրա-
միա ապիքներ ունեցած ըլլայ այցելելու Քէքիրտազ
ու հոն բարեկամներու և ծանօթներու չրջանակ մը
կազմած ըլլայ քահանաներէն ու ժողովուրդի առա-
ջատուներէն։ Ջայլ կը հաստատէ ԴԱ ՋԻՆՋ է (= 1689)
քուէն ամբջանկափառ քահանայից, Քէքիրտազու բա-
րեկամից ձօնած իր առաջին Ուղերձը (Ծաւել. էջ
537–540), որու մէջ յայտնէ անուանէ կը յիշէ իր բա-
րեկամ տեղացի քահանաներու և աշխարհականներու
անուններըը։

Անշուշտ այդ նորահաստատ ծագկեալ ու հայա-
շատ գաղութին ուրախութիւն մը պատճառելու դի-
տումով է որ երեմիա իր վարդապետ որդին Կ. Պոլիս
ժամանելուն երրորդ օրը կը տանէր Քէքիրտազ, որ-
պէսզի Ս. Ծննդեան տանը հոն անցընէր ու իր քարոզ-
ներով մխիթարէր տեղին ազգայիններըը։

Անիա հետաքրքրական և ուշագրաւ է Զէյէպիի
Քէքիրտազէն նորընտիր նահապետ կաթողիկոսի ուղ-
ղած երկարաշունչ նամակը (Ծաւել. էջ 478–485)։
Այդ նամակով Զէյէպի Սղիտզարի վախճանումին առ-
թիւ իր վշտակցութիւնը յայտնելէ ու յիշորդին՝ այս-
ինքն նահապետ կաթողիկոսին համար մազաղաններ
ընելէ ետք՝ կը յարէ թէ լուսահոգին, իր բարերարը՝
հայրն ու երախտաւորը, իր հուսկ օրհնութիւնը ձօնած
է իր զաւկին՝ Դրիգորիս վարդապետի, անոր՝ որուն
հայրն ու պապը և պապերուն պապերը սկիզբէն ի վեր
անընդմիջաբար սիրելի եղած են Քէ՛ Ս. Էջմիածնի և
Քէ անոր գահակալներուն։ Սոյն այս Դրիգորիս վրդ.
ևս իր նախնիքներուն նման արժանացած է հոգելոյս
հայրապետի օրհնութեան և լուսահոգիէն հետը բերած
է իրեն ուղղեալ նամակ մը։ Ապա կ՛անցնի նկարագրու-
թեան նոյն Աստուածայայտնութեան տանին՝ 1692ին
տեղի ունեցած Յոտոսքոյի (Յոգան փոքր) նկեղեցիին

մէջ, ուր հաւաքուած խումն բազմութեան առջեւ Գրիգորիս վարդապետ կը քարոզէ ու գառնապին ոգեով կը գուժէ Եղիազարի կաթողիկոսի մահը ու կը մատնէ որ անոր կենդանի ազօքքը և յոռնկայս մչտամրմունջ ապաշնորհութիւնները իրեն յուսուքք (համայիլ) ծաւալին ներկանիրուս գաւակներուն վրայ։ Մատնանքներ կ'ուզէ նաև նոր հայրապետի արձչասութեան, քաղաւորաց հաչտութեան ու քաղաքին անգորրութեան համար։ Ունկնդիր ժողովուրդը՝ վարդապետին խօսքերէն զգաշուած՝ կը փղձկի և յորդ արցունք կը քափէ։ Ծնող եկեղեցիին գաւիթը տեղի կ'ունենայ Ջրօրհնեաց արարողութիւնը։ Այդ պահուն Գրիգորիս վարդապետ գաբձակ կը խօսի, այս անգամ քուրքերէն լեզուաւ, և քան պատչանի որքալոյս միւռոնի խորհուրդը ճառօրէն բացատրելէն ետք կը յաւելու. «Այս սուրբ իւղը քափող Հայաստանեայց հայրապետին՝ Ձեր Եղիազարի համար ձեռքերնիդ վեր բարձրացուցէք, մարդի'կ, ու ողորմիա հանեցէք անոր հոգւոյնց։ Ժողովուրդը կարծես Աւագ Ուրբաթի Ջարչարանաց կտակը կը լսէր ու իրենց մատաղատուն չաւակներուն գագաղին վրայ լացով ծնողաց հիչերուն ու հեկեկանքներուն նման ոգբագին ազաղակներ կ'արձակէր։ Հոն ներկայ եղող օտարազգիները՝ ահաւասիկ հիւանդները, Ծոյներն ու Տանիկները, վարդապետին խօսքերուն ի լուր՝ կը սքանչանային ու երանի կու տային Երեմիայի՝ այգպիսի շնորհալի զաւակի մը հայրը եղած ըլլալուն համար։

Նամակին չարունակութեան մէջ Ջէլէպի կ'ըսէ թէ Լուսաւորիչ հոգի հոգևորէրը հաճեցաւ Գրիգորիս վարդապետը իրեն իր կերպարանքը կամ ներկայացուցիչը և իրեն անահանելի հօր փոխանորդող հայր երևելի՝ ցվերջ մնչ գիտապետ կարգել, որպէսզի իրեն կապէ որդիներուս սիրտը։ Ու հիմա այս գիրս կ'ուղղեմ քեզ, որ կերպարանքն ես հոգևոյս հայրապե-

ան, փոխանորդը Ցիսուսի ու տեղապահը Ս. Լուսաւորչին, ու կ'ապերաեմ՝ որ ձեզմէ ու Աստուծմէ ընտրուած ու հոգեւոր ատպարէզին կոչուած իմ այս որդին քու չնորհիւգ փառաւորուի, ու ինչ պատիւ որ կը տրուի արքեպիսկոպոսներուն եւ մայրաքաղաքացիներուն (կ. Պոլսոյ վարդապետներուն)՝ նոյնը, հոգեւորականդ կատարին համաձայն, անոր ալ ընծայուի, որպէսզի անիկա փառաւորուելով՝ ըլլայ միշտ նեցուկն ու երեսի սիւնը տունդ տանդ։ Ինչ մեծութիւնդ, իրրեւ հարապատ որդի մեր վեհապետին, պարտաւոր է իր հօր նամանութիւնը իր անձին վրայ փայլեցնել՝ կարգելով Իրինգորիս վարդապետը իրրեւ վէմ գլորման եւ վէմ հաստատութեան։ Դուն մեզմէ ազէկ գիտես, կ'ըսէ, քէ իր ուղղորութեան առնն հանդիպած տեղերը ստիպմամբ կը խնդրէին որ անիկա առաջնորդ ըլլայ իրենց, ու հիմա Ազրիանուպոլիս գանուող Եաճիճ փաթրիգը (1), որ վազուց հետէ Իրինգորիս վարդապետի գալուն կը սպասէր, քանորովհետեւ անոր յանձնելու մտադիր էր մեծ քաղաքին

(1) Ս. Պոլսոյ պատրիարքք կարապետ Կեռասացի (նրպո ե. դրէք) 1668ին հինգերորդ անգամ ըլլալով կը գրաւէ պատրիարքական աթոռը ու պոլսոյն վրայ կը վախճանի 1669ին։ Այդ թուականէն մինչև 1692, մարը մականուանեալ Մատթէոս Կեռասացիի գահակալելը, քսաւոր կը մնայ աթոռը, ինչպես ցոյց կու տան Ս. Պոլսոյ պատրիարքներու յաջորդութեանց ցանկերը, ու պատրիարքական գործերը կը վարէ աչխարհական մը՝ Եաճիճ զաքէա, որ կոչուած է նաև Եաճիճ պաշին։ Ամիգնի 1690 Դեկտ. 14ին նուգկիայէն կը հասնի Մկիւտար ու կը գրէ իր Օտագրաւթեան մէջ. «Եաճիճ զաքէան ար է պաշին՝ ժամչին զարանֆիլ չիչէյով ու ձիամբք ընդ ձէր Մարտիրոսին (Գըզլար Երմիայի) նկին ու երեկոյս հաց ընդ մեզ հաչեցին» (Քղ. 141ա)։ Ամիգնի մինչև 1692 Մարտ 3 կը մնայ Ս. Պոլիս ու այդ ժամանակամիջոցին այլևայլ առիթներով իր Օտագրաւթեան մէջ կը յիչէ Եաճիճ պաշինը։ Երեմիայի այս նամակը գրուած առնն ատենին պոլսոյն վրայ էր ան ու կը գտնուէր Ազրիանուպոլիս։

(Կ. Պոլսոյ) առաջնորդութիւնը։ Մենք ևս կը խնդրենք որ զմեզ, Ս. Լուսաւորչի յետնեալ որդիներս, ասոր միջոցաւ բարձրացնես՝ քու փառքիդ ու ասոր նախնիքներուն պատուոյն համար, նաև կատարած ըլլալու համար քու սրբազան հաւէդ (ընկիապարէն) որուած խոստումը։ Եւ դուն որ Մովսէսի յաջորդին՝ Յեսուի նման դէմքիդ վրայ կը ճառագայթես աւրբ հօրդ երեսին լոյսը՝ նոյն լոյսէն հրաշք մը վառես, որպէսզի մենք ևս այստեղ փոքր մի ցնծանք այդ լոյսով։

Քիչ մը երկար ծանրացանք երեմիայի այս նամակին վրայ՝ նկատելով զայն արժէքաւոր վաւերագիր մը Գրիգորիս վարդապետի կենսագրութեան համար։ Այդ նամակէն կ'իմանանք թէ արդարև Գրիգորիս վարդապետ Ս. Էջմիածինի մէջ ինչ տարի ապրելով ձեռք բերած էր ազկատարելութիւնն ուսմանց, ժժուած էր փայլուն ձիրքերով ու ապագային կարևոր դեր մը կատարել կը խոստանար եկեղեցական ասպարէզի մէջ(1)։

Երեմիա քանի մը ամիսներ ետք Թէքիրտաղ ճեալէ ետք՝ հոն կը քոզու Գրիգորիս վարդապետը ու ինք կը գառնայ Կ. Պոլիս, ու այնտեղէն կը զրկէ իր երկրորդ ու երրորդ ուղերձները։

Երկրորդ ուղերձը (Ճաւվլ. էջ 540–543) ձեռնուած է Թէքիրտաղի իր հին ու նոր աշխարհական բարեկամներուն, զորս կը յիշէ իրենց անուններով ու կ'ըսէ. «Վարդապետին իմ պատճառաւ՝ ընդ ձեզ նախիլ զբաժինք եղաւ (տող 157 և 158)։ Առանցմէ, ի միջի այլոց կը մատնանշէ Գրիգորիս վարդապետի յատկապէս

---

(1) Ձէլէպի ինք եղած է իր որդւոյն՝ Գրիգորիս վարդապետի առաջին ուսուցիչն ու դաստիարակը, ինչպէս կը գրէ անոր ուղղած նամակին մէջ. «Ի բերկն քո (պիս) ոչ միայն ծնեալ ես՝ այլ և դաստիարակութեանն (Ճաւ. էջ 456)։ Դարձեալ՝ «Պարտիս երկիր զքո իբրև զվճհագոյն վարժապետս (անդ, 457)։

սէր ցոյց տուող անձերը, որոնք են՝ Նազարպատ Մհի. Յովհաննէս, Տէր Մեսրոպպատ Զաքարիա, որուն երեմիա կանուխէն յանձնաժողով է եղեր Պանազբմայի մէջ, Մհի. Եղիա, Հանի Փիլիպպոս՝ իր առաջնորդը (պըլավուզ) Քէքիրտապի մէջ։ Կը յիշէ նաև Պարոն Գրիգոր՝ վաչեմի բարեկամը իր նախնիքներուն ու ազգատոհմը Մ. Քաղաւոր եկեղեցիին, որ սահպէնը եղած է, կ'ըսէ, Փէօմիւրճեան գերդաստանի հայրերուն և պապերուն. ձերունի Մհի. Մարուքէն՝ երախտաւորը Մ. Յովհաննէս եկեղեցիին և Յոհա Սահակը, որ 1660 Յուլի Զատիկի օրը ներկայ գտնուած է Տէր Քորոսի յուշարկաւորութեան (Օրագր. էջ 351)։ Կը վերջացնէ Ուշերձը խազազութեան և սիրոյ և միաբանութեան յորդորներով ու մաղթանքներով։

Յուարք ու գաւիչտախտան ոճը ունի երրորդ Ուշերձը (Ճաւել. էջ 543–549)։ Հոն երեմիա կը նկարագրէ իր Քէքիրտապ գտնուած օրերուն Գազոս անուն ապգայինի մը տան մէջ խնճոյքի մը առիթ տեղի ունեցած մէկ հաւաքոյքը (մէճլիս), ուր կրօնական վիճաբանութիւն մը (տին տավասի) կը բացուի։ Վիճողները քէև կրօնական հարցերու անտեղեակ, բայց մեծ ճիգեր կը թափեն զիրար գերազանցելու և առնելու ազգասէր գերյազքութեանց։ Ի զուր երեմիա կը ջանայ փախուստ տալ և ուրիշ խոսքեր մէջ բերելով վերջ տալ անհաճոյ (մէքրուհ) վիճաբանութեան։ Գրիգորիս վարդապետ ևս, իր կարգին, խափանելու համար վէճը՝ կը սկսի տալ և շարականներ ընել և ազհրհշտակաց բաներ երգել տալո(1)։ Վէճը երկայով կ'երկարի ու կը տաքնայ ու երեմիա խիստ կ'արտայայտուի վի-

(1) Այս տողերէն կը տեսնուի որ Գրիգորիս վրդ. ևս իր հոր նման երգիչ եղած է։ Երեմիա 1682ին կը գրէր անոր էջմիածին. «Ցոյս իմ հաստատուն է ի Տէր, որպէս զտաղն երգէիր» (Ճաւել. էջ 465)։

ճոպներուն պէմ, ինչպէս կ'երևի Ուլերթի 249–252 տողերէն.

ամ՛վ սիրելիք խիստ չատցուցիք,
ի վերանիրս չատ քըչեցիք,
Միքէ վասն ո՞յդմ գմիզ հարկեցիք,
Մեք այլ մարդ ենք ժոյժ չը տաբինք։

Երեմիա կը մեզադրէ հաւաքոյքին ներկայ գըտնուողները, որ համարձակած էին ամենաւորինն ներկայութեան կրօնական վէճերու մէջ մանել ու կ'աւելցնէ. Բարուն Գրիգորիս արդէն հօքը չարաքներէ ի վեր մէշերնիդ է ու ձեզ կը քարոզէ. ընդունեցէ՛ք անոր խօսքերը ու տեղերնիդ նստեցէք և ապօքէ ըրէք (տող 263–268). կատակով ու ծաղրանքով կ'արտայայտուի մանաւանդ Յօճա Մալխաս անուն վիճասէր անձին պէմ, որ չնայելով տըրուքին անգամ չգիտնալուն ու իր ամիկ բարբառին (էչֆագ) և խոր տգիտութեանը, այն աստիճան՝ որ չի կրնար նոյնիսկ օինասական ու սեռական թառերը իրարմէ զանազանել, գարձեալ հաւատոյ վերաբերեալ խնդիրներու մէջ իրեն քննիչ կը ներկայանայ։ Հեգնաբար հարցումներ կ'ուղղէ անոր՝ աստուածաբանական, փիլիսոփայական և բժշկական նիւթերու շուրջ, ու վերջը՝ իրեն տուգանք (հէրիմէ)՝ պարտք կը դնէ անոր վրայ որ կողով մը քար (սէվգէք մի ֆիշնէ) գրկէ իրեն քուխ (գօյի) տանակէն(1)։

Երեմիա երբ տասը տարի առաջ, 1682ին, կը գրէր էջմիածին Գրիգորիս վարդապետի ու իր գաւկին՝ 14 ամսուան Յովսէփիկի մահը կը գուժէր, կը մխիթարէր

---

(1) Թէքիրտաղցիներուն գրած այն երկրորդ և երրորդ ուղերձները գրի առնուած են 1692ին։ Հ. Ն. Զգինեան հնարաբար 1691 (՞) կը դնէ անոնց գրութեան թուականը (Զէյթուպի, էջ 154)։

ինքզինքը գրելով նոյն առեն. «Ես այսու գի՞նչ ինձ վերք՝ եթէ զքեզ ունիմ խնդութիւն ի կեանս իմ, ընդ բազում յուսոյ ապառնեացն ուրախութեան քեզ պատահիլ, զոր ինձ մեզաւորիս շնորհեաց Տէր զքեզ յայդպիսի հասակում պատուոյ» (Ճառընտ. էջ 450):

Երեմիայի այդ պարծանքն ու կեանքին ուրախութիւնը և ապագայ յոյսը, ինչը տալիներ իրմէ բաժան ապրելէ ետք, այնինչ ուսումնական կատարելութեամբ ու գովելի ձիրքերով ու արժանիքներով ժժուած, կը գառնար իր հայրական գիրկը, կը խամրէր յանկարծ իր գալար կեանքի գարունին ու իրեն հետ մինաւին գերեզման կ'իջնցներ իր որդեսէր ծնողին բոլոր ակնկալութիւնները:

Ցայտնի չէ թէ Գրիգորիս վրդ. ո՛րքան ապրեցաւ ետքիրատազ ու ի՛րր անկէ գարձաւ իր ծննդավայրը: Ցայտնի չէ նոյնպէս թէ ի՛նչ պատճառներէ յառաջ եկաւ անոր յանկարծահաս վախճանը: Երեմիայի այդ առթիւ գրած չորս սրտառուչ նամակները (Ճառընտ. էջ 485—498) Գրիգորիս վարդապետի մահուան միայն կը վերաբերին ու անոնց մէջ չեն յիշուած նախընթաց պարագաները: Այդ նամակներէն (ուղղուած չորս վարդապետներու, որոնց անուններն պարապ ձգուած են Ջեռագրին մէջ), կ'իմանանք թէ Գրիգորիս վարդապետի մահը պատահած է Կ. Պոլսոյ մէջ, վերափոխման բանկենգանի կիրակամուտին, Շաբաթ, որ հին տոմարով կը համապատասխանէ 1692 տարուան Օգոստ. 6ին:

Մեծաչուք կը կատարուի անոր յուղարկաւորութիւնը իրենց բնակարանէն մինչև եկեղեցի ու անկէ մինչև Պալըքլըլըի գերեզմանատունը: Հոն իր ազգակիցներն ու ծանօթագիրները հոծ բազմութեամբ կը չըրջապատեն Երեմիան: Տարիքոտները կ'ելլեն վարդապետներու և կաթողիկոսին (Քորոս) չիրիմներուն վրայ ու մանկահասակները ծառերէն վեր կը բարձրանան՝

լսելու համար Երեմիայի ամանկամեռ և հզակոտոր պատակին վրայ եղերամայրերու հիւսած ողբերը և համագգիներու և նոյնիսկ օտարներու այլ և այլ լեզուներով խօսած ներբողները (էջ 487 և 488)։ Ամէնքը հառաչանային հեկեկանքներ կ'արձակեն ու կ'ըսեն. «Արդ մենք զո՞րն լացցուք, զեղեա՞լն ի գագաթին՝ քէ զքաւիքելոյ միջոցեկեալ ծնօզն ի վերոյ գլխին» (էջ 488)։ Կը գրէ Երեմիա իր առաջին նամակին մէջ. «Ո՞ւր էր քէ Ցիսուս աչխարհի վրայ գանուէր ու ինք անոր ոտքերուն փարելով լար ու լացընէր, ու տանէր գայն իր որգւոյն գերեզմանին մօտ, որպէսզի՝ ինչպէս Երեմն Ղազարոսի՝ անոր ալ ձայնէր. Գրիգորիէ՛, արի՛ ևկ արտաքս (անդ)։

Այս հարուածէն այնքան կ'ընկճուի Երեմիա, որ ևքէ երկինքն ու երկիրը ձայն տան ինձ, կը գրէ, գիս չեն կարող սփոփել։ Երկինքն ու երկիրը, կ'ուզեցնէ քիչ մը անդին, բանտի պէս կ'երևին ինձ, վասնզի խաւարեցաւ իմ առաւօտեան աստղս (էջ 489 և 491)։

Իր երկրորդ նամակին մէջ կը գրէ՝ քէ իր գաւակը հոգին յանձնելէն վերջ ալ՝ «ամեծամեծ այսինքն ոտն օրերուն քալկացեալ անձամբ և ներս ի քարշ գաւազանաւն ու ծովի կողմէն կ'երթայ անոր գերեզմանին վրայ Գալըքլը՝ ազգաբարձաց և աչխարանաց, գուժի և լալականաց» այդ վայրը (Ցաւել. էջ 488)։

Զէլէպի իր առաջին նամակին մէջ (էջ 487) քուրքերէն լեզուով քուէյով Գրիգորիս վարգապետի ձիրքերը՝ կը գրէ. «Անոր հիանալի վէիա լեզուն, ազգու առնեաբանութիւնը, իմաստուն և սահուն խօսուածքը, գերազանց ու աքանչելի պերճախօսութիւնը և փափուկ ոճը անոնեանելի ու անլսելի գարձան, անոր փայլուն արժանիքները մոմի պէս մաքնցան, այդ բուրումնաւէտ ու գուարթագին ծաղիկը խամրեցաւ ու կորանցուց իր անուշահոտութիւնը» (էջ 487)։ Իր չոր-

բոլոր նամակին մէջ քրիստոնէական համակերպութեամբ կը մխիթարէ ինքզինքը ու կ'օրհնէ Նախախնամութեան անհասանելի անօրէնութիւնը, ու կը գոհանայ Տիրոջմէն որ իր որդին երեք օր առաջ, իր մահուան անկողինին մէջ, էրթալով խոստովանութեամբ և զբաղական արտասուօքս, օրհնաբանական և գոհութեան ապօթքներ կ'ընթեռնու ինքնին. երկարօրէն կ'ապօթէ նաև վերջին օրը ու Նարեկացիի որդի Աստուծոյ կենդանւոյ ապօթքը չրթունքներուն վրայ՝ մէկ կողմ կը գառնայ և կը ննջէ ի քուն յաւիտենական (էջ 497–8)։

Մինաս Ամգենց 1692 Նոյ. 23ին, երուսաղէմի մէջ կ'առնէ Գրիգորիս վարդապետի մահուան գոյժը ու այդ օրուան քուականով կ'արձանագրէ իր Օրագրութեան մէջ. «Նոյեմբեր ԻԳ, օրն Ջորնքչաբթի, գիչերս քունս փախաւ, գի չուա գայրում Ըստամպօլու Հրեչտակապետ եկեղեցոյն և զմահ Գօմուրճի Գրիգոր[իս] վարդապեհիցս (Քէ. 165ա)։

Գրիգորիս վրդ. ծնած է Մահտեսի Ամբակումի մահէն (1658 Նոյեմ. 3) վեց ամիս ետք, այսինքն 1659 տարուան Մայիսի առաջին օրերուն։ Կը վախճանի 1692 Օգոստ. 6ին, որով իր կեանքի տեւողութիւնը կը լինի 33 տարի և 3 ամիս։ Կուսակրօն քահանայութեան աքեմ կը կրէ չուրջ 12 և կէս տարի, ձեռնադրուած ըլլալով 1680 տարուան առաջին քառորդին։

Է. ՄԱՂԱԹԻԱ ՔԻՕՄԻՒՐՃԵԱՆ.— Սա մինչեւ որդին է Երեմիա Ջէլէպիի։

Վլանկայի Մ. Նիկողայոս եկեղեցին հրկիզուելէն վերջ կը վերաշինուի և 1662 Մարտ 9ին, Թատասուրթաց Կիրակի օրը, անոր ձեռամբ կը կատարուի։ Հետեւեալ առտուն, Մարտ 10, երկուշաբթի, Մալաքիա հոն կը մկրտուի ու կ'ըլլայ առաջնածինը անոր ամա-

պանէն (Օրագր. էջ 382)։ Ծնած կը լինի իր մկրտուէն 8–10 օր առաջ։

Հ. Ակինեան կը յիշէ(1) թէ մանրանկարիչ եղած է Մազաքիա ու իր հօր հետ էջմիածին գացած և Ճոհաննավանքին մէջ ծագկած է Նահապետ կաթողիկոսի (այն ատեն վարդապետ) Աստուածաշունչը։ Ապա կ'աւելցնէ. «Մազաքիա 1686ին պատանի է տակաւին(2). թէ ի՞նչ եղաւ այս քուանկանէն ետքը իր բախտը, կը չուէ պատմուքիւնը»։

Բարեբախտաբար Մինաս Ամդնցիի Օրագրութիւնը կու գայ քիչ շատ լոյս սփռել Մազաքիայի կեանքին վրայ։

Ծիշեցինք վերև (էջ կԳ ծնթ.) Զէլէպիի Ճոհաննաւանքէն կամ Ս. Յովհաննու Կարապետի (Բրօսրօմոս) վանքէն 1686 քուանկանով Կ. Պոլիս՝ ազգաս յոյն իր մէկ բարեկամին ուղղած հայատառ քուրքերէն նամակը։ Առոր մէջ կը գրէ թէ իր այդ կոդմերը գալուն մէկ պատճառն ալ եղած է Նահապետ վարդապետի Աստուածաշունչը, զոր իր որդին նկարելու վրայ է. «Եէպէպ Նահապետ վարդապետ պիպլիասի ոչուի քի պէնոէզատէնըզ (Մազաքիա) մուքէլլա նաքշլայէրը» (Ճաւնլ. էջ 522)։

Ըստպար կաթողիկոս 1685 Յունիս 23ին Մինաս Ամդնցիի և Նահապետ վարդապետի հետ Օշականի և Ճոհաննավանքի վրայով կ'երթայ Ապռոսավանք ու հոն կը ձայ ժամանակ մը։ Երեմիա Օգաս. 2ին էջմիածինէն հոն կը հասնի, անշուշտ իր Մազաքիա որդիին ու անոր Նահապետ վրդ.ի համար մանրանկարած Աստուածաշունչին հետ։ Այդ միևնոյն օրը նա-

---

(1) Զէլէպի, էջ 38–39 և 56։

(2) Գանըլլօբս տարեկան եբխատարզ է, ծնած ըլլալով 1662 քուէն։

Մ Ի Ն Ա Ս Գ Ա Տ Ր Ի Ա Ր Գ Ա Մ Պ Ե Ց Ի



հայկա վրդ. և Ամպնցի այլքէ կ'անցընեն Աստուածաչունչը, ինչպէս վերջինս նոյն օրուան քուականներով գրած է իր Օտագրուբհան մէջ. ազնահայկա վարդապետի և Աստուածաչունչն ամէն ապաքո (քգ. 68բ)։

Ամպնցիի Օտագրուբհան երկու հատուածներէն, զորս առաջ բերինք վերև (էջ ԿԻ), կ'իմանանք որ 1685 Օգոս. 5ին Սպիտակավանքին մէջ երեմիայի ձեռքէն առնր են Աստուածաչունչը և քոյլ չեն տուեր գրանիչ կամ մանրանկարիչ, երբ որ վերջ, Օգոս. 8ին երեմիա այդ Աստուածաչունչին համար կ'երթայ Ծոհաննավանք, ուր գացած էր նաև կաթողիկոսը իր հետևորդներով, ու կ'երևի քէ գարձեալ ետ կ'առնէ գայն ու Մալաքիա նոյն վանքին մէջ կ'ամբողջացնէ անոր նկարները(1)։

Ամպնցի ետքէն մանրիմը եղած է Մալաքիայի ու անոր մասին հետևեալ յիշատակագրութիւնները ունի իր Օտագրուբհան մէջ։ Կ. Գալիս, 1691 Յուլիս 6. «Մտաբերեալ Մաղաքիան եկաւ ընդ վահանինս (քգ. 148ա)։ — Նոյ. 28. «երեմիա Զէլէպուն գիր՝ ապան (Մաղաքիան) գէղմիածնայ քահանին քառնէլոյ, քանզի Գ անգամ եղեւ վասն այսր եկաւ ու գնաց» (քգ. 153ա)։ — Նոյն Օտագրուբհնին կ'իմանանք քէ Մալաքիա ամուսնացած և 1700 Մարտ 8ին մանչ զաւակ մը ունեցած է. «Մաղաքիայիս մանչ եղեւ» (քգ. 242բ, յուսանքին վրայ)։ — Այդ օրերուն ան կը գտնուէր Հռոմ. Ապրիլ 16. «Մաղաքիայէս իմ գիր ի Հռոմա. մեզ մէկ գիր, ասեն՝ երկու գիրս» (քգ. 243բ)։ — Ապա կ'անցնի Ալիկուրնա կամ Լիվռոնոյ. Հոկտ. 10. «Մաղաքիայէն գիր ի Ալիկռոնայու՝ Սեպտեմբեր ե գրեալ եղիայ վարդապետէն(2), լորս գիր ի մի պահարանի եգեալ» (քգ.

---

(1) Աստուածաչունչս (Հնտ. էջմ. Թիւ 349) յիշատակարանը տե՛ս Հ. Ն. Ակինեան, Զէլէպի, էջ 39։

(2) Ոյն եղիա վարդապետի մասին տե՛ս վերը, էջ 2Թ–2 ծնբ.։

248բ)։ — Դարձեալ կը գտանեմ Հռոմ. 20 Հոկտ. «Մաղաքիային գիր ի Հռոմա Ապրիլ ԻԴ' ընդ Յակոբեանս (անդ)։ — Եղիա վարդապետի հետ կը մեկնի Հռոմէն և Նոյ. 23ին կը հասնի Երուսաղէմ, կը գրէ Ամգեցի 1701 Փետր. 7ին. «Երուսաղէմայ գիր ետուաւ ի Քինաւէն եւ Եղիայ վարդապետէն, որ Նոյեմբեր ԻԹ (1700) ընդ Մաղաքիային Երուսաղէմ մտած են (Քղ. 252ա)։ — Մաղաքիա Երուսաղէմէն կ'անցնի Տրիպոլիս. Մարտ 11. «Սեխբոան եկաւ Հալպա, ինչ Յունվարէ գիր, զՄաղաքիայի գիրն որ ի Տրապիզոնէ ի հետ էրաւ (Քղ. 253ա)։ — Նոյն տարուան Յունիս 30ին Ամգեցի նամակ մը կ'ընդունի Երակլիայէն. «Մաղաքիայեն գիր ի Երեկլու՝ կիրակէ գրեալ» (Քղ. 256բ)։ — Յուլիս 3ին Մաղաքիա կը ժամանէ Կ. Պոլիս. «Ներեկս ի տահաքին Տէր Յարութիւնն եւ իմ Մաղաքիաս եկին Երուսաղէմայ չաքիայով ի օրն (անդ)։ — Սոյն յիշատակագրութենէն կ'երևի Քէ Մաղաքիա Տրիպոլիսէն վերադարձած է Երուսաղէմ ու անկէ ուղևորած է Կ. Պոլիս։ — Յուլիս 11ին Ամգեցին կ'այցելէ Նուէրներով. «Մաղաքիան փափայի ոսնալուսայի մէկ ոսկի և պատկերք և գանակ ամանով, արխալին Գ և այլ քաուրք ընդ նմին» (անդ)։ — Յուլիս 22. «Ասացին Քէ ջնորանկի տունն կոխել են գնացել. Մաղաքիան ի չարաուէն գրեալ էր եւ իրաւի էր այնո (Քղ. 257բ)։

Ծիշեցինք վերև (էջ ՁԻ) Մինաս Ամգեցին 1701 Սեպտ. 1ին Տէր Կոմիտասի հետ ճամբայ ելլելը Կ. Պոլսէն և 27ին հասնիլը Երուսաղէմ։ Հոն 1702 Մայիս վին նամակ մը կ'ընդունի Մաղաքիայէն. «Մայիս Գ. Բլի Քնանցն. գիր Ըստամպօլա, մինն ի վէքիլնեքաց և մինն Մաղաքիայեն՝ Աւետիքի (Եւդոկիացի) պատրիարգուքեանո (Քղ. 265ա)։

Այսքան են Երեմիա Չէլէպիի մինչեև օրս ունեցած Մաղաքիա Քէօմիւրճեանի մասին մեր տեղեկութիւնները։

Ը. ՍՈՂՈՄԷ՝ ԴԱՒՍՏ ԵՐԵՄԻԱՑԻ.— Ցեսանք վերև (էջ ԺԲ) թէ Երեմիա իր 14 ամուսան գաւակին՝ Յովսէփիկի մահուան առթիւ էջմիածին իր որդւոյն՝ Դրիգորիս վարդապետի ուղղած նամակին մէջ ըսած է. «Հուսար գորա ի հերց ուսեալ (Յովսէփն) գոսպատչափութիւնն գերգոց հիւսմանցո (Յաւել. էջ 449)։ Այս տողերէն բացայայտ է թէ Երեմիա՝ բացի իր երեք արուգաւակներէն՝ ունեցած է մէկէ աւելի դուստրներ՝ քոյրերը իր Յովսէփիկին։

Հ. Ակինեան կը գրէ. «Երեմիայի դուստրներու անուններըը անծանօթ կը Ճանա(1)։ Իսկ ըստ Հ. Ս. Երեմեանի՝ Զէյթպի ամուսնացած է և ունեցած է Սոզոմէ անուն աղջիկ մը, որ վաղահաս եղած է ինը տարեկան ժամին հասակին(2)։

Երեմիա իր Սոզոմէ աղջկան մահուան առթիւ յօրինած է ճաքը ընդարձակ տուներէ բաղկացեալ Գանձ մը (Յաւել. էջ 627–32) ու անոր կցած է վախճանեալին յերեկէն գիմառնարար մօրը ուղղեալ 18 տուներով քուրքերէն Ոգբ մը (էջ 632–4)։ Այս գրուածներէն կը տեղեկանանք թէ Սոզոմէն ամուսնացուցած են իր 14 տարեկանին (տողք 172 և 173).

«Պիր քէռ գանչէ ընտրուանաէ պէն հէնիչ,
Կեօչ իւմուպտա քէչմէհ էրէ վէրմընըչ»։

Սոզոմէ ունեցած է միակ մանչ գաւակ մը, որ Երեմիայի կտրանցուցած կրտսեր գաւակին անուանով կոչուած է Յովսեփ, և որ հինգ անգամ յիշատակուած է հօրը իր վրայ յօրինած Գանձին և գիմառնական Ոգբին մէջ (տողք 14, 73, 181, 187, 242)։ Գանձին մէջ կը գրէ Երեմիա (տողք 161–4).

---

(1) Զէյթպի, էջ 40։

(2) Երեմիա Զէյթպի, յօդուած Հ. Ս. Երեմեանի, Բազմավէպ, 1903, էջ 367 ՅՆՔ.։

«Դու զքո որդւոյ ձեռքըն բըռնելոյ,
Երթանք հասնինք՝ քէ պապդ է մեռնալ.
Ես քո որբոյն ձեռքն այսօր կալեալ,
Ո՛ւր կէնե՞ մարիկդ սես հոգով ծածկեալս։

Սոզոմէ կը վախճանի 1690 Դեկտ. 27ին, Ուրքաթ, քսա Օրագրութեաց Ամգնցիի, որ նոյն օրուան քուա-կանով կը յուշագրէ. «Երեմիայի կարգած աղջիկն մե-ռաւ (Քշ. 141ա)։ Այս տողերէն ալ կը հասկցուի Քէ Երեմիա ունեցած է, Սոզոմէէն զատ, մէկ կամ ասելի զաւակներ, տակաւին չամուսնացած։

Սոզոմէ կը քաղուի Բերայի գերեզմանատունը, համաձայն վերև յիշուած քուրքերէն Ոգբին հետեւեալ տողերուն (228 և 229).

«Գէկօզլուներն վիրանէլերըն,
Շիմոի պէգին օլայ կէլըմս։

Որքացեալ Ծովմէփինկը ննջագրելով 4–6 տարեկան պատանեակ մը, որ արդէն սկսած էր կարդալ տորվիլ (Գանձ, տող 79) և որուն ձեռքէն կը բռնէ եղեր իր պապը՝ Երեմիա Չէլէպի, իր մայրը Սոզոմէ՝ մեռած կը լինի 19–21 տարեկան, իր անգրանիկ եղբօր՝ Գրիգորիս վար-պապետի վախճանէն տարի մը և եօթը ամիս առաջ։

* * *

Վերջացնելով Երեմիայի ու իր ընտանիքի ան-պատմելիքու կեանքի մասին մեր տեղեկութիւնները, հիմա կարգը եկաւ ծանոթացնելու այն Ձեռագրերը, որոնք ազբիւր եղան մեր այս հրատարակութեան։

Չէլէպիի Օրագրութեաց մանրամասն նկարագրու-թիւնը տուած ենք արդէն (տե՛ս վերը էջ ԺԱ–ԺԲ)։ Ասկէ զատ ունինք երեք Ձեռագրեր, որոնց մէջ ցըր-

ուած են երեմիայի արձակ և ոտանաւոր գրուքիւնները(1)։

Արդ Ձեռագրերը անպհականուքիւնն են մեր Մատենադարանին ու կը կրեն 1058, 1059 և 1042 թուահամարները։ Առանց մէջէն խնամով օրինակեցինք երեմիայի հայերէն և թուրքերէն գրուքիւնները ու զանոնք իրարմէ անջատելով՝ խմբաւորեցինք Ա. Թուղքեր, Բ. Ուղերձներ և Գ. Դաշնաւ եւ ողբեր ընդհանուր վերնագրերու ներքև, որոնց վրայ ուիլցուցինք երեք հատական քերքուածները։ Ուշագիր եղանք ըստ կարելոյն ժամանակագրական կարգի վերածել զանոնք, իսկ այն կտորները որոնց թուականները չեն նշանակուած՝ պահեցինք այն կարգով ինչպէս որ են Ձեռագրերուն մէջ։

Մտորև կատանք այդ երեք Ձեռագրերուն նկարագրուքիւնը առանձին առանձին, իրենց մանրամասն բովանդակուքեամբ։

I. Ձեռ. Քիւ 1058. ՀԱԻԱՔԱՄՈՑ։ Թուղթ՝ 124։ Մեծուքիւն՝ 20,3×14 սմ։ Տրուքիւն՝ միասիւն։ Տող՝ խառն։ Նիւթ՝ քուղք, նուրբ, բաց դեղնագոյն։ Կազմ՝ քարքոնակազմ, կռնակը կաչի։ Համգամանք՝ ընդհանրապէս լաւ։ Գիր՝ նոտր։ Մուրագիր՝ մերքի սև մերքի կարմիր, ինչպէս նաև գլխագրերը։ Դասաւորք՝ Քղ. 1–10, 14բ. 44ա, 61բ. 62բ. 63բ. 67ա, 71բ–77ա, 78բ, 85բ–88բ, 92բ–94ա, 95–105, 117ա, 120–124։ Ժամանակ՝ ԺԷ. գարուն երկրորդ կէսին զանազան տարիներ, հա-

(1) Այդ գրուքիւնաց և երեմիայի ուրիշ աշխատուքիւնաց համառօտ մէկ ցուցակը ժամանակին հաղորդած ենք մեր Ցուցք. Քաղդեանական, որ հրատարակած է իր Պատմագոյց Պատմուքեան մէջ (էջ 734–37), ապա աւելի ընդարձակ և ճշգրտած ցուցակը հաղորդեցինք Գնդ. Հ. Ակինեանի, որ հրատարակեց իր Ուսումիա Ձէյէպի աշխատուքեան մէջ (էջ 94, 129–31, 136–81, 189–90)։

տուած լի. 1722ին և խա. 1713ին։ Գրիչ՝ Երեմիա Զէ-
լէպի Քէամիւրճեան (քաղ. լի. և խա. հատուածնե-
րէն)։ Տեսի՝ Կ. Պոլիս հաւաքեաբար։

Կը բովանդակէ.

ա. Քզ. 11ա–14ա. «Ես որդին իւր Գրիգոր[իս] վարդապետ (յէջմիածին), վասն մահուան որդւոյն։ Ողբեակ իմ անդրանիկ և սիրելի» (446–52)(1)։

բ. Քզ. 15ա–15բ. «Ես Գրիգոր[իս] վարդապետ որդին իւր վասն Տէր Մարտիրոսի եղբօր։ Լսել ես ի գարշի մասալացւ» (453–5)։

գ. Քզ. 16ա–19բ. (Ես Գրիգորիս վարդապետ որդին իւր յէջմիածին)։ «Ողջունիւ յիշեցուցանեմ» (456–67)։

դ. Քզ. 20ա–21ա. (Ես Եզիազար կաթ. յերու-
սազէմ վասն մահուան Ապրոյի)։ «Պատուական գըլ-
խոյդ» (468–12)։

ե. Քզ. 22ա–22բ. «Գանոխպատճ նիմէքմուլահ Զէլէպի Հալէպին։ Իզէքլի վէ ուրուֆէքլի էֆէնտըմ» (517–9)։

զ. Քզ. 23ա–25ա. «Ես Մօսրով մինչ կայր ի քանան յէտրէնս։ Լուաք գփորձանակրութիւնն յեզա-
կարծ պատահումն» (472–8)։

է. Քզ. 25բ. (Ես Եզիազար կաթ. յէջմիածին)։ «Ջերմանագունից ճոխապատաս լըմանս» (442–3)։

և վայելուչ հանգչելով հրամայէր և ծառայքն ընդդէմ
կանգնեալ գոզային, այսօր ի վերոյ ձիոյն են բար-
ձեալ որպէս գազր անպիտան և որպէս գգէշս տարան
ի կախել։ Եւ որ հանգերձն և գգեստն էր ծիրանի քա-
գաւորական և կամարակապ գօտիք ականակուռ և ա-
ռաջի քաղաւորին քայլէր երքեւեկութեամբ և քաղա-
ւորն նորա մօրաքոյր ձայնելով գնա պատուէր առաջի
ամենայն մեծամեծացն, այսօր ի վերոյ ծառին կա-
խեալ բացագլուխ և անարգ, և արկեալ են ի վերոյ
կտոր մի չըլլի։ Եւ յոր ժամու կանգնեալ լինէր և գայր
ի քաղաւորէն, ծառայքն վազվազելով գոզային՝ քէ

1) անարժ.

ի բազկացն գրկեսցուք և սուլքանքն և բամբիչք պա-
րոնացն ամաչէին յերեսն նորա հայիլ, այսօր գահիճ
մի տըմարդի և անօրէն, օտար և արեանարբու՝ ըմ-
բռնեալ զնա և ի բազկացն կախեալ և [1] տակ եղեալ
ի կախազանին։ Եւ որ զգլուխն ծածանէր և զմարմինն
փափկացուցանէր անուշ իւղովք և զաբմանալի ծխա-
նելիօք, այսօր ի վերայ ծառին արեւակէզ ի տուէ եւ
ցրտասառոյց ի գիշերի, քանզի ամիս էր Մարտի։ Եւ
այն որ ձեռն առեալ զգրիչն եւ գրէր[1]) զհրամանս
քաղաւորին եւ զմանուսդն ուսմ կամէր տար եւ գրէր
խէքմիչէրիցն և խափանէր զհրամանս քաղաւորին քէ
Այսպէս լիցի, այսօր մի ձեռն ի կախ և մի ձեռն ի վե-
րայ երեսին եդեալ։ Ա՛յ և ո՛հ, ատրճիմ ասելն և գըզ-
ուիմ զծըրելն զփառս և զմեծութիւնս տրա[2]), քանզի
սակ էր քաղաւորն. ի ժամանակ մեծ վալիտէին քեխեա
եղեալ եւ յետ ժամանակի ինչ զոս ավելալ բազում
գանձիւք ուսմամբ որոյ անունն Շահան զալֆա ասի,
վասն այնորիկ մտանէր և նստէր ի պալատն արքունի
համարձակապէս։ Եւ յետ մի տարոյ կամ երկուսի ան-
ցելոյ, սակ եղև ընդ փոքր վալիտէին միախորհուրդ
և գաբան գործեալ մեծ վալիտէին՝ մօր Մուբաշին և
Իպրահիմին և Օսմանին, զնա ապանել ետուն պատ-
ճառաւ ինչ, և մայր քաղաւորիս փոքր վալիտէն ի
ժամանակի մեծ վալիտէին ըստացաւ անուն մեծ բա-
րուքեան քէ կարգացոլ է և տանէն ի դուրս ոչ է ե-
լանոլ, և այս էր ատոյգ[3]). բայց խորհուրդ ունէր և
ահ ունէր ի սկսորէն իւրմէ, մինչեւ մի եղեալ հետ
Մուչքիին և զնա սպանին։ Եւ յետ այնորիկ բազում
ամիս գործէին ծածկաբար երկոքինս, քանզի ի տե-
ղիս տեղիս բազանիս չինել և այլ զարդ փառաց կայր
յատաջմանէ եւ ինքեանք[4]) նոր իմն զարդք եւ չէնք

1) եւ գրէր եւ գրէր. 2) սոցա. 3) ըստուգ. 4) ինքն.

զնդանիկք առնելով ուրախանային և փափկանային։ Եւ յորժամ հոգին սաստիկ ուժգնական յանկարծակի հընչեաց, այսպէս ի վայր ձեալով կորնան, բայց պրծաւ վայրկէն ի բազում լալոյ քաղաւորին Քէ վասն Աստուծոյ գմայրիկն իմ ինձ թաչխանցէք։ Եւ հոգին հընչեաց ի նոսա և յայս մուլքի պուլաս, որ այժմ ոչ ազգատ և ոչ տնանկ, ի փառացն մերկացեալ և ոչ օրինաւոր մահ գինգեալ, այլ սաստիկ պատժիւ պատուհասեալ ի փախստեայ տեղիան Քէ Գուցէ ազատիցիմ. և ոչ եղև հնար, այլ խնդգամահ արարեալ և այն ոչ եւս կորուսանեալ, այլ բերեալ ի մէյտանն Եւ կախեալ խայտառակօրէն և մեծաւ նախատանօք ի տեսիլ ամենից և ամենայն քաղաքին։

Ետա պահու մի եւ ոչ մի ժամու սուպաչին ըմբռնեալ զԴ ծառայն մուլքին, և այն որ սուպայոյնն էր, ասացին՝ քէ քէհեան է նորին, ի տեղ բանկոնին աքլաղ գցեցեալ[1]), գոյն քարշամեալ, ուժն նուազեալ, գնդքն քառամեալ և ոչ կարէր գալն եւս բռնել, զի երբեմն բռնայր և երբեմն խփէր, որ Բ ծառայքն յերկու գինն մտեալ, ի բազկացն վերացուցեալ ասնէին ուշիկ, և առաջի երիայր սուպաչին և տուբան ի վէպերն որպէս քէ հարցաքննեացնն գինեալ մուլքին։ Եւ աւուրքս քաղաւորն խէտիչէրիքով մարդ ուղարկեաց ի Մխիր՝ քէ գասուկ գնացեալ ներքինի անուանքն բազում գրամ և գանձ են ըստացեալ, գամենեանան ապանէք և գգանձն առ իս բերէք։

Ելլի օրս (28 Փետր.) օլօքէն եկաւ յըստահոցն՝ գուռուչ։ Եւ մուհնեսիկն կրկին կու կանչէր քէ Ով որ գփախուստ մարդիքն ըմբռնէ եւ բերէ, նա՛ քաղաւորն բազում փառաց կու հասուցանէ. և մարդ եղեալ էին յամենայն կողմանց և որոնողք ընդ ամենայն տե-

1) ըսգնցեալ։

գիս։ Եւ գարձեալ ձայնեաց մունետիկն քէ կարմիր ըստակ չանցնի և պակաս գուռուշ, և գուռուշն՝ Զ ըստակ։ Եւ գարձեալ գյէնկիչէրուս ոտապաշիկն և գէօրպաճիքն փոփոխեցին։ Եւ գարձեալ օրս գՇարա ԵՒրուսլէմ պիղծ անացեալ ասկերքն վերուցին ազգն իւր և յէհիզուլան գՇայխճէլ օղլուն այլ վերուցին հրամանաւ գայմախամին, որ կայր անդ ի վերայ քարիւ միոյ հոտեալ և նեխեալ, գի էր պոռնիկ յոյժ և անյագ չնացող։ Եւ երեկոյիս Եւ յամենայն աւուր նոր ազան չուրջ կու գայր. և երեկոյիս շատ մարդ գանեաց, բայց ինքն անմեղ էր, այլ անիծեալ գափուքհահաքն ըմբռնեալ բերէին, և ի ժամանակ ծեծելոյն, որ ասէր ազան Քէ Թողէ՛ք, իւրեանքն մէկ քանի յաւել կու զարնէին գրիւն. այս էր գործ նոցա ի սկզբանէ։

Եւ ի գիշերիս յայսմ որ Զշի (29 Փետր.) լուսանայր, գտան գՊիլալ ազա ներքինի սեաւ հօնա քաղաւրին ի Ղուզղունճուխն՝ ի տուն իմամի միոյ Եւ խեզգամահ արարեալ բերին կախեցին յոտացն ի նոյն ծառն, որ իբրև զմի գոմէշ[1]) էր, և ի ձեռն մի սեաւ ըստ գունոյ նորին մուկ մի ի պոչէն ի ձեռն պատառեալ կապեցին, և այսպիսի խայտառակօրէն կային աւուրքս և բազում ամբոխ գային ի տես և երթային։ Այս ևզև յԳ ժամու աւուրս։ Եւ գարձեալ պահու ինչ ըմբռնեալ գԵսպան գալֆան՝ Մուլքին այր՝ ի մէջ նաւի միոյ մտեալ ի մէջ ամպարին. և բերեալ գնա ի գայմախամն և նա բազում հարց և փորձ արարեալ և յետ բանիցս խնդրեալ ի գայմախամէն և ասացեալ Քէ Ահա՛ ի ձեռս ձեր եմ, և գիս գիտակ եմ որ կու սպանէք. յառաջ գկինն իմ վայր առէք ի կախազանէն, գի պակասաւոր է և է բաւական որ այսքան օրս անդ կա-

1) գոմոշ.

խնայ կայ, և ապա պինչ առնելոց էք ինձ՝ արարէք։ Եւ ապա խնդգնալ գնաս ի ներքս և տարան գնաս կա-խնցին ի ծառն գասելով ընդ նոսա ի տեղի իւր կնոջին, որ մի ժամաւ յառաջ առին վայր գկին որպա քան խնգրոյ իւրն, ի տեղն գոա կախնցին։ Եւ օրս ի գէմ գնացին վէգիրին ի մեծամեծաց և ի բռնաւորաց քա-գաքիս։ Եւ օրս ի Գազանց առնն եւ ի Սէֆէրին առնն եւ այլ բազում առն ի Ղալաթա որոնցին գՀոսան ագան։

Եւ գարձեալ օրս էր Փետրուարի, որ է նա-հանջ տարի։

Մարտի ամիս օր Շաբաթ։ Օրս գայմախամն ըս-տակ այրնաց և գէլ արար և բազում փորձ, և չատ ըստակ ի ծախս արկին. և ասացին՝ քէ քաղաւորն էՀ քսակ առաքնաց ի տարարխանան քէ ըստակ կարնեն։ Եւ օրս գկախեալքն ի ծառին հրաման արարին վե-րացնելոյ, և տեարք և ծանօքք նոցա բարձեալ տա-րան գՀնացնալ գէշս նոցին ամենեցուն։ Ի ծառն յայն Ք մարդ կախնցաւ եւ ի գիմացն նոցին Աբտուլլան՝ պարմախն ի վայր մի կտոր ոսկր և Հալիճ օգլին՝ ի յէնիչուլլան. չաուշպաշին եւ Մուլքին, Գիլալն և Շապանն չը կարասնցին, քանգի ամբոխն ցրուեալ էր յաւուրան որ գառքա գային, և Հալիճ օգլին որ ի տեղն չէր։ Եւ օրս այլ մարգիք գնացին ի գէմ վէգիրին։ Երեկոյին Եղիազար վարդապետն գաս ասաց. ի Սուրբ Նիկողոս էաք և մնաք։

Բ—ին օր Կիրակի Ննառակի։ Գնացաք ի ժամս. Այսօր աննման որ ըսկսաք, նա՛ մի չարժ եղև խիստ և մի ցած. եւ Վարդապետն գաս ասաց Գ ժամ։ Օրս Ճարուքինն կողմն ի յԱստուածածին գաքառակալքն և գերեսփոխանն և գայլն փոխնցին և իւրեանց կող-մանցն եկին։ Եւ Ղալաթու իչխանքն եկին ի Վարդա-

պետն։ Օրս մեր ժամու եղիայի կինն մեռաւ ի տղա-
քերքն՝ քոյր Ղազարին։ Եւ գնացին ըմբռնեալ բըռ-
նաւորացն և ի նաւ եդեալ անցանել յայն կողմ և ի նա-
ւին քաղցած չարչարանս տվեալ նորա վասն Հաւատն
ազային և տարեալ ի բանտ եդին. և գայլկան ի Հայոց
ըմբռնեալ և տարեալ ի տուն Ալի ազային, յոյժ գան
հարեալ գնոսա քէ Ասացէք գՀաւատն ազան ո՛ւր իցէ.
և տուն ոչ քողին ի Ղալաթիա քէ ոչ որոնեցին։

Իսկ Բշի օրս (3 Մարտ) գային գՀաւատն ազան ի
տունս տանկի հալաճի միոյ և տարան առ գայմախամն
և նա բազում հարց և փորձ արարեալ և նա տվեալ
գպատասխանին. բայց եդ գնա ի բանտի ի սիլիհտար
ազատուն տանն։ Յաւուրս գտուպչին մանկուկ արա-
քին, գմիականի չաւուշ մի եդև։

Ի գիշերին յայս որ Դշի (4 Մարտ) լուսանայր, ըզ-
յէնկիչէրաց քահեատչէկն խնդրեաց արարեալ և տա-
րեալ ի տուն մի կախեալ և համբաւեցին քէ Զիւրովի
գինքն կախեալ, զանգի և սա կորստական էր, և ա-
ռաւաւտուս տարեալ ձգեցին ի յԱքմէչետանին ի տնաս
ամկաց ամենայն քաղաքին, և յետ պահու մնչ բար-
ձեալ գնա իւրքն և ընդ հողով արկին։

Յայսմ աւուր ժողովեցան արք քաղաքին և իշ-
խանք եւ ասացին քէ Ահա՛ կու գայ վէզիրն եւ մնք
գի՛նչ ասացուք, եթէ գնասցէ մատնիչն և ասացէ
ասկա Առաջնորդին քէ Հէքիչէրին ունին և անապուհ
կու պահին։ Հորհուրդ արարեալ և գրեցին քէ Վասն
Աստուծոյ մէ և գնա՛, ահա յատաջագոյն գպուշացի՛ր,
և քէ ի բանաւորէն մի ճնաս գայ՝ մնք անպարտ եմք.
մէ և գնա՛ վասն Աստուծոյ, որ հինգշնտացն ևս չհա-
տանի մի ճնաս։ Եւ կնքեցին գքուղքն Զ աքոռականաց
եւ ուղարկեցին ի յԱսկիւտարն. եւ նա տվեալ պա-
տասխանի քէ Զեմ երթար մինչև գիմ պարտս տան՝
Զէմ գուռուշ։ Եւ կրկին ասքա ժողով արարեալ ի Վալ-

ոչ խանն և վաճառականքն Արևելից ևս ձայնեալ և ասացեալ քէ Տանք զՋճ գուռուշն որ ելեալ երթայ. և որք լսանն՝ քէ ոկք և քէ բընիկք՝ հաւանեցան այսմ բանի։ Եւ յետ այսորիկ այն կոզմեանքն նոր լեճ բան առեալ ի մէնէջ քէ կաթոզիկոսն գԱնատոլի նորա է տվեալ, և նա ահա նստեալ է անդ. ի՞նչ կ'ուզէք ի նորանէ։ Եւ առաւօտուս ժամ չգնաց Վարդապետն և ոչ երեկոյին։

Դէմ օրա (5 Մարտ) քուզիք ուզարկէր Մուշնեցին բարեկամացն քէ եկէ՛ք. և ելեալ գնացին անդ ճիչէչէճ և էսիլն և այլք, որ յայտնեցան յառաջագոյն, և ասեն անդ քէ մեք կանգնեալ եմք, ո՞ւր կ'երթաս. մեր գլուխն ի քո ճանապարհն է։ Եւ օրս ի միւս կոզմս մինչև ժ կամ ժԱ սրանց ելեալ գնացին քէ մտանեմք ի պատանեվպաչին. և քէրէքճեվպաչին գէմ գայ և ասէ քէ վասն է՞ր եկեալ էք այսր և գի՞նչ է խնդիրս ձեր. և նոքա ասեն քէ Ունիմք արգուհալ որ մտանեմք ի յազան. և նա երկնչի և ասէ քէ Տո՛ւք գարդն ձեր և ես երթեալ տաց նորա և քերից պատասխանի։ Եւ ասեն գարդն քէ Ինչ եկեալ ես այսինչ մարդ վասն պատրիարգութեան[1]) և մեր խորհուրդն ոչ է ընդ նոսա, քանզի ունիմք հրաման ի քաղաւորէն ոչ նստուցանելոյ աստ պատրիգ. գայդ մի՛ սրասցես։ Եւ նա ի բարկութիւն չարժեալ և ասացեալ քէ Միանգամ նոքա որ ի տնզս գան՝ գնոսա սպանանելոց եմ ի գանից և ի չարչարանաց. և գուք երթայք մխամիտ եղերուք, քանզի նոքա մեզ այդպէս չէր ծանուցին, այլ ծանուցին քէ մեք վէքիլ եմք Հայոց ճեմատքին և կամիմք գայս պատրիարգ[2]) առնել և քէ Այս ազմուկս որ ոչ էր եղեալ՝ առաւգապէս գնա պատրիարգ[3]) առնելոց էաք. և գուք այսուհետև երթեալ մխամիտ եղէք, գի

1) պատրիագութեն. 2-3) պատրիագ.

Նոքա ոչ ևս են տեսանելոց զերեսս իմ, և քէ գայցեն աստ՝ գանելոց իմ զնոսա տատամիկ։ Եւ տան զնշանն արանցն որ գնային անդ և գային, զնշան Քըլքըլին և զէսիլի Քուռին. և ինձեալ մեզ պատմեցին զայսոսիկ։

Օրս ի պահու երեկոյիս ետուա վէզիրն ի նաւ եւ ինքն առ քաղաւորն ոչ գիտելով ումեք բնաւ, և խորհուրդ արարեալ ընդ քաղաւորին՝ խրատելով զնա, և ել գնաց արտաքս ի քաղաքէն, զգիշերն անդ կացեալ ի տեղին որ կոչի Սիլիվրու։

Եւ առաւօտուս որ է ելլի (6 Մարտ) ինքն ի յարտաքոյ և ետուա ի քաղաքս մեծամեծօք զոր գնացեալ էին ընդ առաջ նորա, և ինքն ետուա առ քաղաւորն, և ինքն ի պալատն իւր։ Եւ յառաջագոյն[1]) պատուիրեալ էր եւ նամակ ուղարկեալ այսր կի մի գայցեն ընդ առաջ իւր պատուով և քաղամարխուս ծառայիցն, որպէս իջիլիրին եղև։

Եւ ի սոյն առաւօտուս ի ինկեցեալ իշխանքն ինքին ի Մուրթ Նիկոդոս քէ Մարգ գնեմք ի վերայ Մուղնեցուն որ երքայ, և ոչ բռնեց գլուխ։ Եւ ի պահուս ինքն Զաքարիան և խօսս եղեալ որ կայր ի սիրտն, մի երկու բան ասաց Վարդապետին. և նա բազումս նզովեաց և անէծ գնա, ել և գնաց. և յետ պահու մի ոչ ժուժեալ ի տանն, այլ ինձեալ քէ Համբուրեմ գաջս[2]), և նա ոչ ետ, այլ գուան համբուրեալ և նստեալ անդ և Վարդապետն քնաւին ոչ խօսեցաւ։ Եւ սոյն օր չարժ եղեալ, մեք չիմացաք։ Եւ ի սմին որ յառաջ քան գկէս օրն տարեալ վէզիրն զՋուանդազանն և ազուցեալ խիլայս ճոխութեան եւ եղեալ ի վերայ նաւարկութեանց՝ զափուտան առնելով կրկին, որպէս յառաջագոյն կայր ի վերայ այնմ գործոյն։ Ելս և Հասան ազային Շամլոյ և Մէհէմէտ ազային և որ գինի տոցա

1) յառաջագոյն. 2) գալս.

էին գործակք, նոցա կապայ ազուցեալ և խիչայեաց։ Եւ ի պահու երեկոյին քերին գՀասան ազան, զոր էր ի պահեսի առ վէզիրն, և քագաւորն պատուիրեալ էր ի ժամուն յայնմիկ զոր եհուտ առ նա ի ծածուկ, եթէ Որքան խնդրեցին ծառայքն ի ներքուստ՝ եռու նոցա, այժմ եռու հրամայեա ի ձեռս քո, զի որքան գրեալ անուն կայ ի տէֆտէրն՝ գտեալ սպանցես։ Եւ յայնմ ժամու վէզիրն ևս բան եդեալ ընդ քագաւորին եթէ Դամ առ քեզ և քախչիս անեմ գՀասան ազան, հրամայեա՝ եթէ սպանցի։ Եւ ի պահուս եհուտ առ քագաւորն որպէս զի քախչիս արասցէ քագաւորին եթէ Սպանանեմ. և նա որպէս ուսեալ էր յառաջագոյն՝ հրամայեաց եթէ Սպանցի. ինքն իրր եթէ չիք ի մեզս կերպարանեցաւ այնմ բանի. չարկամ էր նորա, բայց գայթ առ երես արար, զի յորժամ առաջին վէզիրուքինէն որ մանգուլ արին, նա՛ Հասան ազան բազում պաշարս եղ առ նա և բազում ծախս և պատիւս արար նմա, և յետ գնալոյն գծախս տանն վէզիրին անուանէր բազում անգամ և սիրեցեալ եղև յայնս աւուրքան նորին և յոյս ունէր եթէ փրկի վտանգէն. վասն այսորիկ և վէզիրն զայս բան առ քագաւորն ձգեալ և ինքն չիք ի մեզս եղեալ։ Եւ եռուն ի ձեռս գահճացն գնա և նա խեղգամահ արարեալ, տարեալ արկին ի տես ամենեցուն յընթացս ասպարիսին, զոր եկեալ բարձին առաւօտուս Ուրբաթի (7 Մարտ) ընկերք նորին և բարեկամք և տարեալ եդին ի տահմանս տանն նորա, զոր անգ չինեալ էր գպրանոց Տահկաց տղայի և ազբիւր քերեալ և գերեզմանատուն չինեալ իւրն։

Եւ ի տոյն օր մի տահկի տղայ գՅովնաւազի որդին խաբեալ և ընկեր առեալ իւր և մտեալ ի Գէզատանն և գոզացեալ մի անուռկ գանձիւք և եկեալ ի Գէզատանէն քէ երքան։ Ետր նորա գիտացեալ, զոր եկ ընդդէմ նոցա բարձեալ գնացուն, և տահկին փա-

խեալ և ՅՈՎ նա միայն ի ձեռս նորա, և ըմբռնեալ զնա տալ ի ձեռս հասատապաշուն. և նա տարեալ զնա ի զատին, և նա ոչ կարացեալ վճիռ առնել նմա քէ փոքր է, եւ նոքա տարեալ ի վէգիրն, եւ նա զայս տվեալ քէ Դատաստանաւ տեացի. և գարձեալ տարան ի զատին, և ոչ գրեաց գարձեալ քէ Սպանցի. և գարձեալ տարան ի վէգիրն քէ Զգրեաց զատին. և վէգիրն խոստացեալ պարգեւս եւ ապատուքիւն՝ քէ ուրացցի զԿրիստոս և առնել զնա առաջի իւր. և նա ոչ հաւանեալ. և տարաւ զնա մխակաւի սուպաշչին, առանց հուճէքի կախեցին ի նոյն տեղւոջն ի գէմ Գէգէսատնին։ Եւ երեկոյին Վարդապետան ի ժամ ոչ գնաց եւ զայն ունէր ի մտի քէ ի կիրակէ օրա ի գաս քաշեսցէ զՋաքարեան, և ամենեքեան որ անդն կային ի բարեկամաց մեր, քազում ապերասանօք անկեալ յոտս եւ ի ձեռս նորա. և ասացեալ քէ Սլանեմ ի քաղաքէս. և կրկին ապաչեցին. և ասաց քէ Զվեզարն իմ յոտս ձեր կոխան արարէք, քո՛զ երքայ ի Գուբաս, առնէ զայն քուզքն զոր ուզարկեալ է վասն իմ, և զնորա վիրաւորեալ սիրտն մխիքարէ, որպէս որ վիրաւորէ ինձ համար քէ Գնզ զատ ունի և գքս տեզդ կ՛առնէ ի ձեռացդ. քանզի նա իմ հայրն է և զնա խոցեր է ինձ համար, և նա վասն է՞ր ինձ անէծք ասէ. Քոզ զայդ երքայ մեզայ ասէ նորա քէ ի գուր արարի զայդ բանդ և գայ և ես զգա արձակեմ։ Եւ ոտքա ևս կրկին ապաչեցին՝ Այո՛ ասելով՝ համբերել ժամուն։

Եւ առաւօտուս Եաթաք օր (8 Մարտ) Յոհաննու տոն։ Բազում ջանս արարեալ հօրն իմ և մեր բարեկամացն՝ բերեալ զՋաքարեան եւ մուծեալ ի ներս եւ մերայինքս յաչմէ և յահեկէ Վարդապետին բազում քախանձանօք և ապերսիւ քէ Արձակեա՛ ի կապանացն անիծից։ Եւ նա անկաւ յոտս նորա գլուխ ի բաց եւ հայցէր զՔոզուքիւն Մեզա՛յ ասելով. և Վարդապետն

սկսեալ և բազում բանս ասացեալ նորա և զգործե-
ցեալ չարիսն. և նա կայր յոտս նորա գլուխ ի բաց
Մեզա՛յ ասելով։ Եւ յետ բազում ազաչանաց ժողո-
վէրդեանն որ կային անդ ի մեծամեծացն և ոչ ի փո-
քունցն, մինչև լ ապանց, և ապա եւ Վարդապետն և
ասաց զՈղորմեացին։ Երեկոյիս գաս ասաց ի ժամն։

Թ–ին որ կիրակի Ցնծախ. Վարդապետն գաս ա-
ստց և գաս քաշեց զայնպիսիսն որք գնացին պատ-
ատանեհպատչուն, և գէտիլն քոռն, և նորա քահանայ
ասոզն այսպէս և այնպէս լինի, և այլ բազում բան՝
որք գայս ազմուկս յառաջեցուցին։

Ի–ին (10 Մ–ագ). տարան զՎարդապետն ի յԱստուա-
ծածին։

Ժ–ին (11 Մ–ագ). Տէր Յհաննէսն և փոքր ոգան ի
Գուբատու (նկին)։ Եւ օրս մեր Գօզոսի ոգան նկատ
յՍպահանայ։ Որերքս էտիլն քոռն ժողովուրդն նկեալ
ի մի տեղ վասն չընդունելոյ գնա երիցուքհանն։

Ի–ին (12 Մ–ագ). ձիւն նկատ։

Ի–ին (13 Մ–ագ). բացվատ. չօտաս էր։

Ուրբաթ (14 Մ–ագ). կէս աւուրս անձրև նկատ. և
օրս Ա Բ գող կ'ելքիան կու գոխանն Ա պատառի մի տուն,
ինչ որ ուներ գամէնն կու յափշտակեն և տեղն մատ
կու լինի գուլլուխին, կու իմացուսի Աստուծով և չօր-
պանի գուլլուխին կու հասնի ի վերայ մինչդեռ ի տանն
ևն, ըմբռնեալ գնատս տանի ի վէգիրն գերկոսին գոզան
և գպատառն ի վերայ ձիոյ գնեն, քանզի անկար էր
ի քայլելն. և վէգիրն տեսեալ գայն խիչայեաց գչօր-
պանին և գգոզան ետ գահճացն գի տարեալ գնատս
ի յԱքմէչետանն, գձեռան և գոտան կոտրեաց, եւ օրս
ցուրտ էր, սառակեալ կորեան ի կորուսան յաւետե-
նից։

Շաբաթ (15 Մ–ագ) բաց էր. եւ մեր Շազուպի
ազբարն մնաս և Քոճա Ղազարին աներն ևս։ Ի գէմ

կէս աւուրս փոխեցին զզափուտանն եւ տվին նորա զԱրզրում եւ եղին ի տեղի նորա զՂարս Մուստաֆա փաշան՝ փեսայ Խալիչխոզլուն։ Երեկոյին Վարդապետն գաս ասաց եւ առաւօտուս ևս, որ էր Կիրակի (16 Մարտ)։

Օրերքս զՎալիտէ խանն տասն զօրապապաչիքն ումեմն իւրեանց համախոհն։

Դշի (18 Մարտ)։ գիշերս զՃէլլի Գրապէրն գտեալ եւ խնդգամահ արարեալ զնա, բերեալ ձգեցին ի նոյն տեղի յԱքմէչետանին։ Գարբրիէլին ապչիկ եզաւ։

Դշի օրս (19 Մարտ) Վարդապետն ի Սուրբ Նիկոդոս բերին։ Օրս Մուշնեցին ի Սուրբ Գէորգ կուս երքայ, եւ ժողովուրդն ի մի վայր գումարեալ ասեն ցնա քէ Վասն է՞ր եկիր այսր, զմեր գլուխն ի փորձանս կուս (ձգես)։ եկ եւ գնա՛ ուր եւ կամիս եւ մի՛ այսր։ եւ նա մտեալ ի նաւ երթայ ի Քէչքիրտազին։

Եշի օրս (20 Մարտ) գարնանամուտ։ Գաս ասաց Վարդապետն։ Եւ օրս գաս առաք զՈրք զքրովբէիցն[1]։ Եւ ասացին քէ զկին Անտոնին ըմբռնեցին։ Եւ օրս էսինչի քոռն եւ օրքահան եկեալ քէ Մեզայ ասենք Վարդապետին. եւ նոքա ոչ քոզին յերեսս նորա ելանել, այլ գարձան։

Ուրբաթ օրս (21 Մարտ) նոյնպէս էր անձրեւ եւ մեզմ։ Երեկոյին ի ժամ եկեսցէին էսինչի քոռն եւ իւր օրքահան եկեալ մտեալ յանկարծակի ի ժամանակին՝ որ զգլուխն ի մահիճս եդեալ Վարդապետն, եւ քազում բանս ասացեալ՝ պազատանս եւ աղերսանս, Մեզա՛յ ասելով եւ չէիք ի մեզս լինելով յամենայնէ. եւ Վարդապետն ասացեալ քէ Ես քեզ հետ բան չունիմ, այլ գուս ժողովուրդ գատախազ ունիս, գնա՛ պարիչէ. եւ կրկին երկրորդ եւ երրորդ անգամ յոտս նորա անկանելով քէ Հրամանուցդ բան մեր հետ չլինի եւ զո սիրտն չաւ

1) գորք գքր։

յինի ընդ մեզ, և մեք ընդ նոսա հաչտիչոց համք յա-
ւուրս։

Եւ ի գիշերին յայսմ, որ Շաբաթ (22 Մ–ր) լու-
սանայր, գոյն գՄալէհ ազգն եւ գՄուսաոփա ազգն
ձա, գնոսին խնդպամահ արարեալ ձգնցին ի յԱքմէչ-
սանին, և յետ պահուս առաւօտիս վերուցին։

Եւ որս մօհրն եկաւ, որ գնացեալ էր ի Տէլի Հիւ-
սէյին փաչան, և որ ազմուկս եղև և եղեն գՄիաուչն
և մարդ ուղարկեցին մօհրին և հասաւ ի ճանապար-
հին և որս բերաւ և տվին ի Միաուչն։

Եւ որս էսկին և օրիսան խորհուրդ արարեալ քէ
Ահա հաչտեցաք հետ վարդապետին, և այնպէս համ-
բաւէին ժողովրդեանն, և այժմ երիքիցուք ի Մարտի-
րոս վարդապետն, մինիչ եւս գնա պատրեալ առցուք
ի բերանէ լինչ քէ Գնացէ՛ք՝ քոզուքիւն. և այնուհե-
տեւ այլ ոչ ունիմք[1]) ի հոգս. եւ կացուցին բարեխոս
գԱյուասապէմայ Մոսփանենոսն. եւ երիկաւ անդ, եւ
նա ոչ քոզս յերեսս իւր եկանել։ Եւ կրկին անգամ
գիմեալ ի գուռն՝ իրը երիքալով ի ներս, և նա եւս ոչ
քոզեալ մտանել ի ներս, այսպէս Գ և Դ անգամ գի-
մեալք՝ քէ մտանեմք. եւ վարդապետն ի ներքուստ
ձայնեալ քէ Մի՛ գայք զգծեր, եւ այլ անարգանս.
և յետոյ ճար ոչ գտեալ վարդապետին՝ ի բարկուքիւն
շարժեալ, երկալ ի գուռս անարգելով և ի վերայ նոցա
վազելով. եւ նոքա գայն տեսեալ և գձայնն՝ ի փա-
խուստ առեալ հազիւ զգուռն արտաքոյ գտեալ գնա-
ցին։ Առաւօտուս քարոզ ասաց Վարդապետն գՀա-
սուրչին և կէսն երեկոյիս ասաց։ Եւ գՄնացեալն ա-
ռաւօտուն և երեկոյիս գխորհուրդ կիրակէիս (23 Մ–ր)
ասաց և գդաս կարգին։

Բչի օր ԻԴ–իս երեկոյիս (ըմբռնեցին) գմէմար

1) ունիմ։

Մուստաֆային, և առաւօտուս Գշի (25 Մարտ) խնդրեցի ձգնցին ի յԱքմէյտանն եւ ապա վերուցին։

Գշի օրս (26 Մարտ) ի եւ ժի մայլա աքսորեցին՝ մեծամեծ գատիք եւ գԿուռճի Մէհէմէտ փաշան եւ զիւր որդին եւ յՕտապարէն մէկ քանի չօրպաճի. եւ այլ մեծամեծ արք եւ երեւելիք աքսորեցին ի քաղաքէս։ Զայս արար վէզիրն խրատոմբ նզովեալ մուֆտուն։

Եշի (27 Մարտ) առաւօտուս Մարտիրոս վարդապետն գաս քաշեց զԷսիլի քոռն վասն պատուէր մի, որ կտակ առնէ Երուսազէմայ և ոսկի եւ էսիլի քոռն կու խրատէ զսեարք պատվոյն քէ Մի՛ տայք զոսկին, եւ նոքա չեն իտար, եւ ի սորա հետն զԴամէշի որդին զՕսակորն, զի հայրն կտակ արարեալ Երուսազէմայ ի ոսկի, եւ մինչեւ ցայժմ ոչ հատուն, վասն այնորիկ գաս քաշեց։

Շաբաթ (29 Մարտ) առաւօտուս քարոզ և երեկոյին գաս ասաց Վարդապետն։

Եւ առաւօտուս Լ-իս օր կիրակի Մազկապարզի՝ քարոզ ասաց քաս խաչերդին, եւ անթիւ յամբոխէն ոչ գագարէին արքն. վերջնաց զքարոզն։ Եւ օրս ի տեղ գնաց Վարդապետն։ Եւ Տէր Աւետիքն պատարագ արար։ Եւ Քաղէա[1]) վարդապետն ի մեր ժամն ժողով արաւ։ Եւ երեկոյին գնացաք և ի դուրս եկաք անգաստան ուրհնել. լցաւ գաւիթն եկեղեցոյն, եւ յորժամ կանգնեցաւ Վարդապետն ի քարոզ, նա՛ գալին յերկու կողմանց որ Ի անգամ կանգնել աւաւ եւ նաեւ զժողովուրդն եւ կէաք կանգնեալ էին։ Այսպէս լցեալ էր այն ահագին գաւիթն, զի ի վերի գռնէն մինչեւ ի մեծ գուռս վարն որպէս քէ ծեփեալ էին և ի մի կապակցեալ։ Եւ յորժամ եկաք ի քարոզէն եւ

1) Քաքէոս.

կատարեցաւ խորհուրդ Դռնապացին՝ որ ի ներս մըտնէաք, նա՛ իրրև զծով ծփայլին և ալեաց նման ի վերայ մեր նկնալ, ի գուռն զարնէին զմեզ որ առաջի կայաք։ Եւ յորժամ ասացին՝ Ելա՛ գուռն Տեառն է և այլն, նա՛ ի ներս մտանէաք, յամբոխի կապակցութենէն չկարացաք ի ներս մտանել. և որ առաջի կային՝ հազիւ յետ պահու քանիսս մի մի անկաք ի ներս։ Վարպապետք եւ երիցունք ի խորանն ելան եւ կէաքս ի վերայ. եւ ետես շարականն և զԱբեւնէլքն ասացաք մեզ ոտն՝ և ապա լցաւ նկնզնցին և կէս ժողովուրդն ի գուռս ձեացին. և կարգաց ինքն զԱւետարանն և արձակեցաք։

Ի չի օրս (31 Մարտ) իմացաք թէ Վարդապետին հարին համար հուէքի կու հանէ Մուշնեցին թէ Տաճիկ է. և չընտրել զայս Վարդապետին՝ ի բարկութենէն շարժեալ թէ Զայս զապուլ չեմ աներ. թէ ինչ ասացին կամ ինչ բամբասանա՝ նոքա թո՛ղ Ձեան, բայց այժմ գի՞նչ անուն է այս չար, զայս չեմ զապուլ աներ, չուտով գո՛ք զգործոզ ասցին։

Եւ Ի չի (1 Ապրիլ) առաւաւտուս Մարտիրոս վարդապետն ի յԱստուածածնէն գաս քաշեց՝ թէ այսպիսի գործք կան, և որք համախոհք էին երիցունք Մուշնեցուն՝ հալածեցին յեկեղեցոյն եւ զփիլոնքն առին թէ Դուք գիտակ էք այսմ բանիցս, նկայք գաւոյգն[1]) ասացէ՛ք։ Եւ երիցունքն գնացեալ և ասացեալ Թէրզուն Գրիգորի գիրան, եւ նա չէք ի մեզս եզեալ բանին. եւ կրկին անգամ գաս քաշեց եւ նզովիւք անիծեաց թէ Ով գիտէ զբանս՝ թէ ո՛վ է արարիր կամ ունի եւ չտայ։ Եւ երիցունքն երթալով ի Թէրզին, չարով ազատակելով թէ Տարին մի անգամ է աւետեաց

1) գաւազան.

եւ փիլոնքս առած է և մեք տէր ողայոց. եկ և տո՛ւր գնուճէքին նոցա որ մեք ազատիմք։ Հազիւ եւ ճորով եւ այլ շատ բան անցեալ ի մէջ՝ բերին զՔէրզին, որ եկն անկաւ առաջի Ըղիազար վարդապետին Մեզա՛յ ասելով և ետ գնուճէքն։ Այս այն Քէրզին է որ ժողովուրդն բռնեցին զՄուշնեցին եւ սա պատասխանի տայ ժողովրդեանն, որ ժողովուրդն ի վերայ սըրա գարձեալ՝ յոյժ գանեցին զսա, եւ պօստանճիպաշուն Քերզին է որ Մուշնեցին պիտի պատրիգ առնել տայր։

Դշի օրս աւագ (2 Ապրիլ). եւս և ծագկաբար Մարկոսն եկաւ Մեզա՛յ ասելով Ըղիազար վարդապետին և գուշիզն խոստովանեցաւ Քէ այն բանագրեալքն[1]) փրկին, քանզի եւս էր սա վերակացու Մուշնեցոյն յամենայն գործս առաջի եղբօր կաթողիկոսին և յօճա Տաւուտին եւ այլ ամենայն մեծամեծաց քաղաքիս, եւ զդրամ տալն մի կախարդի տաճկի միոյ Դճ գուռուշ՝ Քէ կախարդեսցեն զԸղիազար վարդապետն որ մեռանի ի Ը օրն։

Ըշի օրս (3 Ապրիլ) գաւուր խորհուրդն ասաց Վարդապետն։ Ի տեղ գնաց վասն Երուսաղէմայ եւ ծանօքացաւ մուքտուն։ Եւ երեկոյին գնացաք ի ժամ. ոչ էր անդ Վարդապետն և աւրհնեցին զժամն, և եղեն Քէ լանանք գոտս, եւ Վարդապետն եկն եւ նստաւ գի գոտս լսացէ, եւ բազմամբոխէն կոտորեցին գաքոռն. Վարդապետն լսանար եւ Տէր Ոհանէս արեզան իւր սրբէր և գարձեալ ինքն օծանէր։ Եւ երեկոյացաւ եւ ոչ լինէր վերջ սրանցն, եւ բազումք գնային եւ ոչ լսանալ ետուն, գի հետաստանէ եկեալք էին։ Եւ յորժամ եկաք ի ժամուն՝ կանչեց զեաքսուն, եւ ընդ Մզախսուն հետ ի տունն գնացաք և սակաւ ինչ հանգաք եւ եկաք գնալ ի ժամ, եւ աւրհնեցին զժամն եւ

1) բանագրեալն.

յետ ժամուն ասաց Վարդապետն գկտակն եւ գքարոզ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զարմանալոյն բանիւք, որ գոտացոյց զժողովուրդն լալով, քանզի ասէր գչարչարանաւն Քրիստոսի եւ գնըւազելն Մ. Աստուածածնին, լայր եւ լացուցանէր, որ սրբոյն ըստ բանին գոռայիւն, եւ կանայք ըստ իւրեանց բանին հեկեկային[1]) եւ մանկունք՝ որպէս քէ ոք գանեալ ի նենգութեան՝ սրտիկ հեկեկալ ճչէին. եւ յետ արձակմանն գնացաք ի խանութ։

Եւ յուաք յայսմ ժամու առաւօտիս (4 Ապրիլ) ըմբռնեալ գյիշեցիչէր ազգային եւ արգելեալ գնա խեղդամահ եւ բերեալ ձգեցին ի յԱքիմէչտանին, եւ յետ պահու մնչ վերուցին, յերկկի յետնուն ըմբռնեալ եւ օրս սպանեալ, համբաւելով քէ ի տեղոջ փախստենէն իւրոցն խեղդեալ է։

Աւագ Շաբաթու (5 Ապրիլ) առաւօտուս գնացի ի Սուրբ Նիկողոս եւ ասաց գպաս կարգին, եւս վասն հաղորդութեան բազում ասաց բան, եւ ասաց գիւր բանքն քէ Այսպէս բան արարեր են վերայ իմ, գառաստանին տայցեն գհամարն. եւ ոյք որ ինձ համար ձեր յիրիցանցն հետ խէք ունիք՝ հաշտեցէք եւ ինձ համար մի՛ խռովիք աւուրքս, քէ ինչ են արարեր՝ ինձ են արարեր, Աստուած քաղուքիւն շնորհէ, զի երկոյիս գՔրիստոս պատարագիլոց համք։ Այսպիսի բանիւք զժողովուրդն միխիթարեաց։ Երկոյիս Շրջապուտց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Յարութեանն. գնացաք անդ եւ գպրութիւն արարի եւ ինք պատարագեց, եւ Հայր մերին ի գուռս ելայ եւ գնացի ի մեր ժամն, գՔահանան բռնեցի էջմիածնայ։

Եւ օրս մեր կոչմանն գրեցին քուղք միըսամիոնջէ, գչերքաչն Մուշնեցուն եւ գկախարդութիւնն,

1) հեքեային.

գնուեցքն, զպաստանձիպաշուն քով գնալն, զխառնակուքիւնն Յակոբին և զայլն ամենայն, առ կաքոզիկոսն ուղարկեցին։

Այս ամենայն փոքր ի շատէ ևւ սակաւ ի բազմաց ի սկիզբն տարուն մինչև ի լրումն տարուս ծրնցի. ևւ քէ պակաս ևւ կամ յաւել կամ սղալ ևւ անյարմար[1]) ինչ գտանիցէք ի սմա, քոզուքիւն ընդունեցէք սակս անվարժուքեան ևւ տհասուքեան մատաց իմոց, զի կար մեր այս էր, ևւ ի մէջ աշխարհի զբաղմանց գոյով այսչափս կարացի հանել ի յանկ, այս ևւս ազօքիւք և աւրհնուքեամբ սուրբ հարց մեր և ոգորմուքեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ ԵՒւ այլն Միոյն է գիտելի, որ միով հրամանաւ գոյացոյց զեակս ամենայն, նմա փառք յաւիտեանս, ամէն։

Թվին ՌՃ ևւ ը–ն Հայոց(*) ընդհօքն Քրիստոսի սկսայ գայս ինչ սակաւ իրս, որ ևւ ոգորմուքիւնն Քրիստոսի ազնեացէ հաստացանել ի ծար բանիս։

Զատիկ ևւ Յարուքիւնն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ապրիլ ամսոյ ԻՋ–ն. ի Սուրբ Նիկողոս գնացի, քանզի նզիապար վարդապետն ի տեղն էր և բազում և անքիւ ժողովուրդ կայր որ չէր կարեմ ծըրել, ի յԱստուածածնայ եկեղեցոյն ևւ ի Սուրբ Սարգըսոյ ևւս բազում. եկեալ էին ոչ քէ այսօր, այլ ևւ յորմէ հետէ եկեալ էր վարդապետն մեր՝ ի Սուրբ Նիկողոս գայլն յամենայն կողմանց յլեալ զգասն և զքարոզն, որ զարմացուցանէր ևւ հիացուցանէր իւր գամազամ մեկնուքեամբն և բացայայուքեամբն գրոց սրբոց, զոր փոքր ի շատէ յայտնեալ եմք ի Դ (ՌՃԴ) քվականին անցեալ տարին։ Ինքն օրս պատարագ չարաւ, քանզի

1) յանարմար։

(*) Ձ.ա.ա. ևւ քան նորաւմս չէքանի ԽՒ։

եբեկոյին ասաք. եւ օրս Տէր Աւետիքն ասաւ աւագե-
ըէցն. Ես ճաչուն եչեալ իմ գնացի ի մեր ժամն գիա-
պահն բանեցի՝ գգանձանակ էջմիրածնայ. Ես փետայ
մեր՝ Մինաս պալէ Թուման՝ առեալ տարաւ գիս ի տուն,
եւ պահ մի կեցեալ անդ, եկն Տէրտէրն իմ եւ վար-
պետն իմ Տէր Յովաննէսն, աւրհնեցին զտունն եւ
գհացն ի տեղն կերաք. Ես յետ պահու միոյ առեալ
տարան գմեզ Հաճի Լվրէնեանցն որ էր կնքահայր մեզ.
աւրհնեցին գնորա տունն եւ տակաւ մի նստան եւ գնա-
ցին իրիցունքն եւ մեք Ճեացաք. եւ յետ պահու միոյ
եչաք անտի, եւ կնքամայրն իմ մարհամի հետ ինձ ըն-
ծայ, եւ կրկին բանագատեաց Մինասն եւ որ ընդ նմա
քէ մեզ ի տունս մեր գարձցուք. ոչ լըւաւ քէ Դեռ օրս
ի Պոլսոնցն չեմ գնացեր. եւ գնացի, ի տեղն գիտ
նստեալ կային անգանձէ հետ բարեկամացն. եւ պահ
մի նստեալ իմ, վերուցին գտեղանն եւ տակաւ մի նըն-
ջեցաք. Ես յետ ննջելոյն գնացաք ի Վարդապետին
քով, ի մեծ ատան նստեալ էր չուրջ զմիծամիծաքն.
եւ յետ պահու միոյ ի ժամ գնացաք եւ ի գուրս եչաք
ամենայն գարդուք եւ աւրհնեցաք գանգաստանն, եւ
արձակման ժամուն ասրարաք գնախատօճակ Աւետեաց
Սուրբ Աստուածածնին. Ես յետ արձակմանն գնացի
ի տուն, քանզի անկարացեալ էի, եւ գառաւօտուն
կերածն չկարէի մարսել եւ ի տուն գնացեալ յետ գար-
ձուցի գսիրտս եւ պառկեցայ. Օրս Զաքարեայ Ղալֆան
Վարդապետին մի գատ եւ գինի ընծայ ուղարկեաց.
Օրս երրորդում փետայ հորքուրիս ի տուն բերին փե-
ատպատ, հանգերձ հարքն եւ կնքահարսեամբ, հօրաքոյ-
րիւն եւ կնքամարսեամբ, եւ այլ Բ ոգի եւ տղայ մի
կնքահօրն. Տէրտէրն եկաւ երեկոյիս ի հետ նոցա նըս-
տաւ. Օրս Պոլսոյ Տիլակն այլ երեք գազջիկն ի տուն
եւ գփետան. Օրս մեր Վարդապետն գխորհուրդ աւուր
Ծարուքեան ասացեալ է. եւ Տէրտէրս եւ այլ Բ ոգի

ի հետ նորա եդեալ՝ գնացեալ ժայռեցին զմարտիրոս վարդապետն աչակերտ Աստուածատուր վարդապետին ընդառաջէմայ եւ զընդառաջէմացիքն որք կային առքա ի յեկեղեցին Աստուածածնայ՝ բերել եառուր եւ զՊաւսիքն ընդ նոսա արաւ։ Օրս մեր եկեղեցին Քաղէոս[1]) վարդապետն որ կայր՝ արձակմանն ժամուն գառուրբ նչանն հանեց եւ խաչահանգիստ արաւ։

Բշի օրս (7 Ապրիլ) Մեռելոց և Աւետիք Սուրբ Աստուածածնին։ Գնացի ի մեր ժամն և քապախ բռնեցի էջմիածնայ, եւ յետոյ գնացի ի Սուրբ Նիկողոս, եւ Մզոեսին մեր մէկ քանի մարդ ժողովեց և գնացաք ի Մարտիրոս վարդապետին քով չնորհաւորել զՋաւիկն. եւ յետոյ գնացաք ի յընդառաջէմացոց քովն, եւ անտի եկեալ գնացի ի հետ Մզոեսուն ի տուն, եւ ձայնեցին զմեզ ի տուն հօրքուրիս եւ եկեալ գնացաք ի տուն եւ նստեալ պահ մի ի հետ նոցա եւ ննջեցաք. եւ գնաց Մզոեսին ի տունս իւր. եւ յետ ննջելոյն նստաք պահ մի եւ երեկոյացաւ եւ գնացաք ի ժամ ի հետ ոտքա. եւ յետ ժամուն գնացաք ի վարդապետին քով եւ նստաք ի տեղն ոչ տակաւ. եւ անտի եկեալ հետ Մզոեսուն, ձայնեցի զՄզոեսին եւ ոչ եկն, եւ ես գնացի ի տուն, եւ Տէրտէրն եկաւ եւս եւ պահ մի նստաւ, եւ եկեալ գնաց քնիլ զի խռնջեալ էր՝ եկեալ ի գերեզմանացն. եւ մեք չատ նստեալ, եւ յետոյ եկաք մեք եւս զի անցեալ էր հաւախօսն։ Օրս Ղարաքեօզի ազբար Յովանէսին կինն մեռաւ՝ ազայոց տէր, ժողովուրդ էսիլին, որ էր յառաջ Տէր Գրիգորին վազճանելոյ։

Գշի օրս (8 Ապրիլ) Ղալաքու իշխանքն եկեալ՝ զվարդապետն տարան ի յԱստուածածնին ի պատիւ։ Եւ առաւօտուս զհացն ընդ նոսա կերայ ի հօրքուրանցն և

1) Թաքէոս.

յետոյ նոքա եկեալ գնացին ի սէյիր և նա եկեալ գնացեր ի Մղտուռնցն, Մալզոյն եւ պապան այլ ի հետ. մինչ ի կէս օր նոտաք անգ, եւ յետոյ գնացի ի տուն։ Եւ երեկոյին նկն Մամուէլն ի տուն, եւ նոքա ի տունս իւրեանց գնացեալ են, եւ կանայքն եւս գնացին կէտ աւուրս. եւ գերեկոյն հացն հօրքուրանցն կերայ։

Դշի օրս (9 Աղբէկ) գնացի ի մեր ժամն. պատարագ արին։ Եւ օրս մեր վարդապետն ի գերեզմանէրն գնաց, եւ ես ի խանուքն գնացի, եւ երեկոյին գնացի ի ժամ եւ եկաք. վարդապետն ժամուն չը հասաւ, յետև եկաւ. ի քոյէ գնացաք։ Ի պահուս յայտ Գ ճոզացի եկան ազաչելով վարդապետին և յոտս անկանելով քէ Մէկ մի ի մեզանէ տան և ազոց տէր է, այժմ եկեալ ի տեղս և գնացեալ ի յՕրքաքոյն՝ կամի կարգըվիլ. հրամանուցէք խնդրեմք որ ճար մի անեսք Թուրք գրից գրկից վարդապետն քէ Սախըն չլինի քէ այդպէս բան առնէք կամ մարդ գորա ազչիկ կամ կին տայ։ Եւ ի վերայ այսմ բանիս մի ձայն եկ ազաչակի եւ ի գուրս եկաք տեսաք գի Դ գինով զարկեալ են գմի Ղասէրցի հայ, որ արուեստավայ եղեալ եւ կու գիմամարտի ընդ նոսա. եւ նոքա եւս կու գանեն մահու սպասելով. և ամանք անկան ի մէջ ի հայէ և յայլ Թուրքէ քէ գնա գարձուցանեն, նա ոչ կամելով գառնայ ի վերայ նոցա քէ կու զարնեմ. և յետոյ ազաչեցաք Տաճկաց եւ ի տահիկ գնա բերեալ ի ներս ձգեցին և մեք ոչ կարացաք ըմբռնել, քանզի ի մեզանէ գերեքն եւ գերկուսն ըմբռնեալ գանեաց քէ Դուք չէք Թոզուր որ երթամ գնոքա զարնեմ. քա՛զ նա ոչ մեռնիմ, քա՛զ գչարկամս զարնեմ։ Կամէր ելանել ի գուրս ի գռնէն և հասան ի վերայ սրք զոքնզք, եւս Տէրտէրն իմ ամուր ըմբռնեալ էր գփէչն. և ամանք ազաչելով հազիւ լռեցուցին, քանզի խմած էր։ Ի վարի գռնէն մինչեւ ի վերի գուռն գիմամարտ-

ամբ է հետ տանէին գինուիլնուն յԵնկիչէրաց։ Այժմ խիստ անզգամացան յԵնկիչէրիքն. կու խմէին ի Ը Ի Դ ընկերաք, շուրջ կու գայինն խազ ասելով եւ չոփուր պարնելով. եւ ո՞վ էր որ հայ տղայ կամ կին ի նոցա դէմն գար։

Եչի օրս (10 Ապրիլ) գնացի ի մեր ժամն. պատարագ արարին. եւ անտի գնացի ի տուն եւ անտի ի Մզաեռանցն, և Տէր Գեորգան նաւրերցի եկաւ ի տեղն, եւ պահ մի նստեալ իմ՝ եկեալ գնացի ի խանուքի. եւ ի Քօփչափուն գնացինն։ Եւ օրս՝ վասն այնորիկ որ չէրէկն եղաւ՝ գմեծ գուռի գիհնն պատեցինն, եւ վասն այնորիկ որ մեծ ճանապարհ էր և քաղաւորական՝ մեծամեծք կու անցանէինն ընդ այն եւ կու մախսային եւ հագիւ կ'անցանէինն, քանզի ի ժամուն եկեալք մեր Հայերս կու կանգնէինն ի գրան գիմաց չերկու կողմն. եւ գարձեալ՝ որ վէզիրն ի Ղասըրղա իլլիմանն էր եւ խիստ կու բանէր ճանապարհն այն եւ կու անցանէինն մեծամեծք, եւ անցորդք կու գչարէին. վասն այնորիկ վարգապետան պատել ետուր գայն գուռն. բայց վերի գուռն խիստ նեղ էր և ճանապարհն՝ յոր ժողովուրդն պիտի անցանէն. չգիտեմ թ'նչպէս կու լինի։ Եւ երեկոյին Գրիգորն և Սամուէլն եկին և ի հարքուրբանցն կերաք գհացն։ Ետու արձակման ժամուն վարդապետն ի Տէր Գեորգան ի տես գնաց, գի վաղուց հետէ հիւանդ էր։

Ուրբաթ (11 Ապրիլ) եկան ի Սուրբ Նիկողոս եկեղեցին այն չէրէկի գիհով Տաճիկքն եւ կռվեցան ընդ եկեղեցականան քէ վասն է՞ր էք պատեր գայս գուռս եւ մեզ համար չէ՞ր էք գոցեր. քէ գուք կու քակէք՝ քարի, քէ չէք քակեր և բանաք, նա՛ մեք կ'երթամք ի ընկեր կ'առնեմք ընդ մեզ եւ կու գամք գետնի կու հաւատարեմք, գուք գիտէք. ասելով գնացին, և ոքա ասացնալ քէ Գնացէ՛ք, մեք կու բանամք. եւ

քացին այսօր։ Օրս գՀասան ազային Շամլոյ գասունն քարկեցին քէ վասն է՞ր մեր ընկերացն երես ովիք պուք, որ այսպէս հաչարուքիւն կ՛անեն, և քո մարդոցն ես պայքան մարդն չէ՞ր ես ժոզովիր ի վերայ քո. գու այսպէս երգում չարի՞ր ի մեր հետն ի չէքմէչտանն քէ վասն Աստուծոյ՝ ոչ մալլի, ոչ մուլքի, ոչ ըստակի, ոչ մանուպի, ոչ փառաց՝ այլ վասն Աստուծոյ եւ խազազութիւնն աչխարհիս եւ կինաց քաղաւորին յաոաջացուացնիք գրանս, այժմ (փոշ ճը էփըսաք)։ Եւ նա ելաալ ի այն անէն, որ ովիալ էր ոէֆա[էր]տարն ի մէրթէն ա[ն]արծաք, եւ անոի [ել]եալ գնաց ի տահման կոտրած գ . . .ին մի փոքր տո[ւն] մանալ։ Օրս ոէֆտէրտարն, որ Մուստաֆայ ոէֆոէրտարի որդի էր, այսքան խառնակութիւնս մէջն հարստացաւ և հպարտացաւ և գրեալ մի արզ քաղաւորին քէ քաղաւո՛ր, որ գու ես, ահա՛ վէզիրն մեռաւ, ահա՛ քեզ Դաւ քառակ, ինձ տուր զվէզիրութիւնն։ Օրս մէկ Տեարպէքիրցի՝ էրէց մի վաղչանեցաւ ի Սուրբ Գէորգ. հակառակ էր մեր Վարդապետին։ Օրս մի քանի չօրպաճի եւ օտաղչի խորհուրգ առեալ քէ ի՛նչպէս առնեմք, ահա՛ աչխարհ կու աւերի, ես առաւել քաղաքս, և մեր անունն գայ քէ հաչարուքիւն առնողն չէնկիչէրի է եւ այսպէս չարուքիւն կու գործեն, ոչ տանիկ եւ ոչ հայ կ՛առնեն, զամիներսեան կու նեղացնեն. երթանք տանք զմեր արզն ի քաղաւորն։ Զայս ասացեալ գնացեալ ի քաղաւորն, միբառմիոջէ գրեալ և պատմեալ և ասացեալ քէ Եւ գու հրամանքդ երես ովիր Հասան ազային և չօրպաներուն, որ նոցա մարդն և մերս այսպէս կ՛առնեն, որպէս վերասացաւ. և քաղաւորն գնոսա ուղարկեալ սիրով քէ Դուք գնացէք ի ձեր բանն և ես գխտեմ գինչ առնելոց եմ։

Շաբաթ օրս (12 Ապրէլ) գնացի ի մեր ժամն, քահանի բռնեցի էջմիածնայ։ Դէմ առաւօտվան անձրեւ

եկաւ մի ժամ եւ կէս, ի մօտ ծագիլ արեւուն կտրեցաւ։

Օրս քաղաւորն ելեալ ի տեղոջէն եւ քէպռիլ կերպարանաւ եւ հետեւակ եկեալ, զվէզիրն տեսեալ եւ զոէֆռէբտարի արդն ցոյց՝) տվեալ վէզիրին քէ Տես զո հախին ի՛նչ են արեր. մի՛ գու տրտմիր, մինչեւ ի մահ իմ վէզիրն գու ես։ Եւ վէզիրն խրատ տեալ քաղաւորին քէ Ա՛ռ զդրամ նորա եւ յառաջ հարց եւ փորձ արա՛, որո՞յ խորհրդեամբ գայն գործեաց և ապա սպանէ։ Ինստ հիւանդ էր. զգաւն չգիտացաք գիսկն, ասէին քէ մատունք ձեռացն սեւացեալ են, և ասէին քէ կախարդութիւն են արարեալ քշնամիք նորա, եւ աւուրքս ասացին քէ գնչ-իս որ անգուցանէ՝ այլ չի մնունիր։

Երեկոյիս Վարդապետն կոչում արաւ նորընծայիցն եւ գաս ասաց ի յԱստուածածնին։ Եւ ոչ մի ասիմեան չտայր ումիք, բայց բազում ազաչանօք եւ պաղատանօք ժողովրդեանն վասն երկուսին, վասն այնորիկ աւրհնեաց, եւ վասն Երուսազէմացոց, եւ նոքա եւս բազում խնդրուածք արարին, եւս Մարութիոս վարդապետն, վասն այնորիկ աւրհնեաց։ Օրս Մզտեռաւն Սիմաւոնն եկաւ ի գեղէն եւ Յակոբն։ Յետ ժամուն յամէն կողմանց, որն՝ քէ Ես սարկաւագութիւն կ'ուզեմ, որն՝ քէ գպրութիւն, որն՝ երիցութիւն, եւ Վարդապետն ոչ ունէր կամք։ Եւ եկեալ ի Սուրբ Նիկողոսոս մի Ղայսերցի աւագերիցոյն և Դ ի ժողովրդով քէ Արժանի է, և աքոռակալքն առեր են գհախն. ի նոցանէ այլ հրաման քէ երէց ձեռնադրես։ Զըգուիմ գծըրնէն. բազում ջան եգեալ այս գիտս եւ այն գիտն անկան, ոչ եղև ճար։ Յետոյ մտան ի ներս, եւ աւագերիցուն ասաց Վարդապետն քէ Դուք կա-

1) ցուց։

մի՛ք որ գա աւրհնէ. եւ նա ասաց Քէ Երբ իշխանքն կամին, նա՛ մնք չեմք կարեր բան ասել. և վարդապետան ընդ ժողովուրդն ասաց Քէ Դուք ի՞նչ կ՛ասէք. և նոքա ասացին Քէ Մեք կ՛ասեմք Քէ ազէկ մարդ է, արժան է։ Եւ վարդապետան ասաց Քէ Եկատ բարի։ Եւ ահարց ընդ նոսա Քէ Դուս որո՞ւ ժողովուրդ ես. Տէր Դանիէլին. Դուս որո՞ւ ժողովուրդ ես. Տէր Գեաբսոին. եւ այլ՝ Քէ Տէր Յաչատուրին եւ Տէր Ներսէսին։ Եւ վարդապետան ասաց Քէ Զայս մարդ որ ես աւրհնեմ, նա՛ դուք գիներ երէցն ձգելով սորա ժողովուրդ կուլինէ՞ք։ Ասացին նոքա Քէ Զնոնք ձգեր գմեր երէցն։ Ասաց վարդապետան. Քէ չէք ձգեր գիներ երէցն, ապա ես գայն աւրհնեմ, նա՛ ի՞նչ ուսէ, զո՞վ հովուէ. երբ դուք նորա ազգ էք՝ նորա ժողովուրդ չէք լինիր, ապա ո՞վ կու ձգէ գիր երէցն եւ գորա լինի, կամ Քէ երէայ ի՞նչ ուսէ, կամ հովիւ որո՞ւ վրայ գնեմ գայս։ Ահա՛ աւրհնեմ, չկայ ժողովուրդ, հաց չկայ, լինի հովարտա, ընկնի ի գերեզմանեըն ու հոգին գուրս գայ, կամ այլվի առնէ գիր էսկիճուքիւնն եւ ակռայէն քաշէ գանկն եւ գիս անարգէ եւ պատճառ եղօգքն։ Ես գայդ չեմ առներ. երէա՛ք բարով։ Քըչքըչ եղաւ գնացին։ Ծեսոյ Գրիգորն կանգնած էր, և գնա տվին ի քերան գրսի եզած մարդիքն, քանգի չէին իշխեր բան խնգրել ի վարդապետէն. եկան անկան ի Տէրտէրս, և նա ասաց՝ Ջեմ կարող։ Ծեսոյ Գրիգորն որ տարաւ ի նէրս, նա՛ վարդապետան չխնդց եւ բազում բանս ասաց նորա Քէ Դուս ազէկ բաներուս գլուխ կը գնես, գուս այդ բաներուդ կարվիր, կ՛ասեմ քեզի։ Նոյնպէս եւ Տէր Ծովանէսին մեր. Նա՛ բա փեսի ազբարն՝ Ուսկիւտարու Գեաբսոն եկեալ՝ մերքի ազաչանօք և մերքի նախատանօք Տէրտէրիս և վարդապետիս՝ աւազ սարկաւագուքիւն ուզելով. եւ երկիր գնորա անունն Այսահար եղեալ էին. ի ժամանակ

Մուշնեցոյն քահանայութիւն էր խնդրեալ, արգիլեալ էին վասն բանին. և այժմ գայս խնդրէ և մեք զի՛նչ արասցուք՝ ոչ գիտեմք, ասաց Տէրտէրս Վարդապետին: Եւ նա ասաց. Վասն է՞ր ի ժամանակին ոչ է ուղեալ. և նոքա այլ իմն պատճառ եդին քէ վասն մեզ ոչ են աւրհնեալ. և նա ասաց քէ Ո՛ք այլ չեմ աւրհներ: Եւ կրկին եկեալ նոյնպէս պազատանօք և աղաչանօք քէ Դուք չէք կամիր, քէ չէ կու լինի. այսպէս խօսքեր. եւ մեք ասացաք քէ Այլվի կու լինի ձեռնադրութիւն, կաց ի յայն առնն եղի՛ր. և ասեն քէ Ջի՛, հիմի պիտիր. վասն է՞ր քէ մինչև յայն ժամանակն, ո՛վ գիտէ քէ ի՛նչ կու լինի. չարկամ ուներմ, լինի քէ չՔոզուն: Ապի՛կ, ապա մեք ի՞նչ անենք, չենք կարեր ասել գրան որ իւրեան համար կ'առնեն: Յետոյ կրկին ազաչեցին պազատեցան քէ Զայս բանն արէք: Ինաց Տէրտէրս Վարդապետին ասաց, և նա ասաց քէ Ես չեմ. ահա՛ պիտի որ ձեռնադրութիւն՝ ես մի քէսգէրէ տամ որ գինք այլ աւրհնեն: Եւ գնացաք ասաք գայս քէ Այսպէս ասաց, այլ ի՞նչ կ'ուզէք: Եւ ահա՛ մեր Ծարութիւնն այլ Ծաց. գնացին ճորով քէ Լաւ էր որ այժմ չինէր: Եւ գտոր քոյրն առնոզն որ Սուրբ Նիկոզոսցի էր՝ գաթոռին առած, զրկած աւագիրիցոզը քէ Աւրհնեն. նա այլ չարաւ: Օրս Վարդապետն ասէր Տէրտէրիս քէ Ի՛ր որ աւազ առրկաւագ օրհնեմ՝ նւաստիս համար, եւ Տէրտէրս ոչ է ուվեալ կամք, և երեկուն ասաց ինձ Տէրտէրս, և նա այլ չկամեցաւ, քանզի կարողութիւն պիտի քաշէու: Այս բանիցս և խօսիցս ժամանակն, յետ ժամուն եղեալ էր, անձրև եկաւ խիստ, ի հոն Ծացաք ես և Տէրտէրս և Գէորգն:

Ի Դ ժամուն (13 Ապրիլ կէս.) եկաք եւ գնացաք յեկեզեցին. և եղև ժամն, և Մարտիրոս վարդապետն քարոզ ասաց գաւուր խորհուրդն, որ քէ վասն է՞ր

կոչի Նոր Կիրակի և Կաթոլիկ Կիրակի։ Եւ սկսաք ըզ-
Յորհուրդ խորին, եւ զգիտաւորեցաւ Վարդապետն
եւ ելաւ ի գուբա քաղում ուխտիւ՝ սարկաւագօք եւ
գպրօք, և բերին յառաջ զՅաչատուրն որ էր գպիր,
եւ եբեա զի[1] ասպիճանն եւ զՏէր Յհաննէ որդի զԳրի-
գորն և ձեռնադրեաց զերկոսին և օծից քաղում փա-
ռօք և մեծաւ պատուով, որ ոչ կարեմ պատմել զկարգ
և զսահման որ եգեալ սուրբ նախնիքն մեր և երանելի
հայրքն. և զիտաս և զմեծութիւնս քահանայիցն գի՛տ
ի ձեռնադրութիւնսն զերիցն և տի՛ս։ Յաւուրն Դ ժամուն
ապա ելաք յեկեղեցւոյն՝ կատարելով զպատարագն։
Եւ յետոյ ի Սուրբ Գէորգ գնացաք ընծայարհնէք խաչ-
մի ազգիսն եւ աւրհնեցաք ի մէջ եկեղեցւոյն զնշանն
եւ յետոյ ելեալ գայաք, եւ Մզտեսի եպսուսն քա-
ղում երգմամբ եւ քաղում ազաչանօք տարաւ զմեզ
ի տուն, եւ նստեալ ի տեղն Բ և Դ ժամ և ելեալ ե-
կաք ի տուն և Տէրտէրն գնաց ի յԱստուածածինն։ Եւ
յետոյ ես ելեալ գնացի ի յԱստուածածինն. գաս կ՛ա-
ւէր Վարդապետն գրան Իմաստնոյն Սոզոմենի։ Եւ
յետ ժամուն գնացաք ի հետ Վարդապետին եւ զհացն
ի հան կերաք, և երեկոյացաւ. ես և Տէր Յակոբն ե-
լեալ եկաք ի տուն մեր եւ Տէրտէրս եւ Տէր Յով-
հէան ի Փէրէտէճի գնացին աւրհնել զխանուխ նոցա։
Յայսմ աւուր նզովեալ և անիծեալ Քըլքըչն հետ վար-
պետիս կռվեալ է, ուստ գրնաբանն քիւրէքճու ըս-
տակն պատճառով, և ստ քաղում նզովք և անէծք է
ասացեալ։ Զը Յհայ մինչէ և չը համբերէ Աստուած
վասն չար հպարտութեան նորա։ Եւ օրս ի Սուրբ Լու-
սաւորիչ Քաղէոս[1]) վարդապետն գնորգեղի երէց մի
աւրհնեց և է Զ տղայ՝ գպիր, քէսաքէրէօվն մեր Վար-
դապետին։

1) Քաթէոս.

Բ֊ի օրս (14 Ապրիլ) Վարդապետան ի Մուրթ Նիկո֊ղոս եկաւ եւ առեալ զնա Երուսաղէմացիքն տարան ի յՕրքաքօյլն եւ զփոքր վարդապետն այլ։ Առաւ֊տուս գնացի ի Մզտոնցն և անտի՝ ի խանուք եւ երե֊կոյին ի Մուրթ Նիկողոս գնացի։

Գ֊ի (15 Ապրիլ) առաւօտուս ի մեր ժամն գնացի և ի հետ Տէր Ղազարին հասպ արաք զառնելիքն և զտա֊լիքն. եւ անտի ի Շէրպէքճի Գրիգորենցն գնացի։

Օրս ի ներսէն քաղաւորն մարդ հանեց Բ֊ի Զ հան֊գերձ սիլիհատարովն եւ նորա տաս զԱմիք։ Եւ ի գէպ յետնուցս ասացին ամենեքեան թէ Զոէֆտէբատրն բռնեցին և զձիանն և զլորիքն կրած. տեռոզքն պատ֊մեցին թէ կայր Հ և Զ, և ի գիշերիս գնա բազում չարչարանաւ՝ թէ ասացէ գինչն էր։

Եւ օրս պրծայ զՏաճկաց էլիֆպէն և մտայ ի նոր բան որ կոչի ամմէ. եւ զէլիֆն Աւագ Բ֊ի ըսկսայ ի յոգորմութիւնն Քրիստոսի ապաւինելով. գի բազում անգամ ի մանկութենէ ի հետ հարկեալ ի ծնօղաց եւ շատ նախատինս կրեալ վասն բանիս, գի պիտանի էր հանապազ, եւ այժմ ձեռս արկաք բանիս. մինչէ Աս֊տուած յառաջացուսցէ։ Եւ օրս լուսինն նոր էր եւ Տաճկաց բառիւն[1]) աւուրս Ըռէճէպ ասեն եւ իւրք նա֊մազ կ'առնեն։

Եւ օրս Գ֊ի (16 Ապրիլ) առաւօտուս գնացի ի Մուրթ Նիկողոս. եւ ձայն եկաւ թէ Վէզիրն մեռաւ ի գէմ լուսուս։ Եւ անտի գնացի ի տուն եւ եկեալ գնացի ի գուռս[1]) վէզիրին, և բազում ամրոխ կայր ի գուռս[2]) նորա և ընդ մէյտանն բազմեալ, և յանցս ճանապար֊հին արք, կանայք, ծերք, տղայք յամենայն ազգաց եկեալ էին, ապասէին ի գուռս հանելոյն գնա։ Ոմանք խնգային եւ ոմանք լային, ոմանք հառաչէին եւ ո֊

1) բառիվն. 2-2) գուրս.

մանք բերկրէին, ոմանք հեկեկային եւ ոմանք ճխա-
լին։ կանգնեալ էր ի տեղն, եւ ահա ելին քաղուտն
իւր. եւ յետ պահոյ միոյ լեալ բարեկամացն եկին,
քաղուտ կանայս ան զգեցեալ, եւ ի լաք առեալ ի
վերայ գլխացն, ի հետաստանէ ձայնս արկեալ ճչէին
մեծապէս և գոռալով բարեբառայն ազազակէին, մին-
չեւ զամենեսեան որ անդն կային՝ ի լաց հանէին եւ
նուագեալ արտից յարտասու թղթէին. և նոքա այնպէս
եկեալ մտան ի տուն նորա։ Եւ յետ նոցա նոյնպէս մի
գունդ[1]) անասք, որ նոքա զնոյն ազազակէին եւ ինչ
բառնալով եկեալ մտին ի նմին, և ես ոչ կարացի այլ
համբերել զփղձկանացս և արտասուացս, առեալ զևա-
չինն որդի Յոճա Սահակն եւ գնացի ի խանութ։ Եւ
յայսմ ժամու քաղաւորն զտէֆթէրտարն ի քովն է ձայ-
ներ, եւ ի վերայ նորա վազեալ որով խոցոտեալ ի
կակծանաց վէպիրին, քանզի սիրեաց քաղաւորն զվէ-
պիրն եւ իմացաւ զբարեկամ լինելն եւ զվրէժխնդիր
լինելն չարկամացն իւր։ Քանզի այս Սիւաւուշ փաչան
մի անգամ այլ վէպիր եղեւ ՌՃ քվականիս, եւ որք
մնացան յայսմ տարւոջս զոցա ընկերքն ի յայնմ ա-
ռանին ըմբռնեաց և սպանեաց՝ զՂարա Ջաւուշ յինկի-
չէր ազատին, զքահեհապէկն եւ զՊէքտաշ ազան։ Եւ
կամեցաւ գներսի՝ որ էին ի պալատն քաղաւորին,
գնաստ այլ սպանէր, որ յայսմ ամի եղեւ. ասէր թէ
Ջաչխարհս մտին եւ զբոտակն ոտքս են արգելեալ,
եւ խօսք և հրաման քաղաւորական ոտքս է, և զքա-
գաւորն որպէս կամին այնպէս առնեն, և չեն քոզուր
որ զայլքն բառնայ քաղաւորն եւ կու երկուցանեն թէ
Զլինի որ խօսիս, մեք զքեզ կու սպանեմք եւ գու մի՛
խօսիր։ Զներսի սեաւքն ձգել կամեցաւ եւ նոքա ի-
մացեալ մանգուլ արկին ի (պ[ո]ղ) և եղին ի տեղի նո-

1) գունդ։

բա գԿուտնի մէհէմէտ փաչան և նա ևդ գսա ի յնախ-գուլան եւ միաւուչ փաչան բազում ինչս տանել հա-գիւ ապրեցոյց գգլուխն իւր եւ նետեցին գսա ի ու-ռումելոյ սահմանն՝ տանել նմա փոքր ինչ պարսնու-քիւն։ Զայս արար կուտնին խրատով սեւոցն ներքի-նեաց[1])։ Եւ ի յայսմ ամի գործով ծառայիցն խմացաւ քազաւորն, որ սպանեալ և ներսի իւր սիրելիքն քըչ-նամիք էին, գնոսա սպանեցին, որպէս գրեալ եմք փոքր ի շատէ։ Եւ յետ բանից՝ սորա ուղարկեցին գմահն եւ եկեալ գժամանակս յարգարեալ գտաւ, որպէս որ ինքն կամէր, և ով որ չէր գովիր[2]) Դ ե մարդ՝ գնո-քա այլ գտին և կամաւ սորա սպանեցին։ Եւ յետ սա-կաւ աւուրց հիւանդացաւ՝ արարեալ կախարդութիւն սորա։ Այն նզովեալ սէֆտէրտարն ուխտ եդեալ հետ սպահոցն, Թէ որ վէզիր լինիմ, նա՛ ձեզ գուլամիէ տամ. որ և բարեկամք իւր խրատ տանել Թէ Փաչա՛, գայդ գործ մի՛ առնիցես, քանզի հայր քո գայդ եւս գործեաց և բազում նոր յումն Թէքէլիֆ՝ գինք կախե-ցին ընդ չինարի ծառն և գՀասան Ղալֆա ի չենկիչէր ազատին՝ յոտացան, յորում եւ դու պատրաստ կա՛ց. և նա ասացեալ Թէ Զհայրն իմ յոտացան կախեցին, Թո՛զ գիս յերանացս կախեն և ես վէզիր լինիմ։ Այս-պէս այր հպարտ եւ գոռոզ էր, եւ յետ քազաւորին հարկանելոյ գսա սրով սպանելոյն, քանզի սիրեաց քազաւորն գվէզիրն և հաւատաց նորա, և ահա բա-նայր գիւր գործն, վասն այնորիկ երբ լսեաց գմահ վէզիրին՝ ի սրտին չհանդուրժեալ, յարձակեցաւ ի վե-րայ պզծոյն մէհէմէտ սէֆտէրտարի Թէ Դու այնպէս գործեցեր ինձ. եւ յետ խոցոտելոյն, խեղդեալ գնա ի փողոցան ձգեցին։ Եւ ի կէս աւուրս բարձեալ գվէ-զիրն, եւ ի գուրս հանելոյ սառնն ի հոն պիտէիր, որ

1) ներքինոյ. 2) գովէր.

յառաւօտէն մինչև ի է ժամն չգիտցին այնչափ ամբոխն, որ լցվեր էր գՂատրզա իւմանն եւ իմէջ սաբային։ Երբ որ ի գուբա եկաւ ասացին, Նա՛ ձայն ապազակին մ'բպէս կարէ ոք պատմել եւ գնել ազախնոցն և գբնկուժն ծառայիցն և գհառաչս կանանցն, գնւագիչն անւագպնտոցն եւ գբոզոք ազգացն, գլաց մնծամնծացն եւ գխնչճ տղայոցն, զազէս բարնկամացն եւ գկոծ սիրելնացն, որ մինչև զամենեսեան յոգբս և ի կսկծանս հանեցին, և ոչ ձնաց մարդ յայնչափ ռամկացն և ամբոխին որ ոչ ազբիւր հանեցին յաչաց։ Եւ գհետ նորա երթային մուֆտին եւ գազգնէսքերքն, գայմախամ Իւսուֆ փաչան, որ առաւօտուս եզև չնա մնռանել տրա, և տէֆտէրտարն Մարկ Ալի էֆէնտի, և այսօր եզև այս ևս, և չնկնէին ապատին եւ Ստամպօլ էֆէնտիսին եւ այլք մնծամնծք բազում անհամար և անքիւ ամբոխ ընդ նմա՝ բերեալ քաղցին ի յԱլի փաչա ճամիսին՝ ի սահմանս վայրիսկ համարին եւ Տիքիլի տաչին(*)։ Այսպէս անց գնացանեւաւանին և քաջն Սիսաւուշ յազգէն Ապազայի, համշէրսկ[1]) և եգբայրսկից Իփշիր փաչայի, որ եւս գնաչար մահուամբ հանեցին յաչխարհէս անցեալ տարիս։ Եւ որս գմօհրն ուղարկեցին Գօյնուէկրի Մէհմէտ փաչային, որ կ'ուտէր գՇամ՝ քէ գճանապարհ չար-

1) համշիրսկի.

(*) Էուս. Եւ յորժամ բարձին գնա և տարան ի Այա Սոֆին գնա[մ]ազն վճարեալ. կանայք նորա, քոյր և մայրն և ազախն[այք] անազգեստ լեալ ընդ գլխոքն և անձնոքն գնացեալ ոչ ...ացեալ, այլ ոչք առեալ և յաց և հին բառնալով՝ նկնալ ... Ալի փաչաս տեսանել գհոգն և գգիր տեսրցն իւրեանց ... և բնակիչք տեղոյն և խառնաքպանքն առացին քէ Զազէտս և գխնչճս նոցա տեսանելով խիստ նւազեցաք և մեք ընդ նոսա անպատմելի խղճիւ, որ գմնչ զամենեսեան յոգբս և յաչէտս չարժեցին։

գարէ և զԱէյսի Ահմէտեան սիրով խազաղեցնէ և զվարի ամբոխն և զզօրն ցրուէ. քանզի քաջ ի վերայ քաջի չքոզաւ, ոչ գիզ և ոչ չէն և ոչ զաստապա չի քոզին քէ չինէան ի կեր և ըստակ չի (տես հե նոյնաբ) . . . աճէ կապնալ և կու ժոզովէ. և ասացին քէ եկեալ ի Քոքահիա ՃԻՒՌ կեր է կախեր (?), կամի ի Պուռսա գալ։ Օրս քաղաւորն մի խէքիչէրին չղնալ յոճախն էնկիչէրուն մեծամեծացն, և նոքա մարդ՝ յամենայն զուլյուխ և չաւուչաց և չօրպաճոց քէ Քեր գլուխն քէ ձեզ պիտի և ձեր տէրն և ձեր հացն, նա՛ ով ոք որ էնկիչէրի քէ ինչ և իցէ՝ ի ճանապարհին ի մարդ մօտի կամ սուբ ունենայ ի ձեռն կամ քէ կանչելով երքայ և հաչարուքիւն անէ, բռնէք գուք և ծեծէք և մեզ ի գուռ ազային բերէք։

Երեկոյին ի ժամ գնացի և անտի՝ ի տուն Մզտասուն, զհացն ի հոն կերայ և եկեալ գնացի ի տուն։

Առաւօտուս երկի (17 Ապրիլ) ի Սուրբ Նիկոդոս գնացի և անտի ի տուն. և անտի եկեալ ի խանուքի գնացի։ Եւ երեկոյին ի տուն գնալն մէկ ազազակ բարձաւ ի չարսուն, եւ գխանուքի էսպասն կրէին փոյք ընդ փոյք, եւ իմ տեզնկացեալ ասացին քէ ի Պալըքաճի օտալարն մի սճախ է բռընկեր. ի վերայ հասեալ հասին մարեցին. և գնացի ի տուն՝ գառաճ գինին պարապեցի։

Առաւօտուս Զէրի (18 Ապրիլ) ի ժամ գնացի և անտի եկեալ ի տուն, և անտի՝ ի խանուքի։ Առաւօտուս Մարտիրոս վարդապետն սիւնհոդոս առնել եւսուր Զ եկեղեցոյ իշխանացն եւ գառաստան եզեւ եւ ծագկար Մարկոսն եւ Աստուածածնայ Տէր Ղազարն սպիք արարին, և Մարկոսն ասաց քէ Ես ի հետ էի որ Մուշնեցին հրամայեց մեզ, ես եւ իւր Յովսէփն, որ էր ժամատաց կաթոզիկոսին Փիլիպպոսի եւ ի ժամատեակիս ընդ նորա էր, գնացաք ընդ կախարդն և խոս-

տացաք գրամ և առաք Թէն գուռուշ և նա գնաց քէ Առնեմ. և մի երկու օր եկաց և գայն տեսաք՝ որ եկաւ եւ խոչեմանա անկնալ էր քէ Ջեմ առնէր, Ի գուռուշ կու տաք՝ նա՛ կ'առնեմ. և մենք տալու եղանք Լէն գուռուշ եւ չտրաւ գործն եւ Ճաց։ Եւ տեսաք գկախարգութիւնն, որ ունէր մի քաղաքի ի չափ Բ քգի ափի և ի մէջն լճարդ և ճիկար և մի սապոն, և ի լճարդն գարկած էր հազար և մի անծակ տանձ, և նա կարգայր վան Եղիազար վարդապետին՝ քէ մինչ ի ես արն մնաւանի։ Եւ ի հետ էաք որ գրել տվին գհնգէքն քէ երբեմն տանկիկ լեալ է և այժմ եկեալ մեզ վարդապետ եղեալ է։ Զայսոսիկ վկայեցին առաջի իշխանացն Զ եկեզեցոյ և աքոռակալացն, որ այսպիսի չարութիւն է գործեալ այս Մուշնեցի Եովանէս վարդապետն վան նախանձու առ Եղիազար վարդապետն։ Եւ առեալ տրակ ոզջունի առ Եակոբ կաթողիկոսն եւ ծանուցուի առնել գրանքս և գործս տորա, և յառաջն ուղարկել Աստուածատուր վարդապետին որ նա ևս գնաքէ և վկայութիւն տայ քանիցս։ Եւ երկոքին որ Ուրբաք լուսանայր՝ մի Զոզացի քէ Ագուլցի, ոչ գիտեմ, կու ապանչի ի ձեռաց մի հայոյ հացատախի. քանզի այս Արևելեան Հայքն որ ի տեղս չցվան, քաղաքս եւ գոլոր Հոռոմաց տանն (Ընդէ)։

Երկոքին որ Շաբաթ լուսանայր (19 Ապրէլ) Սուրբ Նիկողոսու Տէր Գեորգեան Գուլպուլճի վազճանեցաւ. և առաւօտուս գնացի ի ժամ և գՔաղէս[1]) վարդապետն տարան որ ածեց գվազճանեալն, քանզի Եղիազար վարդապետն ոչ է եկեալ։ Եւ ես ի Մզտեսանցն գնացի և գհացն ի հան կերայ և անտի եկեալ ի խանուքի գնացի եւ երկոքին գնացի ի Սուրբ Նիկողոս եւ կացաք

1) Քաղէոս.

անգ. յետ ժամուն հետ միաբանիցն կերայ գհացն եւ եկեալ գնացի ի տուն, և նստաք ի հօրքուրանց տունն։ Օրս ի գէմ առաւօտուն եկեալ Յարութիւնն մեր եւ Յոհաննէս Դանիէլն՝ առաջի Տաւուտին քերեալ զտանիկն գայն ի խանս մեր, յորում հուռէքքն ունէր, զոր տվեալ էին Մուշնեցին և իւրքն, և պատմեաց քէ Մարդիկ եկեալ տգքա և տվին ինձ եօն զուռուշ քէ Այս ինչ առնուն անապլուխ մի կայ ի մեզ և երբեմն տանիկ լեալ է և այժմս անապլուխ է. ահա՛ հիւռէքքն և տուա արէ. և ես ասի՝ Թո՛զ լինի։ Եւ ես եկեալ ի միտս իմ և մտատանջ եղեալ իմ, քանզի լըւեալ էի զհամբաւ նորա, քանզի այր իմաստուն է և հաւատարիմ. ես հարցանէի բազում անգամ ծանօք եղեալ Հայերու և նոքա ասէին քէ Այդ խօսք սուտ է, պարո՛ն, չլինի քէ այդ բան առնես, քանզի մի անհաւատ անապլուխ կայ ի մեր մէջն, զայդ անուանգ կու հանէ՝ քէ զնա փախուցանէ և ինքն չելանէ ի քաղաքէս։ Եւ նոքա ինձ եօն զուռուշ ասացին, քէ տանկցնես՝ ա՛ռ գեօն զուռուշն, քէ փախցընես (փոշ ըը խփրսաք) և ես զմեծ բանս գայս առնէի և նա չտանկանայր և զնա այրէին կամ սպանանէին և ես լինէի արեան տէր, զի քէ մի հանեմ քեզ պրծուցեմ, նա՛ գայն չկարեմ բժշկել եւ ի տեղն գնել, զիա՛րդ երքայի և զնորա արիւնն ի վերայ իմ առնէի։ Այսպիսի ասելով տանկին առաջի Ղալաքացոց և այլ յայս կողմէս և յեկեղեցեացս ամանցս, և հանեալ զհիւռէքքն տվաւ տոցա քէ Գնացէ՛ք, մարդի՛ք, և ես անպարտ գտայց ի գործոյդ։

Կիրակի (20 Ապրիլ) առաւօտուս գնացաք ի մեր ժամն եւ Պապին տգայ մի կնքեցաք. եւ արժակմանն լուաք՝ քէ ի յԱստուածածնին պզմուկ է եղեալ, քանզի զքուշքն ուզարկել են ի Սուրբ Գէորգ՝ քէ մահրեն որ ուզարկեն ի յԱստուածատուր վարդապետն. նա՛ նոքա չեն մահրեր և բերօզն տվեր քէ Ջմահրեցին. և նա եր

ի քեմն Տանուցանել ժողովրդեան Քէ Այսպէս բան ա-
րարեալ են մէկ քանի ոգի, եւ այս ո՞րպէս քրիստո-
նէութիւն է կամ ի՞նչպէս հաւատ է. ապա դուք ի՞նչ
է ձեր նկեր յինկեղեցիս. և ժողովուրդն միաձայնեալ քէ
Մ՚վ է. և նա Տանուցեալ քէ Մին ի տեղս չար կարա-
պետ եղբեցն է և մինն Քէրոլին է, որ են և կախարդք,
որ պարտ չէ այժմ պատարագ մատչել, որ այսպի-
սի մոլորութիւնն կայ։ Եւ նոյնժամային ժողովուրդքն
յարձակմամբ դիմեն ի վերայ պիղծ Քէրոլուն եւ այն-
չափ գանեն, մինչև անշնչանայ. և զչար կարապետն
ըմբռնեալ՝ քէ գաննեք, յառաջագոյն խոյս տայ եւ
մտնէ ի պահարանն եւ գոցէ զդուռն, եւ ժողովուրդն
չատ պահեալ զճանապարհն նորա, ոչ երեկ արտաքս,
և նոքա ցրուեցան մի մի. ժամն և պատարագն խա-
փանեցաւ։ Եւ յայն ժամու բարկութեամբ լցեալ Մար-
տիրոս վարդապետն եւ նստեալ ի նաւ՝ անցեալ յայն
կողմն երթալով ի Պուռսա առ Աստուածատուր վարդա-
պետն. մինչ Աստուած յառաջացուցէ։

Եւ սրա ի յԻսկիւտարն Քադէոս[1]) վարդապետն քէս-
քէբոնէն մեր վարդապետին Դ երէց աւրհնեաց, մէկն՝
յԻսկիւտարու Տէր Յովաննէսի որդին, մէկն՝ յԱստուա-
ծածնայ (դպրոց), մէկ՝ Սուրբ Նիկողոսու Ղայսէրցի,
և մէկն՝ մեր Յարութիւնն սապատոզ, որ մի քէմէուկ
նուռ Տէրտէրիս քէ Որչափ ժողովուրդ լինի Զիմառցի,
նա՛ որքան լինիմ հետ Տէր Մարտիրոսին մինչև ի մահ.
վասն այնորիկ սէրուքիւն արաւ Տէրտէրս և աւրհնել
սաւաք և նժաք գանուն Տէր Պետրոս։ Եւ զի բազում
ժողովուրդ կայր Զիմառցի էսիլին եւ Մէսիլին, վասն
չարութեան նոցա սմիաեանքեան զըզուեցան եւ եկեալ
գայս նորընծայս ուզեցին մինչեւ և արանց առաքի ե-
զիազար վարդապետին։ Եւ առաւօտուս գնացի ի տուն

1) Քաքէոս.

եւ կերթաք գհացն ի հօրքուրանցն, և պահ մի ննջեալ՝ գնացէք ի Մզտեսանցն և անտի ի ժամ. և յետ ժամուն պահ մի նստեալ հետ միաբանիցն մեր և ելեալ եկաք ի տուն եւ գհացն կերթաք ի հօրքուրանցն։

Օրերքս վօյնիկներն եկեալ էին և այսօր տեսաք գի ձի մեզբէմոմ բերին հարկս քաղաւորին։

Բ՚չի (24 Ապրիլ) առաւօտուս գնացի ի ժամ և անտի ի տուն և անտի ի խանուք, և ի հանապարհին գէմ եւ չաւ ինձ Շամլի Հասան ազան, և օրս տեսի գնա, քանզի ընդ առաջ նորա երթայինն կարգ կարգ սպահիք, յետ և յառաջ, յալ և յահեկ սպասաւորքն և յետոյս կոչմանէ Ը և Թ ձիաւորք. այսպիսի չրջէր ի մէջ քաղաքիս փառօք։ Եւ օրս բազում ոզայի պարաքա կարմիր և ֆէս պատըռտեցին ի զուլլուխներն և չազչուրի և գաւուխի խօսեցան բազմաց. և ոչ քէ զուլլուխիցն էր բանս, այլ եւ Բ և Գ ոգի մի եզեալ էնկիլէրոցն՝ ով ի գէմ ելանէր, նա՛ գաուրն ցուցանէին քէ Զլազչուրն կու տար՝ նա՛ բարի, քէ չէ՝ կու գարնանք գքեզ։ եւ գայլս մերկացուցանէին։ Որպէս ելեալ են ի գէմ մեր Քէրգի Ալգմանին եւ Աստուածածնայ եկեղեցպանն և ըմբռնեալ են գինովք Գ քէ Հանեցէ՛ք գլազչուրքն ձեր եւ սոքա ասացեալ են քէ վասն ի՞ր է. ասացեալ են քէ նստեմ է. և գաուրն մերձեցուցեալ են ի սիրտս նոցա քէ չը տաք՝ նա՛ կու գարնեմ. եւ սոքա ասացեալ են քէ Մա հին է եւ ձեզ անո՞ւն է որ գայս առնէք. ահա Լ—ական եւ Ի—ական ըստակ տանք ձեզ[1]) և գայս մի՛ առնէք. ոչ յըւեալ այլ ընկոշեցուցեալ[2]) գնոսա, և իւրեանք քաշելով գլազչուրս նոցա՝ առեալ գնացեալ։ Եւ ի պարտզի տակն գմին հայի վերարկուն հանեալ ի յանձնէն ծեծելով և գանելով։ Եւ այսպիսի խմէին եւ ելանէին ի հանա—

1) քեզ. 2) ընկոշեցուցեալ.

պարհ սրով՝ հանեալ ի պատենիցն եւ ի ձեռս առեալ մերկ գնային։

Երեկոյիս գնացի ի Սուրբ Նիկողոս, եւ յետ ժամուն նստեալ անդ եւ տեսաք՝ զի Յարութիւնն եւ Հանի Ղուբան եւ այլք ի մերայնոցն ի յԱստուածածնայ եկեալ եւ բերին խապար թէ Այն Թէրզին Դրիզոր մի չաուշ է ուղարկեալ պուլրուքիւով թէ Ո՞ւր է այն անապչուխն ձեր, զոր ի ժամանակիս տանկացեալ է եւ այժմ անապչուխ է եղեալ ձեզ. ահա հրաման վէզիրին, որ առաւօտուն այն անապչխին հետ ի ախուանն մեծ կանգնելոց եմք, քանզի առաւոտն ուշ էր։ Եւ մեր լըւեալ գայս տրամիցաք ոչ սակաւ. եւ յետ քազուա՛մ բանից ուղարկեցաք ի յեկեղեցին մարդ թէ Այսպիսի բան ելաւ, հասի՛ք յառաւօտուս յԱստուածածին։ Եւ եղեալ ի ժամուն՝ գագաթեալ ի խոսից գնացաք ի տունս մեր։ Օրս Մուղնեցին քուչք է ուղարկեր թէ Մարկոսն որ գայոսիկ յայտնեաց, նա եւս գպատիժն կրելոց է։ Եւ գայս լըւեալ Մարկոսին յուզի անկեալ գնաց ի Գուռաս առ Աստուածատուր վարպապետն թէ տայ հրաման, զի ասասցէ զեղեալ գործն Մուղնեցոյն. գայոսիկ ասաց եւայ կա՛ եւս (?)։

Եւ ի գիշերիս յորում հասեն մատ էր խոսելոյ՝ ծնաւ մայրն իմ զԿուսմիտաս, յետ կէս մասի՝ աւելի կամ պակաս՝ հասեն խոսեցաւ առաջին։

Եւ առաւօտուս Գշի (22 Ապրիլ) գնացաք ի Սուրբ Աստուածածնին եւ պատարագ մատչէր. եւ յետ արձակմանն ժողովեցան ժողովուրդքն եւ եկեալ եղբայրք Թէրզուն, եւ հանս գամբոխն, երկուցեալ եւ խոսեցեալ հետ մի քանի մարդոյ, եւ նոքա խրատ տալով նորա, եւս Տէրտէրն իմ եւ Յարութիւն Ջէլէպին քէ Գնա՛ բեր, լինի քէ առնեն քաղաքութիւն։ Եւ առացին յայնժամ Երուսաղէմացիք քէ Օրժամ փոխեաւ յետ գանելոյն եւ ծեծվելոյն, եկեալ ի պազչան

մեր քաղեաւ՝ քէ ժողովուրդն ցրուի. եւ յետ պահու
մի նչեալ ի պաղչատէն եւ գնայր գլխիրաց, քանզի
կորուսեալ էր զփակիզն. և քոռեալ էր ի մէջ բազմա-
բոխին, և մեր տեսեալ զնա՝ ձայնեցաք բռնութեամբ,
զխաքրն եւ զբարկութիւնն չիշուցաք. ապա ի գիչե-
րին յայսմ ի հետ չար կարապետ երիցուն է նստեալ
մինչ ի կէս գիչեր, վասն այսորիկ պայս չարութիւնս
արար։ Եւ յետ պահու միոյ մի եպիսկոպոս բերին, զի
էր ի Սըսոյ եկեալ յէրէկ, եւ զսա բերին զի պատաս-
տան առնիցէ։ Եւ յայսմ պահու եկեալ քէրգին Գրի-
գոր եւ նստեալ անդ եւ ասացեալ քէ վասն է՞ր զիս
ձեձել ամին կիրակի օր, որ ես գնացի Եղիազար վար-
դապետին Մեզա՞յ ասի, եւ ամի գհուաճէքն, վասն է՞ր
եչեալ Մարտիրոս վարդապետն ծանուցում արաւ՝ քէ
այսպէս այնպէս, և զիս այսպէս արարին։ Եւ մերա-
կինքս պատասխանի ամեալ քէ Ուրբաթ օրս որ ժո-
ղովեցանք ի տեղս և պատասան եղև և Զ եկեղեցոյ
իշխանքն զայն ասացին քէ Զայս բանքս գրեմք և ան
կաթողիկոսն ուղարկեմք ծանուցանել զգործս սորա.
եւ Դ եկեղեցին մօհրեցին եւ ուղարկեցանք ի Սուրբ
Գէորգ զի մօհրեսցին, եւ եկեալ գնացողն եւ երեք
գրուքն Մարտիրոս վարդապետին քէ Զմօհրեցին ի
ժամանակ ժամուն. և նա չցնալ բարկութեամբ եչ քէ
Ճանուցանեմ. և չիչեալ գչար կարապետն՝ մինն գայ
է, և գու եչեալ ես՝ ի՞նչ կ'ուզէք ի նորանէ, և նա
փախել է և զքեզ առել են ի ձեռ, քանզի չիգուաս
քո անկեալ ես ի փորձութիւն։ Եւ նա ասացեալ քէ
Քո՛ղ գայ Աստուածատուր վարդապետն և պատասան
առնել տամ վասն իւր աչախերտին քէ Զիս ձեձել և-
տուր. և մեր ասացեալ քէ Բարի։ Եւ յետոյ գնացին
նստան ամենեքեան ի մեծ ատան և նստաւ Հաչատուր
պարոնտէրն եւ նստան քահանայք եւ աթոռակալք եւ
իշխանք գաս գաս եւ մեր կանգնեալ առաջի եւ որ

գնեմ. եւ քեզին գէտ կարապետան նկնալ, և հարց և փորձ արարեալ իշխանացն եւ եպիսկոպոսին. եւ սա մնրմ երգամբ և մնրմ ինքեան առնէր և չէք ի մեզս լինէք։ Եւ սկսեալ եպիսկոպոսին քէ Ժողովո՛ւրդք և քահանա՛յք, գայս մարգս ի՞նչպէս գիտէք։ Եւ սմանեանքեան վկայեցին, ոմքն քէ Զար է, ոմքն քէ Բանասարկու է, ոմքն քէ Սա երգեմքն խաչ գողացաւ եւ ոմքն քէ Ոգի հնա կոխվեցաւ։ Եւ եպիսկոպոսն ասացնալ. Ջոր գուք ասէք՝ ճշմարիտ է, և ես ինքնին վկայեմ գմա, գի բազում անգամ նկնալ ի քաղաքս եւ գգորա անառակութիւնն եւ գչարութիւնն լըւնալ եմ եւ տեսանալ։ Եւ հնարց աշխարհականաց այնմ եղելոցն, և նագա գնոյն ասացին քէ Ծորժամ երէց-ներն խարհուրդ կ՛առնէին և մուչավէրէ, սա էր գլուխն վասն նգիտպար վարդապետին քէ Փախուցինք. եւ ի մէջ այսմ բանիս է ինքն, քանզի հանապազ տեսանէաք գսա ընդ Սուրբ Սարգսոյ խորհրդ կոչեցեալ չարին հնա, գի ընդ նմա երթալով և գալով խոտակցէին. երբեմն սա ի նորա գուռն և երբեմն գնա ի սորա գուռն։ Եւս եւ գմի երէց գարիպ եւ ասար վասն ժողովի նկնալ քէ Մի քաղախ բռնեմ ի գուռս նկնելոցն հրամանաւ և նամակաւ նգիտպար վարդապետին, գնա բազում գանիւք ծեծեր է քէ Դու գայն քուրքի անունն կուտաս, եւ նա լալով նկնալ գանկատեցաւ մնչ. եւ եպիսկոպոսն ունկն դնէր բանիցս։ Եւ ուրև յորժամ այս՝ և բերել տուր գաւազէրէց նկնելոցն, և նա ասաց քէ Սորա բարի չեմ կարեր առնել. եւ բերել տուր գերիցուանն մի մի, եւ նագա վկայեցին քէ Զար է, եւս և քէ Աջահամբուր կուգոչանայ։ Եւ եպիսկոպոսն գատ արարեալ և գփիլոնն խնգրեալ, և բերաւ գփիլոնն։ Եւ ասաց եպիսկոպոսն. Ջայս կարգս քեզ ո՞վ երեւ. ասաց քէ Եպիսկոպոսն. և նա ասաց քէ կարգն մի է. ահա՛ ասի գքո փիլոնն

և գկարգն քո և գու կամաւ հրաժարեցար յերիցու-
քենէ՝ մինչև Աստուածատուր վարդապետն գայ և գա-
տաստան առնէ. և նա ասաց՝ Այո՛յ։ Եւ եպիսկոպոսն
ասացեալ քէ Գնա՛ և Բ մարդ աշխարհական և Բ քա-
հանայ, մինչեւ գայ մեծ վարդապետն, չարուքիւն
չառնելուդ եւ չփախչելուդ մեզ երաշխաւոր ոտ՛ւր
որ մխամոանանք մեք։ Եւ նա գնացեալ յայս կոյս
յայն կոյս ի քար և ի քուփ դիպչելով ոչ գտաւ երաշ-
խաւոր և ոչ մի. և ի ժամուս որ ոչ գտավաւ իւրն քէ-
ֆիլ, որք կային ամբոխին՝ ոչ ձեաց մարդ քէ չը քաւ-
յերեան եւ նախատինք եւ արհամարհանք քէ Դու որ
այգմ պատուոյ ես հաւասար, որ ահագին յհկնչցիս
քեզ քէֆիլ չը գտար, և գու վասն յայսմ գործոց ես
եղեալ եւ չարուքեան յեռուէ չուրջ կու գաս, ա՛յ
նզովեալ, ա՛յ պիղծ, ա՛յ չար, ասէլով, ՝ՔՔէ ոչ էր
տեղ գատաստանի, նա՛ գչարն գայն ի տեղն կու տա-
տակեցուցանէին։ Եւ եկեալ ի մի բերան ամենեքեան
քէ Վասն է՞ր արգիլէք. ահա՛ գատաստան այս է որ
եղև. քէ Աստուածատուր վարդապետն գայ, նա՛ գայս
գատաստանս առնէ, կամ քէ նա վասն է՞ր առնէ մի
պռոնիկ երիցու. այժմ արժան է գա ի կնոջ հանել
և գմեզան մեք առնեմք գորա՝ ՝ՔՔէ չէ արժան։ Եւ
եպիսկոպոսն ասացեալ քէ Որովհետև այսչափ ժողո-
վուրդ որ չարուքեանն վկայեցին և ոչ գտաւ մի մարդ
որ բարուքեան վկայէին, կամ մի երաշխաւոր՝ արժան
է բառնալ ի կնոջ։ Եւ Ճարուքիւնն և Հաճի Ղուբան
ձայնեցին գՏէր Ճակոբն քէ Սորա հիւճէքն կայ ի քո
քովը, որ թոզի վերայ է բռնվեր, գայն գնա բե՛ր. և
նա յանգէտս եղեալ քէ Ջգիտեմ. և ամենեքեան նո-
րա վերայ հաւաքեցան քէ Գնգ գան և ճէրիմէ առ-
նել կու տամք քէ չտաս։ Նոյնպէս և եպիսկոպոսն ա-
ստացեալ, քէ չբերես՝ նա՛ գքեզ ի նորա կարգն գնել
կու տամք։ Եւ նա ճար ոչ գտեալ՝ գնաց քէ Բերեմ.

եւ ամբոխն սկսաւ քէ ի սորայ հետ մնծագոյն չար կայ, որպէս այն չար եւ ի քնէ սատանայ Էսիլլի քոռն, գնա այլ բնրէք քէզ եւ շուտով, որ գոյն արագուք եւ գպատիմն սացուք։ Եւ Տէրտէրն իմ եւ Ծարուքիւնն գայն մատցուցին ասելով քէ Ջնորա պատիմն սեանակ ևմք եւ սեանանկոց ևմք յետ աւուրցս ինչ։ Եւ նոյն ժամայն ևլ գազատ արտաքս չարն կարապետ եւ խոյհուրդ արարեալ ընդ Ծովանէս երիցուն մնծի քէ Դուս երաչխաւորեա՛ որ տամ ձեռագիր սոցա քէ Այլ չառնեմ գգործս, եւ բարեխաւսեա՛ առաջակաց իշխանացն. եւ ևկեալ նա եւ ասացեալ Ա Բ հազոյ, ևլին ի գուրս. եւ գրեալ էր քէ Ես այս ինչ՝ այլ այսպիսի գործոյ մէջն չխառնիմ, ինչ որ ասինք հետ Էսիլլի տղին եւ ճիւճէնաէմին, այլ նոցա հետ չը խօսիմ, եւ քէ խօսիմ կամ խառնիմ, հախէս ևկէք։ Եւ գայս սեանակ ամբոխին՝ ծիս ծիս արարեալ գիուղքն եւ ի յերեսն ձգեալ քէ Մեզ ձեռագիր չպիտի։ Եւ ի պահուս ևկն Տէր Ծակօքն գոռալով եւ ազազակելով քէ Ջը գոայ, մարդի՛ք, չգիտեմ քէ ո՛ւր է գրել[1]) հիւճէքին. եւ նոքա հաւատացին. եւ ասացեալ ամբոխն՝ Ո՛ւ, չի պիտի, մնք առանց հիւճէքի կու տանիմք գգա եւ գրել կու տամք քէ Մեզ պարսի ձ գուռուշ եւ գնեմք ի բանտ, մինչև գայ Աստուածատուր վարդապետն։ Եւ մի կողմն ամբոխին գայն ասացողն նախատեցին քէ վասն ի՞ր պահեմք, այլ տանիմք վկայիւք քէ Ջար է եւ չարագուխ, ի մնր մէջն չնենք գապուռ աներ. գրել տանք ի քին կամ քչնք ի հետս։ Եւ սմանք ասացին քէ Մինչև ի կնոնաց չի բարձուի, այլ չարեացն խրատս չի լինիր։ Եւ քմահնեալ գսա տանել, եւ ժողովուրդն երքայր գկնի եւ ընդ առաջ, եւ տարան մինչև ի գարագլուխն Ծիլատրայիին, եւ ինքն ասէր քէ Տամ ձեռա-

1) գր.

գիր. և Շահամիրն և Երկան Տէր Յովհաննէսն քէֆիլ ե-
ղեալ հագիւ պրծուցին ի ձեռաց եւ տարան գձեռա-
գիրն առին։

Եւ ես անտի եղեալ գնացի ի խանուք և երեկոյին
գնացի ի ժամ Սուրբ Նիկողոս և գհացն հետ միաբա-
նիցն կերայ, և եղեալ գնացի ի տուն։ Երեկոյին ի Քոչէ
հալածին Վլանկոյ գմի հայ ասմիչ արաբին գինովք։

Դշի (23 Ապրիլ) առաւօտուս ի մեր ժամն գնացի,
եւ յետոյ կանչեց զիս Գրիգորն մեր Շէբպէքճի և պահ
մի նստեալ անգ, յետոյ կանչեց գՏէրտէրն իմ և գվար-
պետն իմ Տէր Յովհաննէսն և գՏէր Մարկոսն և աւրհ-
նեցին զտունն, և նստեալ անգ ոչ ասկաս. և յետոյ ե-
ղեալ գնացի ի տուն, պահ մի ննջեցի և եղեալ գնացի
ի խանուք։ Եւ տեսի զի Յօճա Դանիէլն և Յօճա Դա-
վիթն և այլ մեծամեծք գործ յայտնի է ի գիրս, գայլին
ի Թահտախանէն, և իմ տեղեկացեալ վասն իրին, և
ասացին Քէ Ջոտանիկն գայն յոմէ հուճէքի տուրաքն
ի քոյն էր՝ բերաք ի Յօճա Աւտոմի քոյն վանցոյ, որ
էր այր իմաստուն և խորհրդական, ևս ծանօքուքիւն
ունի եղեալ ընդ տանկին. և յառաւօտէն նստին անգ
մինչև կէս օրս, հագիւ Քէ գհիւճէքին և գՔէքվան ա-
ռեալ են ի ձեռաց նորա այսքան ընծայիւ և այսքան
ազաչանօք և պաղատանօք։ Եւ նա ասացեալ Քէ Ահա՛
գայս իմ ձեռացս առիք, ապա բայց այն Յովհաննէս
աւագլխին հետն է այս հիւճէքիցս մայրն, որեմն որ
երթայ՝ նա՛ որչափ ուզէ կու հանէ և յանչէ յա-
կանչ կու ձգէ Տանկաց. Քէ մի ճար ունէք եւ հնար՝
տեսէք յառաջմանէ, քանի որ չէ չատացեր բանն։ Եւ
գրգռեալ տեսի Քուզք մի ի ձեռս Յօճա Դանիէլին և
խնդրուածով առի ի ձեռաց նորա և կարդացի, եւ էր
գլուխ գրին այս. Արդար Ոհան վարդապետ քաչեց
գիս ի քննհան Յովհաննէս վարդապետին առջեւ եւ ինձ
ասին Քէ մէկ խոսք մի ունիմք քեզ ասելու, և եր-

գուժ ամէն ինձ քէ մի՛ ասեր մարդու. եւ ասին քէ Եղիազար վարդապետն տանկցեր է ԺԸ տարի ի շաւլադ. ահա՛ քեզի հիւանէքի մի, տա՛ր գայս հիւանդիքի տուրքին, տա եւ գնա՛ գայս Տանկներուն իմացուր, որ չայլա տանկըցնեա[1]). քէ գայս քանս որ առնես, նա՛ տանք քեզ ճ գուռուշ, և տօնլուխ չուխա, և տանչուխա գուռմաչ, և փաչա տարըզի, և ա՛ս քեզ օգնական Աչտաֆու Քէլբցին և ճիւհէնատճի. և նա ի խզճմտանք նկայ, գայս քանս չարին։ Նա Մահմատ չուռուշա գայս քանս գրել ամէն ի հայ գիր որ մարդ տանիկ չիմանայ. իսկի այս գիրս տուտ քան չկայ։ Զայս քուզքս գտան և քերին, ցոյց ամէն ամենեցուն և նա ինքնին կարգացի։

Երկի (24 Ապրիլ) առաւօտուս գնացի ի մեր ժամն և անտի եկեալ ի տուն և անտի ի խանուքն։ Եւ յետինքն կանչեալ էր նա գնա նստեալ կայաք ի խանուքն, եկն քաղաւորն եւ էանց քէպռիլ կերպարանաւ ի վերայ ձիոյ նստեալ Գ Դ մարդով և գկնի մի քարընկեց հետի խազնատար անաւ (դոլոդ) ազան եւ մի անչափ հետի՝ պատառնեհպաշին և խառատպաշին հետ իրաց և այլ գկնի մի ձի հէպիկէով՝ կերթակուր էր կարծեմ, որ եկեալ ի պալատէն, ծոմով գնացեալ ի էյուազ սուլքանն, եւ ուխտ արարեալ և անտի եկեալ ձիով անցեալ ընդ էսկի սարայովն և երքայ ընդ մէջ Եազանճոցն և եկանէ ընդ գռնով Սապռնճոցն և պուռսէ ընդ Տարափխանի ազգէն և գայ մտանէ ի չարսուն՝ Գէզէսէնի ազգովն, եւ ի Քէհատճիներէն գայ մտանէ ի Տուզպէնատցն մէջն՝ ի Քահատխանի ազգէն, եւ եկեալ ընդ առաջի մեր անցաւ եւ հայէր մի մի. եւ յորժամ մեք հայէաք՝ ինքն գերեան ի մի կողմն գարձուցանէր. այսպիսի ներքնագործ էր և իմաստուն, բայց ոչ կա-

1) տանկներնես.

քէր ի գուբս հանել պղծոյն եւ քան մի առնել։ Այս առաջին գուբս եկանէլն էր քահանային։ Աստուած կարողութիւն տայ եւ իմաստութիւն որ այսուհետեւ քանայ գալն. մեզ եւ ամենեցուն չահ եւ օգուտ է։ Եւ որք իմացան և ծանեան քէ նա էր՝ բազում աւրհնութիւն տվին, բայց ոչ եզև որ մի չար կամ հաչարի գինով ի գէմ եկեր էր յազգմանէ չարին։

Երեկոյին ի Սուրբ Նիկողոս գնացի և անտի հետ Մղտեսան ի տուն գնացաք և նստաք մինչեւ երեկոյացաւ, եւ անտի ի տուն գնացի։

Աւրս զգափուտանն փոխեցին եւ նոքին զՔէնան փաչան, որ ի տեզ Միսաուչին գնացեալ։

Ուրբաթ (25 Ապրէլ) առաւօտուս գնացի ի մեր ժամն եւ անտի ի տուն, եւ անտի ի խանութ։ Առաւօտուս ըսկսաւ անձրեւն եւ մինչեւ իրիկունս կու գայր։ Երեկոյին գնացի ի Սուրբ Նիկողոս եւ գհացն հետ միաբանիցն կերայ, եւ անտի եկեալ գնացի ի տուն։ Ետերեկոյէս մինչեւ ի լուս Շաբաթիս գայր անձրեւն եւ առաւօտուս բացաւ։ Երեկոյին Տէրտէրս գնաց ի Նչանօրհնէք եղիայի Զօփճոյ աղջկանն։

Եւ առաւօտուս Շաբաթ (26 Ապրէլ) գնացի ի մեր ժամն եւ զՔահապային բռնեցի, եւ անտի եկեալ ի տուն եւ գնացի ի Մղտեսանցն եւ անտի ի խանութ։

Եւ յայսմ ժամու եկն Մարտիրոս վարդապետն ի Պուրսայէ եւ գնաց ի քով Եզիազար վարդապետին ողջունել գնա, եւ անտի եկեալ եկն ի խանն մեր եւ գրեաց գնր Զ եկեղեցոյն եւ ըսկա Աստուծն վանցոյ Քէ Առեալ ի վաճառականացն գայլես ի Սուրբ Նիկողոս վանն լսելոյ զպատուէր սուրբ հօրն մերոյ Աստուածատուր վարդապետին, որպէս եւ ուզարկեաց եզբօր կաթողիկոսին Քէ Առցես մէկ քանի խօսք հասկացող և գաս. և յՈւսկիւտարէ եւս, և պէ Քուչքին չնչինս գրեաց. և եկեալ գնաց ի յԱստուածածնին։ Եւ

ելեկոյին ի Սուրբ Նիկողոս գնացի եւ անտի ի Մզոնանցն եւ անտի ի տուն. եկեալ էր Սամուէլն եւ հարքսուրն Ոզիտայիւն։

Առաւօտուս կիրակի (27 Ապրիլ) ի մեր ժամն գնացաք եւ կնքեցին զտղան մեր՝ Կումիտաս անուանեալ, եւ զեղբարքիր տղան՝ Յարութիւն անուանեալ։ Եւ յետ արձակմանն տեսաք որ էսիյլի քոռ կոչեցեալն մարդ ժողովէր, եւ նոյնքն էին որ նման էին իւր՝ քրյիքըլ եւ Գարմախուզն, Գուռնաքն եւ զվարդանն առեալ եւ ի Սուրբ Նիկողոս գնացեալ։ Եւ ես եկեալ գնացի ի Մզոնանցն եւ անտի եկեալ գնացաք ի Սուրբ Նիկողոս. եւ տեսաք զի գնա եւս եկեալ նստեալ էին ի յեկեղեցին Քաղէոս[1]) վարդապետն առաջնորդ Սուրբ Կարապետի եւ Ղայսերցի Եպիսկոպոսն, Մարտիրոս վարդապետն Երուսաղէմացի եւ Ղազար վարդապետն Ըռուսաղէմացի, եւ նստեալ էին քահանայքն ընդ նոսա եւ Զ եկեղեցւոյ իշխանք եւ աթոռակալք եւ երեսփոխանք, եւ յիւսկիւտարու քահանայքն եւ ժողովուրդք. եւ ասացին քէ Այլ մարդ կա՞յ գայոյ, եւ Չէ՛ ասացին. եւ կանգնեալ էին յառաջ եւ յետոյ, յաջմէ եւ յահեկէ ի հեռաստանէ, լցեալ զեկեղեցին ժողովրդով, տեսանել քէ գի՛նչ լիցի։ Բանապրնցին զէսիյլն եւ զքրյիքըլն եւ զՂաթքըր խոզոգին։

Բյի (28 Ապրիլ) առաւօտուս գնացաք ի ժամ եւ անտի ի տուն եւ կերաք գհաց ընդ եկեղոցն եւ եկեալ գնացին եւ ես գնացի ի խանուքի։ Ի գէպ յետնուցս մի ձայն եկաւ քէ Չուկան փակեցին, եւ իմացեալ մեր զոան որոյ է, ասացին՝ Ճէնկիչէրին եւ սպահին մի եկեալ եւ գնացեալ ի յԱքմէչետն եւ մարդ ուղարկեալ առ քաղաւորն քէ Հրաման տո՛ւր որ ի վերայ Սէյտի Ահմէտին սէֆէր երթանք, քանզի յայն կողմն կին մեր

1) Թաքէոս։

եւ որդիք մեր չէ մեր, այլ նոցա է. մեք գայս առնունս չեմք առաքեր. եւ քաղաւորն ոչինչ մի խէ- քիչէրիք քէ Գնացէ՛ք։ Եւ երկուշաբթի երեկոյին ի փուռն գնացի, քանզի հապ արարին և Լիներ ըստակ անկաւ ի փայ գլուխն։

Առաւօտուս Գշի (29 Ապրիլ) տէլլալն կանչեց քէ Ո՛վ որ ծառայ է քաղաւորին եւ գհացն կ՛ուտէ, հա- գարբէն մինչեւ ի մէկն, մէկէն մինչև ի հազարն՝ քա՛զ պատրաստուքիւն տեսնէ որ երթայ ի սէֆէր. քէ ի կիրլիտ քայլին անեն՝ նա՛ այն ծովու պատրաստուքիւն քոզ տեսնէ։ Այս եղև ձեռամբ և խորհրդով զօրպա- ներուն, որ առաւօտուս Հասան ազան ասացնակ գայ- մախամին քէ Գնա՛ գասանճախն հանել տուր, քէ չէ ի գլուխդ բան կայ գալու. վասն այնորիկ գտէլլալն կան- չեցուցին։ Եւ յետ ճաշոյին խորհուրդ արարեալ ի միւս կողմն եղեալ մեծամեծքն և գնացեալ առ քաղաւորն եւ բան եղեալ քաղաւորին խրատ տալով եւ քաղա- ւորն զծառայսն եւ զուլամայսն առ ինքն կոչեցեալ եւ ի ներսն ի մօտ քաղաւորին գխորհուրդն արարին, եւ յետոյ երեալ մուֆտին եւ ասացեալ յերկու կողմն քէ Օրինացն հնազա՞նդ էք եւ քաղաւորին արար- մանցն ընդունո՞ղ էք. եւ նոքա ասեն քէ Այո՛. եւ ի ներսէն քաղաւորին սպասաւորք ասեն քէ Մկէ՛ք ի ներս. եւ գնացեալ ի ծառայիցն մի գունդ եւ նոյն ժամայն Զ ոգի սպանեալ և ի գուրս ընկեցեալ ի տես արանցն, որ էին զօրպայքն՝ Շահլի Հասան ազան եւ Մէհէմէտ ազան, Տազլար տէլլիսին (պ-ծ-պ)։ Եւ սմիններքեան ցրուեցան եւ ի գոլ չուրջ եկան՝ վէզիրն եւ ազան եւ սբերդօյիքն եւ եղին քեհեայպէկ գՖէչէճիօղլին. եւ նա բազում խրատ տալով քաղաւորին, և քաղաւորն մի խէքիչէրիք ուղարկեալ ի յօճախ յէնկիչէրացն, քէ գլուխն ձեր ձեզ պիտի եւ գիմ աւրհնուքիւնս կամիք, որպէս հնազանդ էք եղեալ հարց իմոց քա-

պատրաստեն, նոյնպէս եւ մեզ եղերուք եւ մի՛ ընդունիք պանէնքն իմ. այսուհետեւ քէ չար կայ ի ձեր մէջն՝ հանեցէ՛ք, եւ ով հաշտութիւն անէ՝ ապաննցէ՛ք. եւ այլ այսպիսի բանս։ Եւ ազային ասացնաչ քէ Դուս հանապատ չուրջ ի՛կ եւ գհաշտիքն որանէ՛։ Եւ ով որ կայր սիրելի զօրապաներուն մնծամնծք եւ բարեկամ նոցա, միմեանց ի—յից կամ է—յից՝ գնոսա ի գիշերին սպաննցին. եւ տէլլալն կանչեց երեկոյին քէ Ապահի եւ էնկիչէրի սմիննէքեան քա՛զ չիւրնանց տեղն նստին խոզապուխեամբ։

Մայիս սմիս որ նչի. գնացի ի ժամ եւ անոի ի տուն եւ անոի ի խանուքի։ Օրս Գէորգն փախեր էր եւ ի վարպետ ոչ գնացել, բազումս որոնեալ գտան գնա ի Լալէլու ազրիւրն։

Այսոր քաղաւորն ի չուրջ կու գայր քէպտիլ. եւ ըսկան գապտ անել գքաղաքս բոնաւորք սմիննէքեան եւ գատաւորք՝ հրամանաւ քաղաւորին եւ սըրտզլի սահմանեալ, գՅուճիկեան գանեալ. որք որ ծառայ չէին քաղաւորին եւ գծառայի կերպան գգնցեալ էին՝ գայնոսիկ գանէր եւ գպոզպատս կորսուէր, որ էր այն օրէն էնկիչէրոցն, եւս գքաղլուխն գատաւաեալ տայր ի ձեռս նոցա, եւ գփակէզս որ նման էին էնկիչէրոցն եւ կամ ապահոցն՝ գայն ծիւ ծիւ արարեալ. եւ գՀայոց գիպին մէջտեղ եւ գգուշով չազչուրն, գմնծ փակիզն եւ գգաւուխն, գգուշով վերարկուն եւ գապրշումէ գտուին միջաց, գայսոսիկ գտեալ գանէր եւ կտրատէր։

Եօթանք օրս (3 Մայի) գնացի ի ժամս մեր եւ գատարագին քուզք մի եկաւ հասաւ եւ կարգացին, եւ էր՝ Հրամանաւ ազգս Մուրթ Ալեւտարանին գերապատճան վարդապետութեան եւ բոլոր տանս Ծուռնաց եւ ամենայն Հայոց՝ Եղիազար վարդապետէս սիրով եւ աւրհ—

Նուքեամբ. Յանէք Զ եկեղեցւոյ լեալ քահանայքն եւ ժողովուրդք, որ վասն գանձանակին էջմիածնայ՝ այլ չբռնել, քանզի նոքա առեալ զտուրս և զողորմութիւնս մեր, առեալ տան կախարդաց և վհուկաց, որ և ինձ գաբան գործել կամեցան՝ հանել ի կենաց. վասն որոյ և այս հրամանաւ մեր եղև, որ և այսուհետև[1]) քո՛ղ բարձցի ի ձէնջ, և եթէ ոք ընդդիմանայցէ, նա է մեր քշնամի, քո՛ղ գայ տայ զպատասխանին բռնաւորաց, և ի քաղաւորէ կարեմք զիւրեանք ձէրիմել. և այս լինի ճուռուզմ անօրէն գնացից նոցա։ Եւ նա ոչ բռնեցի զքահանան և այլն նոյնպէս, և ոչ կարացին խոսել։ Երեկոյիս ի ժամ գնացի և անտի ի տուն Մըղռեսոնցն, և եկեալ էին անգ Մղռեսի Եազուպն և կինն, որդի և Մառուկի փոքր ազջիկն և անգ պառկեցաք, և երեկոյիս Եազուպն չեկաւ, այլ Քաղէոսն[2]) և Տէր Գեւորան խրթանց գնդացի եկին երեկոյիս։

Եւ ի գէպ յետնուցս Հինոխոսանայ էլչի եկաւ ի քաղաւորն և ի ժամուս այս գիհա անցաւ։

Կիրակի (ի Մայիս) առաւօտուս եչեալ գնացի ի Սուրբ Գէորք և զՄղռեսի Եազուպն կանչեցի, և անտի եկայ ի Սուրբ Նիկողոս, և խաչ օծեց եպիսկոպոսն Քաչատուր, որ և այսօր Երեման Քաչ ասի։ Եւ յետ ժամուն գնացի ի Վալտէխանն եւ զկաթողիկոսի ուղարկած քուղքն առի, և անտի գնացի ի տուն. և յետ հացի գիր գրեցի յղել առ Տէր Յովանէսն էջմիածնի։ Եւ Տէրտէրն եչ գնաց ի յԱստուածածնին, քանզի մեծ պիւնհոգոս կայր վասն քղքին Յովանէս Մուղնեցոյն, որ գրեր էր առ Դաւիթ երէցն Սուրբ Գէորգայ քէ Այն հիւճէքն որ տվաք ի Քէրզի Գրիգորն, նա ի՞նչպէս արաւ, և ի մէջ խոցին ահա ու կուգիտ որ արաք, գուս, Տէր Դաւիթ, գնա՛ տես ի՞նչպէս արաւ, միբստումիջէ

1) այսուհետև. 2) Քաքէոսն.

չուտով մեզ ծանուցէր։ Զայս քուզիս գտեալ Մարտիրոս վարդապետին եւ արար ժողով ի յԱստուածածնին (Ընկէյ)։ Կէս աւուրս Տէրտէր վարդապետն եկաւ ի Մուրդ Նիկողոս և մնաց գնացաք ի քով նորա, և ի ժամ մտանել, և յետ ժամուն եկաք ի տուն Մզոեանն։

Բ֊ին (5 Մայիս) առաւօտուս գնացի ի ժամն և մնայր էր Քազմարի տալ Մարգիսն Ը օր հիւանդացեալ, և գնացաք ի տուն նորա և բերաք ի ժամն, և անտի գնացի ի Մզոեանցն և անտի ի խանութ։ Այսօր քաղաքն չուրջ կու գայր քէպռիչ։ Երեկոյին գնացի ի տուն Մզոեանն և անդ պատկեցաք, և Տէրտէրն ոչ նկն, այլ ի տուն գնաց։

Գ֊ին (6 Մայիս) առաւօտուս ոչ գնացի ի ժամ և ի Մզոեանցն էաք։ Տէրտէրն եկաւ և գհացն կերաք և գնացի ի խանութ. և երեկոյին գնացի ի Մուրդ Նիկողոս և անտի ի Մզոեանցն և գնացի գմէր Գրիգորն ձայնել և պարապի տակն կանգնեալ էի՝ և վարդապետն եկեալ անցաւ, գայր ի Օրթաքօյէն, և ես տեսեալ՝ գնի նորա գնացի ի Մուրդ Նիկողոս, և անտի ի տուն Գրիգորենց և անտի ի տուն Մզոեանց և ոչ եկաւ Գրիգորն։ Երեկոյին Մարտիրոս վարդապետն քուզիս ուզարկեաց յամենայն տեղիս քէ Առաւօտուն գան ի յԱստուածածնին։

Եւ գրս օրօֆէ եկաւ ի քաղաւորէն ամենեցուն, եւ Հնդկաց հրէշտակն մտաւ առ քաղաւորն եւ ընծայից գքաղաւորն։

Գ֊ին (7 Մայիս) առաւօտուս առկաւ մի հաց կերաք և մեր Եէրպէքճի Գրիգորն անգ էր, և եկաք գնացաք ի յԱստուածածնին ի ժողովն, և տեսաք որ անգ էին ամենեքեան նստեալ ի մէջ եկեղեցոյն գաս գաս Զ եկեղեցոյ իշխանք և աքոռակալք երիցունք, եւ յԱստուածաբուս և Պէչիքտաշու, Օրթաքօյուն և Քօփզա֊

փուէն, և նստեալ էին Քաղէոս[1]) վարդապետն՝ Մուրբ Կարապետի առաջնորդն, Մարտիրոս վարդապետն Երուսաղէմացի, Յակոբոս եպիսկոպոսն Մըսըրի՝ առաջնորդ վանից, Ղազար վարդապետն Ըստամպօլու եւ միաբանք եղիազար վարդապետին եւ Երուսաղէմայ եւս (Ընդ.):

Նէյ (8 Մայ.) առաւօտուս գնացի ի մեր ժամն և անտի ի Մզտեաննցն եւ գՀացն անդ կերեալ՝ եկեալ գնացի ի խանուքս:

Եւ կէս աւուրս փոխեցին զզայմախամ Իւսուֆ փաշան և եդին ի տեղի նորա զՀայտարըզատէն. եւ էր սա խիստ ծեր և ցաւոտ, և տվին Իւսուֆ փաշին զՍիլիստրա:

Եւ օրս արուն առի ի քեւէս: Եաղուպենք ի տուն գնացին օրս: Օրս Մարկոսն եկաւ ի Գուրաչու և Մարգիս Քէրեմիանն եւս:

Ուրբաթ (9 Մայ.) առաւօտուս ի ժամ գնացի եւ անտի ի խանուքս: Եւ օրս քաղաւորն ի գուրս եկաւ քաղում փառօք և ամենայն ծառայքն ընդ առաջ նորա՝ փաչայ և ազայ և որ ի մէջ մանաւպի էին, չաւուշք և մուքաքար ազայ, սօլախ և փէյկ, ամենեքեան իւրաքանչիւր իւր զգեստովքն[2]) գաս գաս երքային ընդ առաջ եւ գնացեալ ի նամազ ի ճամին (դ-ը-դ), և եկն նոյն ամբոխիւն գնաց ի պալատն իւր, և ի պալատէն իւրմէ մինչև ի ճամին յայն՝ խանուքպանքն և տանուտէրք ի ճանապարհին աւազ էյնն, որ ձիոյ ոտքն ոչ երևաս ի յայլ տեղ՝ այլ ի վերայ աւազին:

Երեկոյին ի Մուրբ Նիկողոս գնացի եւ անտի ի տուն:

Շաբաթ օրս (10 Մայ.) գնացի ի մեր ժամն եւ

1) Քաքէոս. 2) սգեստովն.

վարպետն իմ Տէր Յովաննէս գնաց ի յիւր տեղն կանգնեցաւ. և որս Տէր Մարկոսին առնել տվին պատարագն, և երկոքին ի Սուրբ Նիկողոս գնացին։

Եւ որս պատարագեցին փոխեցին և եդին ի տեղի նորա պսակիճատաբ քահանային, որ յառաջն եկեալ էր ի ներսէն եւ առեալ էր գՄարիք, այժմ գայս եդին պատարագեմ։

Եւ առաւօտուս կիրակի (11 Մայիս) ի Սուրբ Նիկողոս գնացի. և ճաշոյիս գՎարդապետն բերին ի Ղալաթիայէ, եւ ի մեր ժամն գնացի եւ անտի գնացաք ի քով Վարդապետին, և Մարտիրոս վարդապետն եկաւ անդ. և եկեալ արք և պատասուրք էրիցուս որդոյ Սէֆէր պալուն և խնդրեալ գՎարդապետն՝ առեալ տարան ի տուն, որ յայսմ գիշերի պաշտօն արար և մատոյց մեծ հներիսայիս և քաղցեմ գառամբ և այլ կերակրովք և նատեցոյց զժողովուրդն ի տունն իւր, և տարան գՎարդապետն և մեք ի հետն գնացաք, և աւրհնեաց գիւղ անուշն և գհներիսան խնկօք և մոմիգինօք, չարականօք և աւետարանիւ՝ ըստ խորհուրդին, և նատեալ կերաք. և յետ Գ և Դ ժամու, նոր առնեցուն գպաշտամանն. Ղալաթիս և Գ եկեղեցոյս էրէց կային. և գՎարդապետն անդ քողեալ՝ նոս գնացի ի տուն գրել զգիր էջմիածնի Տէր Յովաննէսին և անտի՝ ի Սուրբ Նիկողոս, և նատեալ անդ մինչև երիկուն հետ մեր արեզակ Տէր Յոհաննէսին՝ եկեալ ի տուն գնացի։ Եւ անդ որ նատեալ էաք՝ անձրև եկաւ բազում ևս առաւօտուս այլ եկաւ։

Առաւօտուս Բշի (12 Մայիս) գնացի ի մեր ժամն և անտի ի Պալատեանցն եւ էր անդ Գրիգորն Ղալաթիս՝ այր հռոմարին, եւ անտի ի խանուքն գնացի։

Օրս զԺԲ տարին լցի եւ ի ի տարին մտայ. այլ այս չէ պարծանք քէ կամ մեծանամք, այլ սոյն լիցի՝ որ բարեխոսութեամբ Սուրբ Աստուածածնին զմիտս

եւ զսիրտս մեր փոխեմք ի բարին եւ ի նոր առաքինութենէն մտանեմք, որպէս որ զհին տարին լցաք եւ ի նորն մտաք։

Այսօր ի Սուրբ Աստուածածնին Եղիազար վարդապետն ժողով արարեալ իշխանաց և քահանայից Ջ և կեղեցւոյ (Ռեբէլ)։

Դշի (13 Մայիս) առաւօտուս ի Սուրբ Նիկողոս գնացի եւ անտի յԱստուածածնին եւ անտի խանուք եւ երեկոյին ի Սուրբ Նիկողոս գնացի և անտի Մզռնեցն։

Դշի (14 Մայիս) առաւօտուս գնացի ի յԱստուածածնին, եւ մեծ վարդապետն ի տեղն չէր եւ Մարութիրոս վարդապետն քուղք գրել երեսս Քէքիրատզոս քէ մեք քուղք ուզարկեցաք ձեզ Աւագ Եշի վանայն Մուշնեցւոյ հակառակին երուսազէմայ. զուք զայն ընդուներ էք եւ նորա պատիւ էք արեր. ահա յայտնի եղեւ ձեր երես գտանելն երուսազէմայ։ Զայն քուղքն ալ պահեց, նա զայնոսիկ մեր վարդապետական հրամանաւն որոշեալ եմք ի ձէնջ. չունին հրաման գնարգն պաշտելոյ մինչև գայցեն յուզդուքիւն. և զձեզ անգիտակից քանին աւրհնեացէ Տէր Աստուածն մեր. ամէն։ Զայս քուղքս գրեցի եւ եղեալ գնացի ի խանուք եւ երեկոյին գնացի ի փուռն եւ անդ կացի ի գիչերիս վանն վերակացուքեան քանի։

Եւ առաւօտուս (15 Մայիս) գնացեալ իմ ի ժամ, որ էր Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գնացի ի յԱստուածածնին, եւ գնացեալ իմ ի Սուրբ Նիկողոս, զեպիսկոպոսն Հաչատուր և զՂազար վարդապետն ձայնեալ. և յետ պահու մնի Եղիազար վարդապետն ի փուռն աւրհնել՝ հանգերձ միաբանիւք եւ Մարութիրոս վարդապետն և այլք յերուսազէմացոց, և զկնի քազում մեծամեծք յԴ եկեղեցւոյս ի բարեկամաց մերոց, եւ եկեալ նստան եւ աւրհնեցին զփուռն եւ նստան, և մեք քաչեցաք առաջի զհացն և զայլն ըստ

կարգի, և նոքա եղեն ուրախ ոչ սակաւ, և ի ժամն այր ի Զ-ն մաանէր՝ չարաչան ասացին և Հոգոց հանգուցչաց, եւ վարդապետան եչեալ գնաց ի Սուրբ Աստուածածին, եւ այլ ի բարեկամաց եւ չնորհաւորէ-մացոց գնացին, և մինչ նոտաք այժմ այլ ևս Դ ժամ, եւ եչաւ եպիսկոպոսն եւ Ղազարն գնացին ի տեղիս իւրեանց գՀետ արանց ոմանց, եւ գինի նոցա գնա-չուն՝ եկեալ նստան փոսն տղայքն վերակացուք գոր-ծոյն ապատաւորքն՝ մինչև ի չամիսքն, մի մի չարաչան առել Տէրտէրին ննջեցչոց նոցա. եւ յորժամ եղեւ՝ եկ և գնաց Տէրտէրն և արք ոմանք ընդ նմա, և մեր սակաւ ևս կացեալ անդ՝ եչաք եւ եկաք ընդ Մղտե-սանն և ընդ Մալղօչին՝ փեսայքն հարքուրին իմոյ՝ ի Սուրբ Նիկողոս, եւ անդ գժամն արարեալ եւ եչաք ի տուն գնացաք։ Օրս մեր Մղտեսուն խանչայ են բերեր ի Ղալաթիս սանահօրէն իւրեանց՝ քէ տղայ է եղեր Սէմէրնա տգի կիրակոսին։ Օրս Եապան ամիս կոչեր չոտ բառի Տաճկաց։

Ուրբաթ (16 Մայիս) առաւօտուս Վարդապետն ի Ղալաթիայ գնաց. և Շաբաթ (17 Մայիս) առաւօտուս եկաւ ի Սուրբ Նիկողոս։ Ի գէպ չնոնուցս եկաւ գա-փուտանն։ Եւ երկոչիս ի ժամ գնացի ի Սուրբ Նիկո-ղոս եւ եզիազար վարդապետան գաս ասաց գրան ի-մաաանոյն Մղտմանի, եւ չետ գասին[1]) ծանոյց ժողո-վրդեանն գվազչանիլ Թաստգէս վարդապետին եւ ա-ղաչիս առել աւաւ, և եկ ի գասէն և Ամբիծք ասին և արձակեցաք. և չետ ժամուն գնացի ի Մղտանցն և անտի ի տուն։

Շաբաթի օրիս (17 Մայիս) ընդ գափուտանին եկն եւ Մաւսուաֆայ[2]) փաչան՝ գարձեալ ի Գազազէն, գի գնացեալ էր ի Միսիր և ոչ կարացեալ անցանել գԳո-

1) գաս. 2) Մաւսուաճայ.

գաղն, քանզի Ճառանգ բազում նկնալ են անդ նաւով։

Եւ առաւօտուս կիրակի Մեծահրաշի (18 Մ–ին–) գնացաք ի Սուրբ Նիկողոս եւ յետ ժամուն գնացի ի մեր ժամն եւ անտի ի Մզտանցն եւ Մզտախին ի Ղալաքայ գնաց գոանն կնքել եւ նկաւ Գ՝ժամուս, եւ եբկոյիս գնացաք ի Սուրբ Նիկողոս և գաս ասաց Վարգապետն և ի մէջ գասին անիծեաց և նզովեաց զորդի Գիւէզիկնէի Ծարուքիւնին որ օրս գնացեալ ի Ղալաքայ և ի ձեռաց Ճառանկացն հազորդ է առեալ։ Եւ յետ ժամին գԱմբիծքն ասին, և յետ արձակմանն գնացաք ընդ Մզտեսուն ի տուն նորա և անտի գնացի ես ի տուն։

Բչի (19 Մ–ին–) առաւաւտուս գնացի ի ժամ և անտի ի խանուքի։ Եւ յերէկ և այսօր ի ներսն մուչավէրէ կայր խորհրդեամբ չէնկիչէրոցն, քանզի լսեալ էք Սէյտի Ահմատ փաշան եւ Հասան ազայ Իփչիրլին եւ այլ մեծամեծք չըսպահոցն ամենեքեան գնացեալ մատ ի վէզիրն, և ասքա երկուցեալ յայսմ բանէ՝ գուցէ նոքա մեզ գան՝) տայցին, վասն այսորիկ մուչավէրէ առին և կամին գի գմօհրն պարժուացնեն ատա. և կարծեմ թէ չը կարեն առնել զգործս։ Եւ երեկոյիս գնացի մատ ի Վարգապետն եւ գայսոսիկ լսեալ ոչ գնաց ի ժամ վասն տրամուքեանն, քանզի ոչ եղև մի խաղաղութիւն որ տեսանէին զգործս Երուսաղէմայ։

Գչի (20 Մ–ին–) առաւաւտուս գնացի ի ժամ և անտի ի խանուքի։ Եւ լսաք՝ թէ ի գնտանն որչափ մարդ արգիլեալ էին չարտգործք և գողք, գոմանս տարեալ ի քին տեալ, եւ զգափուտանի բերած հայուս ազապկն ևս՝ զնոքա ի քին տեալ։ Եւ յետ կէս աւուրս քաղաւորն քէպորլ կերթայ եւ նկնալ ի գահչափուսին եւ գնացեալ տակաւին մի յառաջ ընդ ծովս եզերովն եւ գմի մարդու չէնիքն գրկել վասն

1) գուն։

քուքուն, որ մուխ կու խմէին, այս է՝ ի բերանն առնել և ի դուրս տալ, զայս տեսանել քազաւորին՝ էկաւ մէջ քէ խմէին։ Եւ ի յԱքմէչտանն ևս նոյնպէս գմիուն գլուխ հատեալ։

Եւ երեկոյին Վարդապետն ի յՕրքաքոյն գնաց եւ ես գնացի ի ժամ և ընդ Մղտեսուն գնացաք ի տուն, և անտի իմ եկեալ ի տուն գնացի։

Դշխ օր (21 Մ–ին)։ Երեկոյին ի Սուրբ Նիկողոս գնացի եւ տեսի գլխ Յակոբտուր եկեալ էր՝ աչակերտ Ուրհայեցի Ովանէս վարդապետին։

Երկ օր (22 Մ–ին) գնացի ի ժամ։ Օրս զայմախաճն հինա էլլուն պատիւ արաւ ի պազչա Հասան Ղալֆային։

Երեկոյին Նոխուտճի Տէր Անդրէասին տգան Մելքխէթ էրէցն գկին իւր Տեծելով պատաչէր և կանչէր ի վերայ նորա, և սահմանակից և գրացիք նորա ժամանակ անգ, և գնացելոցն զամանս հայհոյակ և զամանս անարգեալ. քանգի զայս առնէր հանապազ որ գինովանայր՝ ամենեցուն, որպէս անցեալ տարին ի յեկեղեցին մեր հայհոյեաց գՆիկողոս վարդապետն, հատաս եւ արէնք բազումս անարգեալ. եւ զայս տեսանակ ժողովրդոցն նորա՝ եկին ի ժողովրդենէ և եղեն ալլուս։ Եւս այսոր եզև այս և չունէր երես քէ գայր յեկեղեցին։

Եւ առաւաուս Ուրբաթ (23 Մ–ին)։ Երեկոյին ի Պարմազափուն և այլ Ա Բ անուանի տեղիան գոզք կախեցին, որ ի վազուց գործէին գլխարիս, և բազումք են եղեալ ընկերօք, որ և անցեալ Դշխս զամանս ի քին տանակ, և այժմ յայտնեցաւ չարութիւն տղայ, որ Զ տարոյ կորուսանակ ըզգակ գտաւ ի քով տղայ, որ բնակալ էին բնտամք ի մօտ տուպաչուն։

Շաբաթ (24 Մ–ին) առաւաուս ի ժամ։ Եւ քազում քօփեր նետեցին վասն գնալոյ քազաւորին ի Գէհատխանան ի սէյխը։

Եւ ի ժամուս եղիազար վարդապետն ի Ղալաթիա եկաւ և անտի երթևոյիս ի Աստուածածնին։ Եւ երթևոյիս ի Սուրբ Նիկողոս գնացի և քարոզ ասաց Քաչատուր վարդապետն ըստ խորհրդի աւուրն, և ի մէջ քարոզին յիշատակեաց զեղեալ չարիսն վասն եղիազարին, որ արարին ոմանք, և վասն գայթակղութեանն աչխարհիս, որ արդ ոմանք գնացեալ Ճուանկաց հաւանեալ։

Կիրակի օր (25 Մայիս) Պենատկոստ եւ Գալուստ Հոգւոյն Սրբոյ։ Ի Սուրբ Նիկողոս գնացի, և յետ անդաստանին ի Սուրբ Աստուածածնին գնացի, և Մարմրուս վարդապետն քարոզ ասաց և գոս քաչից ընծաուանկան և կհաւանողսն նորին։ Եւ Տէրտէրն իմ կարգաց զՔուղբ եղիազար վարդապետին որ ավետալ էր վասն Քաչատուր եպիսկոպոսին՝ վասն ողորմութեան, և յետ այնորիկ ծանոյց քէ Ահա՝ նորընծայ երէց կու գայնէ, երթաք զԱստուածն համբուրէք եւ զընծայն տաք։ Եւ յետ քանիցս ըսկսան ասել զՈղորմեան, և եղիազար վարդապետն ի խուցն էր և պատարագին եկաւ։ Եւ ես գնացի ի մեր ժամն առնել զաջահամբուրքն, և կրկին ժամանեալ ի Սուրբ Աստուածածնին և զՍուրբ Աստուած պատարագին առէին և պատարագողն Տէր Յհանն որդի Տէր Գրիգորն էր։ Եւ յետ արձակմանն նոյն զգեստով[1]) պատարագին, գպրովք եւ երիցովք, չարականաւ առեալ տարաք ընդ Մարմրուս վարդապետին ի տուն. և ասաց ի մէջ արանցն եկելոց զՊահպանիչն և գնաց ի ժամ, և մեք տարաք եա չարականաւ ի ներս ի մէջ կանանցն, և եկեալ համբուրեցին զԱստուածամայրն եւ նստան զաջահամբուրն, նոյնպէս և ի մէջ արանցն և նոքա եւս զընծայն, և նստան ամենեքեան։ Եւ ես գնացի ի քով Վարդա-

1) սպիտակով։

պետին ի ժամ, և գնաց զատուր վարդապետն այլ քա-
րին անդ ի մառ Եզիսպար վարդապետն և գհացն կե-
րաք։ Եւ անտի իմ եկեալ գնացի ի տուն Մղախատն
և անտի ի տուն։ Եւ երեկոյին գնացի ի ժամ Սուրբ
Նիկողոս, և եկեալ ի ժամուն ի տուն գնացի։

Որս գԱյլի ազան ապանեցին՝ գքահնա (?), որ
էր և նա խորհրդակից հնա զօրապետին։

Ի յն (26 Մայի) առաւօտուս գնացաք ի խանուքն։
Եւ մառ յետնուցս ձայնեաց քահանուրն գյէնկիչէր ա-
պատին և հատեալ գգլուխն ձգեաց ի գուրս ի Տէմիր-
գափուն վասն Գ պատճառի. նախ գի Շաբաթ օր որ
գնաց ի Քէհատխանան եւ անդ Գ մարդ գտեալ՝ երբ-
կուքն տանիկ եւ մին գաստապ, եւ ի գաստապէն կաքա
խնդրէին նոքա, եւ նա գնացեալ քէ Տատ, եւ քա-
պատուրն ի վերայ գայ եւ տեսանէ գտրան եւ մի քար-
քինկէց յառաջ տեսանէ գումն ապանեալ և ի մէջ արեան
քաւալեալ, և ըմբռնէ գտրան քէ Դուք արարեալ էք
գրանս, և գերկուսեան տայ ի քին և գմինն որ էր էն-
կիչէրի՝ ուղարկէ ի գուռն ագայինն։ Եւ այսոր գայս և-
հարց քապատուրն ցըտգան քէ Զայն մարդն ի՞նչ ա-
րարիր, և նա ասացեալ քէ Տվի յատագային, չգի-
տեմ քէ գի՞նչ արաւ նորա. և քապատուրն ի բարկու-
քինն եկեալ քէ Զարնան տէրն ես, քեզ ուղարկեմ և
դու գայն արձակե՞ս. քէզ այժմ գայն գի՛տ ինձ։ Եւ
նա եղ արտաքս եւ չատ տրտնչելով այսր և անդր ի մէջ
քաղաքին եւ ի գուրսն՝ ոչ գտին մինչև ի ժամս, եւ
մտեալ առտին քապատուրին քէ Ոչ գտի. վասն այնո-
րիկ նա ապառնանալ քապատուրն գնաս։ Եւ գտրձեալ ա-
սացին քէ Ծորժամ ապահին եւ էնկիչէրին ի մի վայր
եկեալ խնդրեցին զանասէքն եւ գմեծամեծքն, յայն-
ժամ եւ սա խորհրդակից եղեալ նոցա, ուղարկելով
ասցա մարդ քէ Ուղեցէ՛ք գմարդիքն գայն և ձեր բա-
նին հասատատ կացէ՛ք։ Եւ գտրձեալ ասացին քէ Ի ժա-

մանակին յայն գոր գամենեսեան մանգուլ արարին եւ քագաւորն ասեալ գէնկիչէր ազատութիւնն ումեմն քան գայս բարձրագունի եւ նա ոչ առեալ յանձն, եւ սա վազեալ եւ երկիրպագեալ քագաւորին թէ Ինձ տո՛ւր, եւ քագաւորն ասեալ նորա՝ ոչ արժի եւ օրհնութեամբ, այլ անիծիւք։ Վասն այս բանիցս սպանին գսա օրս՝ գայն պատճառելով, բայց լաւ մարդ էր եւ ոչ մի հայ ոչ գանեաց յասուրս իւր։ Եւ օրս գմուխքասիպ միականին այլ սպանեալ, որ առեր էր գմանասուսն իւր հրամանաւ գօրպայիցն եւ ինքն էր փոքր գօրպա։ Երեկոյիս գնացի ի Սուրբ Նիկողոս եւ անտի ի Մգտեսանցն եւ անտի ի տուն։ Եւ յառաջ քան գսպանել ազային գչուխատարն հանեալ քագաւորն վասն ազայութեան եւ նա հեծեալ ի ձի եւ գնացեալ ի գուռն։

Դշի (27 Մայիս) առաւօտուս գնացեալ իմ ի ժամ եւ անտի ի խանութ։ Օրս գմիականի սուպային սպանեալ քագաւորն. եւ նա էր ևս գօրպա, որ ի անգամ էառ գտուպայութիւնն ի տարին։ Օրս Մարտիրոս վարդապետն գնաց ի Սուլուամանատար։

Դշի օր (28 Մայիս) Յակատուր եպիսկոպոսն ի մեր ժամն եկաւ։ Երեկոյիս Յակատուր վարդապետն քարոզ ասաց. ի տեղն էին։

Եշի օր (29 Մայիս) գնացեալ իմ ի խանութ եւ ըմբռնեալ խարտեաշն գիս՝ գնացեալ առի գքուզքն, յիւրեանց քվականին ՌԿԵ-ն էր, եւ գնացի ի խանութ։ Եւ երեկոյիս գնացի ի Սուրբ Նիկողոս, եւ յետ ժամուն որ քարոզ ասաց Յակատուր վարդապետն՝ գնացաք հետ Տէրտէրին ի գուռ Աւետիք անուն գաւուխճուն որ եկեալ էր ի Պուրսայու եւ բերեալ էր գքսուրն Հիւսէինին մեր, եւ առաք եւ բերաք ի տուն, եւ ի ճաշատարկին անձրեւ մեծ եւ աստիճ էառ կայծակամբ ահագին եւ որոտմամբ, որ մոտաք հազիւ ի տուն Մըզտեսան եւ անդ եղաք գայն, եւ պահ մի կացեալ անդ

մինչև կարկացաւ անձրևն, և ապա գնացաք ի տուն։ Օրս եղիտագաբ վարդապետն ի Ղալաթիա գնաց։

Ուրբաթ օր (30 Մայիս)։

Շաբաթ օր (31 Մայիս) գնացի ի ժամ. երեկոյին ի Սուրբ Նիկոդոս գնացի եւ քարոզ ասաց Հայլատուր վարդապետն, և անտի գնացի հետ Մգռեանն ի տուն, եւ նստայ ի տուն գնացի։

Կիրակի օր Յունիս ամիս. ի ժամն մեր գնացի եւ գՏէր Գևարտան Ջհմատցին ի չլաչէն հանեցին եւ պատարագ արաւ, և Տէր Յակոբն ձայնեաց գինս և բռնութեամբ հագոյց չոպիկս՝ առանց գպրութեան։ Նոյեմբերն ի վեր չի արարի գպրութիւն և այսօր հագայ չոպիկ եւ արարի գգպրութիւն։ Եւ յետ պատարագին տարաք գնորընծայն ի տուն եւ նստաք անդ գհացն ուտել, և յետ հացին եկաք անտի և ամենեքեան գնացին իւրաքանչիւր տեղիսն։ Եւ ի ժամուս յայսմ եկան ախտաւորք երուսաղէմայ եւ բերին խաչաբ քէ յոյժ խաչապաշտեամբ են եղեալ Հոռոմքն առ մեզ և գլոյնն եղբայր պէս է առեալ վասն երկնչելոյն։ Եւ յետ գայլ լանչոյն գնացի առ Մատուկն մեր և գնացաք ընդ Սարգիսին եւ ընդ Ղուամրան ի ծովեզր Ղումգափուին եւ նստաք ի նաւ, չուրջ եկաք ի վերայ ծովուն մինչ ի նաւսղզափուն և անդ եղեալ ապահովացաք, և գարձեալ մտայ ի նաւ եկաք ի տունս մեր։

Բշի (2 Յունի)։ վարդապետն եղիտագաբ ի յԱստուածածնին եկաւ։ Երեկոյին ի Մգռանցն գնացի։

Գշի օրս (3 Յունի) եկն Հաւսէփնն մեր առ ապայինն իւր, որ գնացեալ էին ի տուն Անտոնին ի Գուբաս՝ գապատ աննչ գգանձ նորա. ոչ մի ըստակ չէր գտեալ, այլ ըզգակ և տան կապաք և կահք, գի ըստակն նա յառաջմանէ ի Յունաց ուղարկեալ՝ ի ժամանակէ ի-

չէրին մինչև ցայժմ. ևս ի ժամանակիս յայսմ գնացեալ նա քնակեցաւ ի Յուռնկստան։

Դշխի օրս (4 Յունիս) նազու եղև ուծնանամային։

Եւ երկրս (5 Յունիս) գՓլանտրան կախեցին. և էին փոյթ ի գնալ։

Եւ օրս խորհուրդ արարեալ քաղաքացւոցս եւ ուղարկեցին քուղք առ նևիրակն էջմիածնայ, որ եկեալ էր ի Պուրսա վասն ի տեղս գալոյ եւ նևիրակելոյ, եւ տեղացւոցս գայս քուղք ուղարկեալ առ նա, որ ունէր արքնակ գայս. ի կռատանգնուպօլսոյ Զ եկեղեցւոյ էշխանաց, աքոռակալից, եկեղեցպանաց և այլ հասարակ քահանայից, ժողովրդեան մեծամեծաց եւ փոքունց եւ այլ եկք եւ բնիկք Հոռմոցս ամենայն. ուշ լիցի քեզ Արեւելցի Մարտիրոս եւ Մովսէս վարդապետդ եւ նևիրակդ, պարոնտէրդ եւ փիլիսոփայդ, որ լու եղև փափաքելի և սիրալի գալուստ քո առ անարդ և մոլի, չիմար և տմարդի Տունս Ծուենոց։ Եհայելով ի քեզ գրեամք, վասն Աստուծոյ ի բաց լե՛ր. խուսկդ եւ մոմդ քեզ, եւ գայլն ի կարգին։ Զի եքէ ի Քոխաք եւ ի կեսարիայ եւ յԱնկուրիայ հոգւով սրբոց և բանիս Տեառն չերթէիր, լի աբաբիր որ մինչև յըոբընկունաս։ Ապա որ նաւք և խոխս, ծծումբ և վուշ ծոցեալ ես, ո՞ւր ընքանաս, առ ո՞վ ճեմիս, զորո՞ց քեզըին լնուս, կամ զո՞ր պատուէրացս զհակակայն ներգոծես. զո՞յ կամ զտանկի՞ն յեկեղեցիս անկիւնաւէմ, կամ ցըցապինգ սեղան, կամ սրբատաչ կամար, կամ պընդախարիսխ սիւն, կամ պատմած հիմ մինչև ի անՅև և ի բարեւսրն[1]) որ ի ձէնջ ոչ խախտեցան, և չարժին եւ խըխայքին եւ խորովատիրա մորմոքին. զի քէ յաչս մեր եւ Քրիստոսիս մեր ժպրհեցէք, յանգգնեցայք, խիզախեցէք, անամօքացայք՝ հնարելով, որա-

1) բարեվարն.

յով, պժգնելով, զնդիպաբ վարդապետս մեր տանկացնակ է քաջագնելով։ Իրաւ՛անք մեր. զիր առաքեալ եմք և ապաւեմք, և քէ ոչ՝ զնի ապահարգման, ապա հարցման։ Բայց գուռ, զսան Քրիստոսի ազաչեմք, հնախ յի՛ր, ի քաց ի՛րքի, զի մի՛ յիսկնն քան զառաջինն չար յիցի. զի յոգնացաք և անկարօտ եմք։ Բաւանցի ներմատածութեան քո։ Ցառնիս ամաոյ ի Դ գրնցաւ։

Ուրբաթ օր (6 Յունե) վարդապետն ի Ղալաթա գնաց։

Եւ Շաբաթիս օր (7 Յունե) գնացաք ի սէյիր առնանեին եւ նկն զատրզա զափուտանին Քէնան փաշան առուտրով եւ գուրնայով, եւ ինքն կանգնեալ ի խնկս նաւին և քարև տայր առ մնզ և անց, և որչափ նաւ կայր զնի նորա՝ ամենեքեան քաշեցան ձիւ կառ, եւ գնացեալ նհաս ի դէմ պալատի քաղաւորին եւ արքինեցան[1]) նաւքն եւ ինքն եմուտ մօտ ի քաղաւորն հանգերձ չորգանովքն եւ ի ժամ անգ արգնեալ եւ ապա նչ ի քաղաւորէն եւ նստաւ ի նաւն եւ սկսան ամենեքեան զքօփքն արձակել ի նչան երքեալն. եւ գնացին ի Գէչիքտաշն, եւ կէս աւուրս նչեալ գնացին անտի։

Օրս Մգտեմ Մարգիան Երուսաղէմացի և Եագուպ քէրեմեանն գնացին ի Գաւրսայ և քուզք գրնց Վարդապետ առ Կիրակոս վարդապետն քէ ի հասանել քզքիս ի քեզ՝ փոյք ընդ փոյք գաս. նոյնպէս և առ Իգնատիոս վարդապետն ի Կաֆա և առ Մարգիս վարդապետն ի յԱրգրում քէ փոյք ընդ փոյք ի հասանել քզքիս ի ձեզ՝ նկնալ հասէք առ մնզ։ Եւ զի չուս նզև քէ Մուզնեցի Յովհաննէս նչեալ եւ գայ առ Աստուածատուր վարդապետն իբր քէ հնազանդելով նմա,

1) արքինեցաւ։

վասն զի յամենայն քաղաքս քուրմք առաքեցան յաքոռակալացս և ի վարդապետացս վասն ոչ ընդունելոյ զնա, եւ այժմ գայ ասեն։

Կիրակի օրս (8 ճ—ին—) գնացաք ի մեր ժամն եւ անտի ի Մղտեսոնցն և զմղտեսի քահանայն ի տեղն բերաք, վասն զի զկինն եւ զորդիսն բերեալ էր ի տեղս ի սահմանաց և ի բնակութենէ իւրեանց, որ կոչի Ակիձոր, և վասն նեղութեան և հարկապահանջութեան տեղեացն, և ևս ի ժամանակիս եղեալ վիշտն՝ ի մէյոմ Ահմէտէն եղեալ անբաւ։ Վասն այսորիկ բազումք եկեալ ի տանց եւ ի բնակութեանց, քողեալ զայգի եւ զարտ, զհնձան եւ զկալ եւ զայլ ամենայն վայելչութիւն պարտէզից եւ բուրաստանից, զեզնից եւ զոչխարից, և եկեալ բնակեցան աստ ի քաղաքս որ կոչիւր Կոստանդնուպոլիս։ Եւ զհացն անգ կերեալ եկն մեր Մինասն և առեալ տարաւ զմեզ ընդ ինքեանս ի սէյիր, որ էր Հաճի Աբտուլլան, Մղտեսի Պազոան, եւ այլ ի մերոցոց մեր եկեղեցւոյն Զ և ոչի գնացեալ նստաք ի Ղուզղունճուխն և երեկոյիս եկաք ի տուն։

Բշի (9 ճ—ին—) առաւօտուս նստեալ ընդ նոսա ի Մղտեսոնցն և ապա եկեալ գնացի ի խանութ։ Եւ յետ կէս աւուրս եկն Սէյոմ Ահմէտ փաչան ասկաս արամբք՝ վաստահացեալ յերգմունս քաղաւորին քէ ե՛կ և նա ոչինչ առնեմ, և մտեալ ի քաղաւորն, ել գնաց ի տուն իւր։ Եւ երեկոյիս գնացեալ ի տուն եւ նստաք անգ և եկեալ պատկեցաք և հաւն խօսեցաւ։ Աւուրքս սքրայ զօրին խիստ կուռ նեղացնէր զամենեսեան, որ ուՆէին ասկաս ինչ նորագոյն հանգերձ, և ոչ միոյն գՀայս այլ և գՅաճիկս։

Ի գիշերիս և առաւօտիս Գշի (10 ճ—ին—) անձրև եկաւ։ Եւ օրս եկեալ գնացին քահանայքն ի տունս իւրեանց և երեկոյիս մեք անգ կացաք։ Եւ օրս գալին ի յՈւսկիւտարու արք և զօրք Սէյոմ Ահմէտին։

Ի Դէկ օրս (11 Ց—ին) գային յամենայն կողմանց ձիով և ջորով և բազում գանձիւ, գաչխարհս և գերկիրս կոզոպտեալ և գգնդօրայքս հրգնեալ փլուցին, որ և որք գնդոցն և բնակչացն հալածէին՝ ի տեղ տալլ ի տեղ փախելով և բազումք ի քաղաքս եկեալ բնակեցան։

Եւ Ըէկ օրս (12 Ց—ին) կրկին գային նոյնպէս գանձիւ և բազում քոփ կայր ընդ նոսա, որ ընդ իւրեանս բարձեալ ունէր, և գնացին այս զօրքն և բնակեցան ի Կէնկիզպազէն, և ինքն գնաց ի գաբպաս Մալէհ փաշային, որ ի կողմանս Մահմուտ փաշային։ Օրս անձրև եկաւ չատ։ Եւ օրս տօմս արարին Տանկուէնքն վասն առնանեմային։

Եւ օրս Ճիհէլլէմ Նէրտիւէնին ի վերայ Եզիպտոս վարդապետին ի Ղալաթիա պատառնեզ ոմն բերեալ քէ Հրամանաս պատառնեզուպաշուն գայս մարդս պիտիր որ յիւր տեղն գնես և ի վերայ ճէմաաթին տիրութիւնն առնէ որպէս առաջն։ Եւ վարդապետն ասացեալ քէ Այս քաղաքս մեծաւոր անագլուխ չունի և ես ևս ոչ եմ, այլ պանդուխտ եկեալ եմ ատտատիս իրաց ինչ, և բան մեր լինի՝ երթամք գճանապարհս մեր. այլ այդմ իրաց կու իշխեն քաղաքիս ճէմաաթն։ Եւ ի հարցանել[1]) ընդ իշխանս որ անդ կային քէ Դուք ի՞նչ կ'ասէք, և նոքա ասացեալ քէ Զար մարդ է ի մէջ մեր, և այսպէս արարեալ եմք գնոս։ Եւ նա ի գաւառս եղեալ և ասացեալ իշխանացն քէ Դուք գիւրքն հայ կու պահէք և գայս էրէցս այսպէս արարեալ էք. քանզի և նորա հանգացուցեալ են գրանն։ Եւ վարդապետքն քուղք գրեալ յեկեղեցիսն քէ եկէ՛ք։

Եւ առաւօտուս Ուրբաթ (13 Ց—ին) պիտիր գնա—

1) հարցել։

յին և ճիրհէլլէմին պատիժ տային ի քոնաւորացն, այլ ՚ի կնէալ օրս իշխանացն յհկէզեցեաց, և ոչ արարին։ Եւ ՚ի մարտիրոս վարդապետն գնաց ի Գուբսա վասն այս քանիցս և վասն Մուշնեցուն, որ ասացին՝ Քէ ի Գուբսա յէրս (?) մի գնալ։ Եւ յետ կէս աւուրս մին չաւուշ մի արգուհալ բերեալ՝ Քէ Զայս մինն բերաւ և ի մեզ տուաւ։ Եւ կարդալ ամին՝ Քէ ի մեր մէջն Ա անագլուխ կայ և ի մանկուքինէ տանկացեալ է, լսան զայս ո՚մանք և գնացին այնչափ գրամ խարճեցին և զայս մոռցուցին. ահա զայս վէպիրին իմացուցէ՛ք, և այլ ինչ այսպիսիք. արարեալ զայս չար կարապետին։ Օրս պոռնիկ Մզոեսի Բարզաճն բերին ի մօտակայ ճանապարհէն, որ անգ մնացեալ էր՝ կնալ յերուսազէմ, և քազեցին։ Երեկոյիս Տանիկքն զկանքեզ մինաարիցն վառեցին, որ սահմանեալ են ի սկզբանէ ի նչան զպահս խաբեանց պահելոյ։

Առաւօտուս Շաբաթ (14 Յունի) Սէյտի Ահմէտն եկ գնաց ի Միլիտորա, տանալ քազաւորին զայն պատուքիւն։

Կիրակի օրս (15 Յունի) պապան մեր հիւանդ էր և անգ գնացի և եկի ի Մզոեսոնցն և գեղացի Տէր Գեորգոն, և եկ գնաց զճանապարհս իւր։ Երեկոյիս Գալաքոս Մարքոսն եկաւ ի Մզոեսոնցն։ Եւ օրս զծառան առաւ Մզոեսին։ Բարեկենդան Մարզ Լուսաւորչի։ Եւ օրս գՎէհրէտն հանեալ ի տէզկեահէն և եդին զԳրիգորն տէզկեահատար։

Գչի (17 Յունի) երեկոյիս Մարտիրոս վարդապետն եկաւ ի Գուբսայու և Մուշնեցին անգ ոչ է գնացեալ, այլ ի Կէլիպօլի եկեալ, և Գուբսացիք և քազաքացիքս քուղք յղեալ անգ և յամինայն սահմանս ծովվերզրի քէ Լիզի՛ք հեռի ի յայնմանէ։ Եւ Մովսէս վարդապետն վարեալ յեկեզեցոյն Գուբսայու, քանզի առաջն ուղարկեալ քզքոյն ոչ է հաւատացեալ, մինչեւ

Մարտիրոս վարդապետն գնացեալ անդ եւ հպճւ. կ'եւ-
լանէ յինկղնցոյն։

Որս խաղաղ եկաւ ի տանամատչէն քէ Գի եւ ևճ յէնկիչէրի փախեալ եղեն ի տանամատչէն, եւ ոչ գի-
տեմք ո՛ւր[1]) գնացին։

Ել առաւօտուս Դշի (18 Յունէ) քաղաւորն ձայ-
նեալ զպարմախաճի եւ գայլ մնծամնծս իւր եւ խոր-
հուրդ արարեալ եւ Գ յէնկիչէրի յազնականաքիւն նո-
ցա ուղարկեալ, և գայն կտրեալ յէնկիչէրոցն գասէմէն
ոմեալ այն տանամատչի մէջ եղեալ պանդխտացն հան-
դերձ պարգեւօք։

Ընկսյիս Քապէտա[2]) վարդապետն ի մեր ժամն
եկաւ։

Ել օրս (19 Յունէ) ըսկսան սէֆէրլուքն պատ-
րաստել որպէս զի գնացին և պատերազմին ընդ Ջե-
ւանգա, զի բանս առացին անյարմար և անզէգ. բայց
այգուցս (20 Յունէ) գիսկն և գատոյգն լուաք՝ քէ գնա-
լոց են ի Գոզապն, և Ջուանգն ի գուբան է եղեալ, ի մի
տեղ հանգեալ որ ասի Խսկի Ըստամպօլ, եւ երբ եռես
գՏահիկեան ոյ եկին ի Գոզապն, ինքն անտի եղեալ գնաց
այլ ի վար, եւ Տահիկքն գայն տեսեալ՝ գնացեալ իւ-
րեանքն, հանգեալ ի տեղն յորում Ջուանգքն հանգեալ
էին յառաջին։ Ել Ջուանգն արձակեալ մի գնդապետ
հանգերձ նաւուվք երկուսի, և եկեալ առ սուս խոսե-
ցեալ բանս, եւ խոսքն յերկարեալ նախատելով զմի-
մեանս։ Ել մինչ ի ժամս պարզեզ քամի էր, որ Տա-
հիկքն յայն կոյս գնացին եւ ի տեղն հանգեան, եւ
յայսմ ժամ որում խոսեցան ընդ միմեանս, եւ Տա-
հիկքն ոչ համբերեալ՝ մի քանի արձակեալ նոցա, եւ
նոքա այլ սոցա։ Ել ի ժամուս յայս եկանէ մի հզօր
անգուսա, որ ասի չաուս, եւ Ջուանգքն պատրաստ

1) ար. 2) Քաբէտա.

խազալով ի վերայ ծովուն՝ եկեալ ի վերայ Ցաճկին, այնպէս սրտրեալ զսոցա երամքն որպէս զանապատ, զոմանս այրեալ և հրդեհեալ և զոմանս ի ծովն ջրասոյզ սրտրեալ և գնաւան ի միջի յերկուս կտրեալ եւ զայլսն առ ինքն տարեալ՝ մինչև ի նաւից կամ կ–ից ոչխամբ հանգերձ պատերազմի զգեստուքն[1]) եւ անքիւ արծաքիւն(*), զկարասիս սոցա և զկահս նաւից և զանհամար արս սոցա հանգերձ մեծամեծօք եւ չոքպաճուճ եւ յենկիչէրօք։ Եւ զգերիս սոցա, որք էին քրիստոնեայք յազգէն Ռուզաց ի նաւի անդ կապանօք երկաթի զօրհանատպատ զոմինսն աւուրս կենաց իւրեանց, նոցա չուխայս զգեցուցեալ եւ հանգերձս մեծագոյնս, եւ զսոցա յենկիչէրին և զայլ մեծամեծան որ գնացեալ եղեն ասախ, զսոքա ի տեղս Ղռուզաց որք կային նոքա գերիք և երկաթի կապանօք ի ձեռս սոցա չաբչարանօք զատն Քրիստոսի Կ ամաց և Զ ամաց եւ որք ճ ամաց սպիտակ ալեօք՝ յորմէ հետէ ըմբռնեալ էին եւ ըմբռնեն, զայնս նոցա ածիլեն։ Եւ յայսմ ամի Մահզծօզն մեր հանգոյց զնոսա ասախ չարչարանաց եւ անդ առնելոց են զպատկն կենաց ի Քրիստոսէ Աստուծոյն մերմէ։ Եւ զայս բանքս լըսեալ քաղաւորին՝ ի լաց էր եւ յաղաչակ եւ առ հասարակ ազգ սոցա ի սուգ էր եւ ի տառապանս։

Շաբաթ օր (21 Յունի) սոյն Լուսաւորչին մերոյ Սրբոյն Գրիգորի գլուա նչխարացն։ Մարտիրոս վարդապետն ի Լուսաւորիչ գնաց։

Կիրակի օր (22 Յունի) Տէր Յովաննէսն Սուրբ Նիկողոսու զորդին կարգեց. և երեկոյիս ի Ղալաթիա գնացի. Յոճա Մկրտիչն զորդին կարգեց։

1) սգեստուքն.

(*) Ձուտ. ժդ կոտ պրեակ մինայն։

Եւ այսօր յորում ի Վլանկա կանգնեալ կայաք՝ չարն ի չար և Բ Բ և Գ Գ ոգի գայլին ի պատերազմէն։ Նոքա որ ի տեղւս կ՚առնեն Դիր ըստակ և կու երթան ընդ նոսա վասն քի քաչէլոյ՝ ի ժամանակ պատերազմի անկնալ ի ծովն և լողալով գերծնալք յայնմանէ գայլին մերկ և գլխիբաց, բոկոտն և խեղաքիւր. և գՅիսացնալ նաւքն քոզնալ են անդ ԺԲ և ոմանք ԺՋ ասացին։

Բշի (23 Յունե-) առաւօտուս եկն վէզիրն որ ասի Գօյնուէկրի, մտնալ ի քաղաւորն և գնացնալ ի պալատն։ Կիրակի չէրէկի օրս գՂումզափուն ժէ մէյխանայ կոտորնալ և աւիրնալ, պատճառելով քէ մէչխին մօտ է. այս եղև ֆէքվայոյն մուֆտիին։ Եւ Մայիսի սմուս գՊալըխպազարի մէյխանայքն վերուցին հրամանաւ մուֆտիին, զոր ի ժամանակի մուքատ փաչային չինեցին. ի վազուց կայր անդ եւ սակաւ էր եւ ի նորին ժամանակն քազմացուցին[1]), եւ հարկս տային քազում քաղաւորին, և զսոսա որ վեր առին, նա՛ յետ աւուրց գՂումզափուն ժէ և ԺԸ մէյխանայ վերուցին։ Եւ յոս եղև աւուրքս քէ մուֆտին առեր քէ ի քաղաքիս մէջն եկեղեցի կայ Հայոց, վասն այն մեր քանն չի առաջնորդիր։

Դշի օրս (25 Յունե-) էսիլի քոռն առնալ ի ժողովըրդոյն մէկ քանի ոգի չաննչան արանցն, քերնալ առաջի Մարտիրոս վարդապետին՝ խնդրել արձակել ի կապանաց միջնորդութեամբ նուրէ որդոյ Իպրահիմ Ջէլէպուն, որ Բ շաբաթ ի վերայ բանիցս ընքանալով քէ Տո՛ւք գփչլոնս գոցա գի մի՛ երքնալ մէչ չար ծնուցանեն, և յետ ժամանակի որպէս կամիք արարէք։ Եւ քազում քան եւ խօսք եղեալ եւ քազումք առաջին քէ Այդ է քարի։ Եւ Մարտիրոս վարդապետն ևս

1) քազմեցուցին.

ասացեալ քէ Որ գնացեալ են ի պատառանն Գոխլուճայ եւ գիր են գրեալ. զայն գիրն բերեալ տայցեն յիս և ապա արձակեցից։ Եւ նոքա ոչ կամեցան տալ զբազում օրս եւ խնդրէին զփիլոնն. եւ նա ասաց քէ Ոչ է լինելոց, անհնարին՝ մինչ առանց քոյքին այնմ արձակեցից զնա։ Եւ զայս լսեալ նոքա անճարակացեալ տարեալ եռուն զգիրն զայն ի ձեռս նորա։ Եւ էր գիրն. Պատճառ գրիս, քվ. ՌՃԴ մեք Սուրբ Սարգսայ միաբան քահանայք եւ ժողովուրդք Սուրբ Էջմիածնայ հնազանդ եմք եւ Ծովմանէս վարդապետին նոյնպէս, և նորին առաջնորդութեանն մեզ վերայ մինչև ի մահ կամիմք. և այլ ոտքին նման գրեալ էին։ Եւ Մարտիրոս վարդապետն տեսեալ զայս եւ ձայնեալ ի մերոյնոցն քէ Դուք յայսմ բանիս գիտա՞կ էք որ այսպէս են գրեալ՝ Միաբան քահանայք եւ ժողովուրդք. եւ ոտքս ասացին քէ Ոչ գիտեմք։ Պանգի ի ժամանակին յայնմ գնացեալ եղեն նոքա, որ էին Էսիլլի[1]) քոռ եպաչատուր երէցն եւ Ոսկան երէցն եւ Գարմախատուղն եւ Քըլքըլն եւ Գնեաքն եւ այլք, որ իւրեանց համախոհքն վասն նախանձու երիցանցն մեր և աքոռակալաց եւ իշխանացն մեր։ Զայս ասացեալ Մարտիրոս վարդապետին քէ Վազեան օրն գատաստան կ'առնեմք և հարցանեմք ձեզ քէ Դուք գիտա՞կ էք այսմ իրի. և մերայինքս ասացեալ քէ Վարդապե՛տ, զայդ արատացես եւ մեք կո՛ւ առնելոց եմք ընդ նոսա, և նոցա բանն կ'աւիրի՞ զփիլոնն ոչ տալով նորա. իւրեանքն գիտեն, մեզ պէտք չէ կռիւ։ Եւ գարձեալ ասաց քէ Թո՛ղ գան Զ եկեղեցոյ իշխանքն և իրիցունքն և նոցա առաջի արձակեմ եւ պատուէր ունիմ տալու, տամ և արձակեմ։ Եւ զայս լսեալ նոցա, անկանելով յայս գիհս և յայն գիհն, մինչև խաբանեաց զայս իր՝ քէ

1) Էսիլ.

գայցեն Զ եկեղեցւոյ արքն, եւ ամենեքեան մի՛ խօսս արասցեն, կրկին աւիրի բանն. ազաչանօք եւ պաշտամանօք խաթանեցին գայս։ Եւ այս Դչի թերին գնաց եւ բազում նախատինս եւ արհամարհանք ամենայ վարդապետն նորա եւ քահանայ[1]) ծնծնալ քէ Ճանի՛ քանի գայս գործս գործես. գու չէի՞ր այսպէս եւ այնպէս առնողն[2]). յորմէհետէ արարեալ էր գչարութիւնն։ Զայնասիկ զամենայն առաջի նորա եգեալ առաջի ժողովրդեան իւր, և յետին բանն պատուիրեալ քէ Զաքարիան քո՛ղ հանէ ի տանէ. և նա ասացեալ քէ իմ չէ ազաւնին. եւ վարդապետն ասացեալ՝ Առանց քո կամացն ոչ կարէ որդին քո պահել ազաւնի։ Եւ ժողովուրդքն ամենայն ի մի խօսս եկեալ, բազում ազաչանս և պաղատանս արարեալ վարդապետին քէ Քո՛ղ հանէ ի տանէն. եւս եւ Սէֆէր պալին՝ որդի իրիցու, նա ի յոտս անկեալ վարդապետին քէ ինձայեա՛ յաչխան իմ։ Եւ յետ բազում բանից հազիւ զմիտս հաճեցեալ վարդապետին, եւ երեալ տայ զարձակումն։ Եւ ապա ձայնեն զՔըլքըլն, քանզի Իպրահիմ Չէլէպին էր միջնորդ բանիս, եւ եզեւ այս կամաւ մերայնոցս, քէ ոչ՝ հնար ոչ գոյր փրկութեան նոցա ըստ չարեաց նոցա։ Եւ գայս խորհեցան քէ Գուցէ մի և չար ոչ ծնուցանեն. եւ յառաջագոյն պատուիրեցին զի մի բերցեն ընդ ժողովրդեանն զՔըլքըլն և զՊարմախաուզն եւ գայլ չարան, զի մի և բանք նոցա աւերեսցի։ Եւ ապա ձայնեցին զՔըլքըլն, եւ բազում բանս պատուիրեցաց նորա քէ Գուշ մի՛ այլ կամ աքոռակալութեան կամ երեսփոխանութեան մէջն խառնիս, և կամ խառնիս[3])՝ այնուհետև զքեզ անլուծանելի կապանօք կուշկապիմք յերկինս և յերկրի։ Եւ նա ասէ քէ Լինի քէ մի վարդապետ գայցէ և հարկիս մուշ

1) Քր. 2) առնողքն. 3) խառնես.

ծանէ յայն գործան. եւ ասացեալ վարդապետին ՔԷ Այդքան չարգ ո՞վ մուծանէ ի գործ, և ՔԷ մուծանեն՝ գու մի՛ մասչիր, քանզի ի քեզ յոյժ կայ օրսանք եւ պատիրք չարուքեան։ Եւ նա յանձն առնէ՝ ՔԷ ոչ խառնի ի յեկեղեցին եւ ոչ նստի ի վերայ տախտակի ժամատան, այլ միայն լուիկ գժամն եւ գազօքան կատարեսցէ և երթիցէ, որպէս ամենայն քրիստոնեայքն առնեն. մնծաւ երգմամբ երդուաւ արարեալ ՔԷ Այս այսպէս լիցի. եւ ապա եւ նմա տայ գարձակաւն։

Եչի օրս (26 Յունէ) Ալի ագան մեր առեալ գիս եւ գնացաք ի մօտ նազար ագան փաշային եւ տվի էսպապ ձի գուռուշի եւ տուս ՔԷմէտուկ, եւ նստեալ իմ անգ առ նա եւ խոսեցեալ բազում բնչ եւ եկեալ եկի։ Երեկոյին ի Մզտեսանցն գնացի եւ նստեալ անգ ոչ սակաւ եւ եկեալ գնացի ի տուն։

Շաբաթ (28 Յունէ) առաւօտուս ի լուսանալոյ ժամն եզև երոցք ի կաստա փոան ներքանն, որ պատկից էր նորա, բայց եկեալ ամենեքեան ի մի վայր և մարեցին եւ գթովն տունն քակեցին, քանզի յոյժ քամի էր։ Երեկոյին ի Սուրբ Նիկողոս գնացի և անտի ի մեր ժամն եւ անտի եկեալ ես և Տէրտէրն իմ գնացաք յաներանցս։

Եւ առաւօտուս (29 Յունէ) Տէրտէրն ոչ եկն, եւ ես գնացի, և անտի ի Մզտեսանցն և անտի՝ հետ վարպետացն հացածախից ի սէյիր գնացի ի Ջէննկէլ գեղն և երեկոյին եկեալ անտի՝ գիս ուղևորեցին ի յՈւսկիւտարն և ինքեանք գնացին, և ես եկեալ ի վեր՝ գնացի ի հարանիք Յօճա Գասպարի ազջկանն. նստաք անգ ջգիչերս։

Եւ առաւօտուս (30 Յունէ) ի ժամ գնացաք, և հարկեալ ի բազմաց բարեկամացն մեր ՔԷ նստինք ի ճաչս մեր այլ և ի հարսանիքն, ոչ անեացեալ՝ յԳ ժամու առաւօտ եկեալ եկի ի խանուքի։ Եւ օրս Եղիազար վար-

գապետն ի Մուրթ Նիկոզոս եկաւ։ Երեկոյին ի տեղն գնացաք։

Գշի օրս (1 Ց—ին) քաղաւորն պէրպէռպաշին իւրն ապանեց, պատճառելով քէ ի ժամանակ զօրպայիցն գու ևս խորհրդակից ես եղեալ։ Անցեալ չաթմա հա- նեց գնա՝ զափուհիպաշի առնելով և օրս սպանեց, որ էր հայի որդի, որ անդ տարեալ գնա և բազում գա- նի տանկացուցեալ ես։ Ի մեռ ժամանակս խիստ գա- հիճ եղև և բազում միտս ունէր առնել մեզ, և այժմ էառ զառհաւատչեայն ասա և անդ։

Ցուլիս ամիս. և օրս եկեալ Ղայսէրցի մի քանի հայ առ Եզիազար վարդապետն քէ ի մեզանէ Գ ոգի գնացեալ են եղեալ հոռոմ և Հոռոմքն գնոսա մկրտեալ. գի՞նչ ասես մեզ, մեք գայն չեմք քոզլոց, երբեմք գնա տանիկ առնեմք։ Եւ Վարդապետն ասաց քէ Դուք գհոռոմ չինիլն կու նեղանայք և նա գտանիկ առ- նելն գնոսա ո՞րպէս կամիմ։ Եւ այսպէս նոքա եկեալ գնացին։

Եշի օրս (3 Ց—ին) Կիրակոս վարդապետն եկաւ, աչակերտ Եզիազար վարդապետին։

Ուրբաթ օրս (4 Ց—ին) Հաչատուր վարդապետն գատաստան արաւ վասն նոխտուի տղին որ ի Կիրա- կին ի գերեզմանէրն կանանց խօսք է ասացեալ և գո- մանս հայհոյեալ և բազում խայտառակութիւն, որ և տեսոզքն եւ լսողքն գնացեալ Մարտիրոս վարդապե- տին պատմեալ. եւ նա արգելեալ գնա եկեղեցոյն եւ Հաչատուր վարդապետին քուզք գրեցին քէ Դորա գատաստանն ա՛ս. եւ օրս ի յԱստուածածնին գատաս- տան արաւ, նզովից եւ բանագրից եւ գփիլոնն էառ առաջի ե եկեղեցոյ աքոռակալացն եւ իշխանացն։ Եւ յերեկեան օրն յամէն եկեղեցի քուզք ուղարկեց քէ եկէ՛ք եւ գատաստան կայ. եւ ամէնն եկին եւ մեր

ակնզեցոյ իշխանքն չեկին եւ ոչ երէց բնաւ, իրր թէ ոչինչ համարելով զժողովն։

Շաբաթ օր (5 Ց—ի—). երեկոյին մեր Գրիգորն Եէրպէքճի եւ Մինասն գնացաք ի Ղումղափուն եւ անդ նստաք ուտել հաց, եւ երթալ տկաք։ երեկոյին կիրակոս վարդապետն քարոզ ասաց եւ յերէկս նոյնպէս։ Օրս հացաժախի վարպետքն պատիւ ունէին։

Կիրակի օր (6 Ց—ի—) ի ժամ գնացաք եւ Քանուճն պաշտօն առնել ետ. եւ վարդապետն եղիազար ի Սուրբ Նիկողոս էր։ Եւ երեկոյին ի ժամ գնացաք, եւ կիրակոս վարդապետն քարոզ ասաց, եւ յետ արձակմանն գնացաք ի քով նոցա եւ անտի՛ ի տուն։ Եւ օրս Ի Ի մէյլանայ եւս քակեցին ի Ղումղափուն։

Եւ օրս մեծամեծք քաղաքիս մուշավէրք ունէին մօտ ի Քագաւորն, և յետ մուշավէրէիս գային ասացին՝ Թէ զգափուտանութիւնն Մէյտի Ահմէտին տվեալ եւ սպահօք բազմօք ի ցամաքէն և քէհեայպէկն յէնկիչէրօք ևս երթալ ի վերայ Ծուանկին. անպատճառ այգուցս երևանել։ Եւ ուքերորդ ժամուս գեսպան եկն անդուստ Թէ Ծուանկն զԳօզճա կղզին առեալ բազում և անթիւ գանձիւք, որ է հանդէպ Իզմիրին։ Յորժամ գայս լսեցին՝ այս խափանումն եղեւ, քանզի չէին կարեր երթալ ցամաքով ի վերայ նոցա եւ հնարն ի ծովէ է նոցա հետ պատերազմ. և ասքա չունին մէր նաւ բնաւ։

Եւ առաւօտուս (7 Ց—ի—) կրկին մուշավէրէ առնելով մեծամեծք և նախարարք և ոչինչ լըւեալ մեր Թէ այժմ Ծուանգն զմիտիլի կըզզին ձեռնելով պատերազմի ընդ նա։

Գշի օրս (8 Ց—ի—) օլօֆէն եկաւ ամենեցուն։ Եւ ի մօտ յետնուցս քագաւորն կոչ ձայնէ զմուֆտին ի պալատն իւր եւ նա կոչ գնայ ի ներս, եւ եկեալ ի մի մատ սանգիտցն և քագաւորն ի վերէն հայելով գնա, զի իմվեր կամի գալ ըստ սովորութեանն, ձայնէ առ

չան և տվին գրամ, զի հարկատուք կնան մուճակս ունիցին, զի մի խափանեսցի գործն և վաստակն իւրեանց. և նա հրամանս արարեալ մուճակին, ազատ պակեալ ի փոշոցս և ի հրապարակս քաղաքիս, Վա՛յ տալով քէ ոչ ունիցին, ասէ, կնան պապուճ։

Յաւուրսն յայսոսիկ պէնկիչէր ազատին սպանանալ վէզիրին վասն սակաւ խրոց, սակայն քէ ի սովոյ ՃարգԱն գօրքս աստ, երթեալ ի տիզիս իւրեանց ամենեսեանք և ապա գայցեն ի գէմ գարնան։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ յղեալ մարդ վէզիրին առ պափուքճհատն պարոնն Գուդատնայ եւ զգնացուցանել նմա խնկայս իշխանութենէն և առաքէ գնա ի Գո[ւդ]ատն սիրել նմա, զոր ի վազուց գայր ի Տաճկաց ոչ ոք կարաց առնել։ Եւ Հեդահս պարոնն հին պատուարգմնալ ընդ նորոյ և Քաքարն յարգում աւերս արարեալ և ջարդեալ ի գօրաց նոցա բազումս, մինչև նստուցանէ գնոր պարոնն անդ (քառը ֆէբ---ի) Քուրքաց, որում անուն ասէին Ճիւան (քառը ֆէբ---ի)։

Յաւուրս այսոսիկ նկին յՀարբենու փաշային մարդն և առեալ առաքեալ վէզիրին, ոչ լինելով բան և ոչ մի վասն Երուսաղէմայ, քանզի առեալ վէզիրին գարգքն և եդեալ ի նեղքոյ ծնկացն և գրեալ պատասխանի առ որդին Քայտբի հնգով, ոչ գիտացաք։ Այլ ապա խորհուրդ առեալ ի մէջ և գրել նոսուն ինձ առ վարպապետն Երուսաղէմայ՝ զի տեսցեն ընդ փաշային բան և առցեն արդ և ի գատաստուրէն և նլեալ նկնացեն աստ մինաբանաք և ըմատաստաք. և գնացին Հերթաքի օր Ը-ին[1]) Մարտի։ Եւ գրել նոսուն Մարտիրոս վարպապետին ևս ի Կաֆա, զի և նա եկնացէ՝ նմէկ տեսանել իցէ զգործ որ առ գլխաւորս Քաքարին։

1) Ջ-ին։

Շաբաթ օր (6 Մարտ) կիւրղի. զկին Մարտիրոսին գնացեալ քաղեցաք։

Կիրակի (7 Մարտ) Անառակի։

Բ֊ին օրս (8 Մարտ) փաչան ի զօլ ելեալ և ի գիշերի յանուանի առհմանս քաղաքիս ապանեալ զոմանս. գոզ են ասացին, և մի գոզն պուրխար գոլով՝ գաւանուքեամբ Հոռոմոց՝ այր գազանաբարս, առաջի փաչային ասէ քէ Ուբանամ, զի փրկեսցի. և ասացեալ փաչան՝ ՍՔէ գոռ անգօր գոլով և կեաւուր՝ զայդ գործէիր, և քէ լինիցիս տանիկ՝ զաչխարհ խանձես այրելով։ Եւ հրամայէ զօրավարաց քէլփատել զնա և բերել առաջի իւր. և բերեալ առաջի նորա տանիկ կերպիւ, ասէ՝ Սպանջիք զպիզծդ. և այնպէս կորչի այրն այն ի կորուստն յաւիտենից։

Ծաւուրս հրամանն եկեալ ի վէզիրէն զի ժողովեսցեն զօրսուն վանն պատերազմին՝ յամենայն արհեստաւորացն։

Եւ նա ի վերայ այսմ տէֆտէրտարն բան՝ զի զմիրին առցեն ի մէնջ փուքանակի, քանզի յամենայն ամի ի գլուխ տարոյն առնէին, որ և մէհրբէմ ասի, այլ այժմ Զ ամսով յառաջ առնել հրամայեաց։ Եւ զմբռնեալ տէֆտէրտարին պահանջէր, և ի եկեղեցին [տես]անէր զպատրաստուքիւն գրամին. իսկ մեր եկեղեցոյ [է]ր, զոր յայտնեալ եմք ի տոկ մատեանս գ[ր]արմունք նոցին առ գանիւ, որ մի քառակ [ոչ] ետուն շահ եկեղեցոյն, այլ՝ պարտք ի վերայ [պր]առաց, և այժմ խորհեցան զայս ևս չար[իս] առնել ժողովրդոցն, և զմիրին զայս առնել յամենեցուն, զոր ոչ եզեալ էր երբեք, քանզի առնէին ննջեցելոց ի քառակ, և ծնեալոցն ի և պառակ[եալոցն] . . . և Զ եկեղեցին, զոր ծախէին զԱնառալի և զՈւռուսմէլի և . . . և մերն հասանէր ի և իչի . . . հանէր զ . . . [մա]հուն և կենացն իւրեանց (անկանոն ֆոկֆնէր-

ՀԷ Եւ կ՚ուզէր հանդչել (տրտում էր)։ Մնայր Ուս-
կիւտարուն եւ Գալղկեդոնին եւ Գէկղոզին[1]) եւ այլոցն որ
անդ՝ այս յաւելեալ ոչ երեւելով մի չահ նկեղեցւոյն,
յորմէ հետէ այրեալ, զոր նոքա կալան, այլ պարտք.
եւ գայս եւս բարձան ի վերայ ժողովրդոցն, զոր եւ
նոքա հատուն։ Եւ խորհուրդ առեալ ի մէջ ժողովրդոցն
եւ ասեն քէ Տանք եւ յետոյ (ընդէ)։

ԺԴ–ից[2]) Մարտի Եաբաք ըմբռնեալ կիւմուշ-
բայճուն զԳէմիսաճի կոչեցեալ երէցն[3]) ի գործն, եւ տա-
րեալ առաջի փաշային եւ հարց եւ փորձ արարեալ՝ գոլին
եւ զընկերս նորա տաճիկս Ը, եւ հրամայէ տանել գա-
մինեանան ընդ երիցուն ի բանտս մահապարտացն զի
սպանցէ ի գիւղերին. եւ էրէցն այն քանզի ի բնէ չարն
էր եւ տէր պիտակ գործոյն, եւ ի ժամանակի գիտալս
նկեղեցւոյն գոզացեալ եւ այլ ազգի ազգի չարութիւնս
արարեալ եւ ի նաւս քարակրացն մտեալ եւ ապատեալ,
զոր բազում անգամ խայտառակեալ ի գործոյն եւ ոչ
լեալ լուռ ի բարիսն, այլ ընդ սատանայի եւ ըստ խրա-
տուց նորա վարուր, որ եւ այսօր գիատարեալ գործ
նորին խրատուս արար եւ ուրանալով[4]) զԲրիստոս ա-
ռաջի բռնաւորին, որոյ լիցի Բրիստոս խայտառակիչ՝
զէսքեն զայն չարեօք կորուսանելով ի խրատ սատա-
կաց եւ ի մխիթարութիւնս հաւատացելոց Բրիստոսի.
ամէն։ Եւ զԸ ընկերս ուրացողին պղծոյ՝ ելեալ փա-
շան ի զօր եւ կախեալ ի Գարմազափուն Բ, եւ ի նշանակ
անուանեալ սահմանն Բ սպանեալ, ի Մէյտանկըք եւ
ի Այտաֆին եւ ի Ղարամանն եւ այլ սահմանս քաղա-
քիս՝ խայտառակ մահուամբ սպանեալ զնոսա։

Եաբաք երկոյիս ի կիրակամուտ գնացաք Մար-
տիրոսի կնկանն որ եկեալ էր յԷսքիշեհիր։

1) Գէղոզին. 2) ԺԴ–իս. 3) էրիցն. 4) ուրանով-

Կիրակի Տնտեսի Մարտի ԺԴ գնացին ի գերեզմանն Նոքա։

Ես ի գիշերին ե–երորդ ժամու, որ առաւօտուն Բ չի ԺԵ–ն Մարտի լարչաչատես (սյոպկա) նստաս էր և ամպով պատեալ եղև գերկինն և առաւօտն գարձոյց ի պարզիզ։ Տէր Այիքսանի ազգին մեռաւ Հաճիմարը, և Ալաճաճուն կնին մեռաւ՝ մայր Ասլանին Մզուսոյ։

Ես Դշի աւուր (17 Մարտ) գնացեալ իմ մօտ առ իչխանսն գրել գՔուզՔ Էորէնէցոց, զի մի՛ հազորդեսցին ընդ Քուամա անուանեալ վարդապետն որ անդ գնացեալ։ Ես կէս աւուրս նլեալ ի խանուՔէ հասայ ի տուն և անկայ սիրուս հիւանդուՔեան գաւուրս բազումս, Մարտի ԺԷ–է մինչ Մայիս Գ։ ԳՔացեալ Աստուած և ազատեալ յայնմ սիրէ՝ ոչ յիչելով զմեզս մեր, այլ խափանուՃն եղև այսմ գործոյ։

Ճաւուրքս զազգիէաքէրքն փոխեցին անդ։

Ապրիլ սկիս օր Եշի։ Ես ի գոզմս Նիկոմիդացոց եկն անձրև յորդ և տեզայր ընդ անձրևին ձուկն ծաւս, զի ծովափ է երկիրն, և որք կերան գձուկն՝ մեռան։

Ռուհիճանն ընդ Մարտիրոս վարդապետին գնացին առ վէզիրն, և նա ասաց՝ Բերէ՛ք զէմրն ձեր զի տեսից. պատասխանեցին՝ Գնացին յերուսազէմ. և ասաց՝ Ճետ գարձո՞ զի եկեսցէ։ Ես երկրորդ գնացին, ասաց Քէ Ո՞չ ասացի գարձուցանել զէմրն. ահա՛ էմր խընդրեն Ճոյնք զի եկեսցէ պատրիգն իւրեանց. տա՞մ Քէ ոչ։ Ես երրորդ ասաց՝ Ղալիոն մի չինեսջիք Քազաւորին՝ զի հրամայեցից ձեզ. և ապա բերանով քահանին հաւանեալ՝ Քէ գայիս մի. և ոչ կասեցին մինչև ետ էմր Ճունաց՝ բերել զպատրիգն. և ոխն ծածկեցաւ ի սրտին և զի ընծայ ևս ոչ ետուն Քէ Ոչ նստի հասատատ, վասն որոյ և եղև (Ընդէ)։

Ի՛ Ապրիլի (Ռճե = 1656) որ Դչի լուսանայր Ի՛Գ կարի մերձ ի պահն հաւախօսի Կոմիտաս պալին եզաւ որ հիմիկս մարդ եզաւ։

(Զանազան էջէ խոչէ և անկոպ խոչէ)

Թվին Հայոց Ռճե Ապրիլի ԺԱ Ջատիկն անձրեւ էր մեզմագոյն։ Ջոչ գրեչն իմ ի մէջ աւազ պահոցս քէ գի՛ եզև, զպատճառան ևս եզաք խոստովանօրէն, յոր ընդ աւուրան փոխեցին գմեծ զատին որ ասա ի քաղաքս։

Նաև Թուխաչ անուանեալն, զորոյ զգալն և զոչ ընդունելն յեկեղեցւոյն և ուր ուրեք հանդիպիլն, անգէն ևս զքոզուչն և զընդունելն ոչ՝ գրեցաք։ Վասն որոյ և նոյ ևս անկեալ ի բռնակալս և ի նախարարս արքայի և մտեալ յիտրէնէ առ վէզիրն՝ բազում ջանիս առեալ զպատրիարքութիւնն և զհարկն գիմոսականն յաւելեալ, որ ասի միրի, քսակս ժ, վասնզի յորոյ գուռ երթայր՝ քաղաքացիք երթեալ աւերէին, վասն որոյ աւելցույց ի հարկէ զի մի խայտառակեսցեն ազգս և կամ բռնակալք։ Եւ գրեալ զամենայն անգիս առաջնորդական գաւազանացն ի պարթեի իւրում, զի ինքն իշխեսցէ յամենայն իշխանութիւնս Տանկաց և ամ յամէ տացէ զմիրին, և զոր առնելոցն է առաջնորդ՝ արասցէ։ Եթէ փոխեն և քէ նստուցանեն, եթէ կալն եւ եթէ ձեալն՝ ամենայն ինչ ի ձեռս իւրայոցէս և գրեալ զերուսազէմ ի գիրն։ Եւ առաքեալ այր մի քրքիւք հանդերձ առ Նիկողոս վարդապետն ամե, որ եկեալ էր վասն ժողովի իւր և նստեալ գնա ևս յեկեղեցի Սրբոյն Նիկողայոսի, քէ իմ աքոռակալ ես և վէքիլ, հայեա՛ց ի ժողովուրդդ և կա՛լ զգալուր եկեղեցոյն և աքոռոյն գրով, մինչև եկից ես։ Եւ աչխարհականք որք էին իշխողք, զորոց պատիւն առացեալ եմք յառաջին գիծան, ի մի վայր հաւաքեալ

զԴաւիթ Հալատցին, զԱստուածատուր Վանցին, զԸնկոզոս Քուէկուրանցին, որ վէգիլ ասացաւ Քումանչին, զերկքեան վարդապետքս նախատանօք յեկեղեցեացն արտաքսեցին։ Եւ ակսան ի խորհուրդ աւուրքք բազմօք սինհոդոսաւ ժողովս իւրեանց եթէ գնասցեն առ վէգիլեն արդի գանկատի՝ չկամեցաւոյ զՔուամայինն պատրիարքութիւնն ի վերայ իւրեանց, կամ աքսորեսցեն և կամ սպանցեն։ Եւ ընտրեալ արս Ը կարգաւոր և անկարգ՝ առաքեցին չէորէնէ առ գրուենս և յերգս[1]) քանաւորաց անկանիլ. և նոքա գնացին, աստ և անդ շատ պիպիցան, բայց ոչ կարացին առ երեսս մեծ իշխանին ելանել, այլ ի փոքրագունից և ի նախարարաց նոցին գանեալք լինէին, և այլք ի փախուստ գառնային եւ զմիմեանս կորուսանէաք, յետ մայիսի ամսոյ ԻԷ–է սկսեալ մինչև ապա և մի մի։

Մայիսի Դ. փոխեաց վէգիլեն զՔեզր Հասան փաշան և հրամայեաց զի նստցի զայմախամ Մէլէկ Ահմէտեան, մինչև անտի առաքեսցէ զայլ ումն։

Եւ ահաւ եկն Մայիսի ԺՒ[2]). յաւուր Դշի զայմախամ Սինան փաշա որ կայր չէորէնէ՝ նստեալ մանզուլ ի պատանեփաշայուքինէ, եւ բազում ընչից տէր գոլով, զի հինաւուրքք էր. առեալ վէգիլեն զայն՝ էառ բազում քանակ ի նմանէ եւ առաքեաց զայմախամուքիւն (Ր՝ԵԷ)։

Իւ Մայիսի եկեալ պատրիարքն և եմաւտ ի քաղաքս և մտեալ առ փաշան։ Եւ երթեան աքոռակալք և իշխանք առ փաշան քէ Ջեմք կամիր զոխրուքիւն գորա ի վերայ մեր՝ կրկին անգամ, մինչև զայրանալ փաշային, ի բաց հանէր զնոսա յերեսաց իւրոց։ Եւ պատրիարքն երթայր ընդ պատանեին խաւէքուին եւ

1) յերգս. 2) ԺԲ.

մառանէր առ նա, զի ի քսակ ևս տալիք լեալ էր քա-
գաւորին ընծայուց, որ յըտռնիկս պոստանճոյն հասա-
նելոց էր, վասն որոյ պահէին նոքա և կային ընդ նմա։

Եւ յաւուր Պէնտէկոստէի Մարկոսի Լ յայտնի մտա-
նէր առ փաչան ցուցանելով նմա զհրաման քագաւո-
րին և զպէրաթ, և նայ ընկալեալ սիրով՝ խիլայս պգե-
ցուցանէր նմա և հնծուցեալ ի ձի զօրավարօք հան-
դերձ՝ երթայր նստէր ի վանս Սրբոյն Գէորգայ։

Յունիս ամիս օր Գշի։ Լու եղև աւուրքս՝ քէ ի
գալն Յազլի փաչային[1]) անդ չկտրէնէ, որ ընդ պարոնին
գնացեալ էր յՈւլախ՝ նստուցանել զնա անդ, և յոր-
ժամ անտի գարձեալ, ասէ, փառաւորեցաւ ի քագա-
ւորէն և ի մօրէն. և նախանձեալ ընդ այն վէգիրին,
պատճառ այլ ինն եղեալ՝ խեղդամահ առնէ զնա, զի
մի առցէ զկնիք մեծի էշխանութեան, զի կին ունէր
սալ զմեծ քոյր քագաւորին՝ զգուստր Իպրահիմին։

Ի՞ր ամսոյ Շաբաթի աւուր եկին ուխտաւորքն ի
Սուրբ Երուսաղէմայ։

Այգուցս (20 Յունէ) փաչան ի գոլ ելեալ ի չու-
կայս և ի փողոց քաղաքիս յորս սովորն են, և յան-
ուանի տեղիս սահմանացն՝ ի հինգ տեղոջ մի մի մա-
ծախս կախէր, որ զմեռած զուարակաց միոս ծա-
խէին. քննեալ գտաւ ոմն տանիկ և ոմն յոյն։

Լ՚) ամսոյ Դշի աւուր պայրամ Տաճկաց, յոր ա-
ւուրքս եկեն Աստուածատուր վարդապետն ի Սուրբ Ե-
րուսաղէմայ յՈւսկիւտար։

Եւ Քուման չահէ քաղաքացոց կրկին անգամ գնա-
ցեալ չկտրէնէ և էմր բերեալ առ զայմախամ, զի զա-
մենայն ինչ զապա առնէր տացէ իւր եւ զհակառա-
կորդս նորա մի տացէ խօսել ինչ քէ Դուս ախմար ես,

1) փաչին. 2) Ի՞ր.

զի՞ երես տվիր Հայերուդ, վասն է՞ր ոչ զապտ անել ասես. քէ ոչ կասիս՝ զվնասն գու կրելոց ես, զքեզ գիտեմ՛։ Վասն որոյ և նա ի քարկուքինն չարժեալ, ասացեալ՝ Այլ ոչ գայ վէզիրն, զիմ գիտածս առնեմ։ Եւ ի վերոյ գրեցաւ ժողով և սինհոդոս իչխանացն քազաքին և կատազուքինն. ի մէմեանս պարփակեալք կցեալք, երեկոյ և առաւօտ խորհուրդ և մուշավէրէ՝ քէ զի՞ գացեն բանալիս նոան պատճառս ի վերոյ Քուամային, զի կազացուացեն աքսորմամբ և կամ սպանմամբ։ Բայց մինչև ցայժմ ի քազաքս չտեսին համբաւ չարուքեան նորա կամ քէ լսեալ էին զպակասուքինն օրինաց նորա. նա և յետ և յառաջ ի օր կացաւ ասաս։ Պատճառ իմն իրաւի քէ Առ ազգս մեր զոչ նզեալն արար, որ զհարկն յաւելցոյց, նաև զեկեղեցւոյ իրաւունքն ևս յափշտակեաց ընդ աքսորն, և քէ չերուսազէմ ի պէրայի գրեաց, հարկատու առնէ զնա. ոչ կամիմք, ժողովուրդք և ռամիկք, գուք ևս ընդ մեզ լերուք։ Սպանուքեան երգուցի արտրեալ, ոմանց գուռն և զորգիս ի բերան տուեալ, այլոց քսակս և փող յիշեցուցեալ, կիսոց՝ երէկ կանգնիմք յոտին և սպանեմք։ Եւ երթային գայլին ի տիւան ի կռիւ ընդ պատրիարքաւն յայտնի և ի ծածուկս, մինչև հաճեցեալ լինէին զկամս ախմար փաչային՝ քէ զի քսակն մեք տացուք և քեզ ևս այսքան, նորա հնար մի։

Եւ ի վերջն վճիռ գայս հատին երէկ ֆռանկ է նա և չաշուտ՝ այսինքն լրտես նոցա։ վկայել եռուն Աբեդլցի վաճառականաց ոմանց և հօճէքի արտրին և ի գին ի քանաս մահտպարտացն (3 Ցուլի, Եաքուբ)։ Եւ այսու ոչ չատացեալ, հարեալք ի գիւէ՝ խորհին սպանանել զնա իչխանաք քազաքին, յոյս ունելով գգրամ երուսազէմին որ կայր ի մատս իւրեանց, զոր յղեալ էր Ղզիազար վարդապետն երէկ հոգացեալն զբան երուսա-

զէմայ։ Ցորմէ ընդ աւուրս քուզք նկն աչխարանաց, կոծոյ և սգոյ ևքէ Հռոմ՚ք առին զՄուրր Ցակոր ի ձեռաց մերոց. գուք զի՞ ունիք ընդ Թումայլին կոծ և զի՞նչ հոգայք զդալ, առաւե՞լ գործիք ունի գալ քան զձեզ ի բարին, կամ գուք հաստատեալ էիք զօրէնս և զկանոնս և գալ քայքայէ՞ր. և որ սոցին նման բանս. և ի վերայ այսր ամենայնի քանիցս անգամ բազում բարեի առ ձեզ՝ քէ ի՛վ մարդիք, վասն է՞ր զնրուսապէմայ քանն չէք հոգար՝ ևրր գուք քրիստոնեայ էք, գնաւատս և զգաւանութիւնս կամիք պայծառացուցանել, ևքէ իմ բարեկամ էք. զի՛նչ կամի առնել Թուման ձեզ՝ ինձ արասցէ և Երուսապէմայ։ Եւ յուեալ զայս իչխանացն՝ ի խոր խոցեալ գչկամիչն եւ զոչ համաձայնիչն Եզիեզարի ընդ խորհուրդս նոցա, համբաւեցին ևքէ Թումայ հակառակեցաւ Երուսապէմայ և զնրուսապէմ հարկատու արար, որ վեր ասացաւ։ Եւ մոան առ Աստուածատուր վարդապետն՝ ևք ընդունելի գիտանիկն և գհերձուածողն՝ գու ևս առա ես, և ևք ոչ ընդունիս՝ ընդ մեզ լի՛ր և գու։ Եւ վասն Երուսապէմայ յոյժ յոյժ բառնային պատճառ իմն եգեալ և ասէին՝ ժողով արա՛ք քահանայից և ժողովրդեանն։ Եւ երթային ի ժողովն ամանք յահէ նոցա, ամանք չարոյ և ամանք բարի իմն կարծեալ հաւատային պարզամիտք, քանզի չէին ամենեքեան եզիեզարեանք, որ վասն նորա արարին, այլ հակառակ էին։ Բայց ի կորուստ առն միաբանեցան, յորոց և մինն Հայապցի Դաւիթ վարդապետն չարագրեալ ի մտօք բանս պարտաւանաց և ընատուց Թումայլին, կնքով Աստուածատուր վարդապետին առաքեալ յեկեղեցիսն գի ընքերձգին հանգերձ նզովիւք՝ ընդ առաջին հերձուածողսն հաւատարեալ։ Եւ միաբանելոցն գաչին այս՝ ուրոյն ուրոյն կնքով արքն ժողովեալք, եւ որ ոչն մեհրէր՝ ի բաց վարէին նախատանօք. և աւագերի-

ցուն՛ք ամանք որ ոչն հնազանդէին, անարգեալ զնա՛ զայլ ոմն անդէն ի հանդէսն աւազիրէց[1]) հատատաէին, և գվնց նկնզեցոյ մխափերքի կնիքն ի ճակատ քրքին երևեցուցանէին։ Եւ պատճեն քէ Համայն քահանայք և աքոռակալք և երեսփոխանք և իշխանք վեց նկնզեցոյ քաղաքին ի մի գայր ժողովեալ, ուխտ և պայման արարեալ, հոգով և մարմնով կանգնեալ գնան քաւարայ հերձուածոցն, գի գչարութիւնն նորին ի կատարած նորա հարկանիցեն՛ք, և քէ՝ ըստ այսմ որքան ըստանգ երթայ, քէ շատ քէ քիչ, և մե՛ք վերոյ գըրեալքս քէֆիլ եւ երաչխաւոր ելմ՛ք։ Եւ յետ աւուրց բազում երթևեկութեամբ առ Աստուածատուր վարդապետն քէ Վան գա եւ գնան Սուրբ Տանն է ջան մեր, գու ևս կնքով ընդ քումն հազորդեաց ընդ մեզ։ Եւ նա կնքով գրեաց՝ Վան այս բանիս այնքան աշխատեցայց, մինչև գնաւրեցից գառաս ի պարտուց։

Եւ ամանք ի նոցանէ երևելիք էին առաւել, որ յերկիրս չարին արշաւեալ այնքան, մինչև չգծանաց իւրեանց հասին որպէս և կամեցան, բայց յետոյ անկեալ յերկիւարաց՝ բնկեալ ջարդեցան ամենայն ոսկր նոցա։ Հանելով գերկիւղն Աստուծոյ ի սրտից իւրեանց, մոռանալով զպատասխանն Աստուծոյ և զբան նորա քէ Զայր արիւնահեղ սիրէ՛ս առնեմ, և քէ Որ սրով (դաշոյ) սրով անկցի, և քէ Որ հեղու գարիւն մարդոյ՝ փոխանակ եւ հեղցի արիւն նորա, եւ քէ գմի՛ սպաներ՝ եւ գայլ օրէնս եւ գմարգարէս գառաքելականս եւ գհայրապետականս։ Նմանեցին այնոցիկ որք գառաջնորդս եւ գհայրապետս սպանին պէս պէս նախատանօք, յորոց արարմանց բարկացեալ՝ տայ գիշխանութիւնն եւ գիաւտարութիւնն այլ ազգաց. օտարք կերեալ գվաստակս մեր առաջի աչաց մերոց, ի քըշ-

1) աւազիրէց.

նամեաց գերի վարեալք, ի հայրենեաց տարագրեալք, եւ քոզ զարով անկեալսն յազնուագունիցն եւ ի քաջագունիցն։ Եւ ո՛ւր ուրեք փոքր փոքր երեւեաք՝ զմիմեանս ի խաժատելոյ ոչ դադարէաք, մինչեւ որպէս զդիաքաւաւոյ անոյժ եւ անզօր ձեացաք, ոչ կարելով հանել զաւուր կերակրին ընտանեաց եւ տղայոցն(*)։ Այս պատճառաւ ոչ կամելով զայլոց քաղաւորելն ի վերայ իւրեանց կամ այլ ոք իշխել եւ մեծանալ, զի զինչ և կամիցին արասցեն. նաև մի լուիցեն զձայն քոմէյի հաւատարի եւ մի առցեն զդեզ յիմասանոյն։ Ցազգս որոյ եւ յամենայն ակնզեցիս ոամանք ամանք աշխարհականք՝ լիրբք և անամօթք(**), փաբիսեցոց նման եւ գպրաց՝ իշխեալ ի վերայ կարգաւորաց(***)։ Զանարգանս եւ զհայհոյութիւնս զէն և սուսեր ընդ իւրեանս, ազգականեալ և քայքայեալ զաւանգ հարց և զդաչինս հարց սրբոց, ասացին նորա քէ ֆռանկ է, եւ իւրեանք ոչ գիտէին բնաւ զպահս, ձէքի եւ գինի անխտիր, ի գինեվաճառս կային, որ իւրեանց տուն էր պաշտաման, յաւել եւ երկրպագութիւն(****)։ Անգ էր նստելոյ տեղիք եւ խորհելոյ զամբարտաւանութիւն, եւ անտի առ տունս իւրեանց առ կինս իւրեանց պատմէին մեծաբանելով. Այսօր զքահանայ մի արգիլեցաք ի կարգէն, անարգեցաք և քքաք յերեսս նորա. և կամ՝ Ջոմն ի գուբս վարեցաք յեկեզեցւոյ եւ զայլ ոմն վազիւն այսպէս առնելոց ձմք. այլք, ասէ, կանգնեալ կային առաջի մեր եւ զգային ձեռնակապիւք։ Որո՞յ իրիցու իրիցկին այսօր ի քնզ եկն խնդրկան, կամ հաճրուբեաց զձեռս քո և

(*) Ա.ուս. Զալոքացիք։ (**) Հրեչտակապոցիք։
(***) Գահանայից որ կանգնէին առաջի իւր[եանց]։ զոմանս ի կալանս պահէին եւ զայլս ի գեանի տարտնեալ՝ յոտից գանէին։
(****) Ծուրբ ընծայիցիք։

*կամ գծունկսգ։ Ցե՛ս, ո՛վ տիկին իմ, գայս իշխա-
նութիւն մեք մեզէն քաշուքեամբ ո՞չ առնեմք միքէ,
և գփառս քո՝ քանզի մեծ իմն գոար քան զկինս երի-
ցանց։ Ասա՝ ինձ որք ոչ պատուին զքեզ յընքրիսս,
ի բազանիս եւ կամ ի հարսանիս. երեւելիս կացու-
ցանեմ զքեզ ի վերայ նոցա. զարանցն զփիլոնան
առնեմք, որ գան առ քեզ ի խնդիր, գիտասցեն
զքեզ եւ փառաւորեսցիս։ Ցե՛ս զի եւ զանազուիս
եւ զվարդապետս փախուցեալ եմք, զիա՞րդ և կկին
երիցանց ոչ խայտառակիցեմք։ Զայսպիսիս և որ ա-
ցին նման մեծաքանութիւնս առնէին ի տունս ի-
րեանց ընդ յարակից և ընդ դրացիս(*), և ժի՛ տարի
յայս ընքանայինն գերի անկեալ օրէնք ի ձեռս ի-
րեանց։ Կոյս ընդ այրոյ պատկէին(**). և այլք բե-
րեալ կանոնս յատենի գնէին և ասէին. Ահա՝ այս մե-
զաց գայս ապաշխարանս գրեալ են. առնեմ գայս եւ
յետոյ ապաշխարեմ։ Այս եղև ի Մուրբ Գէորգ, որ եղ
կանան՝ ումն այրի էր եւ կոյս էառ։ Հասի եւ չհասի
եւ մեզօք լինելոյ՝ անքիւ(***)։ Նաեւ երիցունք եւս
նմանեցին նոցա վասն աչառութեան և իրրև գանգեխ
եւ գանրաւն եղեն ընդ նոսա անամօքացեալք։ Նաև
արժան եւ անարժան ի կարգ քահանայութեան մու-
ծին։ Եւ գրէր աքոռակալն. Ցիսուսի Քրիստոսի ծառայ
այսինչէս, ծանի՛ր այս անուն երէց, Փիլան հէբիֆի
աքոռին առի, հազորդ տաս գորա, որ էին պոռնիկք
եւ բանագրածք ի վարդապետաց։ Եւ այսպիսի քնա-
ւին ոչ գիտէին զօրէնս եւ գկանոնս սրբոց հայրապե-
տաց, այլ և ի կաշառակուրութիւն մոլեալք իրր զհե-
քեանոսս։ Եւ ի քեմ աքոռացս գնեմանիս իւրեանց ա-
ռաքէին և այլ վաճառապոյնս քան զիւրեանս՝ չունս*

(*) Մուրբ Մարգոցիք։ (**) ի Մուրբ Գէորգայ։
(***) Մուրբ Նիկողոսցիք։

եւ պոռնիկս, նաեւ այլազգի եւ քուրք տեսուչ օրի-
նաց գոլ եւ հրամայող իշխող քահանայից եւ կանոնաց
առաքնորդ երիցեաց։ Ոչ քէ խաւարն մածեալ ընդ խա-
ւարի եւ կամ առաքնորդեալ կոյր ընդ կուրի, այլ
զբազումս գայքակղեցուցեալ զպարզամիտս, և զհա-
ւատարիմ ծառայն Աստուծոյ զքենցուցեալ և քիբա-
ցուցեալ ի հաւատոց(*)։ Որոց պատասխանն մի ար-
գարացի, քէպէտև ըստ մեզաց մերոց քոյլ ետ նոցա
Աբարիչն մեր(–)։

Եւ ի վերայ այսր ամենայնի գայթքան ժամանակի
եղեալ գնկեղեցոյ և զաթոռի իրաւունքն և զհասկն,
որ աւանդեալ ի նախնեանց յառաքելոցն եկելոց առա
ի քաղաքս՝ առ ի պէտս ազգատոհ, հիւանդաց և բան-
տարգելոց. յորժամ ի ծածուկ էր՝ կայր աւրհնուքիւն,
եւ յորժամ եղեւ յայտնի ի ձեռն անօգայից փառամոլ
եւ յանգուգն արանց՝ քայքայեալ եղեւ, զի ետուն
առւգանս ի քահակս այլազգեաց, եթէ գտուն նկեղե-
ցոյ որպէս պարիսպ ի մէջի առեալ էին բոլորապատ
շրջակայիւք՝ արարեալ յիշատակ նոցունց, զամենայն
ծախեցին(բ), յաւել և զայն ետ այլազգեաց(**)։ Ետ
եւ սկիհք եւ շուրջառք եւ ամենայն զարդ եւ անօթ
սպասուց սրբութեանն՝ ամենայն պակասեալ ի տոցա
ժամանակս։ Զխաչս և զկանքեղս զարծաքեղէնս և
զսկեղէնս ի հալոց տուեալ՝ աչօք տեսանէաք։ Եւ
յորժամ տուգանս անկանէր, բազում անգամ յանեմե-
զացն առնէին, և քէ չինէր առ այս մարդկան բռնու-
թեամբ տալն, զանօթսն գրաւ անուանով տարեալ առ

(*) Ցմահ[illegible]ն գրեա՛լ առաւ։ (**) Ետուրը Մարգոցիք։

(–) «Ձէ ոչ գոյր ի նոսա ուրմարութիւն և սիրտ նոցա նեղեալ էր։ Որպէս գիտեմք զոմն ի նոցանէ և լիզուտ խրճանց ննեղուտեալ հպեցոյ։

(բ) «Որոց բերանք խրճանց խոսքի գիանարութիւն եւ ոչ նոցա ոչ ի մեզաց։

խրատանս բաժին առնէին, քէ՛ խաչ և քէ սկիհ ի տունս խրատանց արգելուին, ծախէին և ի հալոց տային(*)։ Զմէն բարուքիւնս ոչ տեսաք գնոցունց կամ գյիշատակս եկեղեցոյն և կամ զպայծառութիւն կամ զչինուքիւն, այլ միայն զվերոյ ասացեալս բազում իմացեալ եւնք՝ զազտուքիւն, զպակասուքիւն եւ զնուազուքիւն. և ի վերոյ այսր ամենայնի պարտ ի վերայ պարտուց եղեալ չինքեանց, եւ ի վնաս բռնաւորացն բազում անգամ զեկեղեցին կնքել տային եւ ձեայր աւուրք փակեալ, եւ անմեղ քրիստոնեայք եկեալ յազօթս որ տեսանէին գայն, բախէին գկուրծս եւ գառնայէին։ Եւ զհասս եկեղեցոյն՝ խնկին եւ մոմին, մահուամն եւ կնոաց. կիզէքէին զանմեղ քրիստոնեայս եւ ի պիղծ սէրս իւրեանց, ի գթօսանս եւ ի գինէտունս ուտելով մսխէին եւ գուարճանային այնու գրամով(–)։ Եւ ի ժամանակ հարկապահանջուքեան անկեալ ընդ իւրեարս քէ Դուս տո՛ւր գայն, և նայ՝ գայս, եւ ի կռուելն ընդ միմեանս գտուգանս անտի տային առ ի յազքելոյ զմիւս կողմանի(**)։ Նաեւ ի տարուջ մի զմիրին ի ժողովրգենէն ժողովեցին. վասն որոյ ծեծս բազում հայհոյուքեամբ եքէ Ձո ուտէն հերիք է եւ բաւ, ես եղեց աքոռակալ եւ երեսփոխան(***)։ Բանակ բանակ եղեալ զմիմեանս յազքելոյ կային եւ ի նոյն սակին Գօզոսեանք և Ապոզոսեանք վերանէին։ Ցայտ է այսոքիւք որ արիւն և քարախ, զի անիրաւուքեամբ ժողովէին՝ ցրուի և անիրաւուքեամբ, զի գործիք եւ արարմունք չէր իրաւունք եւ արդարու-

(*) Տուբր Նիկոզոսցիք։ (**) Տուբր Գևորգցիք։
(***) և Գալատացիք։

(–) «Ոչ կամիցաս ես քրանալ զբարի. գանգիտուքիւն խորհիցաս յանկողնի խրատի. ինաց ես ամենայն ճանապարհ որ ոչ է բարի և ի չարի ես ոչ ձանձրացաս։

քիւն, այլ մեծ գաւառաւտան Աստուծոյ ի վերայ հոգոց նոցա(–): Անէծք էր ի վերայ նոցա առաքելոց և հայրապետաց եւ Սուրբ Լուսաւորչին մերոյ, որք երեսփոխան գոլով Քրիստոսի՝ սահմանադրեցին կարգս ուղիղս կաթուղիկէ եկեղեցւոյ: Մանաւանդ արհամարհողք գտան որինաց նոցա, եւ որոմ չարին էր զոր առնէին. որոմ քուսանէր եւ ոչ ցորեան յըլտեմարանս Աստուծոյ: Եթէ ի ժողովեալ գրամիցն հայէին զորքս, ապուիէին գայրիս, մխիթարէին զծառս, ընդունէին զպանդուխտս, ողորմէին աղքատի, զգեցուցանէին զմերկս, հանէին զբանտարգեալս, պաշտպանէին զհիւանդս, ազատէին զգերեալս, նաև գայլս որ վասն հարկապահանջութեան չարչարին ի ձեռս այլասեռից. այսպիսի ամենայն անաէրունչք[1](Բ): Եթէ գիշխութիւն տացուն[2] յերկաբեցից՝ կարծեմ թէ լանչեաց ձանձրութիւն գրեցից. որք բազում յանձարակութիւնք եւ ի չքաւորութիւնն զսուրբ հաւատսն ուրանային: Գանձի երիայլին ի գրուն նոցա գեղերէին հայցել ողորմութիւն կամ նամակս, զի յեկեղեցիսն քրիստոնէից ժողով արասցեն, զի նոքա էին տվոզք աւրհնութեան նամակաց. ոչ հայէին յերեսս նոցա և կամ ի միմեանս յուշարկէին, վասն որոյ և փորձանաց գինպետք ազգի ազգի՝ և ի նոյն ձեայլին: Այսքան եկք արժանի և ողորմութեան ամենայն ընդունայն մախեալ, և քէ ասիցէք՝ ո՞վ է յազգի առնող գայգոսիկ, յիրաւի տեզացիք քազաքիս ունեցեալ՝ մանաւանդ որպէս ուսեալք ի նախնեաց՝ որպէս և այլազգիք. և քէ այլազգացն

1) անտերունչք. 2) տուցուն.

(–) «Որոշեալ են իրարանց յերեսաց նոցա»:

(Բ) «Նոյն է որոյ իմաստ՝ քէ ոչ տատանիցուն ազգի յազգ տատանք յարքայական և գաւառական և նահանգական չի է չերան նոցա եւ ի նեղական յերկրի նոցա քաշք եւ վատահիք»:

քազաւորութիւն և մեծ իշխանութիւն պատճառս գիցես, ոմն և զզարմացուցանի իմ որ վասն հրէից ասա ի քազաքս բնակելոց ի կարգաւորութիւն(-):

ա. Կիրակի օր ժողովին ամենայն ժողովրդեանցն ի քազան ի գլուխս մեծ ճանապարհացն Բ Բ այր վասն ազգատոհց, որոց և այրեաց, և տան նոցա զօրըստօրէն ըստ պատչանին, և զամենայն պիտոյս նոցա անալ տեսանեն և զայլս կարգին և մարդացուցանեն:

բ. Բշի աւուր վասն հիւանդաց որ յազգին իցեն՝ կարգեալ նոցա սպասաւորս և բժիշկս և խանութ մի ի պիտոյս նոցա լի ամենայն բարեաւք: Եւ առցուն ծախս սպասաւորացն և բժշկացն և խանութիքին վաճառ՝ ամենայն ինչ ի Բշի աւուր ժողովէն հանեն որ վասն հիւանդաց:

գ. Դշի օր վասն մանկանց որք յուսումն են և յաշակերտութիւն և անտէրունչք[1]) են, զնոսա տան ի վարժապետս և ի գպրոց: Նաեւ զկաստարեալսն եւս տան ի փիլիսոփայականն հանճար և զամենայն կամեցօղս: Ասալ հանեն զոռնիկս ամենայն ծախից և կերակրոց գպրատանն և զտանց վարժապետացն նոցա և զտանց կարգացողաց:

դ. Դշի աւուր յազգս տարաբաց, որ ունին պանդխտանոցս, տուն և յարկս և ապրանս նոցա] ըստ չափու ամենեցուն: Եթէ ապրեսցին՝ վայելեսցեն և ընտանեսցին և յառաջ եկեալ խաղեսցին ի նոսա, ուստանելով զքազաքավարութիւն՝ թէ ո՛րպէս իցէ, և թէ երկիցեն ի բնիկ աշխարհն լուրհանց՝ պատվով, և թէ մեռանիցին՝ փառաւք: Այս ամենայն Դշի աւուր գրամիցն լինի:

1) անտերունչք.

(-) «Ինքնահաճ որ գործս ոչ ունին՝ բնութիւնք գործոցն գործեն»:

ե. Եչի աւուր ժողովեն ի մի, և յորժամ տեսա-
նեն զազգս իւրեանց գերի ի ձեռս այլազեաց, տան
ի փողիցն այն եւ ազատեն, եւ քէ կարի շատ գայցէ
գերի՝ բաժինս առնեն ի մէջ իւրեանց ըստ կարի, ո-
մանք մի և ոմանք ի և ոմանք միոչ ի ե առն և ծա-
ռայեցուցանեն, ոչ որպէս ծառայ՝ այլ իբրև զընտա-
նիս իւրեանց, և գլկամեցողն ապա և ուզարկեն
յաշխարհն իւրեանց։

զ. Ջչի աւուր սակս Ներուսազէմի, որ կան յազ-
գաց իւրեանց անդ, ազքատացն և կարգացողացն և
ազօքատեղաց նոցին՝ քէ գինչ եւս պիտանայցէ նոցա.
այս ամենայն առաւօտուքն ժողովէն։ Եւ ապայ յա-
միննայն երկոյզի ԻւրքաՔուն տուն առ տուն երքան և
ժողովեն. այս վասն քանատրգիչոց գի ազատեսցեն
յաւուր պասնգի իւրեանց եւ տեղին։

Եւ օր մի ի տարին ժողովեն յամիննայն Քազս իւ-
րեանց, և ի տեղին՝ տղայոց որբոց և պզերաց գգեստս
եւ հանդերձս բաշխեն։ Ցե՛ս գոր փոքր ազգ մի են
նոքա, ո՞չ ազատքէն գայնքան տրարք նոցա առնէ մերս
մի եկեղեցի այսու ազորմուԹեամբ գոր ունին բարե-
քընքաց[1]) ազգս մեր։ Բայց անազորմք էին և ազքա-
տատեցք վասն որոյ և ի կորուստ չինէր և եզեն(-)։
Անձամ էին յաւազ[2]) պահս. յառաւօտ ակէին գՔու-
Քուն և գղահվէն(*), գայն և ի խուցս չեկեղեցոյն.
և յազօՔս քնաւ ոչ գնային, այլ ի կէրտակէտն որ ժո-
գովուրգքն եչանէին չեկեղեցոյն, յերես եչանէին գի
գեռ գային կամ ի գաւիԹն մտանէր, և այն ոչ վասն
Աստուծոյ, այլ գհաշիւս չուազնոյն և հասկից առնել։

1) բարեՔաց. 2) յաւազ.

(*) Ջձաժինցիք և Սուրբ Գէորգեցիք։

(-) Սեգի գնտես իւրեանց ի նշոս եւ չնգեանք ոչ ծանեան։

Տախտակս չինեալ նատելոյ տեղիք իւրեանց հանդէպ նկնդեցոյն, ի նոյն փուքայքին նատել և ոչ անգամ յիւրաս խալէ նկարել, քանզի չծուէր կրկնել յերգելին ոչ են տեսեալ, և քէ յնկնդեցի մտանելն նոցա ոչ ոք տեսանել երբեք. և քէ լիցի ի կիրակէան գալ, ահա՛ Պրխատոս պատարագ մատչի և նոցա նատեալ յոտըն- կախ տեղիս տախտակաց և ըստ բարուց իւրեանց ըզ- հաճոյան բարբանջեն, զորոց պկինս գովին և գոմանց զազայս գրուատեն և գայլս տագնակամ յատելն և ոչ համարիմ արժանիս զազփազփուն[1]) լինուլ ի տուրբ չանչինգ: Քանզի չուանք նև պռոնիկք նև պղծագործք եղեն տեարք կանոնաց, զի կամէի զամենայն եկե- ղեցոյան չանուանէ ասել, զչկամիլն իմ ի վերնոյն բանից ծանիցիս:

Զիա՞րդ նև ոչ կացուցանիմ արժանիս պարսա- ւանաց, որք են արժանապէս արժանիք ատելս ըստ արժանեաց. զի ի վերայ այսր ամենայնի զոր չունալ էաք ի պատմագիրց՝ նքէ քաղաւորք խրոխտաբար ի մնծուքիւնս փքացեալք առնէին զկամս, այսօր տե- սաք այլօք մերովք ի տեսս. քանզի և յայլազգիան տեսաք մեզս նև գրեալ էին փոքուանց կամ զմնծա- մնծաց, զի ի մնծէն ներսիսէ, որ տարի է ՌԻՃ, զայս ոչ ոք գործեաց նքէ ոչ Տատմպօլոյ վերոյ տ- տացեալ իշխանք և եկեղեցոյն, որ զգիրն մօհրե- ցին քէ Հոգով և մարմնով կանգնեալ կամք: Զայս Տուրբ Մարգացին՝ քէ ի նախանձու և կամ չինքնահա- ւանուքինէ՝ ի ժողովն ոչ կայրն և զիւրեանց եկեղե- ցոյ մօհրն կտրեցրին քէ մեզ պիտոյ չէ, այլ զա- ւագիրիցուննն[2]) բռնուքեամբ առին, և այր մի նս որ յառաջագնեն ընդ նոսա էր: ԵՒրք ՅԴ տատանալն մար- գարէք, խաւարին ժամք և ոչ տուքնջեան, մարին ի

1) զազրագործս. 2) զաւագիրիցուննն.

հանդէս չարուքեան, և որպէս գրեցաք՝ քէ ո՛րպէս հակառակեցան պատրիարգին Թուման, և հանապազ երքային գային ի միւսանն, եւ ի ծածուկս հաճեցեալ գկամս փաշային, ասեն՝ Մեք տացուք գի քսակ պատանեաց և քեզ եւս այլքան գրամ։ Նաև առաքչոյն եռաւն կաշառս, գի ի մէջ գրոյն մահագիր խառնեալ ընդ գահվէճի արբոյց նմա առաքային ի գիշերի, յորմէ խոցեալ ի սիրտն՝ պատառէր գոռալով, ասէ, և աղաղակէր առ Տէր։ Եւ իբրև գոչէր որպէս զառիւծ ի սրտէ, իբրև քէ սլաք մտեալ ի քովն, և ի ձայնէ աղաղակին ամենայն բանտն գղրգէր և բանտարգեալքն ի նմա սարսէին։ Նոյն ժամայն ի ձեռն գահճին ըմբռնեալ կալեալ եւ յերանացն ճմլեցուցեալ, գի անգէն անկեալ նուագէր եւ գառն եւ առաքիկ մահուամբ եւ կսկծանօք գհոգին առ Տէր արձակէր Թուման՝ յաւուր Շաբաթի երեկոյին որ կիրակի լուսանայր՝ յՕգոստոս ամսոյ առաջին աւուր։ Եւ յորժամ լուան նոքա՝ ըզխրախճանս նոցին գի պատմեսցուք եւ գուրախութիւնս նոցա ո՞րպէս գրեսցուք. որպէս գՏրդատ համարէին, որ յաղթեաց գԼիկանէս, եւ որպէս գԱղեքսանդր որ վերացոյց զՔաղաւորութիւն Դարեհի Պարսից եւ գՊօվբոսին Հնդկաց. պանծալն պարծիլն անասելի։ Բայց ոմանց կերոնաւ և գամբարիւք վառելովք ի ձեռս խաղային(*), ասէ, ի գիշերիս այս. եւ այս՝ խորհրդեամբ փաշային քեհեայի եղև և առաջնուն։ Եւ առաւօտուն կաշառեցին գմեծ գառին գի սիմիլ արար քէ Մահուամբ մեռաւ՝ վկայեալ Տաճկաց, տեսանելով ի վերայ նորա գի տեղի խոցոյ եւ վիրաց կամ ի պարանոցն կապուտած և կարմրած տեղի չուանն էկենալն, իբր քէ ոչ ոք է մերձենալ ի սայ, այլ իւրով մահուամբ մեռանալ։ Եւ ձգեալ արտաքս գմարմինն

(*) ի մուրբ Գէորգ։

նորա, ոչ ոք քոզին մերձենալ ի նայ, ոչ քէ կարգաւորապէս քաղել՝ այլ եւ ըստ սրինի. զի ձեայր յաւուրն Բչի (2 Օքտ.) այնպէս ի գետնի, արկեալ ի վերայ նորա կաւոր մի խարիւ՝ Որք ի նոցանէ(*), որ վերաստացան, յերկուց եւ յերից կանխեալ ընդ առաւսան երքեալ տեսանել՝ քէ իսկապէս նա՞յ է, և քաջնէին զմարմինն մեռեալ և առ ոտն աքացի հարկանէին զգլուխն և զերեսն՝ մնծաւ հայհոյութեամբ հանգերձ։ Եւ այլք ի նահմ տեղւոջն զմօրուսն այրէին քէ Դո՞ւ ես իշխող մեզ, բախելով զկուրծս՝ Ա՛յ քէ տեսաք զքեզ յայգմ ժամու. առնէին եւ վրէժ ի մեռելոյն։ Եւ խրատեալ զբանգապետան զի ի ծով արկցեն, որ եւ արարինն. զի առ երեսս ծովուն ի վերայ երեսացն քաւղէր, որում սակի խայտառակ եղաք զրացեաց և ծագր քշնամեաց այլասեռից՝ յաւուրսն յայնոսիկ։ Ո՛վ մնծի յիմարութեանս՝ առեմ այնոցիկ, ո՛վ մնծի մոլութեան, երբէք հերձուածող զոր տեսցիք նզովս՝ չէր մնծ քան զԱրիոս և զնեստոր և զայլսն, որոց եղև վրէժխնդիր Աստուած. զուք ընդէ՞ր արհնատէր և մարգասպան եղէք ամենայն քաղաքս վասն նորա։ Երբէք չար էր՝ վասն է՞ր ոչ չահեցայք զնա յառաջագէմ գալստեան նորա, և քէ վատ էր, որ ոչ ընդունեցայք և ոչ քոզիք յկկղեցիսդ, վասն որոյ և նէ գնաց, ընդէ՞ր և տպա ուր որ գնաց ոչ քոզիք մտանել ի բոլոր գիւղսդ և ի քաղաքդ. քուզքս ի վերայ քզքից քէ Մի՛ ընդունիք։ Զի՞նչ առնէր եղկելին. կամէին տգաս քէ տանկանայր՝ ուրանալով զհաւատն. բայց նա ձեայր գաւուրս իւր անայցելու, մինչև տպանին և հասին ըզձանաց իւրեանց և զի առին և վրէժ ի նմանէ. և նորայն գտատոտան առ Տէր ձեաց, գոնէ քոզուքիւն մեզացն գտանելով։ Եւ զհարեղան առա-

(*) յՁՁՁնցիք։

ցին հանել, յորժամ ապգայինքն ետուն արգուհալ քէ Մագաւուր է նորա. և նոքա գրել ետուն քէ Գործա-
կալ է և քէհեա, որ Ճնաց և նա անգ(*):

Նա և գայս հպարտուքիւն մեծ ծանիր, որ գվէ-
զիր ասէին այլ ոչ գարժցի՝ մարգարէական սուրբեան,
որ կայր նա ի պատերազմն Մանարի, պատճառ յուսոյ՝
եթէ ես ամ պատերազմ ձայնեցին ու քէ վասն այսմ
զօրքն գնալ սպանանելոց են։ Ու յետ աւուրց տօնի
Վերափոխման Սուրբ Աստուածածնի, առաքեաց վէ-
զիրն գԲէհնան փաչա գոմն, որ երթեալ գափուտան էր,
ձգ սէրէասքէր գի եկեալ պահեսցէ գԱւակիւտար ու
զբրջակայն. և նա եկեալ՝ ձորս հարքեալ, խանգակս
բացեալ և գամենայն լազըմճիք ըմբռնեալ տանէին
ի բանել. և որք ընդդէմ նոցա գային յամենայն ազ-
գաց՝ բանեցուցանէին, և զգինէվանառան ամենայն
քաղաքիս յամենայն աւուր իրրև զերկաթակապ գոր-
ծակալօք տանէին անգ։ Նաև յամենայն գլուխս ճա-
նապարհացն գրուեցաւ մեծամեծս փայտեայ ճապկք չի-
նէին, որ ասի պարմազափի. և այս ամենայն անգէպ
և ընդ վայր վասն ապատամբելոցն արարին գի մի և-
կեալ ապատանկեսցեն. բայց նոցա ոչ գիմանայր
գրուեանքն և ոչ տուեանք, եթէ ի հիմանց ոչ տապալէին,
և գամենայն քաղաքն սրոյ ճարակ տային։ Մակայն
անիրաւուքիւն քնակչաց տեղոյն և հարկատուից յա-
ւուրան յայնոսիկ, բայց այս խորհուրդ՝ եթէ գայս լան-
լով երկիցեն, ասէ, հեռասցին և կամ հնազանդեսցին՝
տեսանելով գպատրաստուքիւնս։ Ու քէ ո՞յք են ա-

(*) Լատս. Ասա գրեա՝ Զչի պահոցն (13 Օգոս.) գալուստս Մարտիրոս վարդապետին ի կաֆայ և Դչի Ամաչնին (18 Օգոս.) գնալն ի գէմ վէզիրին առ ի գէլբչատ գանկատ ըստնաց՝ վասն Երուսաղէմի։

պըտտամբեալքս եւ յորմէ՞ հառի։ Ուստեր նախ ի գիրս, որ Հասան Ապագայ գործակալ Իփչիրին յորժամ ել և գնաց յԱրճեշ, ետուն նմա զԱմիքի ի փաշայու-թիւն. և վէզիրս ետ նմա զԲերիայ, որ և ի Դամաս-կոս նստէր որդին Քայարի։ Եւ յորժամ ել եւ գնաց յէտրէնէ, առաքեաց նոցա պատգամ հրամանաւ սր-քասի քէ եւ գուք եկեսջիք զի երթիցուք ի պատե-րազմ։ Եւ նոքա ելեալ տեսանել զպատրաստուքիւն ճանապարհի, կրկին առաքէ քէ Ջկայ պատերազմ, նստէ՛ք լտեղիս ձեր. և ապալ առաքէ քէ եկէ՛ք, փոր-ձելով առնէր զայս, քէև ի ներքուքինէն։ Ուստեան նոքա, և մինչդեռ էին ի ճանապարհ երկոքինս՝ ասեն ցմիմեանս. Ո՞ւր երթամք յուսկան ազուիսուն, ո՞ւր երթամք ի կեր գազանին, ո՞չ ապաքէն ամենայն աշ-խարհ չայ ի ձեռաց նորին. և յազգս մեր մայր չձեաց ցամաք ալօք քէ չելաց. նաև զսիրելիս սրքասի որ-պէս գիտէր սրտաբ, օրինակ մեզ՝ Ջապչին և այլն ա-մենայն. առ իւր ի գնալս մեր ոչ քոզուս, ո՞ւր երթամք՝ ասելով միսթանէին միսկամ, և համախո-հուք փոքր փոքր գային առ ի վայր և ժողովէին առ իւրեանս բազում եւ անքիւս, որք իւրեանցն էին եւ որք էին փախուցեալք ի վէզիրէս։ Նա՛ և ապատամբք բազումք անքիւ զօրովք հեծելովք գային նստէին ի գաշտն որ կոչի Ոսկի՝ ալինչ ասելով զերկիւղ։ Եւ յետ այլ պատգամաց, ասէր ապա և առ քաղաւորն. Տացես զվէզիրն քո եւ ալինչ եւս մեր կամք, եւ քեզ ծառայեմք մինչև ցմահ և զոր հրամայես՝ կատարեմք ի սպառ։ Եւ քաղաւորն պատասխանէր, որ նստեալ էր յէտրէնէ, Գնացէ՛ք նստէք ի մանուպա ձեր զոր ավետ եմ ձեզ և խափանեցէք[1]) զխորհուրդս, զի չէ ժամա-նակ տալոյ զայլ, չէ առնն փոխելոյ, քանզի ի մէջ

1) խաբանեցէք։

կովոյ կայ և ի բերանս քշնամեաց ի պատերազմի։ Ըստ այսմ բազում երկնչելութիւն լինէր առ քագաւորն և առ Հասանն զբազում աւուրս, մինչև բարկանալ քագաւորին, զառաքեալն ի Հասանէն սպան, եւ որ ի Հասանն էր գնացեալ ի քագաւորէն, նա եւ զայն սպան։ Եւ յերկարէր բանն եւ սպառնայր քագաւորն, եւ նալ նստեալ կայր անհոգ եւ չէր հարժէր ի տեղւոջէ իւրմէ։ Եւ լուրն արձակեցաւ յամենայն տէրութիւնս նոցա եւ համբաւն մեծանայր եւ ամենայն աւանք եւ գիւղք սարսեալ դողային յոյժ՝ քէ այսօր գայ եւ վազիւն, եւ գնէին պահնորդս յամենայն տեղիս, այլ եւ ի Գուբաս քաղաք եւ յԻգնիմիտ եւ ի սահմանսն զպահապանսն բազմացուցանէին յաստուած։

Եւ եղև պատերազմ վէպիրին այսպէս. ա՛ռ ի վերայ իւր զպարսն Գուզատնայ զօրօքն իւրովք, առ եւ ի վերայ զպարսն Ուլխոս զօրօքն իւրովք, այլ եւ հրամայեաց արքունի առ գլխաւորն Թաքարին որ խան ասի, եկեալ նալ այր քաջ եւ զօրաւոր բազում զօրօք եւ յապրոզ գտեալ՝ աւար էառ զերկիրն Մաճարի ի ներքուստ կուսէ, եւ Մաճարիքն ի նոյն դիմէին։ Իսկ ընդ վէպիրին ելոզքն զգուրս կոյս աւերեցին ընդ սակաւս աւարաւ և նուազս գերելով անդ, որում անուն տեզոյն ասացին Ճանօվայ։ Եւ զի Թաքարն ի ներքուստ նա աւերուքիւն եւ բազում կապուտս հանեալ հանգերձ գերովք, ձեացեալքն հնազանդէին, ասէ, որոց եգ իշխանս և գլխաւորս ի նոցին ազգէ. բայց զգներիան բերեալ ծախէին և ցրուէր յամենայն երկիր։

Եւ փոյթ ընդ փոյթ առաքեալ զաւետիս առ քագաւորն, և անգէն խրախուքիւնս առնէ և առաքէ ի քազաքս գայս լուր՝ բարեկենդան Սուրբ Ծնեայն (5 Աթոռ.), և մինչ ի Շաբաթ երեկոյին տօնանմայ արա-

բին ի գիչերի եւ ի տուընջեան, յոր երկրորդում աւուր եկն գայմախամ Իսմայիլ փաշա եւ նատաւ. եւ նոյն գԹէգէտանն փակ պահեալ գի գիչերն, հրամայեաց բաց ձգել, եւ այնու առաւել խրախճանային եւ յերրորդի աւուր մինն ի կանանց յղի գոլով՝ ի բազմութենէ ամբոխին ներգործեալ վիժեաց զոզայն. եւ լուեալ նոյնպէ արարին, զի ի կանանց ոչ ոք երեւէր ի չուկայս եւ ի փողոցս յաւուրսն յայնոսիկ(*):

Զայս լուեալ Հասանիքն զօրանային, կատարէին, յարձակէին, արշաւէին, գայլին, մերձենային եւ նըզատէին ի գաչտն Պրուսայոյ անհուն բազմութեամբ զօրաց եւնկիչէրաց, սփահոց, ազանեբաց, փաչայից ժԸ–ից։

Եւ Քափաւորն լուեալ զայս առաքէ հրամանս այսպէս Քէ Դուս որ իմ սիրելի լալայ ես՝ ՄՔէ զամենայն Քափաւորութիւնս քրիստոնէից խափանեալ[1]) քեզցես ինձ, չես ինձ արժանի, այլ ի հասանել գրոյս Քարզ պատճառանաց վազվազակի հասցես ասու։ Եւ նա (Գէօփրիւլին) եւ եւ գայլ չէտրէնէ առ Քափաւորն, եւ ոչ նստեալ անդ աւուրս ինչ, այլ ամենայն զօրօք եւ մեծամեծօք ընդ Քափաւորին եկեալ նստան մերձ ի քաղաքս ի պաղատն կայսերական ի կոզմս արեւմտեան, որ ասի Տաւուք փաչա, ի Հոկտեմբեր ամսոյ ԺԴ–ն։

Եւ յերրորդ (աւուր) գալոյ նոցին (16 Հ–փ. Ե–Բ–Ը) անկաւ կրակ ի չարսու եւ անցանէ գնայ մինչ ի Սուլքան Գայազիտ եւ մի ծայրն՝ ի Ղափաչին եւ մի ծայրն Գարմազափուռն եւ Եայճուն առ Տիւանեօլին հարաւակոզմունն։ Եւ վէգիրն եչեալ անտի եկն ի Գէհատխանան

1) խարանեալ։

(*) Լուս. Ասա գրէ գեղումն հաբեչին յերրորդ աւուր գալոյ Իսմայիլին։

ամենայն բանակօք, ոչ մտանելով երթեք ի քաղաքս. այլ քէ անցցէ յայնկոյս երիվաւ ի վերայ Հասանին, և եղեալքն ընդ նմա ոչ կամէին, քանզի ձանձրացեալք էին և զգացաբուռն կամէին։ Այլ նայ կամէր և ոչ կարէր, խորհէր եւ չհնարս որոնէր զի զինքն փրկէր եւ զայն պարտէր. և անուն քաջութեան զայս ևս ընդունել՝ յուզէր և որոնէր ճարս, և այնու զինչ կամելով առնէր՝ զայն պարտելով և զզօրսն նուաճելով։ Եւ մինչդեռ ի Քէհատխանան էր, հաճէր զմիտս զօրապետաց, զօրագլխաց և ազաներաց ոփահուն՝ զառճիկան յաւելացուցանելով, և զօրացն ասացեալ քէ Ջէնր յիւսկիւտարն տալոց եմ. և զօրացն միտ յայս ընթացեալ՝[1]), փուքայր զի ի քաղաքս մտցէ եւ արասցեն ընդ նմա զինչ և կամեսցին։ Այլ թագմահնարն այն տայր զօլօֆէն անդ ի Քէհատխանան և այնու ևս փոքձէր՝ քէ ո՛յք են զինչ ասացողք և ո՛յք են որոնչողք՝ իմացի։

Եւ յետ աւուրց կիրակէի աւուր Հոկտեմբեր Լև, փոյթ ընդ փոյթ յանկարծ անց յիւսկիւտարն եւ զքաղաւորն ընդ իւր, եւ ազազակել ետ մունետկացն՝ Պատերազմ ունիմ ի վերայ ապստամբին. ամենեքեան պատրաստեսցին որք են ծառայք քաղաւորին։ Եւ ամենեքեան գիտ ոչ ևս հանգեալ էին ի տունս աւուրց երկուց, անցան յայնկոյս ի բանակ յիւսկիւտարոյ։ Եւ յետ Բ աւուր հրամայեաց ամենեցուն ի բաց լինել յինքենէ քէ Ջունիմ սէֆէր, փորձելով զայս պատճառ գնելով։ Եւ որք սկսան երիվաւ յիւրաքանչիւր հանգիստ եւ ի տեզին, գնոսա կալեալ զամենեսեան ապանանէր աւր ըստ աւրէ ի ծովափն Իւսկիւտարոյ Լ–ից[2]), Ի–ից և Ծ–ից անպակաս՝ յըսպահոց մինծամեծացն և ոչ յաննշանից քէ Դուք Հասանլի էք և ի մատ

1) ընդանայր. 2) Լ.

նորա երթայք։ Վասն որոյ պիտանին փակեաց ի քա-
զաքին, զի ի գուբս նստցին ի քաղաքէս։ Եւ ընդ ա-
ւուրան հազար արանց կամ երկուց եկին ի Հասանէն և
մտին ի տունս Հայոց և Տաճկաց յՈւսկիւս[ար], իբր
ասել առ վէզիրն թէ Ահա՛ հազիւ պրծաք ի նմանէ։ Եւ
վէզիրն մեզապրէր, և նոքա ասեն. Ո՛վ տէր, եթէ ոչ
լեալ էաք ընդ նմա, զմեզ ի սուր անցուցանէր. յիր-
կիւղէ եզաք առ նաս։ Եւ կալաւ զգլխաւորս նոցին և
սպանանէր անդ։ Եւ տեսեալ զօրացն՝ պիտամարտեցան
ի մէջ բանակին և ձգեցին ի վէզիրէն արս քանի կամ և,
և փախեան ի լերինս, զի չունէին երես և առ Հա-
սանն։ Եւ գայ տեսեալ վէզիրին՝ իսկոյն մարդ հա-
ւաքեալ յամենայն ճանապարհս լերանց՝ ըմբռնէին,
բերէին, սպանանէին յամենայն աւուր բազում արանց
ի մէջ բանակին։ Եւ իրրև գաբչէին ի գիշոց նոցին և
յարնէք, մեծամեծ խորս և փոսս փորեալ բազում՝
անդր ընէին եւ ծածկէին։ Զայս լուեալ Հասանին՝
փուքանակի առաքէ զօրս յիւրոց, որ էր գլուխ որ-
գէգիր Իփչիրին, եկեալ մերձ յՈղնիմիտ, որ կայրն
անդ Դ փարսայք, զոր վէզիրն առաքեալ էր ման-
աւսպին իւրեանց երթալ. եւ Ք պատճառ զի զօրօք
առաքեաց՝ եթէ մտանել կարիցեն ի վերայ Հասանին,
փորձելով զզօրութիւնն նորին։ Վասն այսորիկ իմա-
ցեալ և Հասանին առաքեաց զլաճ Իփչիրին, զի զա-
մենեսեան զփարսայս ընդ զօրօքն ի սուր անցուցանէր,
մինչև ի փախելոցն բազոք բարձեալ ազատական ան-
կան ի բանակ վէզիրին թէ Այս ինչ գործեցաւ։ Եւ
եղև կրկին վէրք մեծ վէզիրին և ցամաքեցաւ արիւն
սրտին, և նա ձայնել ի քաղաքս և ի բոլորն թէ Սէ-
ֆէր ունիմ. և խորհէր հնարէր՝ թէ գի՛նչ արասցէ։
Եւ յետ սակաւ աւուրց այն լինելոյ, եկն յայսկոյս՝
մտանելով ի քաղաքս և առնէր սիւան և ի գործ իւր։

Եւ Հասանն նաս եւ ամենայն փարսայք ընդ նմա

անհուն գօրօք խաղաց գնաց ի մօտակայ վայրէս մերձ առ Բերբիայ և նստէր անդ ոչինչ հոգ տանելով՝ եթէ խանաբհնացի կարմրընչեցին, և կամ թէ յորում ժամանակի եւս գնայ իւրն համարեալ, զի թագաւորն յուսայ իւր՝ գնայ սպանցէ, և ինքն գեր ի վերոյ քան գնայ, ասելով՝ Ջի՞նչ պակասութիւն իմ, առաւել քան գնա և գեր քան զթագաւորս։ Եւ զինքն բարեկամս և հնազանդ կերպիւ՝ գօրս եդեալ գօրագլխօք, և զգանձն Եգիպտոսի յղէր առ թագաւորն, որ կայր ի վազուց աթգիլեալ ի ճանապարհի յերկիւղէ նորին, որ ամենից յուն կարծիք էր՝ թէ յափ[չտակեալ էր]։ Եւ վէզիրն խորհէր ընդ այն՝ թէ զի՞նչ արասցէ, զի ոչ յիտ կային և ոչ յառաջ, և զմանուսպ նոցա տուեալ էր այլոց փաչայից, և ոչ կարէին նոքա երթալ անդ կամ ի ճանապարհ այն ելանել։ Եւ գրեաց յարքայէ գիր առ Մուրթազայ փաչայ, որ տիրէր Ամթայ, որ ունէր օրինակ գայս. Դու որ Մուրթազայ լալայ իմ ես, կամիմ զօրաժողով առնել գո և ելանել ի վերոյ սպընատամբին և հակառակին իմ Հասանի. եթէ յապիեցեր գոյին մեծաւ քաջութեամբդ՝ սիրելի մեծ ունիմ զքեզ և հաւատամբիմ մինչև ցմահ. և յիշխանութիւնս իմ և ի տէրութեան իմում որքան պիտոյ է քեզ զօրս՝ պատրաստեացես և արասցես լինել ընդ քեզ, և ճանկատեացես գու գոյին մեծաւ իմաստութեամբդ. արի յիցիս գու։ Եւ գրեալ առ ամենայն պէկլէրպէկիս և փաչայս երթալ և ազնել նմա՝ Անատոլոյ և Ռումէլոյ, Ամթայ և Վանայ, Սեբաստիու և Մարաչու և որք որ ի մուհաֆէզէ կային և որք ընդ նմա ի պատերազմ էին, զամենեսեան առաքեաց առ նա, և ասէին՝ Այսպէս պատրաստեցաւ զօրքն մինչև ի անգամ ձի առանց, քանզի նէֆիրամ անուն արարին հրամանաւ և խէթով արքայի։ Եւ նա տեսեալ զգիր, էր նա և գազանահաւատ և մեծանանձար խիստ, ժողովէ փոքր փոքր

և սակաւ սակաւ, և չեռք բազմութեամբ յայտնապէս
ել ի վերայ նորա, և ճակատեցան ընդ միմեանս մե-
ծաւ յարձակմամբ ի գաչեն որ ասի Ըլլըզըն։ Եւ Հա-
սանիքն, քանզի անհուն գոլով քաջութեամբ և բազ-
մութեամբ զօրուն, պարտէին[1] զնա անասելի կոտոր-
մամբ և զաւարս և զկարասիս ջորովք և ձիովք բեր-
ձեալ զօրացն՝ առեալ ի բանակս իւրեանց տանէին։ Եւ
Մուրթազին խոցեալ Ի ձի՝ սէգ փոխէին և անգէն
մազապուր սակաւ արամբք փախեալ և ապա հովա-
նայր, ասէ, ամօթով հեռանեալ մերձ Ամիթայ քաղա-
քին։ Եւ յերկուց կողմանց լինէր կոտոր[ած] իրրեւ
արանց Ի[ր]—ացւ։ Եւ յորժամ լսէին և գայր որ ասաց,
նա՛ և վէզիրն գայրանայր բարկանայր ի վերայ Մուր-
թազին[2]. և կայր ի տագնապի։ Դարձեալ գրէ նախա-
տինս նմա հանգերձ յուսագրանօք քէ ի կնոգանուքիւն
կայսեր մերում գրամ մեզ չէ պակաս և գանձ, և ոչ
և զօրականս պակաս։ Դարձեալ միւսանգամ հայեա՛ց
ի քեզ, և իմաստութեամբ և հնարիւք ժողովեացես այս
հազարս և քիւրս որչափ և կամեացիս՝ ի սահմանս և
ի պետութիւնս Տիգրանակերտին, զամենայն միանգա-
մայն գոցես. նաեւ փաչայքն որ ասէն առաքեալ
իմ՛ քեզ օգնեացնեն. ոչ լի՛ր։ Եւ նայ հնարէր և ոչ
կարէր, կամէր առանալ անուն և ոչ գիմանէր, փա-
փաքէր մեծ փառաց և ոչ յառաջէր, տեսանէր զզօրս
իւր պատրաստեալ եւ ի նոցունց առաւել երկնչէր,
խնգրէր գմահ և ոչ հասանէր։ Քանզի սատականայր
հրամանն քաղաւորին՝ Զի՞ նստիս, զի՞ յամառիս, զի՞
յուշանաս, զի՞ երկնչիս, ե՛լ ի վերայ Հասանին եւ
պարտեա՛յ զնայ։ Վասնզի վէզիրն ոչ կարէր գնալ
յերկիւղէ եւ ի կարծեաց ասել զօրացս, զի ի
ճանապարհին գուցէ սպանցեն եւ գամ ընդ նոսա լի-

1) պարտէր. 2) մուրթուզին.

ցին. և քէ անդ գնայր՝ անդ գիպեննայր[1]), զի քէ ինքն անկանէր ի ձեռս նորա՝ մեծ ամօթ գնէր զայս։ Եւ գլխզուազարիլն յայլազանց արժանիս ոչ համարէին՝ քէ ազգ մի ի վերայ իրերաց յարուցեալ կան յերկուս բաժանեալք. և կային ի մէջ տարակուսանաց ըստ այսմ իրից մոտածուքեանց, այլ լռելեան կամէին հաստուցումն առնել իւրեանց ատելեաց։ Այլ Հասանիքն օրըստօրէ առաւելանային, բազմանային, փարքամանային, առատանային զօրօք և գանձիւք ամենայն փաչխիւքն արևելեան՝ բաց յիշխանէն Արզրուամայ, և նա ի գործի իւրում կայր և էր յահի։ Երևելին ընդդիմակ Մուրքազան էր, և նա ևս պարտեաւ։ Եւ իրր գքազաւորս նստէր անահ և անհոգ, նաև գքազաքան սիրապետէին և նստեալ էին ամենայն բանակօք մերձ քազաքին Բերիոյ՝ ի գաչտն, որ ասի (դուռ)։ Քանքար Ահմատ ազա ոմն ի նոցանէ, որ էառ գԲեհքահանայ բաժին փաչայութիւն, գայ ի վերայ Մուրքազին. յամեժամ Ահմատան որ ունէր ըՌ աթս, (քառք անընդհատ) գՄուրքազան որ ժՆ ազով փախաւ ի Հալապ։ Եւ պատկառելքն ի տեղս տեղս իջեալ՝ ի չէնս և ի գիւղս բազում ոճրագործութիւնս առնէին, քէպէտև չէր յայտնի յերկիւղէ մեծամեծացն։

Գալուստ վէզիրին ատացաք Հոկտեմբեր ԺԴ էր, որ բանակ արար ամենայն զօրօք ընդ քազաւորին։ Եւ Իսահիճանն իրր քէ չիք ի մեզս լեալ, առեալ արս ի մեծամեծաց յարանցն յայնցանէ, երթեալ առ վէզիրն և ասէ ընծայ նմա. իսկ նայ լուեալ էր գնգնալն։ Նաև համախմբեալք ի միասին Մուրք Սարգսի աթոռակալք եւ երեսփոխանք՝ իշխանք կոչեցեալք ըստ իւրեանց, հրեռւեալք, քերկրեալք եւ ուրախացեալք

1) անդիպեննայր.

առաքեցին երիցունս Բ եւ զոմանս նմանիս իւրեանց ի Չէքմէճէն՝ տալ արգուհալ վէզիրին քէ Զապտրիարքն սպանանոզ այսքան ոգիք են, որ ընդդիմացան նմա եւ հակառակեցան հրամանի քումի, եւ զտուգանս մնոզ կրել տան. գաւառտան խնդրեմք ի քէն։ վասն որոյ արդիւնէր զհուհիճան և զայնս առ իւր ի կալանս երկաքեօք։ Եւ այլք ի Գալատացոց ընդ նոցա եղեն և զհաբեզայ Թումային յարուցին յայս գործ։ Քէպէտ և նայ ունէր առնելիք, բայց երկնչէր՝ զի մի եւ ինքն մեռցի ի ձեռաց նոցա, զի անողորմք էին։ Եւ եղեն չարկամք իղ—իցն Սուրբ Սարգսցիք՝ ունելով զհաբեզան ընդ իւրեանս քէ Արեան տէր են նոքա եւ մեք գրամս ոչ տամք։ Զի յառաջագոյն յետ սպանման Թումային ե քսակ պահանջէին ե եկեզեցին ի Սուրբ Սարգսայ. և նոքա ասէին՝ մեք գի՞ տացուք. և նոքա ասէին՝ Աւագերիցու կայ կնիք մի եւ իշխանի միոյ։ Եւ նոքա ասեն՝ Հոգիք նոցին մի՛ ձեռացեն ի նոսին, տացեն նոքա։ Եւ բազում կռիւ լինէր եւ ազմուկ. գինէին, կռվէին բազում երիվարիւքեամբ առ գայմախամեն, և արք ոմանք Բ քսակ կորեցին գի տացեն, եւ այնու եւս ոչ կամեցան, այլ փակէին գժամատեղն. ոչ մատչէր պատարագ, ոչ լինէր ազօքս, այլ քնաւ կռվոյ տեզիք եւ քէատրոն չարուքեան։ Եւ յորժամ եկեն վէզիր, եռաւն արգուհալ բազումս, այնքան՝ մինչ գի ի քարկուքիւն չարժեալ վէզիրին ըմբռնեաց կալաւ ի քահանայից եւ յիշխանացն ասացեալ Ը ոգի եւ եզ ի քանաս գրոյ մահապարտաց, վասն գի երիայքն հանապազ ի Տաւուք փաչան եւ ի Քհահախանան մեծաւ գուարճուքեամբ, ուր կայր քառնակ Տանկաց։ Քանզի երէք նոքա ի յայլ գերեցան՝ երէք գհերձուածոզ սպանանեմք եւ գչար, եւ ասքա՝ երէք արեան տէր ասքայ են, պարտիս որ ոտցա հախէն գաս. գերելով ասքա այսպէս ի ձախ։ Եւ հաբեզայ Թումա—

յին գտեալ երես յոյժ ի բռնաւորաց, ըմբռնէր զոմանս քէ՝ ի նոցանէ ես, և զայլս կալեալ դրամս առնէր եւ պրծուցանէր, զի ունէր ընդ իւր չաւուշս եւ զիր հրամանաց ի վէզիրէ՝ զի զքսան եւ չորս արսն գոցէ։ Եւ նոքա փախան և եղեն աներևոյթք։ Եւ նա մոռանէր տանէ ի տուն, որոնէր եւ յուզէր ի փողոցս եւ ի ճանապարհս, ի չուկայս և ի խանուքս՝ ի ցերեկի ոչ միայն, այլ և ի գիշերի՝ վրէժխնդիր յոյժ։ Սուրբ Սարգըսցիքն[1]) որ վերատացաւ՝ արդարացուցեալ զանձինս իւրեանց ի բանն, և բազում անգամ և օրըստօրէ կային ի մէջ ուրախութեան և զհաթէզայն ընդ իւրեանս կոչմ ունէին և ասէին. Ջանացո՛ւք և քաջ երևեցուք ի վերայ նոցա, և զի մի խնգասցեն նոքա ի վերայ մեր. և զմահ նոցին չեզուաւ ազատակէին։ Զի յորժամ անց յիւսկիւտար վէզիրն, երքայինն սատպ և գայինն զի մահացուացէ զնոսայ։ Եւ կային ի մէջ գրոյն զաւուրս բազումս արքն այնոքիկ, և այլքն փախըստական մնեալ երկիւղիւ՝ զի մի գոցին, մինչև կայանաւորքն մարդ առաքեալ առ սէֆտէրտարն, զի ունէին ծանօթութիւն ընդ նմա։ Ետուստ նա առ վէզիրն քէ Զի՛նչ չահ եքէ սպանանես զնոսա։ Ի քսակ ըստակ կտրեալ հանեցին զնոսա։ Ցայլմէ կամէին սակաւ գրամիւ հանել, արգիլեալքն ոչ կամեցան, զի եյցեն և կրկին հրամայեսցեն և իշխեսցեն որոց և կամիցին։ Այսպէս մոլութեան ոգի լինէր յազգս մեր, առաւել և ընդ աւուրսն ընդ այնոսիկ միմեանց նեղհակառակ տվին այժմ, և զի՞ քսակն առեալ յումեքէ[2]) զի տացեն յետոյ։ Եւ յորժամ նոքա եյին ի գրոյն, Սուրբ Սարգսայ չարքն ամօթալից և գլխիկոր եղեալ փախեան և ի կոթուստ եղեն աւուրս քինէ՝ մինչ ի Ղարքաչ։ Եւ յետ աւուրց եկին և արարին գաւառաճանու-

1) սր սարգսիքն. 2) յումեմն.

քիւն ընդ նոսա՝ քէ Ա ըստակ տվոզ չեմք ձեզ. եւ գնացեալ ևս բազում անգամ տային արգուհալ անգ յՈւսկիւտարն քէ Ըստակ տվոզ չեմք, եւ նոքա վարէր զսոսա և հալածէր, զգուէր և գաբչէր յարգաց մերոց, քէպէսեւ այլ իրաց՝ որք երթայինն առաջի նորա։ Գնացեալ անկան առ Մահմուտ ազայ՝ աներորդոյ վէզիրին, խոստանալ նմա Գ քսակ ըստակ կնքով ամենեցուն, միայն քէ հրաման առցէ ի վէզիրէն զի ըստակ ոչ տացեն նոցա։ Եւ վէզիրն յանձնեաց ի գարշուքենէ նոցին առ ատֆտէրտարն զբանս։ Եւ ի պօռատանեոյ օլօֆէն (դ-ր-դ) և եղեալ խատէքի ի վերայ Սուրբ Մարգոցոց, որ առին Ը քսակ ըստակ, որ գոր-ծակալ անուամբ էին ի վերայ եկեղեցոյն, մինչև անպակաս գումննայն վճարէին յանմեղ և ի խնդճ ժողովրդենէն։ Եւ ո՞րն պատմի Սուրբ Մարգոյն չարեացն զիա՛րգն և զո՛րպէան՝ քէ զի՛նչ արարին ժողովրդոցն անաւրգանօք ի հաւատս, յօրէնս և յեկեղեցիս, ի կին և յորդիս, յայլս և ի մօրուս. ի գիշերի չրջելով ի գրաւնս ժողովրդեանն արբեալք և պինեալք իբր ըզկնեալ (?) եկեղեցին ընդ պօռատանեօք. զոմանս ծեծէին և զայլս ի կալանս պահէին, զոմանս յերկաթս ոտքն էրտարին տանէին, մեծաւ ամբարտաւանութեամբ և հպարտութեամբ ժողովէին զդրամս յանմեղաց քրիստոնէից, զառաջին և վերջին ՁԱաս ոչ իւրեանց հաւուցեալ՝ այլ տառապեալ ազգիս. իւրեանք գործեալ զչարիսն և այլոց վճարեալ։ Եւ յայս պատճառս ամենայն եկեղեցիք որ ի քաղաքս, զատ ի տունէոց քրիստոնէից զտուգանս՝ Ե Ե քեռ ըստակ պարտական Ճեայր։ Եւ այսպէս ծ տարի յաւել ի մէջ չարութեան կացեալ, յորժամ եղեն երեսփոխանք՝ ի նոյն ամի այրեալ եկեղեցին, աւերեալ և քայքայեալ, զգեստն ծախեալ և զպղնձեղէնս։ Այնք որ պատմեցան՝ առաւելագոյնն ունէին չարութիւնս, փառամոլութիւնս և ամբարտա-

ւանուքիւնս, յետ որոյ ամաչի ճեպընակ անապատ՝ ի Հոկտեմբեր ամսոյն մինչ ի Մարտ Քննդիանոս։ Եւ ա-
բարին նոր իմն գաւ ընդ ե եկեղեցոյն քէ Ջեկեղեցոյ մերում խարճ ի վերայ ձեր առէ՛ք և մնք ցրուիմք ի ձեզ, և կամ ի մէնջ հարկ մի՛ առնէք։ Եւ շատ օր յայս ընթացան և նոքա ոչ համարեցան իրրև գչուներ։ Եւ յետոյ խանուք առ խանուք և տուն առ տուն եր-
քեալ իրիցովք՝ քէ յԱստուածածնին երթիմք, ընդ մեզ եղիք՝ գի ի հարկէ ազատիցիմք։ Եւ նոքա գիտէին գչարուքիւնս նոցին, ոչ հաւատալով նոցա, բայց քան այսմ երիցունքն ևս ընդ նոսա գիջանէին՝ քէ կարօ-
ցեն հոգալ։ Եւ երթեալ ամամբք յեկեղեցի Սուրբ Ա-
ստուածածնի քէ մեր ժողովուրդն առ ձեզ կու գայ և մնք ևս եկաք ընդ ձեզ։ խունկ և մոմ և ամենայն իրաւունք ի ձեզ գայ, խարճ ևս գուք տվէք։ Եւ այ-
սու Աստուածածնցիք ի բանէս ոչ կասեցին և ոչ պար-
տեցան և ոչ խաւէին քնաւ ընդ նոսա։ և զիրիցունսն ոչ կանգնեցուցին ի գաս իւրեանց, ո՛չ փոխ և ոչ քա-
րոզ և ոչ կարգ։ Եթէ լինէր փոխ կամ գքարոզ սկսա-
նէին Սուրբ Սարգսոցք՝ յԱստուածածնցիք ի բերանոցն առնէին, գի ամօթով լռելով գյիսին տեղն ունէին, և ոգիոյն ևս ոչ առնէին ընդ նոսա։ Եւ մնք ընդ նո-
սա ոչ գնացաք և կամ չայժեցաք ի տեղւոջէ մերմէ, որպէս և յառաջագոյն էաք, քէպէտև շատ ապաչ-
եցեալ լինէաք յիրիցանց ծանօթից, այլ կայաք գիրա-
ւարեալք ի նոցանէ հանապազ։ Եւ նոքա երթային և գային անդ և տեսանէին գինքեանս անհամա և գգործան անգէպ։ և երիցունք այնմ եկեղեցոյն արհամարհէին գնոսա, գիրաւորէին և ծաղր առնէին, մինչ գի ոմանք յայնցանէ հիւանդացանային։ Նոսա ի չարութեան առեալք և ամօթալից եք ի սկզբանէ մինչև ցայժմ, և անոյն ևս եղեն հրաժարեալք նախատանօք, որ մինչ ոչ կարացին առնել։

Եւ յաւարտուանն քանից Հայոցն ապստամբից տեսանէր զի զրեցաւ քէ իրքն ոչ կարացին պատրաստել կամ ահացուցանել յայս կողմ. ինքէ նկատ ի Պուրսայ, կամ կարող ամք գալ մինչ ի գահոյս արքային, ելեալ միւսհամուռ ամենայն զօրօք ի տահմանացն Պուրսայու, հեռացեալ գնային եւ բանակէին մերձ առ Բերիայ ի գաչան. Եւ մինչդեռ էին հեռացեալ նոքա, արձակէր զիր ընդհատար վարդապետն մինչ կայրն ընդ նոսա՝ եւ պատմէր զանցանան ի գլուխն իւր առաւրք բազմօք, ինքէ՝ գառաճանուքիւն Ծուռնաց ընդ ազգիս հանգերձ արծաթ բազում երթալոյն, ինքէ՝ յառաւսա յարքունուսա զիր հրամանի երթալն հանգերձ ընդգիմանալն իւրեանց փոչային ներսնապէտին եւ Ղազէին եւ յեսոյ՝ Քէյարիւն. ինքէ՝ հնգեքն զՍուրբ Ծափոր՝ ինքէ տացեն առ Ծոյնս, հանգերձ երկաթակապ լինելոյն անհանգիստ տառապանօք յերուսազէմէ ի Դամասկոս եւ անտի յերուսազէմ, մինչ բանալն զՍուրբ Ծափոր ի Զառկէն մեծաս ուրախութեամբ. յետ որոյ ապստամբիլն Քէյարին, որում ի վէգիրէն զիր երթալոյ առ նա ինքէ Անհնազանդ նա քաղաւորի եւ հակառակ իմ, վասն որոյ եւ մարդ առաքեալ՝ տայ զՍուրբ Ծափոր ի ձեռս Ծուռնաց մերձ յաւուրս տօնի որդոյ Հոգոյն Պենտեկոստէի. որ յետ աւուրց ոչ բազմաց եկեն ի հանապարհ ամենայն մեծամեծօք եւ ընդ այլ փոչայիցն, ինքէ կամայ եւ յակամայ Քէյարի որդին առեալ զՎարդապետն՝ առ իւր բերէր ի բանակին զրուն ամառս մինչ ի Պուրսայ՝ ինքէ վէգիր լինելոց է եւ կամս ամենայնիւ արասցէ։ Եւ նալ կայր գնգերեալ ընդ նոսա. ինքէ գայր՝ ի նոցանէ երկնչէր, ինքէ ձայր՝ զկատարածն նկատէր զի յերկարեցաւ. ինքէ նոքա պարտին՝ յայցանէ ահ կրէր։ Եւ չարեաւտաս ամանք ի քաղաքացոց եւ առաւել ի վերոյ ասացելոց չարեացն Սուրբ Սարգսացոց գայս առեալ ի բերան ինքէ կեայ ընդ ա-

պըստամբին Քազաւորի՝ որ և ձէլալի։ Եւ բարեկամք նորին ոչ կարէին ունել խօսք ի լեզուի եւ ծագը յիբեան, միայն ի սրտէ առ Տէր կարդային լսել և փրկել զՎարդապետն յայնցանէ եւ զինքեանս, զի ահա ի փոքանս մահնէին ի ձեռն արհանարքուաց։ Եւ ի քնլցադրուքինէ ամենասուրբ Հոգոյն յաւուր միում եղեալ ի ծածուկս փախեաւ ի բանակէ նոցին միայն քոզեալ զվրանն, իբր քէ անգ կերպարանիլով։ Եւ գայ ի գիւղս ծովիզերացն որ ասի Մովսփի գաշտ, և անգ ոչ կեցեալ ոչ ասկաւս և զելս իրացն ոչ գիտէր։ Եքէ ընգ նոսա գնայր՝ զեռոյան խորհէր քէ գի՛ լինի. եքէ ուզիղ ասա գայր՝ ի կեսատուէն երկնչէր. եքէ ի մի ուղի ճայր՝ ի մահնչաց երկմտէր կասկածէր. և ապա գայր մահնէր ի գիւղս Հայոց որ անգ։ Իսկ որ ընգ նմա էին՝ ասին զվրանն յետ աւուրց եւ նոքա փախեան։ Եւ գրէր անտի զամենայն միքսամիոջէ որ վեր ասացաւ, հանգերձ մեծաւ ազէսիւ առ ի մէնջ բանս միսիքարանաց եւ ամենայն լինելոցն ասուէն պատգամաց. խնգրէր հնարս քննել, հարս որոնել եւ զմեզ յուշաբերել առ ի բանիս գիտուէն՝ քէ ա՛րպէս։ Եւ աւուրբք բազմօք յայս տանջեալ՝ լինէաք ի մեծի վրանէն իբացս լինելոյ կերպին, և գրէաք առ նալ քէ ի ուղիդ կեալն և ա՛ս ծանուցաւ և չարակամք ընգարձակացուցին զբերան իւրեանց յերկինս եւ զլեզուս իւրեանց ածեն ահա զերկրաւ. Նա՛ և ամենայն միաբանք վեհիւքն մահնել գնալ կամէին եւ զքազաւորն չկամէին։ Եւ կայր միայն ընգ մեր խորհուրդ Մարտիրոս վարդապետն, եւ ասացաք. Ահա՛ պատրաստեցաք քեզ ուղի. ե՛կ ի ծածուկս և այսր ճա՛, զի ծով քազաք է և պարսպակիս, մինչև Տէր այց առցէ ըստ մեծի ողորմութեան իւրում։ Եւ եղ նա և եկեալ նոսաւ ի տուն քահանէրի ումեմն Մեհեմէտ ազայի՝ արտաքոյ քազաքին ի կոզմս արևմտեան, որ

աչքն ևս ոչ գիտացեալ քէ ո՛վ ոք է, այլ քէ մուսաֆիր ոմն ասացաւ ի ծանօթից ոմանց, որ որ ամաոյ էր Նոյեմբեր ԺԸ (ՊԷ)։

